













# ԱՇՈՒՂ ԶԻԱՆՈՒ

## == ԵՐԳԵՐԸ ==

*Handwritten:* ԿԵՄ 944

(ՀԻՆԳՆԵՐՈՐԿ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ՆՈՐ ԺՈՂՈՎԱԾՈՒ ՀԵՂԻՆԵՎԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԾ ԵՒ ԸՆՏԻՊ ԵՐԳԵՐԻՑ

*Հիանալի կենսագրութիւնով եւ վերջին լուսանկարով*

*Handwritten:* Գրքաւորութիւն



Խմբագրութեամբ Գ. ԼՍԻՈՆՍԵԱՆԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «ԼԵՐՄԷՍ» Գրաֆակայա փ. № 6





Ներկայ հրատարակութիւնը Ալուզ Զիւանու մինչև օրս  
լոյս տեսած երգարաններից ամենից հարուստն է իր բովանդակու-  
թեամբ: Հեղինակի բոլոր երգերի ու սաղերի ամբողջական, լիա-  
կատար հրատարակութեան հարցը դեռևս ապաշայի գործ լինելով,  
Ներկայ ժողովածուն կարող է մեր երգասէր ընթերցողների ու  
ստանձնապէս Զիւանու երգերը սիրողների պահանջին բուարա-  
բութիւն տալ:

Խմբագրող

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՀՈՒԱՆԻՑ ՅԵՏՈՑ ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Երևանի քաղաքի քաղաքապետարանի կողմից  
հաստատված է հետևյալ կերպով հանձնարվող  
պատճենները համապատասխանաբար  
և համապատասխանաբար պատճենները  
համապատասխանաբար հանձնարվող  
պատճենները համապատասխանաբար

Ստորագրված

Սրբեր պատգամները իրաւանքը վերադարձնում է հեղինակի ժառանգներին

Աւխարհը բուրասան է յասուկ, մարդիկը ծաղիկ,  
Ուրա՛ն մանիւշակ, վարդ, բալասան կուզան ու կերթան...

երես 134.

*Զու մէջդ ես մի քայլ հողի մաս շունիմ՝  
Ո՛վ դու լայնածառալ, ընդարձակ երկիր.—  
Ի՞նչ եմ արել ես քեզ, մնդքս ի՞նչ է իմ  
Չես տուել մէկ խրճիթ, մէկ տնակ, երկիր...*

*Վարուիր Ջիւանուա հետ մի քիչ մայրաքար,  
Բեզնից ոչ դաշտ կուզեմ, ոչ հովիտ, ոչ սար,  
Գոնէ մի փոսիկ տուր ամիմնիս համար  
Ծածկըրիմ պատուովս հողիդ տակ, երկիր*

երես 161.





ԱՇՈՒՂ ԶԻՒՆԻ  
1846-1909

4



## ԱՇՈՒՂ, ՋԻԻԱՆԻ

(Կենսագրական տեսութիւն)

Պատմական Հայաստանի Ջաւախք գաւառում (այժմ Թիֆլիսի նահանգ, Ախալքալաքի գաւառ) Կարգախ գիւղում, անցեալ դարի սկզբներում ապրում է Բասենի կողմերից գաղթած Լևոնենց Քասալարի (Բէնկօ-ի) բազմանդամ ընտանիքը, որ գիւղի մէջ յայտնի է լինում աւելի Բէնկօենց տուն անունով: Քասալարն ունենում է երեք շափահաս որդի՝ Ստեփան, Մարտիրոս և Մկրտիչ՝ որոնք գիւղում և շրջակայքում ճանաչուած են եղել իրենց աշրարացութեամբ, ընդունակութեամբ և վստահութեամբ: Գիւղացիք նոյն իսկ այդ եղբայրներին աւելորդ անուններ են դրած եղել—Ստեփանին՝ Սասանայ խաբող, Մարտիրոսին՝ Բեւալաշ, Մկրտչին՝ Կատաշ, Քասալարի մահից յետոյ այդ երեք եղբայրները իրենց գործերը բաժանում են միմեանց մէջ և Ստեփանը, որ աւագն էր և աւելի փորձուածն ու ճարտիկը, յանձն է առնում վարել զրօսի գործերը. երկրագործական աշխատանքները, մալ ու ոչխար յանձնելով իր եղբայրներին, նա տարուայ մեծ մասը իր ուղտերի կարաւանով շրջում է հարեան գաւառները, անցնում փոքր Ասիա և Թուրքիայի խորքերը: ՏՕ-ական թուականների վերջերը Ստեփանը իր ճամբորդութիւնից վե-

բազառնալով ամուսնանում է իր համագիւղացի մի շէն ընտանիքի Հոռոմսիմ անունով շիկահեր զեղեցիկ աղջկայ հետ. ահա այս ամուսնութիւնից ծնւում են Քերոբ, Սըրբուհի, Սերոբ (1846 թ. ապագայ Զիւանին) Մարթա և Փիլիպպոս: Ստեփանի՝ մեծ մասամբ տանից բացակայ լինելու պատճառով տան հոգսը բաշոյր լինում է Մարտիրոսը՝ Քեալաշ-ամին, որ նոյնպէս ամուսնացած էր և ունէր չորս աղջիկ և մի տղայ: Ստեփանը 1852 թուին, համեմատաբար երիտասարդ հասակում մեռնում է օտարութեան մէջ, թողնելով իր ջահիլ կնոջը և որբերին եղբայրների խնամքին: Մեծ եղբօր մահից յետոյ Բէնկոյինց տան աստղը թեքում է. մեռնում է և նրա բաժան եղբայրը՝ Մկրտիչը՝ նոյնպէս թողնելով չորս հինգ որբ. Քեալաշ-ամու զրութիւնը դժուարանում է. նա որբան էլ որ սիրում էր իր Ստեփան եղբօր երեխաներին, բայց և այնպէս ստիպուած է լինում նրանց այրի մօրը՝ Հոռոմսիմին կնութեան տալ հարեան Տատէշ գիւղի մի այրի ծերունու, ինքն էլ մնալով իրաւական պատասխանատուն և տէրը ամբողջ ընտանիքի և ունեցուածքի: Ստեփանի երեխաների զրութիւնը դառնում է անտանելի. հօրից զրկուելուց յետոյ իրենց սիրելի մօր տանից հեռանալն էլ կատարեալ դրժբաստութիւն է դառնում խեղճ որբերի համար, որոնցից ամենից մեծը հագիւ լինում է 12 տարեկան, Սերովրը 6 տարեկան, իսկ միւսներն աւելի փօրք. Փիլիպպոսին էլ ոչխարները օրօրոցից շուռ են տալիս ու կոխկրտում, շնչահան անում: Քեալաշ-ամին առանձնապէս սիրում էր իր Սերօ-ին (Սերօբին), իսկ նրա ամուսինը մի շար և անգութ կին ընդհակառակը յաճախ ծեծում էր նրան, երբ մարդը տանը չէր, ու իր ծանր ձեռքերով շարունակ խեղճ երեխայի գլխին բամբակով պատճառ է դառնում ապագայում նրա աչքերի կարճատեսութեան: Փորրիկ Սերօն զգում էր իր վիճակի դառնութիւնը և յաճախ տանից



փախչում էր դէպի այն բլուրները, որտեղից մայրը գնացել էր, և երկնք երկնք լաց էր լինում\*):

Երբ Սերոբը 10 տարեկան է լինում, նրան տալիս են գիւղի այն ժամանակուայ խալֆայական դպրոցը, որտեղ սակայն շատ երկար չի կարողանում մնալ, բայց սովորում է գրագիտութիւնը: Եյնուհետև յանձնում են նրան հորթարածի պաշտօնը. ձիու պոչերից մազեր պոկելով Սերոբն իր համար մի սազ է շինում ու իր հորթերն արածացնելիս ինքն էլ սար ու քար ման գալով անկտնկացնում է, երգում գիւղական երգեր: Կարգախը մեծ դիւղ լինելով (մօտ 500 տուն) ձմեռները աշուղներ են գալիս այնտեղ ու գիւղական օղաներում երգում ու նուագում: Սերոբը մի անգամ այնչափ տարւում է նրանցով, որ չի ուզում ուրիշ որևէ գործի կաշնել: Հօրեղբայրը ոչ միայն չի հակառակում, այլ և թող է տալիս որ ուշ երեկոններին, երբ միւս երեխաները քնած են լինում, նա գնայ աշուղների մօտ ու լսէ նրանց երգն ու երածշտութիւնը: Աշուղներից մինը, ուստա Սիային, որ նոյնպէս Ղարա-Ղազար էր կոչւում, ուշադրութիւն է դարձնում «Բենկօհնց մանչու» վրայ ու տեսնելով նրա մէջ երգ ու տաղի մեծ սէր, յորդորում է նրա հօրեղբօրը, որ մի փոքրիկ սազ առնի նրա համար ու այդ ձմեռ ինքը իր մօտ աշակերտ պահէ: Եյդպէս էլ լինում է. Բեալաշ-ամին մի շօնգուր է առնում իր Սերօին ու տալիս է ուստա Սիայուն աշակերտ, անունն էլ դնում են Զիւանիկ:

Ենցնում է հինգ վեց տարի. Զիւանիկը մանկութիւնից արդէն պատանեկութեան կեանքն է ապրում. նա շօնգուրը դէն ձգելով, ձեռք է բերում արդէն մի ջութակ (հին ձեխ) ու ինքնուս կերպով բաւական յաջող նուագում է,

\*) Զիւանին դէպի իր մայրն ունեցած բուռն սիրոյ մասին յետագայում շատ զգայուն տողեր ունի գրած:

պարզ, անպաճոյճ երգեր հիւսում ու երգում: Պատանի երգչի միտքն արդէն թռիչքներ է գործում և զիւզը նրա համար շատ նեղ է սկսում երևալ: Նա շի ուզում լինել զիւղական աշրդ՝ ինչպէս իր վարպետը, նա ուզում է քաղաք գնալ, ժողովուրդ տեսնել, աշխարհք տեսնել:

Անա ներկայանում է մի առիթ, որը մեծ դեր է խաղում Ջիւանու կեանքի և գործունէութեան մէջ:

Հօրեղբայրը՝ Բեալաշ-ամին այն ժամանակի սովորութեան համեմատ, ձմեռը մի խումբ զիւղացիների հետ իրենց սայլերով Կարգախից ուղևորում են Թիֆլիս, որ քրեհով ապրանքներ տանեն զանազան տեղեր: Այդ սայլերի հետ Թիֆլիս է գալիս առաջին անգամ և պատանի Ջիւանին՝ (1864), վերցնելով իր հետ իր անբաժան ընկեր ջութակը: Գիւղացի մի տղայ, որ կեանքում քաղաքի երես չի տեսել, միանգամից Թիֆլիս է ընկնում. տեսնելով որ կեանքը եռում է, ահազին շարժում, իրարանցում է տիրում, մեծ ու հոյակապ տներ, բազմազան ժողովուրդ, զմայլում է իր գլխով անցած-դարձածից ու ինչ որ կրակ է վառում նրա կրծքում: Բարերախտութիւն ենք համարում և այն որ կարգախցի սայլապաններին յանձնարարում է ապրանք տանել Ալէքսանդրապօլ և մեր զիւղացիք իրենց հայկական սայլերով վեց օրում հազիւ հասնում են Ալէքսանդրապօլ ու ապրանքը յանձնում տէրերին: Այդպիսով Ջիւանին ընկնում է աշուղների կենդրոնը. նա զեռ զիւղում եղած ժամանակ լսել էր այդ քաղաքի յայտնի աշուղների մասին, լսել էր հռչակաւոր Ջիրինի երգերը, բայց զեռ անձամբ ոչ որի չէր տեսել: Մինչ սայլորդները զբաղուած են լինում ապրանքների տեղաւորումով և զանազան իրեր գնելով, Ջիւանին հարց ու փորձ անելով գնում է գտնում քաղաքի ամենայայտնի սրճարանը, որը կենդրոնատեղին էր տեղական աշուղ վարպետների:

Մի 17—18 տարեկան առողջ, բարձրահասակ զիւ-

ղացի, մեծ, ոչխարի փափախը գլխին, սպիտակ շալէ չեր-  
բեղկայով ու շալուարով, մէջքին կապած գոյնզգոյն մե-  
տաքս-գօտի, ոտքերին տրեխ, ջուլթակը թևի տակ, վստահ  
բայլերով ներս է մտնում Կարապետ և Յովհաննէս Տա-  
լիանց եղբայրների սրճարանը և բարև տալիս:

«Մը տեղացի ես ծօ, անունդ ինչ է, աշը՞դ ես, բան  
ման գիտես» այսպիսի զանազան հարցերով ընդունում են  
նորեկ աշուղին ու հրաւիրում որ մի բան «չալէ»: Զիւա-  
նին տեսնելով վարպետ աշուղներին, նախ չի համարձակ-  
ւում նրանց մօտ հրգել ու նուագել, յետոյ արդէն իր-  
~~ոյ~~ ~~ժերի վրայ վստահ~~ սիրտ է առնում ու նուագում, երգե-  
լով նաև իր հիւսած երգերից մէկը: Նորից մի բանի ե-  
ղանակներ երգելուց ու նուագելուց յետոյ, գովեստի ու  
քաջալերութեան արժանանալով հեռանում է:

Զիւանին սայլորդների հետ Կարգախ վերադառնալով  
այլևս չի կարողանում այնտեղ երկար մնալ, նա մի ա-  
շուղի հետ ընկերանալով (~~գեօքչեցի~~ ~~Սեղաջան~~, ~~Աղջօ~~, ~~աշըղ~~  
~~Սագայի~~) միասին ուղևորում են Թիֆլիս, ընդմիջտ թող-  
նելով հայրենական տունը, որտեղ անցել էին նրա դառն  
մանկութիւնն ու պատանեկութիւնը: Թիֆլիսում այդ գեղ-  
ջուկ սկսնակ աշուղները սկսում են երգել Մէյդանի Մ. Գէորգ  
եկեղեցու մօտ գանուղ ~~Սօնայինց~~ ~~Կարապետի~~ սրճարանում  
(~~յետոյ~~ ~~Պեարոս~~ ~~Ասլանեանցի~~), որից և սկսում է աշուղ  
Զիւանու գործունէութիւնը, որը ապագայում տեեց աւելի  
բան 45 տարի: Թիֆլիսում մի տարի մնալուց յետոյ Զի-  
ւանին Ալէքսանդրապօլից, սրճարանատէր Տալիաններից  
հրաւէր է ստանում՝ ու իր ընկերի հետ գնում է այնտեղ:  
Քեղեցիկ Շիրակը իր հսկայ Արագածով, Անիով և այլ նշանա-  
ւոր պատմական յիշատակարաններով, որպէս բուն հայկա-  
կան միջավայր գրաւում են Զիւանուն և հայրենասիրական  
կրակով լցնում երիտասարդ երգչի սիրտը: Ալեքսանդրա-  
պօլը սիրում է նրան, նա էլ Ալէքսանդրապօլը, որը և դառ-

նում է նրա համար երկրորդ հայրենիք և որտեղից տարածում է նրա երգի ու քնարի համբուր: Ջիւանին սիրահարում է սրճարանատէր Յովհաննիսի աղջիկներից մէկի՝ վրայ (Աշխէն) թո՛ւ աշուղ Բեամարու և (բոյր աշուղ Ջամարու) և ամուսնանում է նրա հետ 1872-ին:

Մշտական բնակութիւն հաստատելով Ալէքսանդրապօլում, Ջիւանին նոր խումբ է կազմում և մէջ ընդ մէջ իր խմբով այցելում է Կովկասի շատ բազարներ ու իր երգ ու նուագով ժողովրդի մինչև ստորին խաւերում տարածում հայ խօսքն ու հայրենասիրական շունչը:

Հովիկ, Ջիւանուցս լուր տար-երգում է նա  
Թէ հարցանեն ինձի համար  
Ասա թէ միշտ ձեռքին քնար  
Ազգի համար կանչում է խաղ:

Ջիւանին առաջին անգամ իր երգերը առանձին հրատարակութեամբ լոյս է բնծայում 1882-ին Ալէքսանդրապօլում: Այնուհետև մինչև ներկայ հրատարակութիւնը լոյս է տեսնում զարձեալ հինգ հատորներով, որոնք տարածուելով ամեն տեղ, ուր հայեր կան, իրենց հետ տարածում են մեր աշուղի անունը: Սակայն Ջիւանին մեծ ժողովրդականութիւն ստացաւ աւելի իր ճանապարհորդութիւններով Ղրիմից Բագու, Աստրախանից Երևան, Ղարսից նոր-Նախիջևան—Ռաստով, Թարկով և այլ հեռուսր տեղեր:

Ջիւանին ուղղակի կռիւ յայտարարեց թուրքերէն երգերի դէմ, որոնք զարերով արմատացած էին հայ գաւառացու ու շինականի օջախներում, և վաղուց ընդունելութիւն գտած. նա հային սիրելի թիւրք-պարսկական եղանակներին իր երգերը յարմարեցնելով տարածեց ամեն կողմ: Նրա «Չախորդ օրերը», «Բարբի զեղեցիկը», «Բոյրերիս մէջը» «Բաջ Վարդանը» և այլ երգերը հայ բնտանիքներում ըսկսեցին երգուել, զպրօցներում ու դասազրբերում տեղ

գտան ու աւելի ժողովրդականացրին հեղինակի անունը, Մեր աշուղը տեսնելով որ հայ ռամիկ դասակարգը, հերիաթասէր-երգասէր գիւղացիութիւնը շատ է սիրում տաճկերէն «Աշուղ-Նարիրը», «Քեարամ և Ասլին» «Շահ-Իսմայիլը» և այլ արեւելեան սիրավէպեր, հայերէնից փոխադրեց այդ հերիաթների շարքը և տասնեակ հազարաւոր օրինակներով տարածեց:


1895-ին Ջիւանին իր բնտանիքով Ալէքսանդրապոլից տեղափոխուում է Թիֆլիս թէ իր զաւակների կրթութեան և թէ իր տնտեսական վիճակն աւելի բարւոքելու նպատակով: Սակայն քանի օրաւոր աւելանում էր նրա համբուր, մամուլի, ինտելիգենցիայի և բանասէր մարդկանց սիրալիք ուշադրութեան արժանանում, այնքան աւելի քայքայւում էր նրա առողջութիւնը և դրա հետ քայքայւում նրա տնտեսական դրութիւնը: Մօտ կէս դար երգելուց դուալուց մաշուում են նրա թոքերը և շարունակ տար ու պաղից ստանում է թոքերի բրոնխիական բորբոքում: Չաւակները չեն կարողանում բարելաւել նրա դրութիւնը ու մանր ուսանող, ումանք փոքր լինելու պատճառով: 1900 թուականներին նա զգալի կերպով փոխուել էր. ծերութիւնը, հիւանդութիւնը հոգսերը նրան շատ էին մաշել, մանաւանդ շատ յուսահատուում էր երբ արգելում էին ներան նուազել և երգելը և գալիս ջութակը տանում էին: Մշտական աշխոյժ, ուրախ, գուարճասէր, ուրիշներին օգնող, յոյս ու մխիթարանք տուող Ջիւանին ինքը կարօտ էր դառնում օգնութեան և մխիթարանքի:

Վերջին անգամ նա իր ջութակով ու խմբով հրաւիրուած էր Թիֆլիսի ժողովարան Իգմիրլեանի բնտրութեան պատգամաւորներին պատուելու խնճոյքին, որտեղ երգեց Իգմիրլեանի վրայ յօրինած երգը: Հոկտեմբերի կէսերից սկսել էր արիւն թրել և թուլութիւնից ստիպուած ընկնել անկողին: Հիւանդ ժամանակ նա ամեն օր հետևում էր

յրազիրներին և երբ մի անգամ կարգաց Թիւրքիայի ա  
 զատութիւնը՝ ուրախութիւնից հեկեկաց. «երբ առողջ  
 նամ պէտք է անպատճառ զնամ Պօլիս, Վան, էրզրում...  
 Այս ցանկութիւնը մնաց ցանկութիւն. նա ոչ միայն ա  
 ռողջանալու յոյսեր չէր տալիս, այլ և քանի զնում աւել  
 մաշուում և հիւժուում էր. Զիւանու վազիմի բարեկամ և յաչ  
 զող անուանի բժշկապետ Բ. Նաւասարդեան, առանց որև  
 սպասելիքի, անտրտունջ զնում էր ամբողջ հինգ-վեց ամի.  
 Բժշկութեան, յաճախ հետը տանելով Աղամեան, կարապետ  
 և Մուլին բժշկապետներին՝ Փետրուարի 24-ին առա  
 լօտեան բժիշկները դարձեալ ներկայ էին, որոնք խորհրդաւո  
 կերպով միտեանց նայելով նրա ընտանիքի անդամներին հաւ  
 կացրին հիւանդի անյուսալի վիճակը և նրա մահուան շատ  
 մօտալուտ լինելը. Մի երկու ժամից յետոյ անուանի ա  
 շուղը յիշեց իր ուսանող որդիներին և ապա աւագ որդու  
 գրկի մէջ յաւիտենապէս փակեց աչքերը. Թաղումը կա  
 տարուեց մարտի 1-ին մեծ հանդէսով, ինչպէս կատար  
 ւում են սովորաբար հայ նշանաւոր հեղինակների թա  
 ղումները, և հանգուցեալի կմախքացած դիակը յանձնուե  
 խօջիվանքի անկուշտ հողին:

Յարմար է նրա համար կրկնել բանաստեղծի այս  
 տողերը.

Աշխարհ ծնար և աշխարհիս դարձար մշակ,  
 Բայց չը տեսար այս աշխարհում անդորրութիւն  
 Աշխատաւորի բաժինն է փշեայ փսակ  
 Ա՛... բրտնաջան ոսկորներիդ խաղաղութիւն:





**ՃԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԿԵԱՆԲԸ**

**ԱՅԺՄԵԱՆ ԴԱՐԸ**

*Գ. Մ. Կ. Կ. Կ. Կ. Կ.*

*X*

Համ լաւ է, համ շատ վատ է, իմ կարծիքով, այժմեան դարը, Բարութեան հետ հաւատարմ քրքուած է անիրաւ շարք, Մէկը անշարժ կեցած է ծանր ու մեծ իրան տեղը Մէկը շատ ծայրայեղ է անցել է, սահմանը-սարը:

Տեսնում ես կոտի մէջ են նորն ու հինը հաստապէս, Ամենը պաշտպանում է իւր ունեցած գաղափարը, Մէկը պաշտպան է կեցած իւր հաւատոյ հիմունքներուն, Մի ուրիշը թաւալել կուզէ նրա հիմնաքարը:

Մէկը լոյս է բարոզում իւր մտքովը մեր աշխարհին, Մէկն էլ ամուր գրկել է մտախուզը, մութ խաւարը, Թող վրայից անցկենան հազարաւոր դարեր նորից, Յազթող է հանդիսանում ճշմարիտը և արդարը:

Դանդաղը յետ կըմնայ, արագը կ'երթայ անխտոր, Պարզ բան է՝ ստաւորից միշտ յտուջ է ձիւղարը, Այսպէս էլ ստութիւնը պաշտպանողը կըլոյզնի շուտ, ճշմարիտը, ով Զիւան, կ'երթայ իրան ճանապարհը:



*Գ. Մ. Կ. Կ. Կ. Կ.*

## Մ Ե Բ Գ Ը Բ Բ

Ինչ վատ ժամանակի հասանք, ով Աստուած,  
Շատ վատ է երևում աշխարհի կեանքը.  
Բազմացան անկամորդ ազահները ցած,  
Թարում, կլանում են այլոց ապրանքը:

Ժամանակիս քիչ կայ լաւ երիտասարդ,  
Ըստ մեծ մասին են խարերայ կախարդ.  
Որտեղ որ տեսնում ես մի շրջմովիկ մարդ,  
Ծուռթիւն է նրա բոլոր բազմանքը:

Կեղծ քարոզիչները ելած են հանդէս,  
Թարում են շատ մարդու երեխայի սէս.  
Ներքուստ զայլի նման հօտն անում են կէս,  
Արտաքուստ՝ հովուի հետ տես քոքոանքը:

Կարծեմ շիւնիբ ախտէս մի շփոթուած դար,  
Երթալով կըշատնայ անխիղճն անհամար,  
Մարդկանց թոյն են տալիս շատ արուեստարար,  
Կուտեն, չեն հասկանայ գալած փորձանքը:

Մի խումբ մարդիկ կան որ ողջը բաց բերան,  
Ո՛չ Աստուած կըյիշեն և ո՛չ դատաստան.  
Չեղքերն ընկած մարդը ճիշտ սագի նման,  
Կըպուկեն խեղճի ողջ զարգարանքը:

Կիսատուում մարդու խօսած առակը,  
Կըմարէ միամիտ մարդկանց կրակը.  
Դեղ տալու փոխանակ՝ կըհանէ ակը,  
Կաւելֆցնէ առողջ մարդու տանջանքը:



Այս կերպ բժիշկները շատ են յառաջել,  
Տղէտ, բան չըզլտեն և չեն ամաշել,  
Հաղարից մէկ վարդեախն չեն անաշել,  
Շատ պակաս է իմաստունի յարգանքը:

Մի տեսակ հարուստ կայ նման աղբուկի,  
Կըծծէ արիւնը աղքատ ձերուկի,  
Հաշիւը չի լինիլ ոսկեանամուկի,  
Կրկին աղքատներին կպչելն է քանքը:

Աբարչից է այս պատիժը մեզ համար,  
Օրը մի նոր վատ բան կըստանայ աշխարհ,  
Դի ասելով կըվազվըզեն անդադար,  
Բազմացել է զայլերի արշաւանքը:

Սրիկայի համար խրատն է տնազ,  
Նա մարդ աւարելու կըյարբի վռազ,  
Աչքն է աղօրինի դործի հանապազ,  
Անխիղճ մարդը բան չի սեպել զրկանքը:

Ո՞ւր է մարդկութեան հետ զգաստութիւնը,  
Ո՞ւր է բարոյական պատրաստութիւնը,  
Այժմ փող չի անիլ նուաստութիւնը,  
Ամեն կողմով շատ է իւր տառապանքը:

Անամօթն աշխարհին շատ փնաս կուտայ,  
Ճշմարտութիւն, երկիւզ նորա մէջ չըկայ,  
Որտեղ որ կըտեսնի մի համեստ աղայ,  
Գսկսէ ետից նա հայնոյանքը:

Քննէ, գիտուն, այժմեան առաքեալն իտակը,  
Ազգ յառաջ տանելու չունի նպատակ,  
Ճերեկը մարդարէ, գիշերն աւազակ,  
Լաւ հասկացիր սըրբի դու խղճմտանքը:

Վատ ու շար գործերից հոգիքս է տխուր  
Զօքել են սրտերիս ցաւերն ընդհանուր.  
Հիմա աղբիւրներից չեն վազեր պարզ ջուր,  
Պոտոր է գետերու վճիտ հոսանքը:]

Անգործ, պարապ մարդիկ <sup>չ</sup>բառ, չեն ուտեր հող,  
Հարկաւ գրանք վերջը պիտի լինին գող,  
Հարիւր մարդու իննսունը արբեցող,  
Քննող չըկայ, ձրախից է աշխատանքը:

Թէ որոնես հինգ անկիւնը աշխարհին,  
Դեռ ուշ կը շիտակբուի սիւնը աշխարհին,  
Սիրտ, մի կարգա պատմութիւնը աշխարհին,  
Յաւիտեան չեն հատնի ցաւոց գրեանքը:

Լսել է, չի խօսիլ մեծ իմաստունը,  
Զգուելով աշխարհից՝ փակուել է տունը.  
Դառն ժամանակի անդուր անունը,  
Փակել է զգայուն մարդկանց բերկրանքը:

Տուրք ու ոգորմութիւն, մէկ նուէր չըկայ,  
Մարդկանց մէջը յոյս ու հաւատ, սէր չըկայ.  
Բացի Աստուած խեղճ մարդկանցը տէր չըկայ,  
Ինքն է թեթեցնող մեր շարձարանքը:

Աւրեմն այդպէս է, Ջիւանի երգիչ,  
Շատ դատէ, շատ լսէ, ինքդ խօսիր քիչ.  
Ամեն բան կը ռուզդուի, կանչէ Արարիչ,  
Քեզանից հեռացուր զուր բամբասանքը:

1876



Ամեն տեղ բանութիւն, ամեն տեղ ճնշում,  
 Երբէք խղճի ազատութիւն չըկայ, չէ,  
 Ամեն մարդ ընկճւած, ամեն մարդ տրտում,  
 Ցաւոց բժիշկ, փառատութիւն չըկայ, չէ:

Բանակայլը կը հարուածէ քամակից,  
 Ստիպուած շեղում է մարդ նպատակից,  
 Անֆէաս պահելու ջրից, կրակից,  
 Ապահովուած հաստատութիւն չըկայ, չէ:

Ով չգօր է, նա է հարուստ գործավար,  
 Բայց խեղճ աղքատն է միշտ հողին հաւատար,  
 Մարդիկ կը խեղճանան զրկելով իրար  
 Բնականից աղքատութիւն չըկայ, չէ:

Հգօրները խեղճերուն խորտակել են,  
 Ազահները ամեն մի դուռ փակել են,  
 ով ազատ է խօսել միշտ մտրակել են,  
 Ամենևին աստատութիւն չըկայ, չէ:



## ՄԵՐ ՆԵՐՎԱՆ

Այս ի՞նչ դարի հասանք, ի՞նչ օրեր գտանք,  
Ամենին հաւատարմութիւն չըկայ.  
Ի՞նչ օրեր կորուսինք, ի՞նչ կեանք ստացանք,  
Հագարից մէկի մէջ լաւ արիւն չըկայ:

Ասում են՝ թէ լուսաւոր է այս դարը.  
Լաւութեան փոխարէն կ'երթանք վատթարը-  
կարծես թէ ծռուել է ամբողջ աշխարհը.  
Իսկ ուղիղ մնացած՝ մէկ անկիւն չըկայ:

Պարզակրօն կ'ասուինք վերին Բարբունով,  
Ափսոս, խառնուած ենք այլ և այլ գունով.  
Մէկ տուն ունինք ճշմարտութիւն անունով՝  
Նրա մէջն էլ անծուռ, հաստատ սիւն չըկայ:

Պէտք է միշտ ճշմարիտ մտքով վերանաս,  
Աշխատիր ուղղութեամբ, մինչև ծերանաս.  
Զիւան, լաւ հասկացիր չը ընկերանաս՝  
Խարեքայ խմբերից օգնութիւն չըկայ:

1881



## Ա Շ Ն Ա Ր Հ Ը

Ո՛հ, ո՛հ, Արարիչ, աշխարհը խաբերայ է դարձել,  
Ուխտը ուրացող, Տէրը ատող՝ Յուզա է դարձել,  
Կարծես վերցել է հողային գնդիցը ամբողջ,  
Ճշմարտութիւնը կեղծ ստութեան ծառայ է դարձել:

Ինչպէս Սողոմոնն յիշել է իւր առակի միջով,  
Քողճուկ քաղաքիս դատաւորը տղայ է դարձել,  
Լսուել է գիւղի տանուտիրոջ վրայի լոյսը,  
Եւ հաստակ է իւր մշակը, վկայ է դարձել:

Երեկ-միւս օրը սարերում ոչխար արածողը,  
Մարդկանց քարոզիչ ծայրադոյն արեղայ է դարձել,  
Դատաստանի տակ ընկնողը՝ հնար մտածելով,  
Իսկոյն անունը փոխել է, քահանայ է դարձել:

Տես, բարոյախօս, առաքինի ողջախոհը, տես,  
Հոչակ ունեցող հոմանիին փեսայ է դարձել,  
Ձէ, չէ, Ջիւանի, բաւական է խարուեցար այդքան,  
Գիտցածդ հրեշտակն հիմա սատանայ է դարձել:

1874



ԽԵԼՔԻ ԸՅԵՑԻՔ

Նուէր արեւանդրապոլցի պ. Յովնանէն Եօզաբյանցից

Անմիտ ճնճըզուկը բազէի ճանկից  
Ուզում է որս խել, խելքի աշեցէք,  
Կարծես ճանճրացել է գլխից ու գանգից,  
Պատերազմ է մտել, խելքի աշեցէք:

Սելքին զօռ տալով է հիմա ամեն բան,  
Յիմարն էլ իմաստուն կարծում է իրան.  
Նիհար հաւը, պարարտ մեծ սագի նման  
Ուզում է ձու ածել, խելքի աշեցէք:

Ազնիւ մարդը անարգում է գէշի հետ,  
Երբիվարը լուծ է քաշում էշի հետ.  
Երկու տարուայ հորթը ցուլ զոմէշի հետ  
Բերել, կամ են լծել, խելքի աշեցէք:

Գայլը վրան ոչխարի մորթի առած,  
Գառներուն պահպան հսկող է դառած.  
Աքլորը քարողշի վերարկու հագած  
Ամբիոն է ելել, խելքի աշեցէք:

Ուզար մետաքսագործ, եզը նաւափար,  
Գայլը հովիւ դառած կարածէ ոչխար.  
Ազուէսը հաւնոցի դրանն յուշարար,  
Ի՞նչ հսկող են գտել, խելքի աշեցէք:

Փափուկ ճէնտլմէն է հաստ գոհնիկը,  
Ամբոխի գիտունն է խելքից բորիկը,  
Կենացը մէջ ծառ չըտեսած ուամիկը  
Այդեպան է եղել, խելքի աշեցէք

Երեխան ձեռն առած փթած, հին լարը,  
Բռնել կամի դարձող Չաղացի քարը.  
Գաճաճ մուկը շրջել կուզէ մեծ սարը,  
Կողքը դէմ է տուել, խելքի աշեցէք:

Ուրացողը խիղճ չունի ամենեին,  
Ջրզգալով, սպիտակ ասում է սերն,  
Կոյրը չըտեսնելով լոյսը արեին,  
Աշխատում է սըտել, խելքի աշեցէք:

Աւել հոգսը վնաս կուտայ իւր անձին,  
Քւրիշի ցաւերը առնելով վզին,  
Գայլը յոշոտել է մարդացեց մէկին,  
Քենթը սև է հազել, խելքի աշեցէք:

Գորտը մեծ պարուն է տաքուկ ջրհորին,  
Գուրս ելաւ, բաժինն է վիշապի փորին.  
Իրար հետ սուտ կուտել են ձինու ջորին,  
Էշը մէջ է ընկել, խելքի աշեցէք:

Ժլասն աշխատելու է շատ ընդունակ,  
Իւր հացը ուտելու չունի ախորժակ,  
Քեզճ անձը զրկելով գիզել է ստակ,  
Ուրիշն է վայելել, խելքի աշեցէք:

Յանցաւոր հարուստը ուրախ խնդալով,  
Մեղքից անցատուել է մեծ գումար տալով.  
Քեզճ մարդը սխալմամբ մի հաւ զողնալով  
Բանտի մէջ է փթել, խելքի աշեցէք:

Մարդ կայ գերդաստանը պահում է ցամաք,  
Կերթայ, դուքսը կուտէ մեղր ու սեր, կարագ,  
Այլոց համար կանէ ձայնով պատարագ,  
Իրան ժամ չի անել, խելքի աշեցէք:

Մի նոր քաղաք տեսայ ժամի սիրահար  
Բնակիչները հայ մօտ քսանհազար.  
Իրանք սնունդ չունին ապրելու համար,  
Հինգ հատ վանք են շինել. խելքի աշեցէք:

Մնչ կենդանի ուղէ լինիլ շանսատակ,  
Կերթայ ու կրմտնի ծանր բեռի տակ.  
Նապաստակը առիւծի դէմ համարձակ  
Կռիւ է սկսել, խելքի աշեցէք:

Ճորենը մի անգամ լինելով տկար,  
Այնպէս բոյս չեն գտել, որ անեն նշխար.  
Կորեկ հացը իրան կարծելով յարմար  
Սեղան է բարձրացրել, խելքի աշեցէք: --

Ո՛չ մի գիտուն չի՛ հասել իւր փափազին,  
Սպառելով լոյսը կենաց ճրագին.  
Ենթի մէկը հազար տարուայ քաղաքին  
Կուղէ նոր կարգ դնել, խելքի աշեցէք:

Մեծամեծ մարդիկը հեռու են կանգնած,  
Ասպարէզը համբակներուն են թողած.  
Ջիւանն էլ կադ իշով կարաւան մտած  
Բանաստեղծ է դարձել, խելքի աշեցէք:

1888





Յիցերը, թրթուրները չըլինէին պարտէզը,  
 Մասերու արմատները չըլիղէր յարալէզը-  
 Բախտախնդիր, հացկատակ, փոքրոգի մարդիկները,  
 Երանի չըմտնէին գիտութեան ասպարէզը:  
 Աղտեղի բնութիւնով, մեղրի համը փոխելով,  
 Քանդում է մեղուի տունը անպիտան մէկ բղէզը.  
 Խելօք թզուկը լաւ է թեթեամիտ հսկայից,  
 Խնչո՞ւ է պէտք անօգուտ բլուրը՝ մսաղէզը:  
 Շատացել են գայլախեղդ, իշու նահատակները,  
 Իւր յարզը կորցրել է ճշմարիտ ողջակէզը.  
 Բարձրամիտ իմաստակը մի զրօ էլ չէ այնտեղ,  
 Եթէ գիտնայ քննել նա գիտութեան քարտէզը:  
 Նոր հաւերը մի տեսակ խատուտիկ հաւկիթ կա՞ծ են  
 Կարծես, ամեն մէկի մէջ բուն է զրել մողէզը:  
 Անհմուտ խոհարարի կերակուրը ուտելուց,  
 Զիւան, լաւ է ամէն ժամ վայելիլ վայրի սէզը:  
 1883.



Անդադար վատ վատ լուրեր հնարում է գրպարտիչը,  
 Մշտական շատացնելով տարածում է լսած քիչը,  
 Լաւ բանի համար ամենեկին չի շարժուիլ տեղիցը,  
 Երբ լսեց մի վատութիւն ձեռք կառնէ աղտոտ գրիչը:

Քանի որ օգուտ չունինք, վնասներուն թնչ ենք տալիք  
 Վերցնէ թող մեր միջից այդպիսիները Տէր Փրկիչը,  
 Ժողովուրդը քաջ գիտէ լաւն ու վատը, չարն ու բարին,  
 Յուզայի դասն է դասում նա նեղաւոր դէշ մատնիչը:

Մտի պէս մեր որդիքը մեր միջից են, թւա ինչ տանք,  
 Մեր տանից է դուրս եկել մեր կեանքի ցեցը՝ կերիչը,  
 Այդպիսեաց խրատ տալը քահանայից պարտքն է յատուկ,  
 Ինչ կարող է բան չինել Ջիւանու պէս խեղճ երգիչը:

1887.



## ՊԱՏԻՒ ՎԱՍՏԱԿԵԼՈՒ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Թէ ուզում ես քեզ գիտնական անուանեն,  
Եւրոպայի ձեռով հալաւ ունեցիր.  
Թէ կը ցանկաս պատուիդ լաւ պահպանեն,  
Շինծու գիպլոս, շինծու համբաւ ունեցիր:

Ժողովրդի կամքը, բերանը շինէ,  
Ձի հասկանալ, նորա համար այդ մին է,  
Այն որ հիմա հաստ ու բարակ մի գին է,  
Անախաս է, խելք էլ սակաւ ունեցիր:

Այնքան որ ունեցիր մի վկայական,  
Կասեն, որ մտել ես գու համալսարան.  
Վախենաս թէ հազարներով քեզ չըտան,  
Հոգաբարձուաց հետը քեզ լաւ ունեցիր:

1882





Տգէտ բաժրասողները անձանօթ լուր կրսպօսեն,  
 Կամ Քարմասուն, կամ լօթրան՝ պատրաստ են, որ քեզ ասեն.  
 Ողջ այնպիսի մարդիկը խելքերիցը պակաս են,  
 Իրանց փորը անօթի ուրիշին կալ կըկասեն:


Պարապ ու անաշխատանք, անուսում ցանցառները,  
 Մտքերովը չափում են շատ տեղի անտառները,  
 Իբր գազան կըծախեն խեղճ անուշիկ դստները,  
 Իրանց դատողութեամբը նրանց շարքում կըդասեն:

Կոխ տեսնին կըցնծան, մատներն իրար կըքսեն,  
 Ուզում են այնտեղից էլ մի քանի լուրեր լսեն.  
 Ուրիշներին որկրամուլ, նաստից դառած կասեն,  
 Ողջ մարդկանց միսը կուտեն, գիտեն թէ մաքուր պաս են:

Ճշմարիտ խօսողները նրանց զերի են դառել,  
 Ազգութիւնից հեռացած, կարծես վերի են դառել  
 Հաւատից գայթակղուած, յատուկ թերի են դառել.  
 Վերոյիշեալ մարդիկը մեր ազգին շատ վնաս են:

Ջիւան, յառաջ մի խաղար, քար կըխփեն քո թևին,  
 Նրանք այնպէս մարդիկ են, խաւար կասեն արևին.  
 Արդարութիւնը ի՞նչ է, չեն գիտեր ամենեկին,  
 Բարութեան միշտ հակառակ, շարութեան մակարդ-մաս են:

1870.



Ամբոխի սուտ փայփայտները,  
 Երես սեցնող մոծիք է-  
 Նրա տուած գովասանքը,  
 Սառուցի վրայի գիր է:

Փսիաթը նուրբ կտաւ է,  
 Վայրենի մարդկանց հալաւ է-  
 Էշը նժոյգ ձիուց լաւ է,  
 Քանի որ իշու կրկիւր է:

Փայլողը հոմանի կինն է,  
 Աւազակը ամուսինն է-  
 Դարը լիբը անամոթինն է  
 Թեզն մարդը հող ու մոխիր է:

Վաղանցուկ փառքը խարերայ,  
 Շատի գլխին խաղ կը խաղայ-  
 Որքան կուզէ մեծ օգուտ տայ,  
 Յոնսը վերջը զգիւր է:

Ճաշակով մարդ թէր ամեն տեղ,  
 Որ ջուկէ անհամ ու համեղ-  
 Երեխան կը սիրէ պղպեղ,  
 Քանի որ դոյնը կարմիր է:



Մոյլ, անպիտան, անգործ մարդը,  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է.  
 Ինչպէս անգոյն, անհատ վարդը,  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Ի՞նչ պէտք է թոյլ գլխաւորը.  
 Որ միակը լցնում է փորը.  
 Տգէտ, մոլի կարգաւորը.  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Լաւ մարդու ոտացն է կացին,  
 Թէ որ վատ է իւր դրացին.  
 Հօրը համար անպէտք որդին,  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Ինքն է իւր քսակի գողը,  
 Տանը վրայ մաղող հողը,  
 Ծնայլ մարդու համար փողը,  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Ներքինին ի՞նչ պէտք է կին,  
 Շքեղ սեռից շունի բաժին.  
 Կոյրի համար արև, լուսին,  
 Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Անասունին տուր գովասանք.  
 Նա ի՞նչ գիտէ այդպիսի կեանք.  
 Անզգամին պատիւ, յարգանք,  
 Եղած չեղած—մէկ հաշիւ է:

Մօտ է այնպէսի կորուստը,  
Չորս չափ կտաւ է հազուսար.  
Փլատ անօգուտ հարուստը,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Կենդանի մարդուն է արժան,  
Պատիւ, յարգանք, շքանշան.  
Մեռած մարդու համար արձան,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Խելօր, հմուտ դիտնականը,  
Հիմքը ամուր կանէ տանը.  
Կիսատ պաատ շինուած բանը,  
Եղած չեղած—մէկ հաշիւ է:

Առողջ տղին ատւր երիվար,  
Որ թռչի երթայ սարհասար.  
Անտոք մարդուն հարթ ճանապարհ,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Նրանք չունին շնորք ու շէնք,  
Գանգատուիլն է նրանց օրէնք.  
Երկշունհերուն գրահ ու զէնք,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Կտրիճ ազգն է ինքնին հնոց,  
Միշտ կ'արձակէ կրակ ու բոց.  
Փախչող զօրքին բերդ ու ամբոց,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Սկզբէն է հարկաւոր ջանք,  
Քանի որ հիւանդն ունի կեանք.  
Հողեւարքին դեղ ու դեղբանք.  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Խեղճին թնչ ազուտ իշխանը,  
Որ չի հասնի նեղութեանը.  
Անտարբեր, պաղ ազգականը,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

Երբ որ տեղը դայ ճշմարիտ,  
Հարկաւոր չէ լինել կրկիտ.  
Զատկից յետ կարճիւր հաւկիթ,  
Եղած՝ չեղած մէկ հաշիւ է:

Ուրախութեան օրը, յատուկ,  
Կուրախանան ծեր ու մանուկ.  
Հարսանիքից վերջը թմբուկ,  
Եղած՝ չեղած—մէկ հաշիւ է:

1880.







Չարախնդաց, չար մարդիկը թող վերջանան, ցաւ չէ ինձ,  
 Թող կորնչին բոլորովին, անհետանան, ցաւ չէ ինձ.  
 Աշխարհաւեր, անիրաւ, անխիղճները կերուկ ցաւ են,  
 Սուրբ օրէնքի զօրութեամբ մեռնին, չքանան, ցաւ չէ ինձ:

Բռնակալ, արիւն բաժող, տգրուկի պէս հարուստները,  
 Վաղահաս կործանումով աղքատ կը մնան, ցաւ չէ ինձ.  
 Չը խրատուող, ծնողաց զայրացնող դաւակները,  
 Տաժանակիր բանտերում արսոր կը գնան, ցաւ չէ ինձ.

Ժողովուրդը բարութեան ճանապարհից շեղողները  
 Տարւայ մէջ տասը հատը, եթէ մահանան, ցաւ չէ ինձ.  
 Բարոյապէս ընկնելու վրայ են, ախոսս, հայերը,  
 Ինքն իրանց կորստեանը ճամբայ կը բանան, ցաւ է ինձ:

1887.





## ՀՊԱՐՑ ՀԱՐՈՒՄՏԸ

Պարոն հարուստ, ինչո՞ւ այդքան հպարտ ես,  
Ունայն աշխարհի մէջ բաղձանքդ թո՞նչ է.

Վերջ ի վերջոյ դուն էլ կեանքդ կ'աւարտես,  
Իզուր մտածմունքդ, տանջանքդ թո՞նչ է:

Փարթամացիր հին Դարեհին հաւասար,  
Օր կը գայ չես գանիր վէրքիդ դեղ ու ճար.

Ոչ հոգուդ, ես և ոչ մարմնուդ համար,  
Ուրեմն, սիրելիս, զուր ջանքդ թո՞նչ է:

Թէ մեղքի մէջ մեռար՝ մեծ ցաւ է վերջը,  
Գիտես, դատաստան կայ, իրաւ է, վերջը.

Երկուսիս էլ շորս չափ կտաւ է վերջը,  
Բու ինձանից աւել ապրանքդ թո՞նչ է:

Ջիւանս լաւ գիտէ, փառքդ մէկ ձև է,  
Աշխարհումս շուտ անցաւոր պարգև է.

Հարիւր տարի ապրիս մեծ մասը սև է,  
Բու երջանիկ սեպած լաւ կեանքդ թո՞նչ է:

1883



Լայն օրերուս ուրախացող կեղծ ընկեր,  
Այժմ նեղն եմ ընկել, արի, մւրտեղ ես,  
Պատառներուս կտորներու շատակեր,  
Մեծը քեզ եմ տուել, արի, մւրտեղ ես:

Երբ ունէի փայլուն մետաղ բաւական,  
Ինձ կասէիր «չկայ մարդ քեզի նման»,  
Քու ձեռքովդ կազմում էիր ճոխ սեղան.  
Ո՞ր անկիւնն ես մտել, արի, մւրտեղ ես:

Քանի տունս հաց կար, չէիր պակասի,  
Կուգայիր, կանչելու չէիր ապասի,  
Իմ ունեցած կարողութեանս մասի  
Շատը դու ես խլել, արի, ուրտեղ ես:

Ասում էիր Վի վախենալ փորձաքից,  
Քեզ աւել կըսիրեմ իմ բոլոր կեանքից...  
Եթէ հնար ունիս փրկէ վտանգից,  
Վերջին օրս է հասել, արի, մւրտեղ ես:

Ջիւանը հասկացաւ քո կեցութիւնը  
Հետազօտեց սրտիդ ամեն անկիւնը,  
Շողոքորթելով ծծում ես արիւնը,  
Արդեօք ում ես դտել, արի, ուրտեղ ես:

1888.



## ԽՐԱՏ ԱԳՌԱԻՆ

Տգեղ ազուաւ, նոր փետուրներ գտնելով  
Ի դուր մի աշխատիր, ստիակ չես դառնալ,  
Սիրուն թռչնակ երամի մէջ մտնելով  
Ձեռ փոփոխուիլ, նոյն ես, տատարակ չես դառնալ:

Հանդերձը խելք չի տար, դարձեալ դու խն ես,  
Չայնդ տաղակալի է, կերպով տձև ես,  
Նրա ոտքերն է սև, դու ամբողջ սև ես,  
Սիրամարգին անգամ մշակ չես դառնալ:

Քէ ուզում ես հաղիր լուսեղէն հալաւ,  
Չայնդ քեզ մատնելով, ասում են ազուաւ,  
Կաղ ի կաղ քայլելով չես լինիր կաքաւ,  
Քեզ կը ծաղրեն, լաւ օրինակ չես դառնալ:

Դու ձմռան խօսնակ ես, հաղիր տաք մուշտակ,  
Խոպտո ձայնով բարձրացրու աղաղակ,  
Հոգիդ խարդախ, արդարութեան հակառակ,  
Դևի սեռ ես, դու հրեշտակ չես դառնալ:

Ջրանուս հետ կասեն թռչուններն համայն,  
Ստիակի շնորհիւ ապրում ես միայն,  
Ոչ նուազել ունիս և ոչ բողբոջ ձայն,  
Մեռնիս, տրաքիս, որ երգակ չես դառնալ:

1884.





## ՄԻ ՄԱՐԴ

Ո՞ւմ ես խաբում կեղծ քարոզիչ,  
 Ինչ՞ու ես այլոց նախատում.  
 Այլոց լինում ես համոզիչ.  
 Քու խօսքիդ դու չես հաւատում:


Սուտ գրոյցներ յօրինելի,  
 Խարդախ կերպով բան շինելի,  
 Խարեբայ ու կեղծ լինելի  
 Բռնած գործերդ են հաստատում:

Երբ դու քեզի կը վնասես,  
 Այլոց համար պատուհաս ես.  
 Էլ ուրիշից ի՞նչ կսպասես  
 Ինքդ բեզ չես գնահատում:

Ունիս ճարտար լեզու, բերան,  
 Խօսում ես կոկիկ բաւական,  
 Ինքդ գտիր ցաւիդ դարման  
 Օտարը ցաւ չի փարատում:

Ջիւան, ընթացքդ վատ է  
 Մտածիր, քեզուքեզ դատէ,  
 Մէկը քեզ պէտք է խրատէ  
 Դուն ես ուրիշին խրատում:

1865



## ԱԳԱՀ ՀԱՐՈՒՍ

Ռուն այս աշխարհիցը Բնչ պէտք է տանիս  
Ազահ հարուստ, ժլատ հարուստ, չար հարուստ,  
Որպէս դաշտի ծաղիկ դու շուտով կանցնիս,  
Վատ անունդ միշտ կըմնայ անկորուստ:

Թէ այսպէս մէկ կրեսոս կար Հայաստան,  
Ազահ, անկուշտ, նախանձ իժ օձի նժան,  
Ոչ աղքատ կըսիրէր, ոչ ուսումնարան  
Ո՛չ տանը մէջ ունէր կատարեալ ապրուստ:

Թէ խելք ունիս, արի խեղճերուն սիրէ,  
Առատասիրտ լինիլը մեծ խնդիր է.  
Ուսումնարաններուն զուժար նուիրէ,  
Խեղճ սաներուն նոյնպէս մշտական հագուստ:

Այդ քո տուած գանձդ ազգին որ կուտաս,  
Կը աճի միշտ և կը մնայ անվնաս,  
Ազգութիւնը քեզ կըրօնէ անպակաս,  
Գովասանք կըլսես անթիւ ամենուստ:

Թէ Զիւանուս լսես, ո՞վ մեծ ամիրա,  
Շատ պատիւ կունենաս աշխարհիս վրայ,  
Հոգիդ արքայութեան ժառանգ կըդառնայ,  
Օրհնութիւններ դու կըստանաս միշտ յերկնուստ:

1880.



## ՀԱՅ ԱԶԳԻ ԵՐԿԴԻՄԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒՆ

Ո՛վ արտաքին քարոզիչներ, Փրկիչն Աստուած է քաջ գիտենք.  
Աւետարանի խորհուրդը մենք ձեզանից առաջ գիտենք.  
Դուք գնացէք քարոզեցէք կոսապաշտներուն սուրբ գիրքը,  
Հաւատացողին նոր հաւատ քարոզողին դաճած գիտենք:

Մեր նախնիքը ոսկու հանքը հալել են, զուտն են դուրս բերել,  
Ձեր նոր գտած փայլուն իրը վաղուց քննել ենք, դաճ գիտենք.  
Դուք վարցական էք փող էք առնում, նրա համար մարդ էք որսում.  
Դուք ճշմարիտ քարոզիչ չէք, մենք ձեզի մարդահան գիտենք:

Յղճով մարդ էք, մեզ ցանուծ էք, հացի ճանապարհ ցոյց տուէք,  
Աստուածաշէն մեր Միօնը, անկարօտ, բարգաւաճ գիտենք:  
Մի քանի մարդ գողանալը դայլի արհեստ է, սիրելիք,  
Ձեր ջանքը դէպի մեր հօտը ձախ է՝ և միշտ անաջ գիտենք:

Ձեր մտքերը խաղաղ տան մէջ ատելութիւն սերմանելն է,  
Մենք այդպիսի համոզմունքը մէջը սև փուտ, կակաչ գիտենք  
Թէպէտ մեր դրախտը հին է, ինքը անմահ Հոգին նոր է,  
Զիւան, երբեք չի թառամի, մշտադալար կանաչ գիտենք:

1886.



## ԴՈՒՐ ԶԵԿԱԻ

**Ձ**ը նեղանձնս գեղեցիկ արարքդ ինձի դուր չեկաւ,  
Այլասեռուած ես երևում, վարքդ ինձի դուր չեկաւ,  
Ոչ մի սիրուն քու ունեցած գործերիդ պէս գործ չունի,  
Գործ դրած կանոններիդ, քու կարգդ ինձի դուր չեկաւ:

Կեղծ լացդ տուն կաւիրէ, հոգի կը հանէ ծիծաղդ,  
Նմանէ է տարատրոսին օթևանդ, կեցած թաղդ,  
Զեմ կարող մօտդ մնալ, սիրտս չսիրեց կենցաղդ,  
Արտաքուստ փայլուն, շինովի սարքդ ինձի դուր չեկաւ:

Դժուար է մէկին նարեկ աշխարհի մէջ քեզ հաւանող,  
Հարճի պէս ոտքդ լիզող, գերու նման նազըդ տանող.  
Որդիքդ արին խմող, ծառաներդ մարդ կլանող,  
Քու սիրած հայրենիքդ, աշխարհքդ ինձի դուր չեկաւ:

Կերպարանքդ թառամեցաւ, անցկացաւ բանը բանից  
Սիրունները դուրս հանեցին քեզի իրանց շրջանից,  
Սառուցի վրայի գիր է շուտ կը խլուի քեզանից,  
Ստացած կեղծ պատիւդ, արարքդ ինձի դուր չեկաւ:

1897.





X

# Վ Ե Ր Դ Ը

Քիւրթիւլ քո նման քեզ վերայ փափազ շունի վարդդ  
Շիրիճ

Ով պարտիզատէր ինչ՞ե գոհմանակ շունի վարդդ,  
Շատ կարելի է բաղդը յաջողակ շունի վարդդ.  
Անուանը համեմատ գեղեցիկ չէ երևում ճիշդ,  
Նման շուշանին փայլ ու սպիտակ շունի վարդդ:

Ոստերը չորացել են, օրը միշտ ծարաւ է անցնում,  
Անձրևի կաթիլ երկնից օժանդակ շունի վարդդ.  
Նարդոս, շուշանը, նարդիդ ու շահպրակը տես մէկ,  
Ափսոս, նրանց նման բարի վաստակ շունի վարդդ:

Նա վառում է, հառաշում է, դա նստած է հանգիստ,  
Երբէք սոխակին սէր ու նմանակ շունի վարդդ,  
Յերեկը արև չէ տեսնում, ամպերի տակն է,  
Իսկ գիշերը խաւար, լուս ու լուսնակ շունի վարդդ:

Բայց դու գովում ես թէ բոլոր ծաղկանց թագուհին է  
Ուր է, չէ դրած գլուխը պսակ՝ շունի վարդդ,  
Լուր իմ Զիւանուս խօսքերը, ով պարտիզատէր դու,  
Հասկացիր նոր օդ ծծելու ճաշակ շունի վարդդ:

1876.





## Կ Ո Շ Տ Ը




Խղճալի կոշտ, քեզի լաց քարի մասին իզուր մի լայ,  
ժնչ կլինի խեղճ քարը, անշուշտ վաղը անձրև կուզայ,  
Շատ սխալ է կարծիքդ, ինքդ շուտով ցեխ կըլինիս,  
Ջրհեղեղ էլ պատահի, քարը էլի քար կըմնայ:

Ջմեռը քիչ սառելով միթէ քարին հաւասարար,  
Պարունը շատ մօտիկ է, տեսնենք քու ուժդ կերևայ,  
Սպիտակ տաք վերմակդ յանկարծ մէկէն կըզառնայ ջուր,  
Տաքութիւնից քեզ համար բնաւ յաւիտեան յոյս չկայ:

Հանապազ երաշտութիւն սրտեղից է ամեն տարի,  
Անպակաս է անձրևը, երկինքը առատ, միշտ կուտայ,  
Իմ ցաւս հօմ կոշտը չէ, տկար Ջիւանի, քեզ հետ եմ  
Ընկերդ միշտ ուժեղ է, լաւ է մտածես քեզ վրայ:

1889.



## Ծ Ա Ղ Ի Կ

Մարունդ անցել է, աշնան պտուղ ես,  
Բայց նոր ես երևում, դեռ լաւ ես ծաղիկ,  
Միամիտն չենց գիտէ զարնան պտուղ ես,  
Չէ հասկացել ներկած կտաւ ես, ծաղիկ:

Պարտիզպանը միշտ մօտդ հարկաւոր է,  
Որ քեզ հսկէ, բնութեանդ սովոր է,  
Թէն գոյնդ լաւ է, տերեղ չոր է,  
Չեոք գիպաւ, կը վշշրիս, պառաւ ես, ծաղիկ:

Թարմութիւնդ վաճառել ես, սև երես,  
Ինչպէս քեզի առնեմ, սրտով սիրեմ ես,  
Ինձ ասում ես վարդն եմ, բայց դու վարդը չես,  
Հոտ չունիս, առնողիդ մեծ ցաւ ես, ծաղիկ:

1890





## ՍԵՒ ՀՈԳԻ

Սև հօրից՝ սև մօրից ծնուել ես հաստատ,  
 Սիրտդ սև է, բախտդ սև է, զոյնըդ սև,  
 Վիշապագունն ես ծագումիդ հարազատ,  
 Փոփոխուելով ստացել ես հայի ձև:

Գու լիզուդ հայի է, սիրտդ օտարի,  
 Միամիտները քեզ կարծում են բարի,  
 Ինքդ գայլ ես, մորթիդ նման ոչխարի,  
 Քեզ շրճանաչողը կոչր է, կամ թէ խե:

Դու մինչև ե՛րբ մեր փարախի մէջ մնաս,  
 Մեր հօտը պառակտես, հասցնես մնաս,  
 Գայլի հետ կը խնդաս, հովիտի հետ կուլաս  
 Գիշատիչ թռչունն ես, խօսունն առանց թև:

Արամազդի սիրելին ես առաջին,  
 Պատիւդ կաւելանայ կրկին ու կրկին,  
 Քեզ շրդիպաւ դաժան մահի գերանդին,  
 Մեր բախտից ունեցար շատ երկար արև:

Սև ես, էլ կը սևանաս դու գատաստանին,  
 Հողիդ պիտի սատանանները տանին,  
 Ինչ խօսք որ քու մասին ասաց Ջուանին,  
 Սխալ չկայ դու այնպէս ես արդարև:

1885.



## Հ Ի Ն Տ Ա Ր Ի

Սարմրազոյն հին-տարի, զնա մտիք գետինը,  
էլ չտեսնենք բեղպէսը և դու լինիս վերջինը-  
Հայոց համար չար տարի, արիւնարբու մարդակեր,  
Բուի նման մարդատեսաց, այրող, քանդող, տնաւեր,  
Որպէս նաև ջարդել տուիր անտէր եղբայրները մեր,  
Անգութ գազան թշնամու ձեռքը տալով կացինը:

Բո նախորդն էլ անգութ էր, հայատեսաց բեղի նման,  
Նա էլ քիչ հայ չըկերաւ որպէս բորենի գազան,  
Այդ քո արարմունքովդ մոռացրիր դու նրան,  
էլ գիւղ, քաղաք չըթողիր, դարձրիր աւեր խոպան,  
Հայի արնով ներկեցիր ամբողջ Տաճկա-Հայաստան,  
Մայրը մանուկը մոռացաւ, այրը իւր սիրած կինը:

Դու Նեոի գաւակներու ձեռքը տուիր սուր դանակ,  
Տարածեցիր ամեն տեղ, որպէս ցաւ համաճարակ,  
Քեզի մի թելադրեց չար տարի, չար աւազակ,  
Որ վարուեցար անտերունջ հաերու հետ այդ տեսակ,  
Լաւութեանդ փոխարէն տար Բէլիարից յիշատակ,  
Յուդայի պէս բեղի վարձ հայերի արեան գինը:

Ծնած օրիցդ ահաիկ, տխուր ազազակեցիր,  
Մահագուշակ ձայնովդ հայ սրտերը ծակեցիր-  
Մեծամեծ ատեններում հային պախաբակեցիր,  
Նրա կողմը խօսեցար, թշնամին շարակեցիր,  
Ողորմութեան. գթութեան ողջ դռները փակեցիր,  
Մնաց անտէր, անպաշտպան, անբախտ թորգումածինը:

Խառնափնիթոր, արիւնոտ գործերդ թողիր կիսատ,  
Փաթաթեցիր նոր տարու վզին ցաւերն անփարատ,  
Տկարները ընկճւած, կիսակենդան, յուսահատ,  
Ուժեղները անկամորդ խղճով բթացած, ժլատ,  
Դարձրիր բոլորովին շէն երկիրը անպատ,  
Դեերուն պարզեցիր հրեշտակա՞յ բաժինը:

Տայ Ասուած, չըհետևէր նոր թիւը քո շաւիղին,  
Դէպի լաւը և բարին գծէր իրան նոր ուղին,  
Խաղաղութեամբ վերջանար դատը անբախտ յայ սղզին,  
Վնասը չհանդիպեր ազգերի մէջ ոչոքին,  
Թէ Զիւանուս խնդիրը լսէ ազնիւ նոր-տարին,  
Արիւնով չի ներկուիք քեզ պէս նրա մարմինը:

1896.



## ՆԱԽԱՆՁՈՏ ՍԻՐՏ

Այսօր չի պէտք գոյնդ կարմիր  
Սիրտդ սե է, նախանձուտ սիրտ.  
Գրսից երևում ես ընտիր,  
Հոգիդ դե է, նախանձուտ սիրտ:  
Ներքուստ տղեղ, մութ, խաւար ես,  
Արտաքուստ բեղ կը գարդարես,  
Ցեխը կրող կը շպարես,  
Դու էլ ձե է նախանձուտ սիրտ:  
Զարդարուն, ծեփած գերեզման,  
Գիտեմ մէջըդ թէ ի՞նչեր կան,  
Այժմ տեսնում եմ ամեն բան.  
Հոյս, արե է, նախանձուտ սիրտ:  
Բերանդ մեղրի պուրակ է,  
Լեզուդ թունաւոր մամուկ է,  
Բեղ շիմացողը մանուկ է  
Կամ թէ իսկ է, նախանձուտ սիրտ:  
Ձիւանը գիտէ դու գէշ բոք ես,  
Ցեղական ժանտ, նեղաւոր ես,  
Դու նրանից թունաւոր ես,  
Օձն անթե է, նախանձուտ սիրտ:

1898.



**Վարդին սոխակից հեռացնող, ով անիրաւ փուշ,**  
 Կեանքերու զբաւ փուշ.  
 Յուսամ կըլինիս վառ կրակին մի օր գրաւ փուշ,  
 Ձեռն անարի թաթաւ փուշ.  
 Մինչեւ երբ, ասա, անմեղ ծաղիկներուն խարես անցնիս,  
 Կայծով լափես անցնիս.  
 Ով անպիտան արմատի բընէ, այտերդ սեաւ փուշ,  
 Պատճառում ես դաւ, փուշ.  
 Ոհ, որպիսի անխիղճ թունալից խայթ կայ քու մօտդ,  
 Չորանոն արօտդ,  
 Որքան նորահաս սրտերու ընծայում ես ցաւ, փուշ,  
 Արիւն ու շարաւ փուշ.  
 Թրթուրը, ճճին քեզանից խղճով են, ով անզուխ,  
 Սակայն դու սե ու մուխ.  
 Տարին քանի հաս բերում ես սոխակ ու կաքաւ, փուշ,  
 Չոհուած, դուռդ խաւ փուշ.  
 Վերջդ Ջիւանս քաջ գիտէ, որ շորանում ես շուտ,  
 Անվարձ ու անօգուտ.  
 Ներգործութիւնդ անց չի կենայ էլ քու, պառաւ փուշ,  
 Այրի դու ծարաւ փուշ:





## ՍԷՄԸՅԻ

Քամընթաց կեանքիս յարմար, ով սիրելիս, ինձ մխիթար չես  
Հակառակ կերպով ես վարվում, դու ահուժբի կառավար չես.  
Գնա, ինձէն հեռացիր, ով անիրաւ, անբարիշտ, անզուժ,  
Գիտեմ անշուշտ, որ անբարեսէր ես ե ինձի յարմար չես:

Պէ՛ ! Պենէշ կերպարանքդ, բարբդ դրեմ, ասմ քեզի, դու կարդա,  
Կիմանաս դու սխալմունքդ, գիտեմ այնքան էլ յիմար չես.  
Նախանձոտ, վատասիրտ օձի նման միշտ խայթում ես այլոց,  
Որ ունիս այդպիսի արատ, քեզ կըկարծես թէ վատթար չես:

Ճերեկը մին:Ք երեկոյ բամբասելով ման կուզաս մարդկանց,  
Գիշերը միամիտ պարկած տեղդ անգամ դու դադար չես.  
Ձիւանի երգիչը ամեն մի կերպով քեզի լաւ փորձով,  
Նկատեց վարք ու բարբդ, լաւ տեսաւ անկեղծ ու արդար չես:

1876.



## ՀԱՅԻ ԹՈՅՆ, ԿՈՂՄՐ

Հայր հային կըփռասէ,  
Օտարը երբէք մեղաւոր չեն.  
Հայերու սէրը պակաս է,  
Իրար սիրելու սովոր չեն:

Հայերը այս բանով վատ են,  
Իրարու ծուռ կընկատեն.  
Մէկ-մէկու այնպէս կատեն,  
Կարծես իրար նարկաւոր չեն:

Օտարին կըզոգարանեն,  
Բայց իրար միշտ դաւաճան են,  
Պապերէս մնացած բան են—  
Այս ցաւերը մեզ նոր չեն:

Ձիւանս կասեմ անկասկած,  
Մենք ենք առեւ մեզի հարուած.  
Օտարին մեզի հասուցած,  
Բացած վէրքերը շատ խոր չեն:

1884



## ՄԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Անդգամ ու անխիղճ մարդու գրպանից  
Երբ պակասեց փողը—կըզառնայ գազան,  
Կուտէ ինքն ինքն.

Դուրս կըզայ գայլի պէս իւր օթեանից,  
Կըխածէ ամենին կատղած շան նման,  
Պէտք է գտազան:

Այդ անբարոյական, անդրամ մարդը,  
Քշնամի կը կարծէ բարեկամ մարդը.  
Մանաւանդ որ խմեց անդգամ մարդը,  
Այլ նա չի ակնարկէր ծանօթ, ազգական,  
Կասէ ամեն բան:

Հոգու զգացումից չունելով բաժին.  
Կըզառնայ անասուն, անհողի մարմին.  
Կըկողոպտէ իւր ընկերը, գրացին,  
Աչքին չի երեւի սուրբ Աւետարան,  
Եւ ոչ գառաստան:

Մերկ գաշոյնը ձեռին դուրս կուգայ փողոց,  
Կըլլափէ շատերին որպէս վառ հնոց.  
Կըհարուածէ հանդիպողին, կուտայ խոց,  
Մէկին էլ կենացը նա սալով վախճան.  
Ղրկեց գերեզման:

Տարածուելով ձայնը ամենայն մի տեղ,  
Մինչ կիմանայ լուրը ատեանը անեղ.  
Կալանաւորելու գազանին ուժեղ,  
Կառաւարութիւնիս կըզնայ ոստիկան,  
Ըրունէ նրան:



## ԱՆՍԿՉՔՈՒՆՔ ՄԱՐԴԸ

Չեմնատիւ ծին նմանութիւն շատ ունի  
Անսկզբունք մարդը, գիւրահաւանը,  
Որովհետեւ հաստատ համոզմունք չունի,  
Մարդ չի գիտեր որն է ազօթարանը:

Անսկզբունք մարդը անապահով է,  
Որովհետեւ ինքն իրանից խոռով է,  
Ուստի սայլին որ նստաւ, նրան կը գողէ,  
Ամենին գործիք է նրա բերանը:

Դիւրահաւան մարդը, ինչպէս երեխայ,  
Նրա սիրելին է, ով տուեց կակոյ,  
Դեզ կերած ձկն պէս ջրից դուրս կը գայ,  
Շուտով կը նկնի իւր թշնամու ունկանը:

Քանի որ ճանաչում չունի բնական,  
Հաստատ գործի՝ խելքը չի պսակի նրան,  
Հողմավար, անարմատ, չոր ցախի նման,  
Կը շափշփէ հողագնդի շրջանը:

Կատարած գործերն են թերի ազամայ,  
Ինչու որ սրտումը հաւատ, յոյս չը կայ,  
Հոմանու պէս հազար մարդու խօսք կուտայ,  
Ո՛չ մէկին էլ չի լինի սիրեկանը:

Թղթիցը տանջուած ցաւը շատ կապուտ,  
Ստուերի պէս կանցնին օրերն անօգուտ,  
Շապկի պէս փոխում է հաւատը շուտ շուտ,  
Կորուցել է հոգու նշանաբանը:

Ունի կեղծ ու պատիր շողաքորթ լեզու,  
Սօսքերը անկապ են, չի խօսիլ ազգու-  
Դրական օրէնքը կարծելով շինծու,  
Նրա հետ ջրում է և բնականը:

Այսպէս մարդը գայթակղութեան քար է,  
Բարութիւն չի զգայ, խորհուրդը չար է.  
Որովհետեւ չի հասկանայ, յիմար է,  
Իւր դէմ կըզոզուէ իւր հարեանը:

Մի բան կորցրածի նման՝ անդադար,  
Ման կուզայ աստ և անդ մօլոր ու շուար.  
Իւր ունեցած վէրքին շրգանելով ճար,  
Քիչ կըմնայ բուկը ձգէ պարանը:

Ուղիղ ճանապարհից շեղուած, մօլորուած,  
Հողին հիւանդ, տխուր, սիրաւ տոչորուած,  
Խելքը քիչ կարճատես, մտքով սղտորուած,  
Մտացել է նախնեաց շափը-սահմանը:

Այդպէս մարդուն՝ մտքէն հանել է Աստուած  
Պատուի աստիճանից գլորել է ցած,  
Ջարդուած նաւի պէս ծովումն ընկղմած,  
Խաղալիք է դարձել ալեկոծմանը:

Սուրբ գիրքը չի կարդար, միտքն է անմարուր,  
Ղուռանից չի յուսար երբէք բարի լուր.  
Փրկչի լուսից զրկուած, հողու աչքը կուր,  
Ոչ Բուդդան ճանաչէ, ոչ Բրահմանը \*):

\*) Արեւելքում նշանաւոր կրօնների՝ բուդդանութեան և բրահմանականութեան հիմնադիրներն են:

Վերեն ստինք, թէ նա չունի սկզբունք,  
Ով ինչ սասաւ, նրան կուտայ իրաւունք.  
Տարին նոր՝ կըստանայ մի նոր համոզմունք,  
Սկսում է ստել անցեալ տարուանը:

Այսպէս մարդոց թիւը շատացել է շատ,  
Ոչ մի բանի, սրտով չեն կոչի հաստատ.  
Փոփոխակի ծառ են, չեն ձգեր արմատ,  
Զուր տալով զգուել է խեղճ պարտիզպանը:

Զիւան, ո՞վ էր տեսել այսպէս ժամանակ,  
Մարդիկ առանց գոյնի և տարօրինակ,  
Այնպէսներուն նմ կըվիժէ անգիտակ—  
Անհոգ, աներկիւղած ուսումնարանը:

1883





## ՍԵՒ ՆԱԽԱՆՁ

Չկամ, մտղձոտ սրտից ծնած օձաձև,  
 Լոյսին խաւար ասել տուող, սև, նախանձ.  
 Հողիդ սև է և քու կերպարանք սև,  
 Բուստին ձաւար ասել տուող, սև նախանձ:

Անգութ անդգայ ես, քո խիղճդ մեռած  
 Անստուեր մարմին ես անկրկնում ընկած,  
 Լեզուդ թունաւոր է և սիրտդ նեխուած,  
 Մարդուն տաւար ասել տուող, սև նախանձ:

Ձիւան, նախանձ մարդը չի լինիլ ուրախ,  
 Նրա կերած հացն է արիւն ու թարախ,  
 Ազնիւ հանքարանին դարձնող խարդախ,  
 Ոսկուն կապար ասել տուող, սև նախանձ:

1890.



Քիչերի պէս կանցկացնէ իւր տիւր,  
Տղէտ մարդը շատ զգայուն չի լինի,  
Անզգամը չի գիտեր իւր պատիւը,  
Նրա մօտը բարի անուն չի լինի:

Սարերում մեծացած քրդի իշխանը  
Ձի հասկանայ քաղաքական պայմանը,  
Հարիւր տարի կրթես, անխելք անբանը,  
Չբողոսես—նա իմաստուն չի լինի:

Ազամանդ չի լինի սև քարն անարժան,  
Հազար գոյն տաս՝ դարձեալ նա է անպիտան,  
Գեղեցիկը գեղեցիկ է բնական,  
Տղեղը հանգերձով սիրուն չի լինի:

Երբէք խորհուրդ մի տար մարդուն խաբեբայ,  
Միշտ որոնէ ճշմարտօրէն առարկայ,  
Ձիւան, հիմ մի ձգեր աւազի վրայ,  
Կասէ Տէրը, թէ այնտեղ տուն չի լինի:

1876.





## Գ Է Ր Վ Ի Շ

**Մ**էկ կիրակի առաւօտ դայֆումը նստած դադար,  
Երգելով երգ հայերէն, ածում էի ի՛մ բնար,  
ժողովուրդն էլ խոնուած դայֆումը նստած զումար,  
Լսում էին իմ երգը կարծելով իրանց յարմար.  
Յանկարծ տեսայ դոնիցը մի մարդ ներս մտաւ օտար,  
Տեսքիցը ճանաչեցի, որ սուտ գէրվիշ էր խաւար:

Նստաւ, քիչ հանգստացաւ, հարցրեցի. «՞վ ես դու,  
Ասաց՝ ես լաւ գէրվիշ եմ եւ բժիշկ եմ ահարկու.  
Ես նրան սուտ կարծելով՝ խօսքերին չնղայ հլու,  
Տեսայ որ խարերայ էր, ազքատաց արիւնարբու.  
Հարցուցի կարգալ գիտե՞ս, սասա՛ տասնեակու լեզու,  
Ձորս հինգ կասր գիրք կապած աղլուխով անթումը կար:

Դրան փորձելու համար, տարանք մենք գինետունը,  
Հարցուցինք, իմացանք որ Ղալանդար էր անունը,  
Երբ գրքերը բաց արինք՝ քանդուեց սրտի սինը,  
Ճարտար լեզուն մունջ դառաւ, պաղաւ երակարիւնք,  
Իսկ հաչելու կողմանէ նրանից լաւ էր շունը,  
Նա իշու հէրն ու մերն էր, ունէր ջորու գաղափար:

Բացի այլ լեզուները իւր լեզուն անգամ չըգիտէր,  
Պաս բաները թող տուինք, գռեհիկ էր, խամ չըգիտէր,  
Նրա միտքը խաւար էր օրը քանի ժամ չըգիտէր.  
Իւր անձը ազատելու, ցոյց տալու պատգամ չըգիտէր,  
Մարմնի վրայ կլինի քանի անգամ չըգիտէր,  
Բնական յամբ կամ ի ուլին զեղ ցոյց կուտար օգտակար:

Ալեքսանդրապոլիցը կարեցինք նրա խէրըը,  
Ասինք՝ եւ կտրիր այստից. քեզ անիծէ սուրբ Տէրը,  
Երբ ձեռքիցը խնցինք իւր հաւաքած նուէրը,  
Մոռացաւ իւր կրօնը, մոռացաւ սրտի սէրը,  
Նայն բողէին նա կորաւ, էլ չեբեցաւ ստուերը,  
Կարծես անդունդը ձգեց նրան Աստուած բարեբար:

Քանի՛ մէկ, քանի՛ հայեր, անուններս խանդարենք  
Մեր աները քանդելով ուրիշինը զարգարենք.  
Քանի՛ մէկ այս սնտախ մարդկանց կամքը կատարենք.  
Արդեօք վարքով ընթացքով մենք թր ազգին շարմար ենք,  
Երբ կլլինի այն օրը՝ մէկ գիտութիւն հնարենք,  
Իմաստութեամբ շարժըութիւնք, Զիւան, չըմնար ախճար:

1874.



## ՀՈԳԻ ՈՐԱՅՍՈՂՆԵՐ

Մարդու և կնոջ մէջ որոճ ցանողը,  
Երկնքից աքսորուած Բելիւրն է մուրը:  
Մարդ ունեցող կնոջ ճամբից հանողը,  
Եւային Հանդիպող օձն է թունաւոր:

Սուրբ դրոց խօսքերով ամեն այր ու կին  
Ասուած է որ պիտի լինին մէկ մարմին,  
Սրբացած միութեան մէջ մանող անձին,  
Ինձ հարցնեն, կախազան է հարկաւոր:

Համայնքի ցեց է մարդն ա՛ր բարոյական,  
Պէտք է ընտանիքից դուրս վանել նրան,  
Գնդակով սպանել որպէս թի դազան,  
Եւ դիակը անել ժինչ հազար կտոր:

Ջրանի, վատ հողին վատ է իւր ցեղից,  
Մարբութիւն դուրս չի դայ անասնամեղից,  
Այնպէս մարդը պիտի վերնայ մէջ տեղից,  
Շատին կը վարակէ շրպէս կեղտոտ բոր:

1890



Օ Ձ Ի Զ Ա Գ Ը

Օձի ձագը ընտանենալ չը գիտէ,  
 Հարբւր տարբի կըթիս, նա ձուկ չի դառնալ,  
 Երբէք բնութիւնը թող տալ չը գիտէ.  
 Ժառանգաբար սխակալ է, սխակալ:

Քանի սառն է, փոքր է, խեղճ է երևում,  
 Երբ տաքացաւ, մեծցաւ, անուճ է ցնցում.  
 Յանկարծ տեսար մի վէրք բացեց քո սրտում,  
 Սկսեց կրծքիցդ արիւնը շոտալ:

Օձին մի հաւատալ միամիտ արդար,  
 Գլուխը շաղջախէ ուրաեղ որ տեսար.  
 Անպիտան սողունը թող չապրի երկար,  
 Քանի որ դաժան է, գիտէ վնաս տալ:

Ջրան, չլինի օձին լաւութիւն անես,  
 Սառած տեսնես տունըդ տանես, պահպանես  
 Թունաւոր ատամը մինչև չըհանես,  
 Նա այնպէս ցեղ է, որ չի ստրկանալ:

1892.





## Ա Ն Փ Ո Ր Ձ Ը

**Մ**իամիտ ու անփորձ երիտասարդը  
 կանանց միջի հաշմ ծերուկին հաւանեց.  
 Քողեց բալասանը, մեխակը, վարդը,  
 Մաղկոց մտաւ իշկաթնուկին հաւանեց:

Միամիտը խարուեց, օձն աւաւ ծոցը.  
 Քուճաւորուեց, կրճքում բացուեցաւ խոցը.  
 Անճաշակը մտաւ բանջարանոցը,  
 Աղծպանքին, խրինտունկին հաւանեց:

Ջրանի, խեղճ բուրդը շտեսած երկիր,  
 Խնձոր կարծեց, կերաւ պղպեղը կարմիր.  
 Երեխային ասին միրգ ջոկէ ընտիր,  
 Հոտած, փխրած ձմերուկին հաւանեց:

1888.



## Պ Ա Յ Տ

**Մ**ի առաւելս ես տանից շուտ դուրս ելայ միայնակ,  
Գնում էի փողոց, տեսայ մի լաւ օրինակ—  
Տեսայ մի երիտասարդ, հեծած ձին էր սպիտակ,  
Ուզում էր մի պայտ իշի՝ հանելով փողի քսակ,  
Հարցնելով տղային՝ ասի այդ թնչ նպատակ,  
Մի պայտով չի պայտուի չարս-տնանի աւանակ:

Տղան դարձաւ դէպի ինձ, ասաւ՝ ով իմ բարեկամ-  
Այս պայտը սխալ տանիմ մեր գիւղի տէրտէրին տամ.  
Այնտեղ կուղեմ մի աղջիկ, որի անունն է Մարիամ.  
Ես նրան շատ եմ սիրում, նա երբէք չու՛նի խնամ,  
Մեր տէրտէրը կախարդ է, ասաց, ի՞նչպէս մի խախամ,  
Շատ գործեր է կատարում պայտով ամեն մի տեսակ:

Ասի որ պայտը տանիս. թնչ կանէ՛ տէր-հայրիկը,  
Ասաւ՝ վերան գնում է կախարդական ծագիկը,  
Կրակարանի մաքր թողում է այս պայտիկը,  
Որքան տաքանայ պայտը՝ կըտաքանայ աղջիկը,  
Այնուհետև սիրուհիս կուղարկէ իւր մամնիքը,  
Այլ չի մնալ նա ինձ հետ երբէք սիրով հակառակ:

Կրկին առաջարկեցի ես տղային գիւղական,  
Ասի ճիշտ կը հաւատանս, որ լինի այդպիսի բան.  
Տղան քիչ մտածելով տուեց այսպէս սրտասխան—  
Թէ ես սիրոյ ձեռքիցը եղած եմ թափառական,  
Ինչ ասն կը հաւատամ, զուցէ տան ցաւիս դարման,  
Ընկել է սրտիս մէջը, ասաց, մի անշէջ կրակ:

Տղային ափսոսալով տուի այսպէս մի խրատ,  
Թէ, եղբայր դրանք սուտ են, անմիտ բան են անհաստատ,  
Տերտէրը քեզ խաբել է, դու մի ընծայի հաւատ,  
Նա ինքն էլ չի հասկանում արածը լաւ է թէ վատ,  
Արի, եղբայր, հեռացիր այդ վտանգից լիւր ազատ,  
Քեզի այդ բանին զրկողը է ստութեանց հեղինակ:

Ինչ թողնելնով հեռացաւ, գնաց տղան իւր գեղը,  
Մտքովս ասի՝ շնա արտոս, խարուել է խեղճ անմեղը,  
Նա կարծում էր՝ թէ տարաւ ունեցած ցաւի գեղը.  
Հիմա դուք լաւ կշտեցէք այս տէրտէրի ուղեղը.  
Երանի ժողովրդին, որ սա է հանձարեղը.  
Ով Զիւան, էլ հայերը ինչ՞նչ կերթան շիրթակր:

1876.



## ԳԻՏՈՒՆՆ ՈՒ ՏԳԵՏԸ

Գիտունի հետ քար բաշելը հեշտ է խիստ,  
Տղէտի հետ մեղր ուտելը դժուար է,  
Գիտունը կը ճարէ վերջն իրան հանգիստ,  
Բայց ազեարը նորէն էլի յիմար է:

Ով կասէ բնական իմաստուն ծնայ,  
Ուսում չըդիացողը անկիրթ կըմնայ,  
Քողը ցեխը տեսաւ, անշուշտ կըզնայ,  
Քէկուզ վիզը հարիւր մարդարիտ շարէ:

Գիտութիւնը մէկ արև է անխաւար,  
Մովից ոտով կերթայ առանց նաւազար,  
Բայց տղէտը չունի ուղիղ գաղափար,  
Որովհետև հոգոյ աչքը խաւար է:

Ջրան, մարդկութեան մէջ խեղճ է յիմարը,  
Յառաջագէմ է լեզուազէտ, ճարտարը,  
Քէ կուզես որոնէ ամբողջ աշխարհը,  
Իմաստունի մօտ տղէտը տկար է:

1869,





**Չ**արասիրտ, նախանձուտ մարդը ընկերին  
 Ձի ուղեր, որ լինի ապահով, խաղաղ,  
 Եթէ տեսնի մի նոր գարդը ընկերին,  
 Ամբողջ տարով նա կը Թայ անձիծաղ:

Այսպէս մարդը միշտ կը քաշէ զէպ իրան,  
 Իրա կողմն է առում ուրազի նման,  
 Եթէ իւր ընկերին մի շնչին բան տան,  
 Ինչն է ինձ շտուին, կասէ, շատ աստղ:

Սա իւր վատ կրքերի գարձել է գերին,  
 Ոչ գաւակ կը սիրէ և ոչ ամուսին,  
 Թէն մարդ է, սորան կասեն մարդածին,  
 Մի շան շափ էլ չի ճանաչիլ հաց ու աղ:

Ձիւան, բարի մարդկանց մօտ սա յետին է,  
 Անուճով ստուեր է, գործով շնչին է,  
 Այսպէս մարդը հոգի չունի, մարմին է,  
 Վաղուց ի իղճը մեռած՝ մտած է զազաղ:

1878.



X

ՆՈՐ ԵՐԳ

Եթէր տարի պաս պահեցիր քու մասին,  
Որ ես ու դու ընկեր լինէի՛նք միասին,  
Ինձ խարեցիր պատր ուրիշ ամուսին՝  
Գնա, գնա, անխղճմտանք անիրաւ,  
Ճաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Աղաւթին ինչ պէտք է սիրել աղաւնեակ,  
Քարգաթի մարդը շրդիտէ սէրն անապակ,  
Քեզ շար գեիդ ես կարծեցի հրեշտակ,  
Գնա, գնա, անխղճմտանք անիրաւ,  
Ճաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Մինչեւ շրթոյնես քու պատուի հետ խաղալդ  
Լոկ խօսքերով չի ուղղուիլ սխալդ,  
Այսուհետեւ ուշ է քու ինձ սիրա տալդ,  
Գնա, գնա անխղճմտանք անիրաւ,  
Ճաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

Սուր դանակ է քու երկտայրի բերանդ,  
Գործդ նման չէ հաշակուած անուանդ,  
Ո՞րտեղ մեաց ինձ հետ արած պայմանդ,  
Գնա, գնա, անխղճմտանք անիրաւ,  
Ճաւ չունէի, սրտիս վրայ դրիր ցաւ:

1893.



Բ Ը Ն Չ Ի Լ Ի Ն Ի

Գամէշ մօրթէ արիւն դուրս գայ,  
 Ծննդդուդից բան չի լինի.  
 Մաղիկ ժողուէ որ մեղք տայ,  
 Իշկաթնուկից բան չի լինի:

Պատերազմի դաշտի վրա:  
 Ե՛րբ են ուղարկում երեխայ:  
 Գտիր, ընտրէ հօօր հսկայ,  
 Քեզն լամուկից բան չի լինի:

Վախկոտները տղամարդ չեն,  
 Նրանք կանանց հաշուի մէջ են,  
 Ազատ մեծցած քաջեր պէտք են,  
 Քեզն ստրուկից բան չի լինի:

Զիւան, մարդը անսօսական,  
 Քեզն կրմեայ միշտ յաւիտեան  
 Թէ շունենայ հօօր պաշտպան,  
 Որք մանուկից բան չի լինի:

1893.



## ԱՆՄԻՏԸ

Մխարուհցայ տեղիք տուի անմտին,  
Երես առաւ, ելաւ նստաւ իմ ուսին.  
Ես նրան իմ բարև տալս զգջացի,  
Որովհետև շատ ու շատ ցաւ զգացի.  
Յետոյ դարձայ ես ինձ ու ինձ ասացի—  
Անմիտ մարդուն պատիւ զուր է զխտովին:

«Իւր շափը չըճանաչողից հետու կաց» —  
Ինձի ասաւ մի պատուելի բանիմաց.  
Անմիտ մարդը թէ լինի էլ սրբակեաց,  
Իրաց վանէ զու քեզանից, միշտ ի բաց,  
Նեղը ընկաւ, մօտդ կանէ լաց ու թաց,  
Միտքը այլ է — մի խզար ամենին:

Անմիտ մէկին եթէ տուիր զովասան,  
Մեծ մարդու տեղ նա կըզնէ ինքն իրան,  
Կըսկսէ հպարտանալ բաւական,  
Ուրիլ, փքուիլ հնգու աքլորի նման,  
Կեղծ զովեստը համարելով իսկական,  
Կըմտանայ դրութիւնը առաջին:

Նա սիրում է տկուճրներում լինել շատ,  
Այլոց գինին անշափ խմել, միշտ առատ.  
Թօսելու մէջ չի սրոշիւր լաւ ու վատ,  
Անմտածել վեր կըվարէ անըզատ.  
Փեթակի մէջ, իշամեղուին համեմատ,  
Կըզնասէ բջիջները թանկագին:

Զիւսն, չըմտածող մարդն է անզգայ,  
Կարծես մէջը ամօթ, պատկառանք չըկայ,  
Թէ որ մէկի տունը խնճոյքի գնայ,  
Անպատեհաւ այն տանը մէկ վնաս կուտայ.  
Ով որ նրան հրաւիրեց, կըզգջայ,  
Ուրաւեց մտաւ, վէճ կըբանայ անազին:

## ԱԶԳՈՒՐԱՅԸ

Ո՛վ որ իւր ազգն ուրանայ,  
Երկու աչքով կուրանայ.  
Յեանեալ ազգաստի նման,  
Դո՛նէ ի դուռ մուրանայ:

Կշտին դիպչի զհզարդը,  
Սրտիցը թափի լեարդը,  
Դժողօր բոնցկեւի՛ք  
Լինի ազգուրաց մարգը:

Կեղծ ու պատիր հնչողին,  
Կատուի պէս մոնչողին,  
Աստուած աշխարհից քնջէ  
Հայ անունը քնջողին:

Հայը որբ ժողովուրդ է,  
Օտարաց մէջ խառնուրդ է.  
Ազգուրաց, աստուածուրաց—  
Երկուսը մէկ խորհուրդ:

Երբ որ հայը գումարուի,  
Նրան չի հաւասարուի.  
Հայերէն չը դիպցողը  
Կիսատ հայ կը համարուի:

Ազգուրացը անմիտ է,  
Իւր ազգին ծուռ կը դիտէ.  
Բթամիտ շահասէրը  
Ազգութիւնը թնջ գիտէ:

Որոնէ Հայաստանը,  
Հայրենիքդ նշանը.  
Թնչպէս հայ ճնար մօրից,  
Հայ մտիր գերեզմանը:

Ո՛վ դու հայ մարդ, զօրացիր,  
Լուսնի նման նորացիր.  
Ոչ այլազգին անարգէ,  
Ոչ քու ազգդ ուրացիր:

Ինքնիշխան անձիդ սիրէ,  
Կեանքդ նրան նուիրէ,  
Քրիստոսից օւանդած  
Հայի կրօնն էլ սիրէ:

Աստուած տուեց նմանը,  
Աժենին իւր արժանը.  
Ազգուրացը Վասակն է,  
Ազգասէրը Վարդանը,

Քէ կըյիշուի Վասակը,  
Բայց վատ է նպատակը.  
Պիտի խօսուի ժիշտ բարի,  
Վարդանայ յիշատակը:

Պատմութիւնը բարեկէ,  
Մէկ ժամ նրան պարզեկէ,  
Ահա երկու ճանապարհ—  
Որին կուզես հետեկէ:

1876.





ԻՄ ՁԸ ԿՍԼԾԱՅԸ

Աշխարհումս ուժ որ բարեկամ գիտցայ,  
Նա փոխանակ՝ ինձի հակառակ դարձաւ.  
Բւժ որ հաւատարիմ, ուղիղ հասկացայ,  
Ազգ ասող, սերացող շար՝ Վասակ դարձաւ:

Ինձ չօղնեց իմ սիրած լաւ բարեկամս,  
Մինչդէ՛ս սրախ էր՝ տխուր դարձաւ իմ ժամս.  
Չը՛սակացայ, զուր կորուցի գրամս,  
Նժոյզ ձի կարծածս աւանակ դարձաւ:

Ձիւանին եւ՛, իզուր թառամեց վարդս,  
Աւար գնաց կայրս, կարուածրս, զարդս.  
Արդար ու խելամուտ ճանաչած մարդս.  
Տեւր՝ նդհակառակը—աւազակ դարձաւ:

1874.



X

## ԳԱԳՆԵԼ ԳԻԻԱՆԻ

Շատ բնցար, սիրելի, լոյսը կտուրից անցկացաւ,  
Մայրը մտաւ լուսինը, դէմի բլուրից անցկացաւ,  
Քթոցը աշունհետեւ էլ չի կարող պատասպարել,  
Մի ահագին այժ զտաւ, ուլը մտուրից անցկացաւ:

Այրի, անբուն, խեղճ հաւի ձագերը մէկ-մէկ որսալով,  
Կեղծաւոր նեղ աղուէսը հաստատ ուրուրից անցկացաւ,  
Իէպի ծովը համնելու շտապով արագ վազելով,  
Մայր Արաքսը խենթացաւ, ահուելի Քուռից անցկացաւ:

Լուսաւոր ժամանակ է, փոքրը մեծին չի հաւանում  
Տես, Ջիւան, զարգացումովն արսը կեսուրից անցկացաւ:

1888.





Հ Ա Յ Բ Ա Ջ Յ Ա Ն Ա Յ Ի Ո Ղ Ա Ք Ը

**Ո**վ որ ինձ չի սիրել, խնդրում եմ, սակք,  
ես նրան թոյն սիրեմ, կամ լինիմ ընկեր.

Ձե՛ որ ստիպելով մեզ կը վնասէք,  
Շատ կըթշուառանայ յետոյ կեանքը մեր:

Փեսան ինձի է պէ՛տք թէ քեզի, հայրիկ,  
Քո հաւանած մարդով ես չեմ երջանիկ,  
Երբ սիրով կապուած չեմ ազայ ու աղջիկ,  
Նշանը անհիմն է, պսակն անվաւեր:

Հայրիկ, քու բաղձանքդ բարի բաքձանք չէ,  
Այդ քու տուած կեանքդ ինձ համար կեանք չէ,  
Աղջիկ սեռն էլ մարդ է, ծախու ապրանք չէ,  
Փող շահելու առարկայ չէ օգտաբեր:

Տուր ինձ այն փեսային, որին կըսիրեմ,  
Գնամ ուրախ սրտով կեանքս նուիրեմ.  
Այնուհետե հաստատ ես պարտադիր եմ,  
Քեզ համար աղօթել ցերեկ և գիշեր:

Դու ինձ մի տար մեր թշնամու դաւակին.  
Ձեմ կարող գիմանալ ես այդ կրակին.  
Ո՛նց թողնեմ իմ սրախ ընտրած Հայկակին.  
Ո՛վ ունի նրա պէս զեղեցիկ պատկեր:

Ես չեմ գատուիր իմ Հայկակից յախտեան,  
Ինձ համար մեռած է է քո ընտրած փեսան.  
Գըսպաննեմ ես ինձի չեմ գնար նրան,  
Ծնող ես, մի դառնար որդուդ գլխակեր:

Մի աղջկայ բերնից լսել եմ հաստատ,  
Այս խօսքերը չօր դէմ խօսում էր ազատ...  
Թէ տեղը չըզտաւ մի աղջիկ արմատ,  
Շուտով կը թառամի որպէս վարդի թեր:



Ն Կ Ա Տ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

Երարոյական աննապարհից շեղուողին,  
 Զրկող, տուն աւերող սրիկայ տեսայ.  
 Քննեցի իւր խղճիցը նեղուողին,  
 Պատժի ու վնասի ենթակայ տեսայ:

Նկատեցի անպարկեշտը անիրաւ,  
 Խեղճ անձը ցոփութեան արել է դրաւ,  
 Ով որ իղուր տեղը շատ երդում կերաւ,  
 Ստախուս, անազնիւ, խտրերայ տեսայ:

Ուշք դարձուցի անզգամի պատկերին,  
 Ոչ իրան համար է և ոչ ընկերին.  
 Օրերը անօդուտ սնցուցած ձերին,  
 Նկատելով խելքը՝ երեխայ տեսայ:

Խենչ ու պորտաբոյժ երիտասարդը,  
 Զոյգ ռարով ընկել է մահուան թակարդը,  
 Զեհունանայն, անարհեստ, խղճայի մարդը,  
 Հարուստներու դուռը միշտ ծառայ տեսայ:

Մէկը ելաւ կեղծ մտրճակներ հնարեց,  
 Իւր դրացու գէճը սրուցայթ լարեց,  
 Ով որ իրան իրաւախոհ համարեց,  
 Եանցաւորին պաշտպան՝ սոււա վկայ տեսայ:

Ով իրան հոշակեց հասկացող արթուն,  
 Քմբած գտայ նրան, ոչ թէ գուարթուն,  
 Այլոց ձրի եղած գուարթուն մարդուն,  
 Փրատ ու անպորմ հրէայ տեսայ:

Բաղդասար չի լինի ամեն երեխայ,—  
Ունենայ լաւ ծնող, բարի ապագայ,  
Լաւ կրթութիւն շտանոգներուն համարեալ,  
Մեծ մասը անպատկառ, անզգայ տեսայ:

Ի՞նչ ոգուտ՝ ունենայ վիթխարի մարմին,  
Հոգին պատիկ լինի. դորձերը չնշին,  
Մօլի, ու մեկ երիտասարդ կարգնին,  
Բանտը պտակած՝ սուրերուձ շխթայ տեսայ:

Երկինքը ամպամած, արեւ խուար,  
Մշուշով պատած է բլուր, դաշտ ու սար,  
Գայլի ա՛նից անար ընկած սար ու բար,  
Բայց հովիւը քնած՝ բացակայ տեսայ:

Իզուր կրփչանայ ազէտի ձիւրքը,  
Հոգու վրայ տիրանալով շար կիրքը,  
Պաժամուժ ամբօխի կարգալով գիրքը,  
Անկապ, առանց մարտի՝ խորաթա տեսայ:

Շոայլները իրանց անձը մատնել են,  
Իզուր տեղը քսակները հատնել են,  
Քելտաները ինչ աշխատել, վատնել են,  
Քելացիներու մօտ մամնայ տեսայ:

Յուցամոլ, նմանող անձն է շատ նկուն,  
Ինչ տեսաւ՝ կրչարի, կարծելով սիրուն,  
Հազօտով ու ձևով մեր երտպացուն,  
Զարգացումով Միջին Ասիա տեսայ:

Գտնւ զիշտ է նախարակի արածը,  
Մանողի վրայ է իտուժ մանածը,  
Սկզբէն մինչև այսօր շքտեսնուածը,  
Իժ անբախտութիւնս ես հիմա տեսայ:

Բախտը կարնատես է թէ քննես մօտիկ,  
Քեղծ մարդուն կընծայէ սիգանեմ ազջիկ,  
Արժանաւորը՝ խեղճ, միշտ ազերջանիկ,  
Անարժանը՝ հարուստ ամիրա տեսայ:

Մարդ կայ ծառայում է օտարի շահին,  
Քամիով իւր անձը տալիս է մահին,  
Մաքրութիւն պահանջող ատողջապահին,  
Ամիսներով աղտոտ, անլուայ տեսայ:

Ջիւան բարութիւնը կը յաղթէ շարին,  
Ինչպէս լոյսը չակասակ է խաւարին,  
Նա է տարել յաղթանակը աշխարհին,  
Ում որ արիասիրտ, գործունեայ տեսայ:

1884.



## Ջ Ա Տ Ի Կ

Սիրոյդ դուր չի գալիս ինձի այս անգամ  
Տրտում ու տխուր ես, անձիծաղ, զատիկ,  
Գարունդ եղկելի, արևդ անհամ,  
Օրերդ ամպամած ցուրտ ու պաղ, զատիկ:

Հայրդ հիւանդատ էր, մայրդ նոյնպէսնակ,  
Հարկաւ կը ծնէին քեզ նման դաւակ,  
Անդադար անում ես լաց ու աղաղակ,  
Քուն ու հանդիստ շունիս անխաղաղ զատիկ:

Յիսուն օր ծուժ ու պաս պահեցին մարդիկ,  
Որ քեզանով զոնէ լինին երջանիկ,  
Աւելացաւ հոգս ու ցաւերն հինգապատիկ,  
Ոչ խնդում ցոյց տուիր և ոչ խաղ, զատիկ:

Քու շնորհքդ կարմիր ձուն է, այն էլ սուղ,  
Հաւ չը կայ, եղածն էլ մեաց անպտուղ:  
Բարիքներէից թափուր կարաս ու բզուղ,  
Տուն կայ օր շունի դեռ հաց ու աղ, զատիկ:

Մթերքներդ խիստ թանկ, փողը սև աղուէս,  
Աշխատանքի ազրիւր չկայ մշտապէս,  
Խեղճը ինչով սարքէ կեր ու խում, հանդէս,  
Փոխան գառի շունի աքաղաղ, զատիկ:

Պապերդ ունևոր հայրդ միշտ աղքատ,  
Ի սկ հօրդ պատճէնը, ճուտն ես հարազատ,  
Տարիս բառասունուվեց տարեւ և՛ լաւ, վատ,  
Չեմ տեսել քեզ նման խեղճ ու կաղ զատիկ:

Կերթաս հրապարակ՝ ոչ մի բան չը կայ,  
Պաշար բերող գիւղացիք են բացակայ,  
Իբանց համար ապրուստ շունին առօրեայ,  
Ո՞րտեղից ցոյց տան մեզ լաւ կենցաղ, զատիկ:

Երեաները թթուած, աչքերը պղտոր,  
Մարդիկ ման են գալիս, խեղճ մտամուր,  
Դու անբժիտ ես, թէ անբոխն է չքաւոր,  
Այս տարի շին անում շատ մատաղ գատիկ:

Քեզնից կըսպասէինք ծաղկեալ նոր գարուն,  
Ճրտից աղատուէինք մարդ թէ անասուն,  
Հակառակը ինքդ եղար ցրտի բուն.  
Ոտքդ ու ձեռքդ ստոած ձիւնաթաղ, գատիկ:

Ոչ արեղ տար է, ոչ օդդ պայծառ,  
Ոչ ծաղկեալ դաշտ ունիս և ոչ կա՛ւաչ ծառ.  
Գանգատուում է ամեն նպարապահձառ,  
Այս տարի շատ ծոյլ ես ու գանդաղ, գատիկ:

Ամեն սք մի տեսակ ցաւով կըտքայ,  
Թէ աղքատ, թէ հարուստ ամենը կուլայ,  
Իսկապէս ոչ մի մարդ բերախ չըտեսայ.  
Ման եկայ անէտուն, թաղէթաղ գատիկ:

Այսօր քրիստոնեայ աշխարհն ընդհանուր,  
Իրար կըհաղորդեն մեծ աւետալուր,  
Մեր մեռած գործերուն կենդանութիւն տուր,  
Որ մտել են վաղուց ի դազաղ, գատիկ:

Օգնէ Արարիչը ամենարարի,  
Գիւղացոց զաշտերը, ցանքսը դալարի,  
Մեր Շիրակ գաւառը խեղճ է այս տարի,  
Շատ ունի տնանկ ու անսուաղ գատիկ:

Դու յարութեան օրն ես սուրը կենարարին,  
Որ եղաւ փրկիչը բոլոր աշխարհին,  
Հասարակած հօրը, մեծ Բարեբարին,  
Տուր ոսկի ու արծաթ գանձ, մետաղ, գատիկ:

Ջիւանս կը պահեմ մարտեր ծոււռ ու պաս,  
Որ չըխօսիս ինձ դէմ, շանես կամ ու կաս,  
Խնդրում եմ միւս անգամ խեղճ չըդաս,  
Գիտեմ պիտի դաւնաս ուչ թէ վաղ, գատիկ:

## Մ Ա Ր Տ Ա Մ Ի Ս

Այս տարի ինձ դուր չեկար, ով բոժարեր մարտ ամիս,  
Դարձուցիր մեր սրտերը ցրտից աւեր, մարտ ամիս,  
Մառուցով վեր շարեցիր սուրբ դուռը մեր մարտ ամիս,  
Մանուկների իշնամի, թառամած, ձեր, մարտ ամիս,  
Քէն գարնան մօտիկ հս. երբեմն ջերմ, մարտ ամիս,  
Ունիս դաժան տաղակալի ձմրան սպտկեր, մարտ ամիս:

Եօթ աւուր զայսձ էիր, ցնացիր ցուրտ որսալու,  
Մատաղահաս գառները որ չըթողնես մանգալու.  
Այն օրուանից երեխայք չըպնացին կարգալու,  
Տոչորուած ծնողները սկսեցին սղբալու,  
Յրաթի, բուքի երկիրդից մանուկները խաղալու  
Տանից դուրս չեն կարող գալ ցերեկ-գիշեր, մարտ ամիս:

Փոխանակ պարզ տաք օրեր, բերիք նոր ձիւն, ցուրտ ու քուր,  
Ինչ ունէիր թափեցիր մեզի վրայ գայրացուք,  
Հորիզոնդ ամպամած, առանց արև, շարաշուք,  
Հացուցիր մօզովուրդը, թափել տուիր արտասուք,  
Փարնան էլ յոյս չթողիր, քո երեսին լինի թուք,  
Որ չներկայացնես այսպիսի դեր, մարտ ամիս:

Փետրուարը արիկ եղաւ, խենթ, քեզի շինեց բերան,  
Վատ անունը դու տարար, նա չես քաշեց ինքն իրան,  
Ես քու լաւութեանդ դէմ ինչ անուն տամ ամալան,  
Որ հովանայ օրրսս իմ գէթ մի վայրկեան, ով գաժան,  
Անտերունջ խեղճ գառները գիշատող գայլ իսկական,  
Բոլոր ամիսներու մէջ չունիս ընկեր, մարտ ամիս:

Մնդրոս մ եմ եկող տարի էլ չողաս, ով անիրաւ,  
Թէ պիտի հետզ բերես մեզի համար հոգս ու ցաւ,  
Քեզի գարուն գիտենալով մենք շքհագանք տար հալաւ,  
Սրտիցը վերք ստացանք, սրտերիս կապեց շարաւ,  
Կարեցիր ազրիւրներս մտայինք վառուած ծարաւ,  
Նոր բլբաբեր հողմովըդ դու սառնասիրտ մարտ ամիս:

Այս տարի մեզ խեղճերուս սրտերուն զբիւր զանակ,  
Զատիկներս սև արիւր, պաստիբրս անընդունակ,  
Քսանք չորս օր ունիս կարճ է կեանքդ չար մշակ,  
Ապրիլին, մեծ յոյս ունիմ որ լինի պարզ արեգակ,  
Կուգայ մայիս—յունիսը, յուլիսին կասեմ շիտակ,  
Պիտի լսես ամաչես մինչ սեպտեմբեր, մարտ ամիս:

1887.





ԱՐՀԵՍՏԱԽՈՐԸ.

Տանից դուրս է գալիս զենջաւը կապած, ✓  
Ուրախ, պարզ ճակատով արճեստաւորը.  
Փնում է իր դորձին կանչելով Աստուած,  
Վառ յոյս ու հաւատով արճեստաւորը:

Իր դորձի արգիւնքով մտիթաբում է,  
Երբ տեմնում է իղձը որ կտտարում է,  
Իրը հաստատ օրէնք, զեկամարում է,  
Վարպետի խրատով արճեստաւորը:

Ջիւանի, թէ ծուլ չէ շատ առաջ կերթայ,  
Ոչ մի արճեստաւոր քաղցած չի մնայ,  
Տուն կը կասաւարէ ցաւեր կը հոգայ,  
Ասեզով, մկրատով արճեստաւորը:



## ՀԻՆ ՄԱՐԴՈՒՆ ԿԼՐԹԻԿ

Ճիմայ բիշ կը ձարուի բարուն հետևող,  
Բարին սիրող, շարը խափանող ձեր է,  
Մի բանայ վերքերդ սրտիդ մէջը թող.  
Խղճով բժիշկ ցաւըդ դարմանող ձեր է:

Անխնայ վաշխառուն և ճարպիկ գողը,  
Խլիկ ևն աղքատի ձեռքից իւր հողը,  
Կեղատառ տանը սին կ'իփէ համնողը,  
Չարեաց կեցարանը կործանող ձեր է:

Ընկերին օգնելը առասպել է հին,  
Դարձել են մարդիկը անձոցի մարմին,  
Ընկածը աէր չունի, կախ կուտան կանցնին,  
Չեռքիցը բռնող, վեր հանող ձեր է:

Չարուստները մէկը մէկին ձեռք տուած,  
Եղել են բռնակալ աղքատահալած,  
Թշնամու շլինի խղճուկ արարած,  
Տկարին սիրտ տող, պաշտպանող ձեր է:

Անբախտ մարդը տանջուում է չարաշար,  
Աբաժ գործը միշտ կ'մնայ անկատար.  
Ամեն ոք կաշխատի իւր օգտի համար,  
Խեղճ գրացու մասին հոգ տանող ձեր է:

Կարողաւոր անձինք սառաթիկ ժլատ են,  
Իսկ անկարողները խիստ յուսահատ են,  
Ներկայի մարդիկը թերահաւատ են,  
Ջերմեսանդ կրօնը դաւանող ձեր է:

Օրը նոր ծնում է մի նոր հեծեծանք,  
Տեսնում ես լաց ու կոց, զժողքի տանջանք,  
Որ տայ ժողովրդին նոր հողի նոր կեանք,  
Մի նոր կարգ ու կանոն սահմանող ձեր է:

Խիղճը բթացել է, էլ չէ սուր խարտոց,  
Միրտ չի ծակէլ և չի բանալ վերք ու խոց,  
Հողու ըզզացուժը փտած է մարդոց  
Աստըծուց վախեցող, սասանող ձեր է:

Բացուել է մրցութեան լայն ճանապարհը,  
Յետ է ընկել անուսումը, տկարը,  
Ամեն տեղ զին ունի պարարտ ոչխարը,  
Կորած, մոլորածին հարցածող ձեր է:

Սրկու ամուլ չեն յարմարում միմիանց,  
Մարդը շարքաշ, կինը շռայլ հափազանց,  
Այժմեան կանայք բնու են դարձել այր մարդկանց,  
Կարող, գուլպայ գործող, թեկ մանող ձեր է:

Ուրէ թէ գարթնէին Ազամ ու Եւա,  
Տեսնէին աշխարհի մէջը ինչներ կայ,  
Նոր սերունդը այլասեռւած կըթուայ,  
Համեստ ծնողացը նմանող ձեր է:

Այսպէս մարդը արևի պէս պայծառ է,  
Ով որ նորից մարած ճրագը վառէ,  
Անցեալը ձեռք չի գալ, ներկան թշուառ է  
Ապագան գուշակող, տեսանող ձեր է:

Կարծես մեր երկիրը շուկայ է դարձել,  
Քարդ որսնորուն Հոռովիտ է դարձել,  
Կրօնքը փոփելը մոզա է դարձել,  
Հայրենի աւանդը պահպանող սեր է:

Կարեկցութիւն ասած բանը լաւ բան է,  
Ով կը գթայ խեղճին, օգնութիւն կանէ.  
Ով որ ուժ կը յաղթէ ձեռքէ, կուզանէ.  
Մէջ մտնող, մէկ մէկաց բաժանող սեր է:

Անցան մեր երջանիկ օրերը խաղաղ,  
Փաժանեցին հոգս ու ցաւերը աւաղ,  
Պիտունը մեծամբօս, համբաւը ծանծաղ,  
Ջիւանի, մաքերիդ հաւանող սեր է:

1903



# ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

## ԴԻԻԲԵԻԹ

Ազգ իմ, որքան նկուն մնաս,  
Սիրտս քեզանից չի գատուի.  
Հազար տեսակ շարշարանք ասս,  
Սիրտս քեզանից չի գատուի:

Քեզ չեմ մոռանայ յախանան,  
Հարազատ մայր իմ Հայաստան.  
Քեկուզ դրախտն էլ ինձի տան,  
Սիրտս քեզանից չի գատուի:

Քեզանով եմ ես երջանիկ,  
Իմ սիրելի, իմ անուշիկ.  
Մոցիդ մեջը հանգչիմ, մայրիկ,  
Սիրտս քեզանից չի գատուի:

Ջիւանին եմ քեզ բարեկամ,  
Քանի ողջ եմ, ամենայն ժամ.  
Հնդկաստանին էլ տէր դառնամ,  
Սիրտս քեզանից չի գատուի:

1879



Ղ Օ Շ Մ Ա Յ

Մինչև կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ,  
Ո՛վ իմ ծննդագայր սրբազան երկիր,  
Ես մի չոր կեանք ունիմ, թող քեզ նուիրեմ,  
Ինձ կեանք շնորհող մայր, անման երկիր:

Շատ ունիս անձնագր՛ն, հոսանդոտ մշակ,  
Քեզ սիրում են որպէս հարազատ զաւակ-  
Ազատ շունչ կը քաշես, կուգայ ժամանակ,  
Սպասէ և յուսն, պատուական երկիր:

Ինչ ես ազգայնութեան հրահանգ տրուող,  
Սրտիս մխիթարանք, սիրտիանք տրուող,  
Նախնիքներիս սնունդ տրուող, կեանք տրուող,  
Իմ բնիկ հայրենիք, բնական երկիր:

Ջրանին երբ պիտի տօնէ զատիկդ,  
Ապրիլ ամսում արև դարձած մահիկդ,  
Փոխուած տեսնէի քո կրակ է շապիկդ  
Հազնէիր նոր տեսակ պատմուհան, երկիր:





## Ի Մ Հ Ա Ի Ս

Միմացկուն, համբերող, կշկշան հաւիտ  
Աշխոյժը չի կորել, խնդալը տեղն է,  
Առատածին, պարարտ իմ ածան հաւիտ  
Կշտեկուշտ վաղելը, մանդալը տեղն է:

Ուրուրը ինչքան որ կուզէ սպանէ,  
Հաւը չի վերջանայ, հաւութիւն կանէ,  
Նորից հաւկիթ կածէ, ձագեր կը հանէ,  
Թուխը բնի մէջն է, բունկալը տեղն է:

Ձիւան, արեղակը բանի չէ ննջել,  
Սև անպերից զու մի վախել, երկնչիւ,  
Լուսնեակը նորան չի կարող ջնջել  
Հաւիտ փայլուն աստղը, զոհալը տեղն է:

1899



## ՀԱՅԻ ԲԼԲՈՒԽԻՆ

Մարտիր, հայի բըլբուլ, գործիր Հայաստան,  
Օտար երկրում քմքիդ յարմար վարդ չըկայ.  
Շներմակ վարդը քեզ չի գառնալ սիրական  
Սրտիդ մօտիկ կարմիր-կատար վարդ չկայ:

Կնա, հայի բըլբուլ, քո աեղդ երգէ,  
Զեն հասկանալ երգդ, այստեղ յարգի չէ.  
Փնտրածդ ծաղիկը դրտխտում պտրէ  
Ցուրտ աշխարհում մշտադալար վարդ չկայ:

Սեպտեմբերը եկաւ, աշունք է, աշունք,  
Թոշնել, թառամել են, տխրել են ծաղկունք.  
Յարգանք պահանջելու շունիս իրաւունք  
Որովհետե քեզ սիրահար վարդ չկայ:

Ջրւան, հայի երգը հայի մօտ կանցնի,  
Հայ բըլբուլը օտար երկրում չի ապրի.  
Անտեղի մաշուելով իզուր կը մեռնի  
Այս կողմերը նորա համար վարդ չկայ:





## ԻՐԱՆՈՒՆՔ

Թող ես մշակ լինիմ, դու եղիր իշխան—  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի գիպչի:  
Թէ կուզես հաշտ ապրինք, բարի հարեան,  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի գիպչի:

Անհատական իրաւունքս է ամեն ժամ,  
Իմ պարտքն է աշխատեմ, ոչ սքի չը տամ:  
Թէ կուզես իրար հետ մեանք բարեկամ,  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի գիպչի:

Անպատիւ մարդու մօտ չի լինի հաւատ,  
Պատիւ չեղած տեղը հաց չկայ առատ,  
Կը ցանկաս որ շանեմ քեզանից զանգատ,  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի գիպչի:

Բնաւ չեմ Նախանձի քու ձորի սեղանին,  
Ինչ ոսկուն, արծաթին և գանձարանին:  
Այս երեքով կապրի աշրջ Ջուանին  
Պատուիս ու կրօնիս, հացիս մի գիպչի:

1898





## ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

Ես մի ծառ եմ ծիրանի,  
 Հին արմատ եմ անուանի.  
 Պտուղներս բաղցրահամ.  
 Բոլոր մարդկանց պիտանի:  
     Հին ծառ եմ արևելեան,  
     Չունիմ որոշ այգեպան.  
     Տունկերս ամեն երկիր  
     Ընկած են բաժան բաժան:  
 Ապրում եմ խեղճ, միայնակ,  
 Որոշ ծառի շքրի տակ.  
 Հիւիս որդունքն է ծծում,  
 Իմ տունկերուս փոխանակ:  
     Տունկերս ուր էլ որ դնան,  
     Քէպէտ նոյնը կը մնան,  
     Բայց օտար հողի վերայ  
     Չեն աճիլ, կը շորանան:  
 Արեւելքում ինձ անկեց,  
 Երբ որ Տէրը սաղփծեց.  
 Ասաւ աճէ, բազմացիր.  
 Ըրի այգի էլ ինձ տուեց.  
     Ուղարկեց մի այգեպան,  
     Հարախց նսկայ իշխան.  
     Այն հսկայի անունով  
     Կոչուեցայ Մաս Հայկական:  
 Չորս հազար տարուայ ծառ եմ,  
 Մարմինս պինդ, կայտառ եմ.  
 Քէկե ոյժս պակաս է,  
 Բայց անունով պայծառ եմ.



X

### ՊԻՑԻ ՀԱՄՆԻ

— զսխարհս

**Խ**նդա սիրուհիս, քեզ բարի վիճակ պիտի հասնի.  
 Մեծ Բարերարից պարգև ու պսակ պիտի հասնի.  
 Արտիդ սիրածը, հոգ մի-սնի, յետ կը գոյ անշուշտ,  
 Մօտիկ օրերս բազմալի նամակ պիտի հասնի:

Փափուկ քնարի ձայնովը հոգիդ պիտի հրճուի,  
 Գողթան մուսաներէն սիրոյ երգակ պիտի հասնի.  
 Աներկբայ եղիք փեսայի գալուն, սիրելի կոյս,  
 Երկնից ուղիով օդի սուրհանդակ պիտի հասնի:

Քո տխրութիւնը ձմրայ նման փոխուելով յանկարծ,  
 Զուարճալի օր, քաղցր եղանակ պիտի հասնի.  
 Ինչպէս Սառային, Արբանձամին խնդացուց Ասաուած,  
 Քոյր իմ, քեզի էլ այնպիսի գաւակ պիտի հասնի:

Մեծ Բարերարը արծուի թևերու վերայ նստած,  
 Եզրայրներովդ քեզի օժանդակ պիտի հասնի.  
 Դժողքը, Զիւանի, էլի դրախտ պիտի գառնայ,  
 Զար դևի տեղակ բարի հրեշտակ պիտի հասնի:

1889



## ՈՎ ՍԻՐՈՒՆ ՍԻՐՈՒՆ

**Ա**շխարհն ընդհանուր քո սիրոյդ համար քաշում է փափագ  
 ով սիրուն սիրուն.

Զի լինի քեզ պէս ամենայն երկիր փայլուն արուսեակ  
 ով սիրուն սիրուն.

Կստաննա համբաւ, բիշ էլ սպասէ, կուգայ ծամանակ  
 ով սիրուն սիրուն.

Փառք ու պատիւդ բեզի կը յանձնեն քոյրիդ նմանակ,  
 ով սիրուն սիրուն

Եզեմեան ծաղիկ, հայրենի չոգոյ՛ անուամ ժամուշակ  
 ով սիրուն, սիրուն.

Շոգիդ անարատ, տեսքդ գերազանց, մէկ հատ սրինակ  
 ով սիրուն, սիրուն:

**Ս**րտիս ու չոգոյս մխիթարութիւն քեզանոյ՛ է միշտ  
 ով գեղատու կին,

Յոյսս գրած եմ ես բուրբոյ՛ն սիրելուդ վերայ, աշխարհա-  
 տիկին:

Ազնիւ թագուհի, շնորհօք լեցուն, այցելութիւնդ է մեզ  
 կախողին,

Զարգացած ժաքով երասպայու պէս, թէն ասում են  
 քեզ ասիածին.

Փնտրում են քեզի շատ սիրահարներ աշխարհիս մէջը  
 սրտով լալագին

Բացի քեզանից թէ լոյս էլ լինի, չէ մեզ ընդունակ,  
 ով սիրուն սիրուն:

**Ի**նչ կըլնի արդեօք արժան համարես դէպի մեր կողմը  
 դաս այցելութեան,

Փափագդ քաշող, տեսնում ես, շատ կան, պատկերդ ցոյց  
 տուր լինինք բուսական,

Քեզ սիրողներուն զու մի շարշարեր, քիչ խնամք արա  
անուշ սիրական.  
Լուր պաղատանքս, ով իմ սիրունի, վիրաւոր սրտիս  
տուր դեղ ու դարման.  
Ոչ զու մեզի պէս կարող ես գտնել, և ոչ մենք քեզի  
մէկ համանման.  
Գու մեզ՝ թագունի մինչև յախտեան՝ մենք քեզ հպատակ  
նվ սիրուն, սիրուն:

**Ա** ի, պիտի տեսնեմ ես քու երեսդ, թէ պիտի մեռնիմ  
թերի փափագով.  
Այրում ես զու ինձ ամենայն միջոց անարատ սիրոյդ  
անշէջ կրակով.  
Գոնէ ամիսը լուր տուր մի անգամ, տեղդ իմանանք փոքր  
համակով.  
Քեզի է կապուած մի մեծ բնութանիք հաստատուն յուսով,  
բախտով, վիճակով  
Հասկացի միտքս թէ ինչ եմ ասում, քեզի խնդրում եմ  
ինչ նպատակով.  
Թաքիս համեմատ շարժուիք, գեղեցիկ, զորձէ շարունակ  
նվ սիրուն սիրուն:

**Ի** շխանունիներ աշխարհիս շատ կան՝ բայց մեզ անողուտ,  
իմացիր հաստատ,  
Նոքա օտար են, չեն սիրեր սրտով, կեղծ ու պատիւր են,  
արտաքին և վատ.  
Ուրեմն ձօտ եկ, զու իմ սիրելի, իմ արհեստից տիկին  
հարազատ,  
Քո աէրդ սուրբ է, նվ սիրուն անմեղ, բարբով ու վարքով  
սրտով անարատ.  
Տասցէ Արարիչ Յեսս անխափան միշտ վե՛ն անունով  
անկախ ու ազատ,  
Թղնալի երգիչ Զիւանուս համար Յեսս յաջողակ,  
նվ սիրուն սիրուն:





Հ Ա Յ Ի ՈՐ ՈՒ Ց

Այն երկըրէն մի հետանար, հայի ճուա,  
Ուր որ նախնիքներէդ յիշատակներ կան.  
Մրսած մամանակդ կը քաղես օգուտ,  
Կես մօխրի մէջ թաղուած հին կրակներ կան:

Բնակուած երկիրդ սուրբ է, հայ եղբար,  
Հայի արնով ներկրւած է ամեն քար.  
Զոհուել են հաւատի և ազգի համար  
Պատկած հազարաւոր նահատակներ կան:

Զիւան, ազգիդ համատարիմ ծառայէ,  
Տեղը եկաւ մինչև կեանքըդ ընծայէ.  
Հայրենիքիդ վերայ լաւ աչքով նայէ  
Իւր մէջը հոգեբուզիս աւերակներ կան:  
1887.



Մէկ կողմս սաստիկ ցուրտ, մէկ կողմս կրակ,  
 Մէկ կողմս պատել է ծովը ահագին.  
 Այդ երեքն էլ մէկը մէկին հակասակ  
 Ամենքն էլ առնում են ինձանից բաժին:

Չունիմ գրահաւոր բանուկ շոգենաւ,  
 Ծովի վերայ ման գամ անհոգ առանց ցաւ.  
 Աննաւ ծովը մտնեմ կը խեղդուեմ իրաւ,  
 Կուլ կտայ զլիփինը ինձ բոլորովին:

Դէպի ցուրտը գնամ կը սառչեմ հաստատ,  
 Անգութ, անզգայ է, բնութիւնը վատ,  
 Հագիս մուշտակ շունիմ, մերկ եմ և աղքատ  
 Ձմեռ է, պաղ բամբին փչում է ուժգին:

Քաջ մարդը կրակից երբէք չի տալ խոյս  
 Թէ վառուեց կը ծլի որպէս անմեռ բոյս.  
 Երեք մանկանց նման պէտք է հաւատ, յոյս,  
 Որ շայրը չի հրոյ մէջ ամենեկին:

Մտածում եմ ոչ մէկի մօտ չը գնամ,  
 Թէ հարուստ, թէ աղքատ, իմ սեղս մնամ.  
 Ամենքին էլ պատուեմ բարիք ստանամ  
 Երեքիցն էլ յարգ վայելեմ առանձին:

1894





## Կ Ա Ր Ե Լ Ի Է

Արտաշէս ու Տիգրան ծնած երկըրից,  
Օր լինի որ էլի Տիգրաններ զուրս գան,  
Դրախտ կոչվող վայրի հողից ու ջրից,  
Կարելի է ազնիւ իշխաններ զուրս գան:

Անհնար բան չը կայ Աստուծոյ համար  
Քարից Արրահամներ կը հանէ արդար,  
Փայ այնպէս ժամանակ փոփոխուի աշխարհ,  
Թողւինքու տեղակ տխրաններ զուրս գան:

Ջրւանի, կը հարէ հայը սրտակից,  
Կտանայ լաւ վիճակ, բարւոք, բարեկից,  
Արիւնով ներկըւած հայի դաշտերից,  
Յուսալի է հսկայ Վարդաններ զուրս գան:

1895



X

# Բ Ա Ր Չ Ր Ա Յ Ի Ր

Բարձրացիր, ով լուսաբեր, աստղ առաւօտեան բարձրացիր,  
 Շտապիր, առաջ արի, լոյս բարենշան, բարձրացիր,  
 Աթոյութեամբ քանի որ ամպի նշան չի երևում  
 Ճանապարհդ դուրան է, արի երևան, բարձրացիր:

Տես լուսընթացը, Ջոհալը, երևակը բարձրացան.  
 Դու ևս ցոյց տուր քեզի, աստղ իմ դուրեկան, բարձրացիր  
 Քո տեսիլքդ մեզ համար կեանքի գոյութեան խնդիր է,  
 Լեր միւս աստղերու պէս փայլող ժրաջան, բարցրացիր:

Բաւական է յետ մնալ, ընկերներդ քեզ նախատեն,  
 Խառնուէ լաւ աստղերուն, մտիք կարաւան բարձրացիր.  
 Հասարակ լուսատուներու մէջը երկար մնացիր  
 Կազաչէ քեզ Ջիւանը, դէպ վերնախորան բարձրացիր:

1890.



« Հ Օ » Յ Ա Ի Ը

Երբ որ գլխատառից հասարակ դարձաւ  
Գլորեցին աստիճանից «հօ» տառը.  
Փորրանալով «թօ»-ին հպատակ դարձաւ  
Զրկըւեցաւ քառասանից «հօ» տառը:

Մտաւ ելաւ հարիւր տեսակ տպարան  
Զևը չը կորցրեց, պահեց ինքնիրան.  
Շատ էլ մամուլի տակ սեղմեցին նորան,  
Ազատ պրծաւ ուրբանից «հօ» տառը:

Երբ շոա»-ն սկսեց «թօ»-ի հետ մեծ դատ,  
«Սե»-ն «բեն»ը բառգրբում տեղ գտան ազատ  
Մեծ «կեն»ի շնորհիւ նրանց համեմատ  
Դուրս գալ կուզէ տանջարանից «հօ» տառը:

Զիւան, չը լինելով գեղագիր նուար,  
Կոպիտ «բէն» էլ նորան չէ թողնում դադար.  
Աին ու վախը իւր ճակատին գրուած կար  
Երբ դուրս ելաւ ձուլարանից «հօ» տառը:

1981.



## ՄՅԱԿՈՐ ԿՈՅՄԻՆ

Պատանէ սն քողդ, պատկանելի կոյս,  
Բացուիր, քու բացուելու ժամանակն է հաս,  
Աշխարհի չորս կողմից կուտան խրախոյս,  
Բացուիր, քու բացուելու ժամանակն է հաս:

Կխամեռ է—կասեն համեստ խոնարհին,  
Մի հետներ մօրդ հին ճանապարհին,  
Աներկիւղ երեսդ ցոյց տուր աշխարհին,  
Բացուիր, քու բացուելու ժամանակն է հաս:

Պատրոնիդ քղանցքը քաշող կայ հիմա,  
Ազատ խօսիր ցաւդ, երկիւղ մի զգայ-  
Մրանից էլ յարմար ժամանակ չը կայ  
Բացուիր քու բացուելու ժամանակն է հաս:

Թէ պսակուիս, դարձիր խկապէս տիկին,  
Ոչ թէ մօրդ նման ալլոց աղախին  
Ընտրիր քեզի դաւանակից ամուսին  
Բացուիր քո բացուելու ժամանակն է հաս:

Թող ծածկէ երեսը տղեղը կոպիտ  
Որ փեսացու որսայ անփորձ, միամիտ,  
Դու արդէն սիրուն ես, քոյր իմ Մարգարիտ,  
Բացուիր, քու բացուելու ժամանակն է հաս:

Արեւը, արեմուտք հիւսիս և հարաւ,  
Յանկանում են քեզ տալ մի բարի համբաւ,  
Փոխիր հանդերձներդ, հագիր նոր հալաւ  
Բացուիր քու բացուելու ժամանակն է հաս:

1895



Ս Ա Ս Ո Ի Ն Ա Ս Ա Ր

Առանց վախի, առանց ահի  
Քաջերու առն, Սասունասար,  
Քեզնից հրդեհ կը պատահի  
Կրակի բուն Սասունասար:

Այնպէս զիրք բռնեց Յովնանը  
Որ սարսեց Արարիսաանը  
Քեզ չը յաղթեց Չինկիզիսանը  
Կեցար կանգուն Սասունասար:

Հայաստանը նոր կանաչեց  
Թշնամին տեսաւ, ամաչեց  
Եւրոպան քեզի ճանաչեց  
Առար անուն Սասունասար:

Քրախ, թուրքի զահիճներ էք,  
Թունաւորոզ կարիճներ էք,  
Սարերու մէջ կտրիճներ էք,  
Դու և Չէյթուն, Սասունասար:

Վերացաւ խաւար գիշերը,  
Վառուեց երկնային լապտերը.  
Կապանեն բոլոր հայերը  
Քեզնից զարուն, Սասունասար:



## Վ Ե Ր Զ Չ Ե Ղ Ա Ի

Վերջ չեղաւ տխրութեանդ, մայր իմ հարազատ, վերջ չեղաւ,  
Գլխիցդ ցուրտն ու բուքը Երպէս Արարատ վերջ չեղաւ,  
Տխրութիւնդ շատ սևեց, Յորին համեմատ, վերջ չեղաւ  
Տարաբախտ դաւակներդ թողեց յուսանատ վերջ չեղաւ:

Քու ունեցած բարեկամ բժիշկներդ ձեռք չը տուին  
Տաննապատիկ ցաւերդ աւելացան խղճալի կին,  
Այրի ես սևեր հագած, չունես ցաւակից ամուսին,  
Քեզ պահում է կենդանի Աստուծոյ պարզեամ հողին  
Վերջ չեղաւ տխրութեանդ մայր իմ հարազատ, վերջ չեղաւ:

Քեզ չը սիրեց, այրի կին, անգութ անիրաւ աշխարհը,  
Երբ ծնար քեզ հագցրեց կրակէ հալաւ աշխարհը,  
Կեղծաւոր, չին համանի, երկդիմի պատաւ աշխարհը  
Ուրիշին լաւ օր տուեց, քեզի միայն ցաւ աշխարհը  
Վերջ չեղաւ նեղութեանդ, մայր իմ հարազատ վերջ չեղաւ:

1902



## Ա Ձ Գ Ի Յ Ա Ի Ե Բ Ը

Գունդազունդ և դասադաս ցաւերը կազմելով բանակ  
Արշաւուժ են դէպի խղճուկ հայերու վերայ շխտակ.  
Դեզ շունինք, բժիշկ շունինք, դէժ գնելու շներ ընդունակ  
Անտարակոյս, ցաւերը մեզնից կը տանեն յաղթանակ.  
Բայց մի բան կայ, տոկուն ենք, դիմանում ենք շատ ժամանակ,  
Յաւերը ձանձրանալով մեզնից կը փախնեն շարունակ:

Գաղտնի մի ձեռք կայ հօր պահող մեզի, Աստուած է նա.  
Միշտ նորանից օգնութիւն տկարներուն անշուշտ կուգայ.  
Թող ցաւերը սաստկանան, Տէրը տանելու ոյժ կուտայ  
Յաւապետը տեսնելով սխալմունքը, յետ կը գնայ.  
Կստանանք մի ժամանակ, հանդարտութիւն, հանգիստ վիճակ,  
Կեանքներս բարւոքելով կը դառնայ դէպի յաջողակ:

Մենք մի յայտնի հին դիւցազուն մեծ ազգի նշխարներ ենք.  
Մեզ շահողը կը օգտուի, յակերթներ ենք, գոհարներ ենք.  
Թող շիմանան ցաւերը՝ խեղճ ու մալոք անճարներ ենք.  
Մենք Քրիստոսից նեղութիւն սովորած տկարներ ենք.  
Չենք սիրեր վարուել մեզի տիրոջներու նետ հակառակ  
Ունելով մեզ Փրկիչը խրատ ու ընտիր օրինակ:

Մեզ վերայ տեսակ-տեսակ, ցեղ ցեղ ցաւեր են փորձ արել.  
Ոչ մէկը բռնութիւնով մեզնից մի օգուտ չեն տարել.  
Մեր կիման, մեր օղբ մեզ պահել են, պատասպարել  
Յաւերը յետ դառնալով իրենց տեղերն են դադարել.  
Մեզի տալով մեր վայելած օրերը անցաւ, փառունակ,  
Դառնալով մեր երկիրը կրկին բարի, մարդաբնակ:

Օր կուգայ հոգս ու ցաւերը մեզնից կը վերանան, Զիւան,  
Երկնուց աղեղնակը ցոյց կուտայ հաշտութեան նշան.  
Բերանը տերև առած կը դառնայ ազաւնին Նոյեան,  
Մեզ աւետեաց լուր կուտայ հեաք օրեր խաղազութեան.  
Հօրիզօնը պարզելով ծագում է պայծառ արեգակ,  
Հողմերը դատարելով յաջորդում է լաւ եղանակ:

1883



## ՏԱՃԿԵԼԵՅԻ ԳԵՐՈՒՆԸ



Երկարացաւ տանկահայոց ձմեռը,  
Մարտն էլ եկաւ անցաւ, գարունը չեկաւ.  
Կանաչեց էլ լպրուս ձիւնապատ լեռը  
Սնայուն սարին բնաւ գարունը չեկաւ:

Կուռնկները խումբ խումբ, թեւ,-թեւի տուած.  
Եկան տեսան գետեր, լճերը սառած.  
Սաւառնեց օդի մէջ զոյգ թևատարած,  
Արագիլն էլ եկաւ, գարունը չեկաւ:

Խղճուկ երկրագործի կովը, կթանը,  
Փչացաւ լծկանը. եզը դուխանը.  
Սառնամանիք դարձաւ խեղճ Հայաստանը  
Տարութիւնը փոխաւ, գարունը չեկաւ:

1900





## ՀԱՐԱԻ ՄՐՄՈՒՆՋԸ

**Ք**ոյրերիս մէջ միշտ սգազգեսաց ինձ նման տխուր չկայ.  
Դժողբումն էլ իմ ունեցած կրակիս պէս հուր չըկայ.  
Ծարաւ, պապակ այրում եմ, ո՛չ մի կաթիլ ջուր չըկայ.  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ:

Իմ տարիքս անցնում են շուտ, գլորում են հանապազ,  
Ախ իմ յոյսս, իմ վախազս կը համարուի միշտով *խուռ*  
Որտեղ ձայն ու շարժում լսեմ, կը վազեմ այնտեղ վազ,  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ:

Չէ՛ քո խղճալի Հարան եմ, ինձի օգնէ քաջ Հիւսիս,  
Քեզ եմ տուել իմ Ախուրեան, իմ անատիկ մեծ Մասիս.  
Ե՛րբ կը լսեմ աւետեաց լուր, ուրախութեան աւետիս.  
Սպասում եմ այցելութեան, ոչ մի տեղից լուր չըկայ:





## ՇԱՏ ՈՒՇԱՑԱԻ



**Փ**րկութեան աւետարեր սուրհանդակը շատ ուշացաւ:  
Ուրախութեան լուր տուող մեր նամակը շատ ուշացաւ:  
Իմ մօրս եղբայրները իմ մասին իսկի չեն խօսում,  
Կրթւած, թղթիկ բերող աղանձակը շատ ուշացաւ:

Քիչ կը մնայ ոչնեցած յոյս ու հաւատս կորսութիւն,  
Քաւարը ինձ տանջում է, աշտանակը շատ ուշացաւ:  
Լրիւ երկու տարի է սպասում եմ մէկ ձայնի ես,  
Ողջ ժամերը կազնեցան, ժամանակը շատ ուշացաւ:

Քեզ հաւի արին խնող զող ուրուրը ապրում է դեռ  
Երկնային մեծ հարուածը, ուժանակը շատ ուշացաւ:  
Ո՛վ Արամ, հորիզոնը կարբկտի ամպեր շատ ունի  
Հաշտութեան կամար կապող աղեղնակը շատ ուշացաւ:

1897



## ՀԱՐԱԻՒՆ ՊԻՏԻ ԿԱՅ



Աւետարներ խօսնակը հայուն հարաւէն պիտի գայ,  
կապասեմ և յոյս ունիմ, գարուն հարաւէն պիտի գայ:  
Հիւսիսը պէտք է հրամայէ, թախանձէ իսկապէս,  
Իմ սիրունին պճնուած, սիրուն, հարաւէն պիտի գայ:

Արեւիքը ոչ մի ժամ արեւմուտքից բան չսպասէ,  
Քաղցրախօս, միտթարիչ թռչուն հարաւէն պիտի գայ:  
Փրկիչը հարաւային կողմից եկաւ մեզ փրկելու,  
Այնպէս էլ մեծ առաքեալ արթուն հարաւէն պիտի գայ:

Շատ վաղուցուայ ամուլը յղի այժմ կարծում են  
նրբ լինի արու գաւակ, արբուն հարաւէն պիտի գայ:  
նրբ բարով մկրտութեան հասնի մանուկը, ո՛վ Զիւան,  
Կնքողից բարձրագատիւ անուն հարաւէն պիտի գայ:



Թ Ո Ղ Մ Ն Ա Յ

Թող մնայ մէկ ժամածակ, տուածը թմրած թող մնայ  
Քաժամուժ կենդանիներու մէջը ընկած թող մնայ.  
Մեռածը չի ողջանալ, գլորուածը վեր կը կենայ.  
Թո՛յլ թուէք, ախոյանի ժամը չէ, պառկած թող մնայ:

Անտեղի քաջութիւնը փնաս կուտայ իմ կարծիքով,  
Երբ լինի կարկուտ, քամի, հղէքը սմբած թող մնայ.  
Տաք ու պաղ փշելովդ մի գրգռեր, խարդախ թովիչ,  
Թող մնայ իւր բնի մէջ, վիշապը ստուած թող մնայ:

Չրի շատ գալը, խելացի, կտրելու նշան է իսկ,  
Թող ծովը ծփայ յատուկ, գետը վարարած թող մնայ.  
Ով Չիւան, ամեն հայի սրտի մէջ երկար միջոց,  
Հնութեան յիշատակը, կայծը բռնկած թող մնայ:

1892



Ի Ն Չ Ո՞ Ի Լ Ա Մ՝

Ինչո՞ւ լամ, երբ չեմ մանուկ ծծկեր երեխայ ինչո՞ւ լամ.  
Լացի համար չէ ծնել սերունդը Հայկայ, ինչո՞ւ լամ.  
Շատ ժամանակ ողբացի, լացի, սգացի, բան չկողու,  
Քանի որ ես ոյժ ունիմ, լայն ստպարեկ կայ, ինչո՞ւ լամ:

Երբ մի մարդ իւր մահովը հարիւր-հազարի կեանք կուտայ,  
Եւ պիտի ուրախանամ զո՞նուողի վրայ ինչո՞ւ լամ.  
Փորձեցի, աչքով տեսայ զօրեղն է աշխարհի տէրը.  
Եւ լացով իմ վերքերուս հնար չը գտայ, ինչո՞ւ լամ:

Նեղ օրում մէկ դանակը հազար լացից առուել է,  
Գայլը ողբից ամենեին բան չի գգայ, ինչո՞ւ լամ.  
Բրտի հետ քրտի նման վարուիլ կուզէ, ո՞վ մարդ բարի,  
Երբ վաստղի ձայնիցը աշխարհ կը թնդայ, ինչո՞ւ լամ:

Արքայութիւնն էլ ուժեղ մարդիկ կը ժառանգեն յատուկ,  
Մոյլ, անաշխատ լաց լինողին դրախտ չը կայ, ինչո՞ւ լամ.  
Ժողովուրդը կեանք կուզէ, ապրել կուզէ, յոյս տալ կուզէ.  
Եւ Զիւանիս անտեղի, անսիրտ, ակամայ ինչո՞ւ լամ:

1894



## Ս Ա Մ Ա Յ Ի

Անոյժ, ձմրան արե դարձաւ վառարանը հայոց բախտին.  
Զիւնով ծածկուած սարի պէս է տեսարանը հայոց բախտին.  
Մի կողմից սառնաշունչ հողմը, մի կողմից խորշակը անդուխ  
Բերանը բաց նայում է խոր գերեզմանը հայոց բախտին:

Շարունակ սրտանձնիկ վերք ու ցաւ է պատուղը գրչին,  
Տխուր տրտում ու թախծոտ է վիպասանը հայոց բախտին.  
Լոկ է քաղցրախօս հաւը, չի երգում անուշիկ երգը,  
Սգոյ օթեան է դարձել բուրաստանը հայոց բախտին:

Տալիս է ոյժ, գորութիւն նեղ օրերում այդ ժողովրդին  
Հօր է ամենարարձրեալ Ապրաստանը հայոց բախտին.  
Զիւանի, Պաշի հեա Լուսնին Գասաւորը պիտի կանչէ.  
Մօտիկ է, շուտ լինելու է դատաստանը հայոց բախտին:

1802



## ՈՒՐԱՆՍ ԵՐԳ

—

Արևն ելաւ, փախէր աստղեր մի անկիւնում թաք կացէք.  
Սև սև ամպեր, հալածուեցէք, ճանապարհից հեռացէք.  
Օղջ պարզ է, մոլորականեր, հորիզոնում ամպ չըկայ  
Արեգակի չորս բոլորը պար բռնեցէք, խաղացէք:

Ճնճած տխուր իմ հայրենիք, ցուրտ ձմեռը անց կացաւ.  
Զուարճալի խնդում բերող նոր դարունը մտեցաւ.  
Հայ աղջիկներ, ձեր տխրութեան ժամանակը լրացաւ,  
Սրտով սիրած փեսաներով ուրախացէք, խնդացէք:

Արդարութեան արեգակը եկաւ, բերեց նոր զատիկ,  
Ճնշուած, ընկած տխուր ազգեր ահա նոր լուր, աւետիք.  
Տօն է այսօր ձեզի համար, սոխակ, թութակ, արտուտիկ,  
Մայիսն եկաւ, վարզը բացուեց, երգեցէք, ճառ կարդացէք:

1902





## ԱՂԹԱՑ ՀՈՂԱԳՈՐԾ

Աղքատ հողագործ, մի վհատիբ, կալոցը մօտ է,  
 Արտերը հասել են, սիրելիս, քաղոցը մօտ է,  
 Հունձը առատ է, բանւոր ու մըշակ է պահանջում,  
 Սրիբ քու գերանդին, մանկազը, խարտոցը մօտ է:

Արդար հողագործ, կանչում է բեզ սուրբ դատաւորը,  
 Գրախտի դուռը բացուել է, տես, վարդոցը մօտ է,  
 Հանգիստ ապահով կարող ես հասնել նպատակիդ  
 Յղկած խճուղին, մարմարաշէն փողոցը մօտ է:

Գեղջուկ տառապեալ, վարձ պիտի տան, շուտ հասիբ այնտեղ,  
 Սրբոց կայանը, մարտիրոսաց ամրոցը մօտ է,  
 Փրկիբ Զիւանուն, տար քու հետդ արդոյ նահատակ,  
 Անփուշ, հոտաւէտ, հրաշագեղ ծաղկոցը մօտ է:

1899





Տեսակ տեսակ կենդանեաց ճանկը ընկար, քաջ քաղէ.  
Դու ոչ մէկի որկորին բաժին չեղար, քաջ քաղէ.  
Թէ խելքով, թէ շնորհքով հնար գտար, քաջ քաղէ,  
Մինչև հիմա ապրեցիր՝ ու չը մեռար, քաջ քաղէ.  
Ով որ ուզեց քեզ ծամել, պողպատ դառար, քաջ քաղէ,  
Ատամները չը կտրեց, ողջ դուրս ելար, քաջ քաղէ:

Կենդանեաց ատամները կողերդ ծակծակեցին,  
Թէև չը տկարացար, արիւնդ խառնակեցին.  
Չանազան նոր ախտերը մարմինդ վարակեցին,  
Բառեխառն հոգերը մաքրեցին, խտակեցին.  
Սև օձը քեզ կաշկանդեց, բնիդ մէջը փակեցին  
Փետուրներդ քաշեցին, էլ չը թոար քաջ քաղէ:

Արծիւը, արագիւը թև-թևի տուած կուզան,  
Ծովային մեծ քաղի հետ պիտի հասնին օդնութեան.  
Գեր կռունկը թող լռէ, օձին լինի սիրեկան,  
Ջայլամի, կարապի հետ թող նա մնայ անբաժան,  
Նոր աշխարհի սագերը բաւական յոյսեր կուտան,  
Մեծ երամներ կը կազմեն քեզի համար, քաջ քաղէ:

Օձմանձեան վիշապի նոր ճարած բարեկամը  
Կուզէ հանել բերանից իւր ատաջին ատամը.  
Առանց արիւն թափելու խառնածին մեծ ջայլամը,  
Քից նորա ձեռքիցը թանգագին երկու ծամը.  
Վշշած, սաստիկ փրփրեց, կատաղեց այս անգամը,  
Վերջին հուժկու հարուածը դու ստացար, քաջ քաղէ:

Ահա երկու ճանապարհ—ցոյց կուտայ քեզ Ձիւանը—  
Այդպէս ապրիլ կը ցանկանս՝ թէ մտնիլ գերեզմանը.  
Քեզ չի կարող ֆրասել օձերու պաղ իշխանը,  
Նրա տուած վեքրէրուն գիտես դեղ ու դարմանը.  
Կոկորդիլոսը քեզի թէ առաւ իւր բերանը՝  
էլ փրկութեան յոյս չըկայ, բանից պրծար, քաջ քաղէ:



## ՀԱԶԱՐ ԱՓՍՈՍ

Դրախառը դևերու ձեռք է, հանող չըկայ, հազար փսոսս  
Դևերի խմբապետին մէկ վանող չըկայ, հազար փսոսս.  
Լուսոյ որդիք խաւարի ժառանգներուն գերի դարձան  
Նրանց նեղութեանը մէկ ճար անող չըկայ, հազար փսոսս:

Թունաւոր գլխակեր վիշապի փորը արիւնով լիքն է  
Անիրաւ, անհրժօն սպանող չըկայ, հազար փսոսս.  
Մի հզօր կայ հրէշին ջախջախում է, միշտ հզօր ապրի,  
Նրա սուրբ գաղափարը դաւանող չըկայ, հազար փսոսս:

Փշացաւ Աղասնայ այգին անիծուած գազանի ձեռքին  
Կերիչ, քանդիչ արարքը խափանող չըկայ, հազար փսոսս:  
Զիւանի քու ասածը դժւ կը լսես, ուրիշը երբէք,  
Քու այս երգիդ խորհուրդին հաւանող չըկայ հազար փսոսս:

1897



## Ո Ի Ս Ա Ի Մ

Շտապիր, ով սուրբ ուսում, հայոց մէջը շնուտ, շնուտ արի,  
Քեզանով անշուշտ պիտի սերունդներս լինին բարի.  
Ընդհանուր պիտոյքներից աւել պիտանի ես մեզի  
Հացի չափ յարգելի ես, հարկաւոր ես ամեն տարի:

Ինչպէս որ Հայոց Վասմշապուհ թագաւորին տուիր  
Տարածէ պտուղներից հիմա Հայոց մէջ այն դարի.  
Սահակի և Մեսրոպի նմանները բեր բո հետդ  
Հարկաւոր է մեզ համար այդպէս ուսուցիչներ արի:

Փառք Արարչին հիմա էլ ունինք ուսուցիչներ բազում,  
Ցանկանում ենք մեր մէջը և՛ս առաւել դալարի.  
Ես անուսում, բայց գիտեմ արժէքը ուսման թանգագին  
Եթէ ինձ տան՝ չեմ փոխիլ հետը հազար բիւր գոհարի:

Բայց ես անբախտ, խղճալի Զիւանին եմ առանց ուսում,  
Մով գիտութեան մէջը ես մնացի առանց հանճարի:

1877



# Պ Ա Ր Տ Է Ջ

Ա՛խ իմ պարտէզ, պտղատու ծառերդ թառամեցան  
 Որո՞նքերը, փշերը քեզ հետ բարեկամացան.  
 Սոխակները լոեցին երգելուց կարկամեցան,  
 Ագռաւները տեղ գտան, բարձրացան, վսեմացան:

Բու հարազատ ծառերդ սնունդի, ջրի կարօտ.  
 Դու դարձել ես վայրենի անասունների արօտ.  
 Բո վատ արամունքներդ քեզի պատմեմ համառօտ.  
 Շուտափոյթ չը բացուելով ծաղիկներիդ յամեցած:

Նորարողը՞ տունկերդ կտրատեցին, հանեցին.  
 Պահապանդ, տեսուչդ երկրէ երկիր վանեցին.  
 Գոհելիները մէջդ դառք սերմեր ցանեցին,  
 Կանաչազարդ մարգերդ չորացան, նսեմացան:

Կարկուտը, ջրհեղեղը քեզ դարձուցին աւերակ,  
 Մի կենդանի չը մնաց որ քեզ շառնէր ոտքի տակ.  
 Ամեն օր մուկ ու մորեխ, երաշտութիւն, սով, կրակ,  
 Վիթխարի կաղնիներիդ էլ վայր ընկան, չը դիմացան:

Թէև ունիս դու հիմա մի քանի ծառ ու ծաղիկ,  
 Լաւ բուստբանի կարօտ, ապրում են ապերջանիկ.  
 Զիւանուս պապերիցը մնացած հին պարտէզիկ.  
 Խելացի ջրպետներդ ծուլացան, տարտամեցան:

1885



X  
ՀԱՅՈՅ ԼԵԶՈՒ

Հայոց քաղցր և ճոխ լեզու—

Անուշիկ բառերուդ մատաղ,

Թէ հին, թէ նոր, լաւ պաղատու

Քու անկած ծառերուդ մատաղ:

Թէև ունիս սխալալոց,

Բայց դու կաս, չես մաշող, հալող,

Ամեն լեզուի յարմար գալոց

Մետրովայ աստերուդ մատաղ:

Հայոց բարբառ, միշտ գովանի

Մեր մօր լեզուն, մեզ ընտանի,

Ընդարձակ, բազմակողմանի,

Մտաւոր ճառերուդ մատաղ:

Ազամա լեզուն ևս հատուտ.

Մլխր, ծաղկիր, գցէ արմատ,

Ունիս փայլուն հրազներ շատ

Մշտապէս վառերուդ մատաղ:

Ո՞վ ունի քեզի չափ քանքար

Լեզու քիչ կայ քեզի յարմար.

Հայոց եկեղեցու համար

Ստեղծած բառերուդ մատաղ:

Խրթին, մեր նարեկի նման,

Գիրք ևս տուել մեզ պատուական

Խորախորհուրդ, ճիշտ գերբնական,

Մութ, մռայլ մառերուդ մատաղ:

1885



## ՀԱՅՅԵՐԻՍ ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայերս մէկ լեզու, մէկ կրօն ունինք,  
Ուրիշ ոչինչ մեզի սեփական չըկայ.  
Մենք հայկական հազուստ, հայ տարազ չունիք  
Կորչել է հին ձեռք, մէկ նշան չըկայ:

Պատերս մէկ բանով շատ անդին էին,  
Նպատակով տաճարներ կը շինէին,  
Հին մնացած վանքերը չը լինէին,  
Օտարք հեշտ կասէին «Հայաստան չը կայ»:

Մի հաս եկեղեցի ունինք՝ մերն է գուտ,  
Պարզ է, չունի այնքան բաներ նորամուտ.  
Երգերը զբաւիշ, մեղմ, հողիօգուտ,  
Մեր շարականի պէս շարական չըկայ:

Տէր, պահէ Արամեան հոգևոր դահր,  
Մի մարել հայերուս մի հատիկ ջահր,  
Նրա հետ կապուած է մեր ազգի շահր  
Բացի սուրբ Աթոռը մեզ պաշտպան չըկայ:

Զիւանի, մէկ-մէկու կեանք նուերելով  
Հայ տղրինք, հայութեան գանձին տիրելով,  
Ինչ որ ունինք պահենք իրար սիրելով  
Դրանից մեզի լաւ ուրիշ բան չըկայ:



Ո Չ Մ Ի Ա Չ Գ

Մեզ նման խեղճ ու մոլոր, տկար չի լինի ոչ մի ազգ,  
Չափազանց սարկացած խոնարհ չի լինի ոչ մի ազգ.  
Մեր քաշած ցուեբը Աստուած չը կամենայ ոչ որի,  
Գազանաց վոճմակներուն աւար չի լինի ոչ մի ազգ:

Գառը գայլին պահ կուտայ և կոյսը լիբը անզգամին,  
Երկնային բարիք գիտէ միշտ տաք ու սպաղ փշող բամին.  
Մինչև այսօր շիմացող իւր բարեկամն ու թշնամին,  
Հայի պէս անմտածող, յիմար չի լինի ոչ մի ազգ:

Թարմ էի, կայտառ էի մտածելով դարձայ ծերուկ.  
Քոյրերիս մէջ ինձ համար ոչ որ չեղաւ ասող եղուկ.  
Բարբարոս ~~խեղճ~~ ծերու ձեռքին դարձայ անվերջ սարբուկ.  
Մեր կրած նեղութեան յօժար չի լինի ոչ մի ազգ:

Լրացաւ յիսուն տարիս, բան չիմացայ այս աշխարհից  
Բլուրը չի օգտուի իբան մօտիկ հսկայ սարից.  
Մէկ մասը գայլն է ուտում, մէկ էլ ընկնում է քարից  
Անփարախ, առանց հովիւ ոչխար չի լինի ոչ մի ազգ:



# Ա Շ Խ Ա Ր Հ Ի Ս Բ Ա Ն Ը

## ✓ Ա Շ Խ Ա Ր Հ

✓ Հիանալի սիրուն աշխարհ, եղայ գործիդ վերահասու,  
Հարուստներու համար դրախտ, չքաւորին դժոխք ես դու.  
Հաղար տեսակ բարիքներ կան մէջդ, փարթամ, հարուստ աշխարհ  
Լիառատ կաթի աղբիւր են մնունդ տուող ծծերդ քու:

Ձր գիտեմ ի՞նչ տեսակ մայր ես, ժիակերպ չես սիրում մարդկանց  
Որին դարձ ում ես Ռոշիլդ, որին խեղճ ու մոլոր գնչու.  
Լրիւ կէս դար եղաւ կայրիմ հովանուդ տակը, ով անգութ,  
Ոչ ինձ լաւ երգահան արիր, ոչ էլ յաջող նուագածու:

Մեծամիտ, ինքնակոչ դատաւորի ձեռքը տուել ես զէնք,  
Դիմացը մարդ չըկայ ելնող խենեշը դարձել է հուժկու.  
Եթէ շխտակը ասեմ քեզ, տկարներուն բարեկամ չես,  
Դուն էլ ուժեղներու կողմն ես, Ջիւանին չի խօսել շինծու:

1898





X

# Մ Ա Ր Դ Ի Կ

Ամեն արարածից բարձր, շքեղ արարած են մարդիկ,  
Հազար ախոսս բարոյապէս, շափազանց ընկած են մարդիկ.  
Ոչ աշխոյժ, ոչ եռանդ ու սէր, ոչ ուրախ ընկերութիւն կայ,  
Չըզիտեմ պատճառը թնչ է որ այսքան տխրած են մարդիկ:

Իրանցից է գոյանում վիշտը, ցաւը, տառապանքը,  
Իրանք իզուր մաշում են և կարճում են եղած կեանքը.  
Պատել է բոլորի մտքին սև ամպի պէս մոլորանքը  
Չըզիտեն թէ ինչ են անում, կարծես շուարած են մարդիկ:

Բոլոր կենդանեաց իշխող են և տիրող հսկայ են նրանք,  
Ամեն բանի տէրը, պետը, համարեա արքայ, են նրանք  
Բազում օղակներից շինուած մի հատիկ շղթայ են նրանք,  
Բաժանուել չեն կարող երբէք, իրարու կապուած են մարդիկ:

Ջրանի, մարդիկը մարդ են, կատարեալ մարդ գտած չեն դեռ  
Նրանց հոգու ճրագները խաւար են, լաւ մտած չեն դեռ,  
Համարեա մանուկ են խելքով հասակները առած չեն դեռ.  
Երեխայի նման պառկած օրօցքում քնած են մարդիկ:

1899



## Ք Ե Ղ Ճ Մ Ա Ր Դ

Եռանդը կը սառի, սիրտը կը կոտրի,  
Հոգսերով ճնշուած ազգաս, խեղճ մարդուն,  
Քօսքը անց չի կենալ, հոգին կը տրամի,  
Ոյժը կը նուազի հաստատ խեղճ մարդուն:

Աշխոյժը հարուստի նման չի վառի,  
Ձի կարող նեղութեան դէմը մաքառի՞  
Սէրը ամեն բանից կակսէ սառի  
Էլ չի Ֆեալ յոյս ու հաւատ խեղճ մարդուն:

Մարդիկը կարծես թէ չեն տեսնում նրան,  
Կամ թէ դիտմամբ տուել են մոռացութեան,  
Ո՛չ նիւթական սյժ կայ, ոչ բարոյական,  
Դուք կը տեսնեք միշտ յուսահատ խեղճ մարդուն:

Ջիւան, խեղճի համար թ՛նչ խաղ ու խնդում,  
Թեկուզ լինի բարեկենդան, կամ խթում,  
Ճակատը ամպամած, երեսը տրտում,  
Սիրտն է աւեր և անապատ խեղճ մարդուն:



## Հ Ի Մ Ը Յ

Ճակատի քրտինքով, սուրբ ճանապարհով,  
Փող վաստակող մարդիկ քչերն են հիմայ.  
Փոքրերուն զուրս են վանդել ոյժով,  
Անուանի գողերը մեծերն են հիմայ:

Քեզ՞ են արհեստաւոր, կար կարողները,  
Գեղջուկ մշակները, պատ շարողները.  
Զրի կերպով հանդիստ կեանք վարողները,  
Գիւղի աղաները, բէկերն են հիմայ:

Զիւան, պահանջում են մեծ պատիւ ու յարգ,  
Անուանները բարձր, իրենք վատավարք.  
Քիչ աշխատող և շատ ուտող դասակարգ,  
Սև ֆարաջայ հագնող տէրերն են հիմայ:

1902



# ԴԻՄԱԿԱԻՈՐՆԵՐ

- ա. Դու առիւծ չես եղել, կատու ես եղել,  
Մկներու սիրահար, քեզ էլ իմացանք.  
Չուր տեղը ուժեղի պատիւ են տուել  
Տկարներուց տկար, քեզ էլ իմացանք:
- բ. Ծովի ալիքները քցել են լաւ տեղ  
Շրջանն է դարձրել քու գոյնդ շքեղ  
Դու չես կարող լինիլ աղամանդի ցեղ  
Կոկուած աւազաբար, քեզ էլ իմացանք:
- գ. Դիմակդ վեր տառն, երեսդ բացին,  
Գիտունները ինչ լինելիզ զգացին.  
Գրուածքներդ բրբրեցին, կարդացին,  
Խեղճ միամիտ տխմար, քեզ էլ իմացանք:
- դ. Կաթիղ, բրդիղ համար տալիս են պատիւ,  
Բաղցր միտդ վաճառում են անհաշիւ.  
Դուն ապրում ես հովուի, դամբոխի շնորհիւ.  
Խզուկ վախկոտ ոչխար, քեզ էլ իմացանք:
- ե. Հարստութեան կողմից հոչակուել ես ծով,  
Միլիոններու ուէր փարթամ, ապահով.  
Կեղծ վարկդ եղել է ուրիշի հաշիվ,  
Խարեբայ բարերար, քեզ էլ իմացանք:
- զ. Հազել ես հանգերձեալ աշխարհի հալաւ  
Ստացել ես մարգարէի մեծ համբաւ.

Մեղքի մեծը քու տակիցդ դուրս եկաւ  
Կարծըւած սուրբ արդար, քեզ էլ իմացանք:

է. / Այլոց հարստութեան ճամբայ ցոյց կուտաս,  
Ինքդ աղքատութեան ձեռքիցը կուլաս.  
Մուտ խօսելով անգործ պարսպ ման կուգաս,  
Յեկացի նոր Խիկար, քեզ էլ իմացանք:

բ. Քու նաւաստիներդ առել են երես.  
Չեն լսում խօսքերդ, անում են անտես.  
Մուրբ ես, շատ բարի ես, բայց կարգապահ չես,  
Մերունի նաւավար, քեզ էլ իմացանք:

ճ. / Ջիւան, ստացել ես բաւական հոշակ,  
Մտքերդ տհաս են, խօսքերդ շատ խակ.  
Անուսում, գանձիկ, զիւղացու զաւակ,  
Անշնորք ազիկար, քեզ էլ իմացանք:



## Մ Է Կ Է

Ո՞վ է հարցնողը, ո՞վ է քննողը,  
Մեղաւորն էլ մէկ է, արդարն էլ մէկ է.  
Ո՞վ է հասկացողը ով է գննողը,  
Իմաստունն էլ մէկ է, յիմարն էլ մէկ է:

Գիտունը սակաւ է, անզէտը բազում,  
Ծառերու վրայի պտուղները հում.  
Աշխարհից անտեղակ ամբոխի աչքում  
Գետի քարն էլ մէկ է, զոհարն էլ մէկ է:

Անաչք մարդուն պէտք չեն ճրագ ու լապտեր,  
Նրանց մասին նա մնում է անտարբեր.  
Հաւասար են նրան ցերեկ ու գիշեր,  
Առաւօտն էլ մէկ է, խաւարն էլ մէկ է:

Ջրան, իբրև սոխակ կերզէ աղոտւը,  
Կերպասի տեղ կերթայ ճերմակ կտաւը.  
Մէկ գնի են ծախում վատը և լաւը  
Չուա արծաթն էլ մէկ է, կապարն էլ մէկ է:

1902.





## Ա Ջ Գ Ե Ր Ը


Ողջ ազգերը մէկ թաղարի ծաղիկ են,  
Տեսակ տեսակ գոյնով ներկել է Աստուած.  
Հասակներով տարբեր մեծ ու փոքրիկ են,  
Ջուր ջուկ յատկութիւններ տուել է Աստուած:

Կը յօգնեն ազգերը ուժեղ, կռուարար.  
Կապրին սիրով, խաղաղ շին ջարդել իրար.  
Ողջն էլ պիտանի են մէկ մէկու համար  
Ստեղծել ու օրն էլ գովել է Աստուած:

Յոհեմ, բարի ազգաց Տէրն ամենակալ,  
Տուել էոյժ, երկիր, կայք լայնածաւալ.  
Որոնք սկսել են ամբարտաւանալ,  
Այնպէսներուն փառքից զրկել է Աստուած:

Ջիւանի, անաշխատ ու ծոյլ ազգերից,  
Բարիք մի յուսալ անհամբեր ազգերից.  
Չըխրատուող աշխարհաւեր ազգերից,  
Իւր տուած պարգևը խլել է Աստուած:

1898



## Չ Ի Լ Ի Ն Ի

Եթէ մեղաւորը մնայ անպատիժ,  
Աշխարհը կեցութիւն չի լինի երբէք.  
Մարդիկը կը դառնան իրար խայթող լիժ  
Բարի հայեցութիւն չի լինի երբէք:

Թէ չը լինի օրէնք, կրթութիւն, ուսում  
Ուժեղը անուժին կուլ կուտայ հում-հում.  
Նեո, հարստահարիչ դոփողի սրտում  
Խղճի ազատութիւն չի լինի երբէք:

Ջիւան, մարդիկ ցոփցել են առհասարակ  
Շոայութեամբ ողջ ընկել են պարտքի տակն  
Աշխարհը քիչ կուզղըտի այն ժամանակ,  
Երբ որ արբեցութիւն չի լինի երբէք:

1890





## ԻՆՁ ՀԱՄԱՐ ԼԱԻ Է

Անձնուէր, պիտանի ազնիւ գրացին  
Անպէտք ազգականից ինձ համար լաւ է  
Հիւրասէր, բարեսիրտ խեղճ բաղաքացին  
Փլատ մեծատանից ինձ համար լաւ է:

Յաւ ու վերք չի փրկել անտեղի լացը՝  
Ուրիշին դիմողը կը մնայ բացը.  
Տանս մէջ գտնուած զըլզլ չոր հացը  
Այլոց ճոխ սեղանից ինձ համար լաւ է:

Անգին է անապակ աղբիւրի աղը,  
Դառնահամ է, խիստ լեղի է ծովակը.  
Աշխատասէր, առատասիրտ մշակը  
Անողորմ իշխանից ինձ համար լաւ է:

Ամեն տեղ գովուած է ժրաջան մեղուն  
Ատելի է նախանձ, փորագաշտ կատուն,  
Հասարակ, գործունեայ խելօք տիրացուն  
Անդորժ սրբազանից ինձ համար լաւ է:

Քաղցր է գալիս քմքիս մեր այդու նուռը  
Աւելորդ է գնալ ուրիշի գուռը.  
Հայրենիքիս մէկ աննշան մատուռը  
Պարսկաց Խորասանից ինձ համար լաւ է:

Դու մայրենի երկիր, իմ ծնարանը  
Հօրս, պապիս, մամիս սուրբ քնարանը—  
Մայր աթոռի պարզ, անպաճոյճ ատեանը  
Վսեմ Վատիկանից ինձ համար լաւ է:

Ձենք պատուել ում հարկն է մենք ժամանակին  
Մեռու, խունկ կը ծխենք իւր յիշատակին.  
Անկարօտ ապրուստ տալ հայ հեղինակին  
Ոսկեծոյլ արձանից ինձ համար լաւ է:

Իւր երկրի մէջ խեղճ, յետ ընկած գիւղացին  
Մէկ օր առաջ կուգայ, կանգնած գիւղացին.  
Հայրենիքում ապրող քաղցած գիւղացին  
Փարթամ գաղթականից ինձ համար լաւ է:

Ձիւան, խեղճ չի մնալ կարկասող կինը.  
Տունը մաքուր, խտակ դարդարող կինը.  
Բրտինքի արդիւնքով հաց հարող կինը,  
Հարուստ ծոյլ կնկանից ինձ համար լաւ է:

1902



## ✓ Ն Ա Յ Ի Հ Ա Մ Ա Ր

**Չ**գտում է ամենայն մարդ, աշխատում է հացի համար.  
Գիւղէ-գիւղ, քաղքէ-քաղաք թափառում է հացի համար.  
Ուրիշի հողին տիրանալ՝ մարդու վճարն է ստիպում.  
Տէրութիւնը աւերութեան հետ կուում է հացի համար:

Ուրանում է ազգ ու ազինք, թողնում է հայրենիքը,  
Անսուազը իւր կրօնը փոխում է հացի համար.  
Անտէր ու անտիրական ողորմելի աղքատ կինը  
Դառնում է անբարոյական, ընկնում է հացի համար:


Եթէ հարկը չը ստիպէ ոչ որ անագինի չի լինի.  
Մարդը մարդուն համոզում է, խարում է հացի համար.  
Տեսնում է ինքը չունի, հարեանը ունի չի տալ,  
Նա դրացու տան վրայ յարձակում է հացի համար:

Մերունի խեղճ ծնողքը քաղցից շարունակ նեղուելով,  
Ո՛հ, իւր հարազատ զաւակը ծախում է հացի համար.  
Ով Զիւան, երգիչն էլ ունի ստամոքս, հացի պահանջ,  
Ման է գալիս նուազում է, երգում է հացի համար:

1902



**Ա**ստուած չանէ մարդուն ապիկար ձեր ժամանակը,  
 Իսկոյն կը լինի նա ցաւադար, ձեր ժամանակը.  
 Քէ չունի սատար, կամ թէ դաւակ, ձեր ժամանակը,  
 Պէտք է դեղերի անմխիթար, ձեր ժամանակը.  
 Տքնի պիտի ապրուստի համար ձեր ժամանակը,  
 Ընկնի ակամայից սար ու քար, ձեր ժամանակը:  
 Իժուար է ձերին ճանապարհը՝ եթէ մոլորուեց  
 Գտնել չի կարող ուղղութիւնը, միտքը ցնորուեց.  
 Ազգատ ձերունին սայթաքելով ոտքը խոտորուեց,  
 Գայթակղութեան վիճը մտաւ, խիղճը խմորուեց.  
 Երջանկութիւնից թշուառութեան մէջ թէ զլորուեց,  
 Կը դառնայ յատուկ կաթուածանար ձեր ժամանակը:  
 Մարդը քանի որ պատանի է, փոքրահասակ է.  
 Եռանդը վառ է, արիւնը շատ, սիրտը կրակ է.  
 Պատուով թէ ուժով երիտասարդ, անձը դանակ է.  
 Միրով կը տանի որբան էլ ծանր բռնի տակ է.  
 Հասակն առածի կարծում ես բախտի դուռը փակ է,  
 Պէտք է զթացող և բարեբար՝ ձեր ժամանակը:  
 Երբ ձերանում է գրողը, դառնում է խաղաղ ծով.  
 Փոքրիկ նաւակը իւր վրայից կանցնի ազահով.  
 Քէ ունի բարեկամ իրան դառնում է ջաղագով.  
 Քէ չունի, բնական է՝ տունը պէտք է տիրէ սով.  
 Էլ նա չի կարող բան յօրինել վառվուռն հոգով,  
 Նրա գրիչը կաննի դադար ձեր ժամանակը:  
 Մարդը միակերպ չի մնալ, փոխւում է շարունակ,  
 Յաջողը ձախորդ կը լինի, ձախորդն յաջողակ.  
 Մշակը տանուակէր կը լինի, տանտէրը մշակ,  
 Կեանքը խարուսիկ պատկեր է, ծաղր է նշաւակ.  
 Քէ պիտի ունենայ Զիւանը եղկելի վիճակ,  
 Աստուած իմ, արա համբերատար ձեր ժամանակը:



«ԸՊՐԻԼ ԿԱՏ ԸՐԾՆԹ Է, ԸՊՐԻԼ ԿԱՏ ԵՐԿԵԹ Է»

**Մ**արդ կայ դարդարուած է ոսկով, արծաթով,  
Մարդ կայ՝ որ կաշիէ քամար էլ չունի.  
Մարդ կայ ուրախութիւն կանէ շարաթով,  
Մարդ կայ՝ որ մի աւուր պաշար էլ չունի:

Հաւասարութիւն, բան, չի լինի, սուտ է.  
Որքան որ աշխատին, դուր, անօգուտ է.  
Մարդ կայ իշխան-ձուկը տապակած կուտէ,  
Մարդ կայ որ աւելուկ բանջար էլ չունի:

Ճիշտէ որ ասում են աշխարհում բախտ կայ.  
Որին կը հանդիպի, որին թոյլ կուտայ.  
Մարդ կայ հանգիստ նստած բաժինը կուզայ,  
Մարդ կայ գիշեր ցերեկ դատար էլ չունի:

Ջիւանի, անբախտի օրն է միշտ խաւար,  
Բախտաւորը ունի յաջող ճանապարհ.  
Մարդ կայ որ հօտերուն չըկայ թիւ համար,  
Մարդ կայ որ մէկ նիհար ոչխար էլ չունի:

1895



## Ա. Շ Խ Ա. Ր Հ

**Տ**րտմութեան օթեան, սղոյ տուն աշխարհ,  
Քո մէջդ ոչ մի մարդ անցաւ չի մնայ.  
Լացով, հարցս նման ընկայ ճանապարհ.  
Յաւերդ զգուեցի, երբ մօրից ծնայ:

Քո փառքերդ չնչին, պարզեմերդ սուտ,  
Կրկին կը պահանջես ստացողից շուտ.  
Երբէք մի մարդ քեզնից չի քաղեր օգուտ,  
Յաւով կը ծնանի, ցաւով կը գնայ:

Փրկիչը խաչեցիր, ո՞վ անհարազատ,  
Մթթէ մարդ քեզ նորէն կընծայէ հաւատ.  
Ջրանս քեզանից տրտմութիւնից զատ,  
Թէ իրան ասեմ, ես ոչինչ մնայ:

1874



## ԵՐՋԱՆԻԿ ՄԱՐԴԻԿ



**Խ** աղաղ, առանց ցաւի, երջանիկ մարդիկ,  
Գանեւ կուզես, գերեզմաննոցը գնա.  
Մարդիկը թշուառ են, չըկայ երջանիկ.  
Կուզես քաղաք, կուզես ամբողջ գնա:

Մարդիկ առհասարակ թշուառական են.  
Լոկ ապրուստի համար, ինչ ասես կանեն.  
Մէկ ծայր հացի համար, իրար կսպանեն,  
Տանից դուրս ել դու մէկ՝ փողոցը գնա:

Ո՛վ Զիւանի, դու մի ամիս գարուն ես.  
Զգն, շուտով կանցնիս, թէ որ արթուն ես.  
Կը յարգեն, կը պատուեն, քանի սիրուն ես,  
Երբ ձերանաս, գրողի ծոցը գնա:

1886





Ե Ր Գ

Աշխատիր քու հօրդ տունը շենացուր  
 Որ ասեն քեզ լաւ գաւակ ես, սիրելի:  
 Նպաստ ունիս, առաջ եղբայրներդ աուր  
 Երբ որ ստակ կը վաստակես, սիրելի:

Արթուն եղիր ձեր տան ծուխը չը մարես  
 Սրբագործուած իրաւունքդ խանդարես,  
 Մտոգացդ անշուշտ, պէտք է վճարես  
 Բարոյապէս պարտքի տակ ես սիրելի:

Բանիդ գործիդ, նրանք շարժում են տուել,  
 Հագցրել են, քեզ կեր ու խում են տուել,  
 Մեծացրել, կրթել, ուսում են տուել,  
 Որ դու այդպէս փայլուն ալ ես, սիրելի:

Հօրդ ու մօրդ սիրած կրօնն ու լեզուն  
 Խոստացիր որ կեանքիդ նման պաշտես դուն.  
 Մի թողնիլ հեռանալ հայրենիք, տեղ-տուն  
 Չը լինի թէ քեզ խորտակես, սիրելի:

1890





## Ի Մ Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

Փողի կամ կնոջ համար կրօնը փոխողը վատ է:  
Ձը համոզուած՝ կրօնափոխ լինողը անհաւատ է:  
Աչքիցը կեղնի գեղեցիկ կիներ փողը հատնելով,  
Ըստ որում նոր ընդունած կրօնի մէջ անհաստատ է:

Երկընուց ճիւղուր բերեց թէ սա է ազգը դրախտական  
Ով բարի արգար եղաւ, տանջանքներից նա ազատ է:  
Ամեն ազգ մի սար ունի քամակը տուել է նրան,  
Ով Ջիւան, մեր ազգի էլ յոյսը Մասիս-Արարատ է:

1883



Ե Ր Կ Ո Ի Տ Ո Ղ

Ով չի սիրել անձը իրան,  
Ուրիշին սիրել չի կարող  
Ի՞նչ մարդ չի պահել պատուիրան,  
Այլոց պատուիրել չի կարող:

Հասուն խելքն է բան շինող:  
Ընտիր խօսքեր յօրինողը  
Կամացը աէր չը լինողը  
Իւր տանը տիրել չի կարող:

Ընկած ելած մարդն է յարգի,  
Նա է գտուած մաքուր ոսկի,  
Անփորձ, վախկոտ հարուստն իսկի  
Մի վող նուիրել չի կարող:

Ինչքան լինի մարդ իմաստուն  
Իրանից կայ բարձր անուն  
Երբ որ Աստուած շինէ մի տուն  
Ոչ ոք աւերել չի կարող:

Ջրանի, մարդն է բանական,  
Դիմացող է մեծ նեղութեան.  
Չի ունենալ բարի վախճան,  
Ով որ համբերել չի կարող:

1883



## ԺՈՂՈՎՐԳՆԵՆ ԻՅՍՔԵՐ

Անհարազատ ընկերից հաւատարիմ շունն է լաւ,  
Խառվայրյղ պալատից խաղաղ, գեղջուկ տունն է լաւ,  
Սողոմոն իմաստունը գիտեմալով է ասել—  
«Հաղարաւոր գանձերից մէկ բարի անունն է լաւ»:

Նենգաւոր նախանձաւը բարի համոզմունք չունի,  
Նրա սրտից, բերանից խայթող օձի բունն է լաւ,  
Քանի պատիկ անխաղաղ, ապերջանիկ սպրեւուց,  
Հանգիստ, յաւիտենական, քաղցր անուշ քունն է լաւ:

Երկրագործ գասի համար վեց ամիս **Տ** ձմեռուանից,  
Հով, բացօդեայ դաշտի մէջ մէկ ամիս գարունն է լաւ,  
Գիտութիւնն է աշխարհի կամարակապ հեծ սիւնը  
Տասը հաղար յիմարից մէկ հատ իմաստունն է լաւ:

Ասում են գետնի տակ չը մշակուած գանձ կայ շատ  
Ներկայիս գործածական երեցող փայլունն է լաւ,  
Կարծիքովս գեղեցիկ դէմքի մէջ լաւ հողի կայ  
Օժիտաւոր տղիկից անօժիտ սիրունն է լաւ:

Ուկի ապարանջանը ուրիշին քեզ ինչ օգուտ,  
Քեզ համար քո սեպհական հասարակ չունն է լաւ,  
Օտարի քաղցրեղէնով քո փորը չի կշտանալ  
Ամենօրեայ գտնուած քո տանդ մածունն է լաւ:

Թեթե ցաւից ընկճըւող, վհատողը խակ է գեռ,  
Աշխարհի փորձանքներուն գիմացող տոկունն է լաւ,  
Զիւան, ինչպէս արեւը աստղերի թագուհին է  
Այնպէս էլ տղաներից փորձուած գիտունն է լաւ:

1886



X Հ Ա Մ Բ Ե Ր Է

Մի այլայլուիբ իզուր տեղը  
Համբերէ, սիրտս, համբերէ—  
Համբերանքն է սրտիդ զեղը  
Համբերէ, սիրտս, համբերէ:

Մի նախանձիւ բախտաւորին  
Նախանձները շուտ կը կորչին  
Նայէ քեզանից ստորին  
Համբերէ, սիրտս, համբերէ:

Աշխարհը մեծ, լայնատարած  
Ստեղծեց մեզ համար Աստուած  
Ոչ մի մարդ չի մնալ քաղցած  
Համբերէ, սիրտս, համբերէ:

Յուսով եղիբ միշտ աներկբայ  
Տէրը յաջող գուռ կը բանայ.  
Շրջանը այսպէս չի մնայ  
Համբերէ, սիրտս, համբերէ:

Քեզանից պատուով ու պայծառ  
Մարդիկ շատ են եղել թշուառ—  
Մեծ մարդկանցից օրինակ առ  
Համբերէ, սիրտս, համբերէ:

Փչելով մէկ քամի թեթև  
Կը վանէ ողջ ամպ ու անձրև.  
Շուտ կը ծագէ պայծառ արև—,  
Համբերէ, սիրտս, համբերէ:

1892



X

## Կ Ռ Ո Ւ Ն Կ


Կուռնկ թէ դու գնաս դէպ մեր երկիրը  
Աստուած սիրես, իմ ծնողաց բարև տար.  
Պաշտելի են նրա հողն ու մոխիրը,  
Նուիրական սուրբ հայրենեաց բարև տար:

Իմ հայրենեաց օղն ու ջուրը քաղցր են շատ,  
Բարեկից երկիր է, բերքերով առատ.  
Շէն աշխարհ էր, այժմ դարձած անապատ,  
Այն ողբալի աւերակաց բարև տար:

Պանդուխտ մարդը հանգիստ չունի մի վայրկեան  
Համարեա թէ ոչ մեռած է ոչ կենդան,  
Կուռնկ, երբ որ կերթաս դէպի Հայաստան,  
Մի քանի օր դու այնտեղ կաց, բարև տար:

Ման արի չորս կողմը մեր ծովակներու  
Պատկերը տես Հայոց աւերակներու  
Բոլոր թէ հին թէ նոր նահատակներու  
Լուսանոցիներու շիրմաց բարև տար:

1900





## ՀԱՇՏՈՒԹԵԱՆ ՀՐԵՇՏԱԿ

Հաշտութեան և սիրոյ բարի հրեշտակ,  
 Յոսոված աշխարհին խաղաղութիւն բեր,  
 Աբազ թախր արի, Նոյեան աղանձեակ,  
 Գալստեանդ սպասում ենք անհամբեր:

Կամար կապէ աղեղնակը լուսատու,  
 Պայծառ ասաղը, արուսեակը լուսատու,  
 Թող մեկ իշխէ արեգակը լուսատու,  
 Ձենք ուզում որ լինի մութի, խաւար գիշեր:

Կթա և ողորմեա երկնաւոր Իշխան,  
 Հաշտութեան հողի տուր բոլոր մարդկութեան,  
 Ինչու համար մէկը մէկին ֆեսս տան,  
 Մարդը, մարդուն համ եղբայր է, համ ընկեր:

Թող բացուին քու աղբիւրներդ լուսոյ ծով,  
 Ապրին բոլոր մարդիկ հանգիստ, ապահով,  
 Մնայ պատկառելի խաղաղ անխառով,  
 Հայնսածաւալ հզօր մեծ աշխարհը մեր:

Իրար յարգեն, սիրեն թէ ծեր, թէ Ձիւան,  
 Ուզիդ սրտով հասնին իրար օգնութեան,  
 Խոզվութեան ամպերը թող չքանան,  
 Արդարութեան հողին միշտ բարձրանայ վեր:

1905



X

Խ Ր Ա Ց Ը Ն Կ Ե Ր Ի Ս

Քմ ձախորդութեանս մի խնդայ, ընկեր,  
Քեզ էլ կը պատահի այս բանը մէկ օր.  
Կու վարը կը նստիս, ինձ կը կանչեն վեր,  
Բախտերս կը փոխէ շրջանը մէկ օր:

Փողի վերայ յոյս մի դներ յաւիտեան,  
Մանի ու դուրս կուգայ շատ մարդու գրպան.  
Բախտի բերմամբ ծառան կը լինի իշխան,  
Իսկ ծառայ կը դառնայ իշխանը մէկ օր:

Փնարես ու չես գտնիլ մի խեղճ աւանակ,  
Քու գարգարուած նժոյգ ձիուդ փոխանակ.  
Ամեն անգամ ձիդ չի տանի մրցանակ,  
Ուրբիշին կը Քեայ մէյտանը մէկ օր:

Քու ընկեր Զիւանուդ խօսքերը միշտ լուր,  
Առաքինութիւնը պինդ բռնէ ամուր.  
Մեռնելիս կը դառանաս հողին կերակուր,  
Մանկիւղ սե մահի ուռկանը մէկ օր:

1897



# Ի Մ Ա Ս Տ Ն Ե Ր

**Ս**ակուղ փուշը ձեռք չի ծակիր, արևն կառնել կամացուկ,  
Քաղաղ ջուրը ձայն չի հանիր, մարդ կը խեղդել միշտ ծածուկ-  
Հաջող շունը ձայն է տալիս որ գալիս է քեզ վերայ,  
Գու այն գամբուրից երկիրդ կրէ՝ որ չի հանել ձայն ու ձուք:

Առաւօտուն թէ ամպերը կարմրած չեն՝ վախ չը կայ,  
Հորիզոնը սև էլ լինի, այն օրը անձրև չի գայ,  
Թէ սագերը զրգոտած չեն, կարկուտից մի վախենայ,  
Հազարաւոր տարիներուց փորձըւած բան է յատուկ:

Ատախօքը երդուել զիտէ, գողը կեղծ արդարանալ,  
Քամոտ ամպի բնութիւնն է առանց անձրև որոտալ,  
Լիբ կարասը լուս կը մնայ, ամենեին ձայն չի տալ,  
Զանգակի պէս զոգանջում է՝ ուր որ կայ դատարկ պուտուկ:

Երկու-երեսանի մարդը, Զիւանի, սրուած քար է,  
Երկու սէր մէկ սրաի մէջ պահելը անհնար է,  
Երկու մեծ գործ մէկի ձեռքով կառավարել դժուար է,  
Մի ձեռքում չի տեղաւորուի երկու մեծկակ ձմերուկ:

1899







**Ն**եղութիւն քաշելս, այլոց նեղութիւն դալուցս ծագեց.  
 Չափազանց իմ խոնարհուելս, հպարտ մանգալուցս ծագեց.  
 Գիտես թէ իսկապէս մէկը փոխեց սիրուն օրերս լաւ,  
 Հիմիկուան իմ լաց ու սուգը, առաջուան խնդալուցս ձագեց:

Առանց մտածելու նրա խորութիւնը՝ մտայ ջուրը.  
 Թորասուղ լինելս ծովում, յիմար լողալուցս ծագեց.  
 Տկար խեղանդամի դիմացը կանգնելով անաղ արի,  
 Այժմ հաստատ կազալս, կեղծ ստով կազալուցս ծագեց:

Ղէբ անցնում մտքիցս անգամ թէ աշխարհը նեղութիւն կայ,  
 Լսելս, խեղճանայս, մեծ, դոռող խօսալուցս ծագեց.  
 Ջրանի, անուսում մարդու խաւար է մտքի աշխարհը,  
 Յետադիմութիւնս կարծեմ տգէտ մնալուցս ծագեց:

1897



## Ը Ն Կ Ե Ր

**Բ**արի, գեղեցիկ, առաքինի ընկերը՝ մարդուն,  
Փայլեցնում է արևի պէս պատկերը մարդուն.  
Ինչ մարդ ունենայ իւր մօտը հաւատարիմ ընկեր,  
Յերեկի նման անցնում է մութ գիշեր մարդուն:

Կեանքդ նուիրես ընկերի լաւին, քիչ է դարձեալ,  
Այնպէսն է հոգեկան լուսատու լապտերը մարդուն.  
Ընկեր եմ ասում, աստուածավախ, ճշմարիտ ընկեր,  
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:

Թշնամիները իւր վերայ գալած ժամանակը,  
Կտրիչ, հարազատ ընկերն է սուտերը մարդուն.  
Ով որ ունենայ մտերիմ ընկեր, Զիւան աշըղ,  
Զի սպիտակեր ամենեկին մէկ հերը մարդուն:

1874



ՄԵԶԵՎԵՐՆԵՐԻ ԵՌԵՐԿԱՅ ԶԳԱՅ

**Ա**մեն Հոմերոս մէկ Զօրիոս ունի,  
Ամեն Մոզսէս՝ մէկ հաստ փարաւուն ուժեղ.  
Ամեն կոկորդիլոս մէկ հիլոս ունի,  
Ամեն գեղեցկուհի՝ մէկ կողիտ տգեղ:

Ամեն երգող Դաւիթ մէկ Սաւուղ ունի,  
Ամեն ծառ էլ դառն, խակ պտուղ ունի.  
Ամեն հոյակապ տուն մէկ հաստ խուղ ունի,  
Ամեն բարոյախօս՝ մէկ արեւոյստ:

Արեւակի զէմն էլ սև-մութ ամպեր կան,  
Սոխակն էլ ազոաւին ունի ախոյեան.  
Օձն էլ ոգնու ձեռքից միշտ լաց ու կական,  
Կնեւո՞վ մեռնում է անճար ու անզեղ:

Նա չըկայ որ թաթառից չը վախենայ,  
Ծով չըկայ որ կոհակ ալիք չունենայ.  
Բարձր սարի գլխին միշտ ձիւն կը տեղայ,  
Մեծ մարդկանց կը դիպչի հարուածը զօրեղ:

Ամեն Զիւան ունի մէկ ծեր գիմազիր,  
Առանց երկրաշարժի չըկայ մի երկիր.  
Սև ունի իւր դէմը ամենայն կարմիր,  
Փոխան ուրախութեան սուզն է քոնում տեղ:



ԿՈՒԳԸՆ ՈՒ ԿԵՐԹԸՆ

Չախտորդ օրերը ձմրայ նման կուզան ու կերթան  
Վհատելու չէ, վերջ կունենան, կուզան ու կերթան.  
Դաւն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար.  
Որպէս յաճախորդ՝ շարուէ-շարան կուզան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի զլիւնց,  
Ինչպէս ճանապարհի կարաւան կուզան ու կերթան.  
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,  
Որքան մանուշակ, վարդ, բալասան կուզան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ տկարը տխրի,  
Փոփոխակի անցքեր զանազան, կուզան ու կերթան.  
Արևը առանց վախենալու ցայտում է լոյսը,  
Ամպերը դէպի ազօթարան կուզան ու կերթան:

Երկիրը ուսեալ զաւակին է փայփայում մօր պէս,  
Անկիրթ ցեղերը թափառական, կուզան ու կերթան.  
Աշխարհը հիւրանոց է, Զիւան, մարդիկ հիւր են,  
Եյսպէս է կանոնը բնական, կուզան ու կերթան:

1892



## ՄԵՐ ԱՒՆՆԻՊՐԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Ե**րբ որ Աստուած կամենայ տալ մեր ազգին բարի կեանք,  
 Կուտայ առաջ մեր հայոց հարուստներուն խղճմտանք.  
 Մեր ազգի հարուստները անասրբեր են, յիրաւի,  
 Հազարէն մէկ՝ հայրենեանց համար նրանք չեն ցաւի.  
 Չեն մտածեր թէ ունին եղբարք քաղցած ծարաւի,  
 Նրանց մէջը շատ չը կայ խղճի նշոյլ, գորովանք:

Աշխարհի մէջը միշտ այս է ամենազարմանալին,  
 Հարուստների ձեռքումն է ազգի բախտի բանալին.  
 Դէպքը այսպէս է բերել, սա է անիմանալին,  
 Սորանցից պիտի յուսայ բարիք թշուառ խղճալին.  
 Վարուիլ նրանց հետ սիրով, այս է յատուկ ցանկալին,  
 Մինչև նրանց որդիքը ստանան լաւ նրահանդ:

Այնուհետև կը բացուի բախտի դուռը համարձակ,  
 Ամեն մարդու բաղձանաց համեմատ առհասարակ,  
 Նրանք կը դառնան բոլոր ժողովրդին օրինակ,  
 Ամենը իւր քսակից դնելով ջոկ հանգանակ,  
 Կը սկսուի յաջողուիլ գործը այսպէս շարունակ.  
 Պարտքերը ճանաչելով, էլ չեն սիրեր աղաչանք:

Կազմում է բացառութիւն առատասիրտ իշխանը,  
 Ամեն բարի գործի մէջ ցոյց տալով իւր նշանը.  
 Բաց է ամեն ժամանակ նրա շտեմարանը,  
 Այնպէս մարդը կստանայ արժանի զովասանը.  
 Եւ աղքատաց համար էլ պատրաստ է միշտ սեղանը,  
 Վարձը վերնուստ կստանայ՝ որքան կրէ շորչարանք:

Աստուած ամենաբարին ամեն մէկին հաւատար,  
Ստեղծել է աշխահի մէջը ապրելու համար,  
Բայց ինչ՞ոչ է մինն ողբատ, մինը ունի մեծ գումար,  
Սա քանիտ է ի՞նչ գիտութիւն, արի կազմէ զազափար,  
Աս Ջիւանի երգիչս մտածում եմ անզաղար,  
Հարատութիւն գտնելու հարկաւոր է աշխատանք:

1880



## Գ Ի Ի Ա Ն Ի

**Մ**արգկային ցեղի սկիզբը, վախճանը Աստուած գիտէ.  
Լայնածաւալ տիեզերքի սահմանը Աստուած գիտէ.  
Գիտնականները բնաւ հզրակացութեան չեն հասել.  
Աներևոյթ գերբնական խորանը Աստուած գիտէ:

Շինողը ինքն է իմանում իւր շինածի դադանիքը,  
Քեփի մէջ է խելահաս գիտուններու նոր կարծիքը.  
Ուրտեղ՝ է մաքուր սրբերու, արդարոց հայրենիքը,  
Պահուած է, մարդ չգիտէ սուրբ կայանը Աստուած գիտէ:

Որդին հօրը, թոռը՝ պապի իրաւունքն է պաշտօնանում,  
Բնական է, որ դաւակը մօր պէս է արտասանում,  
Ամենայն ազգ ինքը իրան ուղղափառ է անուանում,  
Մինչ չը մեռնի շի յայտնուի, այդ բանը Աստուած գիտէ:

1903



## ԱՇՈՒՂԻ ՍԷՐԸ



### ՀԵՄԵՄԵՏՈՒԹԻՒՆ

Ո՞ր մի դաշտի ծաղիկը սիրուն է հոգեակիս նման,  
Ո՞ր մի վարդը, յասմիկը սիրուն է հոգեակիս նման.  
Ո՞ր մի մայրը կարող է սորա նման գաւակ ծնիլ,  
Ո՞ր մի ցեղի մանկիկը սիրուն է հոգեակիս նման:

Ո՞ր մի երկըրի մէջը Եւային ստեղծեց Տէրը,  
Ո՞ր մի ազգի աղջիկը սիրուն է հոգեակիս նման.  
Ո՞ր մի հովուի փարախը գեղեցիկ է մերինի պէս,  
Ո՞ր մի հօտի զսոնիկը սիրուն է հոգեակիս նման:

Ո՞ր մի որսորդը չէ գալիս պարտելու իմ անցկալին,  
Ո՞ր մի սարի եղնիկը սիրուն է հոգեակիս նման.  
Ո՞ր մի երաժիշտն է կարող նմանել իմ սոխակին,  
Ո՞ր մի խօսուն թռչնիկը սիրուն է հոգեակիս նման:

Ո՞ր մի շինացին պիտի պարծենայ գեղանուս մօտը,  
Ո՞ր մի սևը, հեղիկը սիրուն է հոգեակիս նման.  
Ո՞ր մի մուրրակն է լուսով քո արևիդ պէս, Զիւան,  
Ո՞ր մի փայլուն աստղիկը սիրուն է հոգեակիս նման:

1888





## ՄՕՏՍ ՄԸՆ ԸՐԻ

Յարի սիրուն եղնիկ, նորահաս ծաղիկ,  
Գեղատեսիլ աղջիկ, մօտս ման արի.  
Լեզուդ անուշ քաղցրիկ, բերանդ մեղմիկ.  
Պար գալուդ կարաւիկ, մօտս ման արի:

Բնութիւնդ համեղ, ինքդ արնիւ ցեղ.  
Սիրուն, վայելչագեղ, աչքերդ կանթեղ.  
Թերթիչներդ ասեղ, ունքերդ աղեղ,  
Մի զնալ ուրիշ տեղ, մօտս ման արի:

Պարկեշտ, բարեհասակ, դրախտարձակ.  
Դու անմեղ հրեշտակ, չունիս նմանակ.  
Ո՞վ է քեզ հակառակ, ասա իմ հոգեակ,  
Միշտ ազատ համարձակ մօտս ման արի:

Քոստանում է զարուն, կերպդ զուարթուն,  
Ունիս պարկեշտ անուն, համեստ սիրասուն.  
Զուգուել ես զարդարուն, աղունակ ես դուն,  
Զեռքէս բռնէ սիրուն, մօտս ման արի:

Զիւնուռ տարափալին, սրախ ըղձալին  
Իմ հոգուս անձկալին, մտքիս պանծալին.  
Ծառերի պտղալին, անուշ ինկալին  
Կեանքիս զուարճալին մօտս ման արի:



## X ՊԱՌԱՒ ԵՎՐՍ

Յրսուն տարի ինձ հետ մէկ տեղ,  
Լուծ է քաշել սիրով համեղ.  
Երգ ձօնեցէք քաղաք ու գեղ.  
Ելէք, պառաւ եարս եկաւ,  
Փայլուն անդին քարս եկաւ:

Իսկ ընկեր է եղել ինձի,  
Մարմընուս մէջ որպէս հողի.  
Նուիրել է վեց հատ որդի.  
Ելէք, պառաւ եարս եկաւ,  
Ապաւնս, սարս եկաւ:

Գո՛հ եմ քեզանից Աբարիշ,  
Պարզեւել ես մխիթարիշ.  
Գերզասատանիս կառավարիշ.  
Ելէք, պառաւ եարս եկաւ,  
Քաղցրահամ շաքարս եկաւ:

Բարեբարոյ և համեստ կին,  
Աստուած կամենայ հայերին.  
Խելքիս ու մտքիս հայելին.  
Ելէք, պառաւ եարս եկաւ,  
Կեանքս, հաւասարս եկաւ:

Զիւանի, թունդ պահող պատուէր,  
Միտքը ամփոփ, և խօսքին տէր.  
Աստուածապաշտ և մարդասէր.  
Ելէք, պառաւ եարս եկաւ,  
Ամօթիած նուպարս եկաւ:

1902

Երբ որ կը լսեմ իմ նազելոյս երգելը մեղմիկ  
 Ինձ թւում է բամբիս,  
 Ձայնը գրաւիչ, հրեշտակային, խօսքերը մեղմիկ,  
 Սրտիս կուտայ գրբիս:  
 Երբ որ կը հեռանամ նազելոյս մօտիցը մէկ ժամ,  
 Մէկ տարի կը դառնայ—,  
 Հոգս ու ցաւերս կաւելնանայ այն օրը սաստիկ,  
 Մտքիս կուգայ կնձիս:  
 Իմ սիրեկանս ինչ ժամանակ թօտում է ինձ հետ—  
 Նորոգւում է կեանքս,  
 Երբ որ կը բանայ սուրբ բերանը հանում է ձայնիկ,  
 Ես նայում եմ յաղծիս:  
 Պոռնկները գինոյ բաժակից կարծիր ու նուրբ են  
 Կարծես աղամանդ են—  
 Ատամները մարդարտանման ժանր ու փոքրիկ  
 Ոսկուց գերակշիւ:  
 Սրտի սիրածը սիրահարի ամենազեղն է  
 Թեկուղ լինի տղեղ.  
 Փորձով Ջիւանս գիտենալով ես աշաւասիկ  
 Այսպէս տուի վճիւ:

1887



## Ա Ռ Ա Ն Ց Ք Ե Չ

Երեսից լապտերը մի ծածկել, ով կոյս,  
Կը մթնանայ ճանապարհս առանց քեզ.  
Սուրբ սիրոյդ կանթեղը եթէ չտայ լոյս,  
Չի փայլփլի դադափարս առանց քեզ:

Դուն ես եռանդ տուող իմ եղանակիս.  
Դուն ես ապաւէնը թշուառ վրճակիս.  
Դուն ես կեանքն ու հողին երգիս, ջութակիս,  
Ձայն շի տալիս իմ քնարս առանց քեզ:

Ինչպէս որ լուսինը արևով կապրի,  
Նոյնպէս էլ ես քեզնով, ով իմ թաղուհի.  
Եթէ որ ճակատիդ փայլը չը հասնի,  
Շուտ կը հանգչի վառ դամպարս առանց քեզ:

Ջրանու քաջ քոյրը, հողով սիրուն ես,  
Վարքով առաքինի, դէմքով փայլուն ես.  
Խեղճ մտքիս ծովակի փարոսը դուն ես,  
Տեղ չի գնալ նաւաւարս առանց քեզ:

1900



# ԱՅՍ ԳԻՇԵՐ

Մատթո՞ւակ, բեր, ինձ գինի տուր այս գիշեր,  
Մորմորում եմ, սիրտս է ախուր այս գիշեր.  
Ինձ մի բանով ուրախացուր այս գիշեր,  
Գոնէ շանցնեն ժամերս գուր այս գիշեր:

Շնորհք արա, մի ձանձրանար, գեղանի.  
Լեր իմ ցաւիս դու ցաւակից, դովանի.  
Բեր մատթո՞ւակ, բեր գինին չին մառանի  
Վառ կրակիս սրակէ ջուր այս գիշեր:

Տուր թեղ ինձ, գեղեցիկս, սիրունս,  
Անուանող չեա պիտի կապիմ անունս.  
Արդէն գիտես որ չի տանիր իմ քունս  
Եւ գրօնենք, օղն է մարութր այս գիշեր:

Հոգոյս հատոր, բաւ է կրեմ քո ցաւը  
Գերիդ դառնամ ու վարուիմ քու կամաւը  
Ինձ սիրում ես, թէ ոչ, ասա իրաւը  
Տուր ինձ շուտով վճռական լուր այս գիշեր:

Լուր իմ խօսքս, ինդրում եմ խոնարհարար,  
Մի այլայլիբ ես չեմ խօսում անկատար.  
Եթէ լինելու ենք մէկ մէկու համար,  
Արի կապենք պայման աճուր այս գիշեր:

1882



## Ս Ի Ր Ա Հ Ա Ր Ա Կ Ա Ն

X

Լոյս տուր մտացս լուսատեսիլ պատկերդ լուսնակ,  
Ունքերդ աղեղնակ.  
Դրախտի դուռը եկ մի պահեր խեղճի համար փակ,  
Թող մտնի համարձակ,  
Սէրդ կրակ է խօսքերդ անդին, քար են աղնիւ,  
Սիրող ունիս անթիւ.  
Երկնից նոր եկած լուսեղէն ես կամ թէ հրեշտակ,  
Մաքուր բան ես իտակ,  
Վայելչահասակ, մեղրաքերան, այտերդ խնձոր,  
Թերթիչներիդ զինուոր.  
Ընտիր իրանդ սպիտակ է զերթ ձիւն ու բամպակ,  
Մարմարիցը ճերմակ,  
Տխուր օրերս քաղցրացնող անարատ աղջիկ,  
Լուսաճակատ աղջիկ,  
Մաղկանց թագուհի գեղատեսիլ վարդ ու մանիշակ,  
Համասփիւռ մեխակ:

1890



# ՄԻԻՍԷՏՏԷՍ ՍԷՄԱՅԻ

Աբի, իմ նազելի բամբիշ, գեղկցիկ քաղցրախօս լեզու,  
Դրախտից դուրս եկած յաւերժահարսի պէս սիրուն ես դու,  
Հոտոտելիս հոտով լցուաւ հոտաւէտ մուշկ ծծերդ քու,  
Վառած սիրտս զովացուցիր նման պայծառ առաւօտու  
Պառնկներէդ կը կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,  
Յարաժամ ընթերակայ ես թէ ժամու, թէ տարածամու:

Ատամներդ քանի որ կան յակինթ, գոհար էլ ի՞նչ պէտք է,  
Աչերդ ինձ արեգակ են, վառած զամար էլ ի՞նչ պէտք է.  
Գեղեցիկ երգում ես արդէն, ջութակ, քնար էլ ի՞նչ պէտք է.  
Բանաստեղծից զովաբանուած զինի, նեկտար էլ ի՞նչ պէտք է:  
Պառնկներէդ կը կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,  
Յարաժամ ընթերակայ ես, թէ ժամու, թէ տարածամու:

Գիտեմ հաստատ որ անգութ չես, սիրելիս, շատ ողորմած ես,  
Ամենայն ժամ սիրահարիդ մասին ցախս, կը մտածես.  
Բոլոր սիրուններէն ազնիւ, խոհեմ պարկեշտ ամօթիւսած ես.  
Բերանդ կենաց աղբիւր կայ, թէն ինքդ արարած ես.  
Պառնկներէդ կը կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,  
Յարաժամ ընթերակայ ես թէ ժամու, թէ տարածամու:

Ջրանի երգիչիս ձեռքէն թէ բռնես, չեմ մնար դանդաղ,  
Կունենամ քեզ նման օգնող, կը լինեմ ես բարեկենցաղ.  
Իրեցիկ երեխայի պէս կը վազեմ դէպ քեզի վաղ վաղ.  
Ծարաւս քեզանով կանցնի թէ այրիմ, պապակիմ, չքնաղ:  
Պառնկներէդ կը կաթէ միշտ օշարակ կենդանի քաղցու,  
Յարաժամ ընթերակայ ես թէ ժամու, թէ տարածամու:

1882



## ԹՕՓԽԱՆԱՅ ԴԻԻԱՆԻ

Քո վախճարով վառուժ եմ, արի, սիրական սէր տեղ ես,  
Երկնային ամպերու մէջ նստող ծիածան, սէր տեղ ես.  
Ճանապարհդ նայելով աչքերումս լոյս չր Սնաց,  
Եկ երևոյթ տեսանեմ ազնիւ սիրական, սէր տեղ ես:

Ի՞նչ պատահաւ, անուշիկ, որ դուն հեռացար ինձանից,  
Քաղցրախօս, անուշ լեզու, անուամբ զովական սէր տեղ ես.  
Քանի՞ մէկ, քանի չարաշար տանջուիմ այլոց ձեռքով,  
Ո՞վ վեհապաժ անուած ի, կեանքիս պահապան սէր տեղ ես:

Մեր սիրոյ վայելչական տեղերն ուրիշ մարդիկ առան,  
Դուն արի՛ ի միասին գնանք դատարան, սէր տեղ ես.  
Թող միայն սսեն, Զիւան, այսօր սիրականդ կուգայ,  
Թող տատանիմ քո սիրով մինչև յախտեան, սէր տեղ ես:

1872





ՍԵՐԸՇԵՐՈՒԹ ԵՐԻՏԵՍՇՐԳԻ ԵՐԳԸ

(«Նէճիպէի» եղանակով)

Ես քեզ տեսայ մէջը այգուն,  
Ճովտալով ինչպէս թռչուն.  
Սրտիս սաստիկ դուր եկար դուն,  
Ա՛խ իմ սիրեկան, անուշ սիրեկան,  
Կեանքիս հատորը, դու ես աննման:  
Վառայ, վառայ, ես վառայ,  
Կրակիդ ճարակ դառայ.  
Հանգստութիւն չունեցայ,  
Մինչ իմ կարօտս շառայ:  
Այն օրուանից շունիմ դադար,  
Ինչ քեզ տեսայ, գեղատիպար,  
Իսկապէս եղայ սիրահար,  
Ա՛խ իմ սիրեկան, անուշ սիրեկան.  
Կեանքիս հատորը, դու ես աննման:  
Վառայ, վառայ և այլն:  
Աչքերիցդ մի կայծ թաւ,  
Թաւ, սրտիս մէջը ընկաւ,  
Ինչ կանեմ չի հանգչիր բնաւ.  
Ա՛խ իմ սիրեկան, անուշ սիրեկան,  
Կեանքիս հատորը դու ես աննման:  
Վառայ, վառայ և այլն.  
Փասիան ես ոսկեփետուր,  
Աչքերիդ մէջ կը ցոլայ հուր,  
Թագուհին ես թռչնոց հանուր,  
Ա՛խ իմ սիրեկան, անուշ սիրեկան,  
Կեանքիս հատորը. դու ես աննման:  
Վառայ, վառայ ես վառայ,  
Կրակիդ ճարակ դառայ.  
Հանգստութիւն չունեցայ,  
Մինչ իմ կարօտս շառայ.

1884




## Ս Ի Ր Ո Ւ Ն Ի Կ

**Մ**աքուր նազելի կոյս, տեսրդ վառվառն  
Ծաղիկներն են տունը, թէ ասաղերը բեզ.  
Հայրըդ է պարզեմը, թէ մայր սիրուն,  
Այդ կրակոտ, փայլուն, սե աչքերը քեզ:

Կուրծքդ էլ բրուսի սպիտակ ձին է,  
Արիւնդ իշխանի մաքուր արին է,  
Դա մի շնաշխարհիկ հարստութիւն է,  
Փառքի կը հասցնէ քո պատկերը քեզ:

Դու Ջիւանու հարսնացուն ես, ո՞վ քոյրիկ,  
Մթթէ պիտի դառնաս ուրիշին հարսիկ.  
Մրցում են իրար հետ քու մասին, աղջիկ,  
Աշխատում են տիրել օտարները քեզ:

1902



## Գ Ա Ջ Է Լ

**Ն**ազելոյս ամպ է իջնել արևի պէս վառ երեսին,  
Սգւորի պէս սև շղարշ է ծածկել պայծառ երեսին.  
Աչքերի և ունքերի սևութիւնը շէր բաւական,  
Որ նորից մութ քող է ստել կոյսը կայտառ երեսին:

Կաթնարուղի բերանը փակ, աչքերըն արդէն դալկացած,  
Քաւարը գիշերի պէս պատել է պատկառ երեսին.  
Մէկ տարի կայ, չեմ գիտեր, հիւանդ է, ինչ է տիրուհիս,  
Կտրել է, վերացել է ժպտը խապառ երեսին:

Մարտը գարուն գիտնալով զգոյշ չը պահեց ինքնիրան,  
Գոյնը որ թօթափել է, ցուրտըն է պատճառ երեսին.  
Տապալեց յոյսդ օդապարիկի նման, Զիւանի,  
Հարսուից յանկարծ փշեց ահակլի թաթառ երեսին:

1885



Շառագոյն վարդ այտերդ խնձոր են դրախտային,  
 Համեստ վարքդ տեսնողը քեզ չի կարծեր հողածին.  
 Նրան այնպէս կը թուայ հրեշտակ ես երկնային,  
 Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Հիւանդը կառողջանայ պատկերիդ մտիկ տալով,  
 Մաղկունք բարև կը բռնեն, երբ տեսնեն քեզ ման գալով.  
 Թռչունները դէմ կուգան, երգելով, պար խաղալով՝  
 Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Հոգեբուզի բերանիցդ կենդանութիւն կը բուրէ,  
 Եեանք տուող, սնունդ տուող կազդուրիչ կերակուր է.  
 Պուունկերիդ կաթիլը անմահութեան սուրբ ջուր է,  
 Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Քեզ սիրում եմ սուրբ սիրով, պիտի սիրեմ, գեղեցիկ,  
 Ա՛խ թէ դուն էլ ինձ սիրես, ես կը լինեմ երջանիկ.  
 Ատամներդ մարգարիտ, շրթունքդ ակ մեղեսիկ,  
 Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

Բոլոր մարդիկ եղբայր են քեզ համար, համեստ սիրուն.  
 Դու խորութիւն չը դիտես, չես ջոկել ազգ ու սնուն.  
 Միբոյ վճիտ պարզ ջուրը և աղբիւրը զօն ես, դուն,  
 Ո՞վ կարող է չը սիրել քեզ նման գեղեցկուհուն:

1899





## ԿԵԱՆԲԵՐՈՒ ԿԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

**Ք**է քո աչք ու ունքդ սև են, սով չքնաղ,  
 ևս էլ դորանց զէմը բախտ ունիմ շատ սև.  
 Թերթիչներդ թէ լսիդ տան շամանդաղ,  
 Իմ արևս ամպամած է, հաստատ սև:

Եթէ դու սիրում ես միշտ ուրախութիւն,  
 ևս էլ կուզեմ առանձնանալ մի անկիւն.  
 Թէ որ դու կուրծք ունիս որպէս ձերմակ ձիւն,  
 Իմ էլ մազերուս մէջ չըկայ մէկ հատ սև:

Դու փայլում ես սակոյ, արծաթի նման,  
 Իմ էլ կեանքս է ժանգոտ երկաթի նման.  
 Թէ դու մազեր ունիս սև սաթի նման,  
 ևս էլ օրեր ունիմ անցնելու վատ սև:

1886



## ԵՐԵԿՈՅԵԱՆ ԴԷՄ ԱՐԻ

**Ք** է պիտի գաս, ով սիրելի, երեկոյեան դէմ արի,  
Շատ մի ուշանալ, նազելի, երեկոյեան դէմ արի.  
Յերեկը փակուիք սենեակում, մի երևար ոչ ոքի,  
Շատ շատերուն չես հաճելի, երեկոյեան դէմ արի:

Արեք նախանձելով այրել կուզէ քու պատկերդ,  
Զգուշացիր, երանելի, երեկոյեան դէմ արի.  
Ես ու դու, Աստուած միայն գիտնանք պիտի մեր գաղտնիք  
էլ չեմ ասում քեզ աւելի, երեկոյեան դէմ արի:

Գիշերը հանգիստ խաղաղ նստենք մի տեղ զրոյց անենք,  
Իմ զեղեցիկ, իմ գովելի, երեկոյեան դէմ արի.  
Շոգերին դուրս է գալիս իւր բնիցը վատ սողունը,  
Քունաւոր օձը գարշելի, երեկոյեան դէմ արի:

Քոյ օգը քիչ մեղմանայ, քաղցր զեփուռը թոյ փչէ,  
Բարձրապատիւ երեւելի, երեկոյեան դէմ արի.  
Տարածէ բազուկներդ եզրօրդ՝ Զիւանու վզով,  
Սպիտակ շուշան փարելի, երեկոյեան դէմ արի:

1898



## ԱՌ ՍԻՐՈՒՅԻՆ

**Յ**օժար եմ, ինչ որ կուզէ թող անէ իմ սիրականս.  
Մարմինս սուր սուսերով թող կտրատէ անճամանս.  
Ինձի սպանելու կամք է ունեցել զովականս,  
Գնալով կաղաչեմ, վզիս ձգելով պատանս: *պարզ*

Դու միայն քո ծամերդ, սիրուն, արա ինձ կախաղան,  
Ես կը քաշեմ, թագունի, իմ ձեռքերով իմ պարանս,  
Աչքիս արտասուքի նման աչքէս ելաւ աշխարհը,  
Բացի Աստուած չէ կարող ոչ որ լինիլ օգնականս:

Ձի իմանալ եթէ մտնեմ մրջիւնի աչքումը ես,  
Այնքան որ բարակացել, նինարացել է իրանս.  
Ես գինետան անկիւնը չեմ փոխփոխել աշխարհի հետ,  
Փլատի շինձու գրախտից լաւ է իմ կեցարանս:

1886





# Ս Ի Ր Ե Լ Ի

**Ա**րքայութիւնը առանց քեզ՝ տարտարոս է ինձ համար.  
 Բայց քու հետդ դժողբում ել լինիմ, փառք է ինձ համար.  
 Երեսիցդ լոյս կը կաթէ, հոգիս, ամեն առաւօտ,  
 Իսկուհի, ճերմակ ճակատդ արեւը է ինձ համար:

Իմ անուշիկ, առանց քեզի աշխարհը աւեր է ինձ.  
 Ուրիշի խօսքը զրոյցը, վէրք բացող սուսեր է ինձ.  
 Եբբ դու չը կաս աշքիս առաջ, ցերեկը զիշեր է ինձ.  
 Երկնային պայծառ արեր շուտ կը մթնէ ինձ համար:

Քեզանով հոգի են առնում հարսանիքն ու նշանը,  
 Սոխակի պէս ճովտալով զարդարում ես սեզանը.  
 Քանի որ դու չես երևում, ախուր է խրախճանը,  
 Քաղցր երգ ու նուագարան վատ կը հնչէ ինձ համար:

1901





## Բ Ա Ր Ե Մ Ա Ղ Թ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Անուշիկ կոյս, բարբի բախտի քու արժան լինելդ տեսնեմ.  
Հոտաւէտ ծլած ու ծաղկած բուրաստան լինելդ տեսնեմ.  
Բարով Աստուած կամենայ փափագիդ համբիս, սիրուն աղջիկ,  
Բոլոր շքնաղնեքու մէջ գարմանագան լինելդ տեսնեմ:

Սիրածդ փեսայի թեին թեղ տաս օգնելու մարով,  
Համեստ, առաքինի, անտես, ժրաջան լինելդ տեսնեմ.  
Գրացուդ փարթամութեան վրայ երբէք դու չը նախանձիս,  
Ամենայն ժամ վիճակէդ գո՛հ, բուսկան մտալդ տեսնեմ:

Սիրես պէտք է քու ընկերդ, քու անձիդ պէս Տիրոջ կամքով.  
Շարունակ նրան հսկող քաջ պահպան լինելդ տեսնեմ.  
Կաղաչեմ Զիւանս, Աստուած, քիչ արեւ պարզեւ ինձի,  
Զք մեռնեմ ես, սիրուն գասրիկ, վարդ շուշան լինելդ տեսնեմ:

1899



## Պ Ա Ղ Ա Ղ Բ Ի Ի Ր Ի Մ Օ Տ

(«Սուրբ սուրբ Բարձրագոյն» եղանակով)

**Պ**աղ աղբիւրի մօտը կանգնած մի աղջիկ,  
Ձեռքին սափոր, լցրած ջուրն էր անուշիկ.  
Աչք ու ունքը զալմով քաշած, գեղեցիկ.  
Մայրիկ, զարնուեցայ սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Պաղ աղբիւրի մօտը, պարտիզում նստած,  
Ունէին լաւ գինի, գասի խորոված.  
Երգում էին, պարում էին ըստրած.  
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ման էր զալիս ընկերներով միասին.  
Կարծես հրեշտակ էր, չէր նա հողածին.  
Մազերը օսկեգոյն, ճակատը լուսին.  
Մայրիկ զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ճերեկը անդադար նորան եմ յիշում,  
Գիշերն էլ երազիս մէջն եմ տեսնում.  
Տոչորում ման կուգամ խեղճ, մոլոր, տրտում.  
Մայրիկ, զարնուեցայ, սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

Ա՛խ երանի այն աւուր, շատ երանի,  
Տեսութեանը կրկին լինիմ արժանի.  
Առանց նրան ես չեմ մնար կենդանի.  
Մայրիկ, զարնուեցայ սիրում եմ նորան,  
Մի փոքր ակնարկով արաւ ինձ նշան:

1883



# Գ Ա Լ Է Ն Տ Ե Ր Ի

Հրդեհն գոյացաւ աշքերիցդ, ով սիրուն աղջիկ,  
Այրեց ու լափեց իմ իրանս, հայկազուն աղջիկ,  
Համեստ ու բարի ծաղկափթիթ սրբասուն աղջիկ,  
Աշխոյժ, գեղեցիկ, սիրտ գրաւող զգայուն աղջիկ:

Երանի նրան, ով քու դրախտիդ մէջը կապրի,  
Զմեռ է թէ դարուն՝ ոչ կը շողի, ոչ էլ կը մբսի-  
նենթ ճգնաւորը թող զնայ սարերումը ճգնի,  
Թող զրկըտի քու տեսութիւնից, մեծանուն աղջիկ:

Ղրկէ, օրիորդ, քու նկարդ մարդիկը տաննն,  
Թող խնդրէ ձեռդ ազաշիւով իշխանի որդին,  
Բովից, քուբայից դուքս եկած ես, սակի ես անգին,  
Շնորհքի առատ ընծաներով զարդարուն աղջիկ:

Իմաստունի կոյս, հողեպարար տեսք ունիս հաստատ,  
Սիրոյդ կրակին շին դիմանալ երկաթ ու պողպատ,  
Հարուստը դէմդ դառնում է նէք, խղճալի աղքատ,  
Այնքան ուժեղ ես բարոյսակէս, վաստուն աղջիկ:

Նախնիք քեզ համար սրբութիւնը թողել են օժիտ,  
Վատդ ուզողը վայրախօս է, անմիտ է, անմիտ,  
Կոյս անտառի մէջ հիանալի, տենչալի հովիտ,  
Կանաչ, նորահաս, մատաղաշիթ, զաւարուն աղջիկ:

Է՞ր շես երևում, ճրտեղ ես դու նազելի այժեամ,  
Մերթ շես առաքում կամ մի նամակ, կամ սիրոյ պատգամ,  
Երգիչ Զիւանուն էլ շես յիշում, մոռցեր ես անգամ,  
Զմեռ կենացս կեանք նուիրող նոր զարուն աղջիկ:

1900



## ՍՈՒՐԲ ՍԷՐԸ

**Ս**նրաժան է, մինչի մահ կաշկանդել է ինձ սուրբ սէրը,  
Իսկապէս Անահիտը պարգեհել է ինձ սուրբ սէրը.  
Երկաթէ շղթայ լինէր մեր կապը՝ հիմայ կարել էր,  
Ոսկի շղթայից ամուր կապկապել է ինձ սուրբ սէրը՝

Տոբութեան կզգիներում Աստղիկ, Կալիպսէ տեսնելու,  
Ձէ թողել, Մենտորի պէս արդելիլ է ինձ սուրբ սէրը.  
Ափրողիտեան բանակը երբ արշաւել է ինձ վերայ,  
Միշտ ազգարար ու պահպան եղել է ինձ սուրբ սէրը՝

Ամեն մէկը երկնային աստղ ու լուսին են ինձ համար,  
Վեց հատիկ ընտիր ազաւնեակ տուել է ինձ սուրբ սէրը.  
Հողեկան զուարճութիւն, բերկրանք տալով միշտ  
Ջիւանուն,

Ամեն անգամ, ամենայն ժամ ազգել է ինձ սուրբ սէրը՝

1895



## Ա Չ Ք Ե Ր Դ

**Շ**արժեցին սառած իրանս վառ հրաբուխ աչքերդ,  
Այրեցին երակներս, դուրս հանեցին ծուխ աչքերդ.  
Ես կուզէի աշխարհը թողնել ու գնալ անապատ,  
Մէկ հայեացքով ուղղութիւնս փոխեցին թուխ աչքերդ:

Գո որսկան թերթիչներդ սլաք ու գնդակ արձակող,  
Հոլանի բազուկներդ մահատու նիզակ արձակող,  
Երկու հրեղէն վիշապ են շանթ ու կայծակ արձակող,  
Դարձրել են շատերին սև գոյնի ածուխ աչքերդ:

Բացի մէկից՝ Ջիւանը բնաւ ուրիշին չէ սիրել,  
Թառամած ժամանակս դու ուզում ես ինձ էլ տիրել,  
Հողեան ակնարկներդ քաղում տներ են աւերել,  
Չո՛նել են շատ հարկաւոր պիտանի գլուխ աչքերդ:

1903





## ԳՏԸՅ ԵՍ ՀԻՄՆՅ



**Փ**անք Արարչին, ցնծութեան առուակը գտայ ես հիմայ,  
 Սիրտ բացող, աշխոյժ տուող երգակը գտայ ես հիմայ,  
 Սրբութեան սեղանի մօտ բազմած սիրունի ձեռքումը,  
 Երկնային գինով լեցուն բաժակը գտայ ես հիմայ:

Խաւարից ազատուելով լուսաւորութեան հիւր եղայ,  
 Սրբելով աչքերիցս արտասուքս, ուրախացայ.  
 Գանելով մէկ ժամանակ հոգեակիրս հետ առանձնացայ,  
 Տենչալի աւետարեր խօսնակը գտայ ես հիմայ:

Կարծեմ դրախտումն էլ շրկայ անթառամ վարդ այս  
 տեսակ,  
 Կրճքին աստղեր ունի իջած և ճակատին արեգակ.  
 Անուտել, առանց խմել դէմքին նայում եմ շարունակ,  
 Ապխտակ կաթնաման լուսնեակը գտայ ես հիմայ:

1898



# Ե Ր Կ Ի Ր

**Ք**ու մէջդ ես մի քայլ հողի մաս չունիմ,  
Ո՛վ դու լայնածաւալ, ընդարձակ երկիր.  
Ի՞նչ եմ արել ես քեզ, մեղքս ի՞նչ է իմ,  
Ձեռն տուել մէկ խորճիթ, մէկ տնակ երկիր:

Պապս էլ համ չէ առել քու սկզբունքից,  
Թոյն է ձորել քու բերանից, շրթունքից.  
Ձրկել ես մարդկային սուրբ իրաւունքից,  
Համարում ես դու ինձ խորթ գաւակ, երկիր:

Վարուիր Ձիւանու հետ սի քիչ մայրաքար,  
Քեզնից ոչ գաշտ կուզեմ, ոչ ձոր և ոչ սար,  
Գոնէ մի փոսիկ տուր աճիւնխ համար,  
Ծածկընեմ պատուովս հողիդ տակ երկիր:

1900



## Ե Մ Պ Ե Ր



**Տ**խրատեսիլ, սեպիոյր, խաւար ամպեր հեռացէք,  
Մաքիս արևի համար ինդրեմ ճանապարհ բացէք.  
Իմ հոգուս հորիզոնը թողէք, հեռու գնացէք,  
Հիմայ էլ մէկ ուրիշի բախտի վրայ սգացեք:

Ես արդէն սգաւոր եմ, չունիմ ուրախ օր ու ժամ,  
Դրախտից գրկըւել եմ, խարուել եմ ինչպէս Ադամ.  
Բնու է կարկտահարէք արտու անտէր, անխնամ,  
Գնացէք մի ուրիշ տեղ, բարկացէք, զոռզոռացէք:

Իմ գլուխս չէ Մասիս և ոչ էլբըրուս սարը,  
Որ հարթել էք դէպի ինձ ձեր ուղին, ճանապարհը,  
Անցկացրի ձեր անջուր հովանու տակ կէս դարը,  
Էլ ոյժ չունիմ տանելու, ափսոսացէք, խղճացէք:

1901





## ՊԵՐՍՊ ԾՆԱԼՈՒՅ ԼՈՒ Է

Պիտի գովեմ մայր հողը, քամին, ջուր անձրեք,  
Պիտի յիշեմ աստղերը, լուսնիակը, արեք  
Նկարագրեմ պիտի սարեր, ձորեր, դաշտ անկեղծ,  
Որ իմ դատաւորիս մօտ ներկայանամ բանաստեղծ:

Սե-սպիտակ ամպերը բամբակի քուլի նման,  
Պիտի գգեմ անեղով, դուրս բերեմ բիւլ ու գերձան.  
Պիտի գործեմ լաւ գուլպայ, պանիճներ խայտարեղէտ,  
Ինքնակոչ քննադատս որ ճանաչէ ինձ պօէտ:

Նաղելի կոյս աղջկան պիտի շատ գովարանեմ,  
Աչքերուն ու ունքերուն լոյս համար անուանեմ.  
Անունս էլ պիտի փոխեմ ու դնեմ Նոր-Հոմերոս,  
Որ տեսնի քննիչս, ճանաչէ պըփիտիկոս:

Միտք շատ պէտք է կրգերի մէջ, բառերը առատ լինին,  
Դրուատել պէտք է յատուկ սիրունը, սէրը, գինին.  
Խրատ, բարոյական երգ համարում են հին գգեստ,  
Պարզ բառեր գործածողը չի համարուիլ գեղարուեստ:

1901



## Ի Մ Ե Ր Գ Ը

Պանդխտութեան մէջ լրացաւ իմ երեսուն ամեակս,  
Ինձանից զեռ չէ հեռացել հաւատարիմ ջութակս.  
Քառասունեօրեայի մէջը մտաւ արդէն հասակս,  
Գնում եմ գէպի ծերութիւն, բարձրանում է վիճակս.  
Հետզհետէ մաղերուս մէջ շատանում է ճերմակս,  
Սկսում է նսեմանալ լուսատու աշտանակս:

Քննում եմ իմ անցեալս, տեսնում եմ ես անկատար.  
Իմ թողած հետքս վաղանցուկ, ծաղկի պէս թոյլ ու տկար.  
Մանկութիւնից մինչև այսօր բռնել եմ մէկ ճանապարհ,  
Հետեւել եմ իմ արուեստիս, նուագել եմ ես քնար.  
Նշանաւոր, օգտաւէտ գործ չեմ թողել ազգիս համար,  
Մի քանի հատ չոր ու ցամաք երգեր է յիշատակս:

Թանկագին, անդառնալի թարմութիւնս անցաւ դնաց,  
Ոչ մի օգուտ չունեցայ, խոստովանեմ բացէ ի բաց.  
Հանգամանքից չօգտուեցի, չեզայ ես շրջահայեաց.  
Առաւօտեան բացուիլը բութ աքլորս չարաւ իմաց.  
Իմ մտաւոր աշխարհի մեծ բաժինը խաւար մնաց,  
Խաւարած սև ամպի տակից դուրս չելաւ արեգակս:

Բնութեան զաղանիքը մութ է, ծովի անդունդից խոր է,  
Ընկնողը դուրս չի գալիս, վիճ է, անատակ հոր է.  
Աշխարհը անփոփոխ է, լուսնիակը հին ու նոր է,

Մէկը անբախտացել է նոր, միւսը բախտաւոր է,  
Զէի կարծում և մտածում ամենը անցաւոր է,  
Ժանգոտած պղինձ կը դառնայ ոսկի է ժամանակս:

Ես Զիւանս ամենին աղաչել եմ, պաղատել եմ,  
Որ լինին սիրով միտքան, մէջս այսպէս դատել եմ.  
Ինչ տեղում ատելութեան հոգու ծնունդ նկատել եմ,  
Պատճառին առանց վախի՝ յանդիմանել, նախատել եմ,  
Ինչքան իմ ոյժս պատել է, այնքանով աշխատել եմ,  
Ժողովրդին մի օգուտ տալ՝ եղել է նպատակս:

1893



## Չ Ե Մ Ս Ի Ր Ե Ր

**Ե**ս կուզեմ ճշմարտութիւն, սխալ գաղափար չեմ սիրեր,  
Ուղղութեան կեանքս կուտամ, խարերայ հանճար չեմ սիրեր.  
Իմ խելացս ուժի չափ որքան կարող եմ՝ կաշխատեմ,  
Ակներև կս տգէտ եմ, բայց՝ կրկին յիմար չեմ սիրեր:

Ընդհանուր մարդկութիւնը, պատուիրած է սիրել մեզի,  
Պարգապէս, այլազգերը իմոյս հաւասար չեմ սիրեր.  
Մասնաւոր լոյսի ճաշակ առած կը համարեմ հողիս,  
Վասն այն ազգեցութեան ներհակ է, խաւար չեմ սիրեր:

Ազգութեան, հայ ազգութեան իբր մի անդամն էլ ես եմ,  
Ազգի չափ համարէ թէ՛ յակինթ ու գոհար չեմ սիրեր:  
Միութեան կապը խզող իմաստունը անգէտ է միշտ,  
Այնպէսը իմաստակ է, խելքից է տկար, չեմ սիրեր:

Ընկերին նախանձելով ֆրաս տուող մարդը յատուկ,  
Աստուծոյ թշնամին է, և նա է Բելիար՝ չեմ սիրեր.  
Ես հայոց ռամիկներուն միտիթարող մի երգիչ եմ,  
Իմ քնարիս պէս խօսող չըլինի քնար՝ չեմ սիրեր:

Հայ տղայ, հայոց սիրուն աղջիկներուն սիրտ ընծայէ,  
Այլազանց աղջիկներուն սիրող սիրահար չեմ սիրեր.  
Ես Զիւանի երգիչն եմ գիտուններուն գովեստ տըւող,  
Եւ նորանցից աննելով՝ անգէտ խելագար չեմ սիրեր:

1870



## ԻՄ ԿԵԱՆՔԸ

**Ո**ւնիմ, փանօք Աստուծոյ, մասնաւոր ապրուստ,  
ես իմ վիճակիցս անբաւական չեմ.  
Կը հազնիմ միակերպ, հասարակ հազուստ,  
Աստիճանս ցածր է, ես խո՛մ իշխան չեմ:

Չափաւորութիւնը կը տեսնեմ արժան,  
Այն մարդոցը՝ որոնք են ինձի նման,  
Քէն վարձով է, իմս չէ սեփական,  
Բայց ես նորէն գոհ եմ, անօթեան չեմ:

Դեռ ես շատ բանի մէջ միամիտ եմ,  
Ունիմ կարօտութիւն, ուսման կը դիտեմ,  
Երգիչ եմ՝ հայերէն, տաճկերէն դիտեմ,  
Այս է գիտութիւնս, ուսումնական չեմ:

Ձրւանս հասկացայ բանի հիմը նոր,  
Աւանդ ժամանակս անցկացաւ բոլոր.  
Ուսում չը գիտնալուս ես չեմ յանցաւոր,  
Հայրըս է պարտական, ես պարտական չեմ:

1871





## ԻՄ ԲԵՓԻՆԸ

Շնորհաց կենսատու ծառի հովանու տակ հայ մուսան,  
 Կենաց գինի, հաց էր տալիս կազմելով մի ճոխ սեղան.  
 Երաժիշտներ ու երգիչներ, բանաստեղծներ բազմազան,  
 Շրջապատած սուրբ սեղանը կերգէին երգ օրհնութեան.  
 Դա մի երկնային հանդէս էր, հիասքանչ տեսարան,  
 Գեղարուեստի սիրահարներ համախմբուած միաբան:

Գեղեցիկներից գեղեցիկ հայոց մուսան երկնածին,  
 Իւր տաղանդից բաժին հանեց և նուիրեց ամենին.  
 Յուերժահարաները բերին անմահական սուրբ գինին,  
 Ով որ խմեց ստացաւ կեանք, փոփոխուեց բոլորովին.  
 Որը ոսկէ քնար առաւ, որը գրիչ թանկագին,  
 Որը յայտնի երգիչ եղաւ, որը ճարտար վիպասան:

Ես Ձիւանս չը լսեցի, հանդէսին շատ ուշ հասայ,  
 Մարդիկ ողջ ցրուել էին ոչ մի ծանօթ չը գտայ,  
 Սուրբ ծառի հովանու տակ սեղանի մօտ կանգ առայ,  
 Գուցէ մի բան կը նուիրէր, հայ մուսային չը տեսայ,  
 Նոյն սեղանի վրայի փշրանքներից մի քիչ կերայ,  
 Նրա համար խեղճ մնացի, բան չունեցայ հիմնական:

1701

1900



**Ո**ւմ համար կը մաշուիս, անբախտ հեղինակ,  
Դու քու ազգիդ համար կաս, չկաս՝ մէկ է.  
Իրենը սիրելու նա չէ ընդունակ,  
Կուզես եղիբ հանճար, կաս, չըկաս՝ մէկ է:

Հայի համար այլոց սարեակը սազ է,  
Իւր սազը իւր աչքին մէկ հաւի ձագ է,  
Հայ երաժիշտ, ինչ կամենաս նուազէ,  
Նա կուզէ սազանդար, կաս, չըկաս՝ մէկ է:

Ջիւան, թուրք լինէիր սիրուն հազնըւած.  
Հայ ազգը չէ սիրում հային երգասաց.  
Հայ աշուղ ես, պիտի մեռնիս դու քաղցած,  
Իբրև ազբատ Ղազար կաս՝ չըկաս—մէկ է:





# Ա Շ Ո Ի Ղ Ը

**Ա**նթեկ թռչնիկ է աշուղը—  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ,  
 Դարձող ճախրիկ է աշուղը,  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մերթ անսուռազ ծարաւ, պապակ,  
 Մերթ անյաջող, մերթ յաջողակ,  
 Թափառում է նա շարունակ,  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Մի տեսակ լուսաաբրտիկ է,  
 Լուր տարածող մունետիկ է,  
 Հողմից հալածուած ամպիկ է,  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Ձուր յոյսերով խարխափում է,  
 Գեղեր քաղաքներ հափում է,  
 Կայծակի նման խփում է,  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

Ջիւան, մի տեղ դադար չունի,  
 Մեղուի պէս միշտ կը թռչկոտի.  
 Այս ընթացքով պիտի մեռնի,  
 Այսօր այստեղ, վաղը այլ տեղ:

1902







## Մ Ր Տ Ի Մ Թ Ա Խ Ի Ծ Ը

Դժուար է դիմանալ ցաւերը սաստիկ է սրտիս,  
Պարիպը խախուտ և տնակը փոքրիկ է սրտիս.  
Շուրջս նայում եմ մաղձոտ ու սև սրտեր են ամբողջ,  
Մէկ բարեկամը խաւարի մէջ մահիկ է սրտիս:

Տանջանք ունենամ ցաւ չեմ անիլ ոչ մէկի խօսքը,  
Մեղքիս փոխարէն պատժուելը քաղցրիկ է սրտիս.  
Թէև օրերուս մեծ մասը տխուր է անց կենում,  
Վերին զօրութիւնը պահում է, մօտիկ է սրտիս:

Իմ հաւատարիմ բարեկամիս մէկ բառը անգամ  
Նոր դարնանային աւետարներ ծաղիկ է սրտիս.  
Կեանքս նրա համար պիտի զոհուի, Զիւան հաստատ,  
Սիրուններու մէջ մի հատ է, անդրանիկ է սրտիս:

1888





# Ե Ս



Խեղճ հօրից, խեղճ մօրից գոյացոյ անբախտ.  
 Մի գիւղի անկիւնում տղայ եղայ ես.  
 Սկսեց հարուածել բախտը անիրաւ,  
 Հայր ու մայրս մեռած, թշուառ ընկայ ես:

Որբութիւնով մեծացրի հասակս,  
 Տխրութեան սե հողին նստաւ գաւակս.  
 Օրստօրէ դառնացաւ իմ վիճակս,  
 Երբ որ կեանքի ասպարէզը մտայ ես:

Ոչ լաւ բախտ ունեցայ, ոչ յաջողութիւն,  
 Ոչ տաղանդ, ոչ ուսում, ոչ ուսողութիւն.  
 Ոչ միջակ կայք ունիմ, ոչ կարողութիւն,  
 Հապա ինչո՞ւ համար աշխարհ եկայ ես:

Զիւանին եմ, սիրոյ ծարաւ, փափագող,  
 Սիրոյ սեղանից փշրանքներ հաւաքող.  
 Ոչ բարձր զրոյ եմ, ոչ լաւ նուագող,  
 Հազիւ մի հասարակ աշուղ զարձայ ես:

1893





## Ջ Ի Ի Ա Ն Ի

Մազերդ ճերմկան, կուզդ դուրս եկաւ,  
 Օրերդ անցան, պառաւեցիր, Ջիւանի:  
 Հոգսերու իշխանը բեզլի հիւր եղաւ,  
 Էլ չը գնաց, գրաւեցիր, Ջիւանի:

Յիշեալ պետը կեանքիդ, հոգուդ դառաւ ցեց,  
 Յաւդ մէկ էր, այժմ եղաւ հինգ ու վեց.  
 Այնքան դասն հարուած, այնքան վիշտ տուեց,  
 Պտոյտ գալով կաքաւեցիր Ջիւանի:

Յարգեցիր ճշմարիտ անուանի մարդուն,  
 Սիրեցիր մարդկութեան պիտանի մարդուն.  
 Գովեցիր գովելի արժանի մարդուն,  
 Պարսաւելուն պարսաւեցիր, Ջիւանի:

Երեսուն տարի շարունակ փափագով  
 Ազգիդ ծառայեցիր սուրբ նպատակով,  
 Դու քո կարճ խելքովդ, երգով, ջութակով  
 Բղաւեցիր, ճղաւեցիր, Ջիւանի:

1898



# Ս Ի Ր Տ Ս

**Ս** մպերով պատած է մտքիս երկինքը,  
Պաւար է երևում լուսնեակ սիրտս.  
Նախանձոտ թշնամու սև նախատինքը  
Մբոտեց պարզ մաքուր և խտակ սիրտս:

Հոգիս խղճիս մտաք զրկեցի դանդաւ,  
Վէրք ստացաւ, անբուժելի անփարատ.  
Անտեզի խօսքերից ստացաւ արատ  
Զգայուն ու փափուկ անապակ սիրտս:

Զբւանին եմ, մինչ ցվախճան շարունակ,  
Տէրութեանդ ծառայ, հլու հպատակ.  
Բացի քեզնից, արարչապետ հեղինակ,  
Ո՛վ պիտի նորոգի աւերակ սիրտս:

1892



## Ի Մ Կ Ե Ա Ն Ք Ը

—

**Լ**րիւ քառասուն տարիէ շրջում եմ աշխարհը ես,  
Բախտի ետեկց հասնելու չեմ գտնում հնարը ես.  
Յանկանում եմ յաջողութեան տեղը գտնել, չի լինի.  
Կարելի է կորցրել եմ ուղիդ ճանապարհը ես:

Ինձպէսին յարդող չի լինի որտեղ չըկայ կերութիւմ,  
Աշուղը լուրջ ակումբի մէջ չի ունենալ համարում.  
Առատասիրտ, երգ սիրողներ գտնում են այն տեղում,  
Ճարս կտրած ուխտ եմ գնում Բագոսի տաճարը ես:

Ես Ձիւանս արդէն եզայ յիսունուվեց տարեկան,  
Ոչ հող, ոչ տուն և ոչ դրամ ոչինչ չունիմ սեփական.  
Թողի սիրուն հողագործի պարապմունքը պատուական,  
Երգիչ եղայ, սովորեցի տասնադի քնարը ես:

1902





# ԷԼ ՉՈՒՆԻՄ



Չաղ հողեկան մխիթարանք ես ունէի, էլ, չունիմ.  
 Կայծ ու աշխոյժ, եռանդ ու ջանք ես ունէի, էլ չունիմ.  
 Հոգսերս ինձ ժանգի, ցեցի սէս մաշեցին սիրտս, հոգիս,  
 Ոսկու նման սխրալի կեանք ես ունէի, էլ չունիմ:

Վարք ու բարքս առաքինի, արդարոց համեմատ էր,  
 Մարդ էի՝ թէ սխալուէի, խիղճս ինձ կը նախատէր.  
 Մէկ ժամանակ շատ լաւ էի, հաւատս անարատ էր,  
 Սուրբ ու մաքուր վառ խղճմտանք ես ունէի, էլ չունիմ:

Խղճ, օգնէ Զիւանուդ տենչալի մարդասէր Յիսուս,  
 Խաւարի տանջանքներուց փրկէ ազատէ, հանէ դուս.  
 Հեռացան ընկերներս թողին միայնակ խղճալուս,  
 Շատ շատերուց սէր ու յարգանք ես ունէի, էլ չունիմ:

1902





## ՏԻՈՒՐ ՕՐ

Էլի սև սև ամպերն եկան պատեցին  
Իմ մարխու երկինքը, մարխու աշխարհը.  
Յեղճ սրտիս արևը լոյսից դատեցին,  
Հողոյս վերայ տիրեց թանձր խաւարը:

Խիղճս ձիաւորած խթանը ձեռքին  
Անգթարար չարչարում է իմ հողին.  
Սրտիս ծովը արեկոծուած դառնագին  
Օգնութիւն է հայցում խեղճ նաւավարը:

Յոյս է աղաղակում խեղճ նաւապետը,  
Խանդարուել է նաւի փարօսը, պետը.  
Թաթառ ու փոթորիկ, վատ հողմը հետը,  
Միտքս կորուսել է իւր ճանապարհը:

1891



## ՄՈՒԽԷՄՍԷԶ

**Ք**անի կզկըթած ման եկայ, ինձ մեռած, դիակ է ասին,  
Երբ որ մի քիչ շարժեցայ, զող է, աւաղակ է ասին,  
Իմ ստացած մեծ հարուածս արժանի ապտակ է ասին,  
Պատուի համար մեռած որդուս իշու նահատակ է ասին:

Իրաւացի արդար դատս պաշապանող մարդ չգտայ ես.  
Իմ խորհուրդս ուժ որ ասի, հաւանող մարդ չըզտայ ես.  
Չեոքս բռնող, իմ ցաւերուս դեղ անող մարդ չըզտայ ես.  
Բոլորը ինձ միտք պզտորող, անզուսպ ստահակ է ասին:

Քամի տալով ինձ թոցրին մի քանի տաքզլուխ մարդիկ,  
Ոտքերու տակ տրորուեցայ որպէս անտէր, վայրի ծաղիկ,  
Ընկայ բորենու ճիրանը, քովս մի մարդ չեկաւ մօտիկ.  
Դրան օգնել—ժամանակի հոգուն հակառակ է՝ ասին:

Վէրքս մեծերուն ցոյց տալու զործ դրի ես մեծ աշխատանք.  
Իմ կրօնս և իմ լեզուս ինձանից ուզեցին փրկանք.  
Դեռ ինքն իրան նա չի կարող կառավարել եթէ տեղ տանք.  
Քաղաքագէտ, խելօք պապիս, տգէտ է, համբակ է ասին:

Հին հագուստի մէջ մնացի, չը ճարեցի թաժա հալաւ,  
Սպասելով լաւ օրերու, ճար չը մնաց, բանս բուսաւ,  
Շատ երգեցի, բզաւեցի ոչ ոք ձայնս լսող չեղաւ,  
Վերջը անբախտ Զիւանուս շատախօս թուխակ է ասին:

1902





## ՈՒՆԷԻ ԶՈՒՆԻՄ

**Մ** էկ մեծ հարստութիւն ունէի առաջ —  
Մարդկանց վերայ հաւատ՝ էլ չուների հիմա.  
Առաջուայ վե՛հ սիրտս անվիհներ ու քաջ  
Դարձել է յուսահատ, էլ չուների հիմա:

Օտարից յոյս չըկայ, խոստումը սուտ է,  
Նրա տուած խօսքը ինձ անօգուտ է.  
Երևրուն ծառի սկէս յոյսս խախուտ է,  
Հաստատուն պի՛նդ արմատ էլ չուների հիմա:

Խեղճ արօրս պարարտ հողի մէջ չընկաւ,  
Բախտիցս հանդիպեց աւաղ քար ու կաւ.  
Յանաձս չը բուսեց, սերմը դուր կորաւ,  
Չեմ ցանում կե՛ծաւատ, էլ չուների հիմա:

Ջրւանս շատ տեսայ սուտ, կեղծ երազներ,  
Փոխան չուսոյ տուին սուր ու սլաքներ.  
Հաւատալու սխալմունք ու փափազներ  
Առաջ ունէի շատ, էլ չուների հիմա:

1901



**Տ**րտում ու տխուր շրջագայող անդադար եմ ես,  
 Ո՛հ ապիկար եմ ես.  
 Տառքակի նման անընկեր անմխիթար եմ ես,  
 Բախտից օտար եմ ես.  
 Աշխարհի ալեացն չի դիմանար նաւը սրտիս,  
 Է շատ ցաւը սրտիս.  
 Յուսով ու հաւատով ու սիրով անկատար եմ ես,  
 Մաքով տկար եմ ես:  
 Աւաղ երիտասարդութեան անցած ժամանակիս,  
 Իզուր նպատակիս.  
 Վասն զի բարի գործքերուս մէջ անօգտակար եմ ես,  
 Ի՛նչպիսի խաւար եմ ես.  
 Փոքր ինչ նկատում եմ դէպի ինձ մեղքերս անթիւ,  
 Ճաւս շունի հաշիւ.  
 Դարձ գամ կարելի է թէ նորից ապաշխարեմ ես,  
 Անցքս փարեմ ես:  
 Զբաղուելով ունայն սիրոյ հեղինակի հետն,  
 Սրտիս ճարի հետն.  
 Այն ինչ խոցերին փրկուելու ինչ հնարեմ ես,  
 Անդեղուճար եմ ես.  
 Ում որ բարեկամ անուանում եմ ճշմարիտ անբիծ,  
 Յոյց տալիս է կոկիծ.  
 Ոչ որ չկայ ասոյ Զիւանոն բարերար եմ ես,  
 Ընկեր համարեմ ես:

1873



## Մ Ի Յ Ա Ն Չ Ն Ի Ր

Խնդրում եմ, տէր Աստուած, իմ դատաստանս  
Անամօթ, անպիտան մարդուն մի յանձնիր.  
Դու քանզէ իմ տունս, իմ կեցարանս  
Մարդատեսաց, դաւաճան մարդուն մի յանձնիր:

Հողիս առ, թող լինիմ հողին հաւասար,  
Խաղալիք մի անիլ մարդոցը յիմար.  
Արատաւոր, անխիղճ, աներկիւղ, խաւար,  
Անլոյս կիսակենդան մարդուն մի յանձնիր:

Ո՛վ արքայից արքայ, տէր-կառավարիչ,  
Անմխիթար սրտիս լեր մխիթարիչ.  
Պահէ անմեղ գառը յանմահ Արարիչ  
Անհողի, չար դազան մարդուն մի յանձնիր:

Նախանձում են խեղճ Զիւանուս համբաւին,  
Տէր, տուր կարողութիւն դիմանամ ցաւին.  
Ծովումն ալեկոծեալ դժբախտ իմ նաւին  
Ղեկը ամբարտաւան մարդուն մի յանձնիր:

1883



## Տ Ի Ր Ա Մ Օ Ր Ը

**Ս**րբուհի սուրբ, ճիլ տուեց այդպէս դառը կսկիծ քեզի.  
Յաւղ թնչ է մաքրուհի, որ պատել է թախիծ քեզի.  
Թող հառաչեն և սգան մեղքով շաղախուած մարդիկը,  
Անզուգական Քակը ստեղծել է անբիծ քեզի:

Դու ժառանգական բարի անձանց շառաիդ ես, սիրուած,  
Անարատ կաթ է եղել, ով որ տուել է ծիծ քեզի.  
Կենդանագրիդ առաջ ծունր դնելով մշտական,  
Գեղեցիկ սեռը յատուկ ընտրել է նախագիծ քեզի:

Կազմուածքդ, մարմինդ ոսկուց զարդարուած կարծում են.  
Չէ եղել, չէ պատահել ամենևին կսկիծ քեզի.  
Անարատ մաքրածինդ շատ հեռու ես խարդախներից,  
Վստահիլ չի մօտ դալու ինչ մարդ եղաւ կծիծ քեզի:

1885



## ԽՆԴՐՈՒ ԱԾՔ ԱՐԱՐՁԻՑ

**Ո**վ Արարիչ, օգնէ ինձ, օգնէ տէր, օգնական չըկայ.  
Ուզում եմ աղօթք անել, սիրտս տխուր, բերան չըկայ.  
Դու ուժեղից ուժեղ ես հօգրներից հօօր, տէր իմ,  
Քաղաւորաց թագաւոր, մեծ բեղանից խշիտան չըկայ:

Ես մի վայրկեան չեմ կարող ապրել տոանց քեզ, Արարիչ,  
Դու միայն ես կեանք տուող, սուրբ, անաշառ կառավարիչ.  
Ով կտտորած սրտերը շինող հողի մխիթարիչ,  
Քո առատ ողորմութեանդ էլ շափ'ու սահման չըկայ:

Ես մի ջնջին արարած, մեղքով շաղախուած, խղճալի,  
Դիմում եմ քեզ, ով տէր իմ, մո խնդիրս արտասուալի.  
Մի խնայիբ ինձանից հայր իմ, հողիդ սուրբ տենչալի.  
Աշխարհը քոն ինձ համար ուրիշ ապաստարան չըկայ:

1884



## Ե Ղ Ա Չ Ա Ն Ք

—

**Տ**էր, տուր նախանձողիս շատ ոսկի, արծաթ,  
Որ մոռանայ ինձի, չը խօսի ծուռ ծուռ.  
Տուր նրան յաջող գործ ամենայն շարաթ,  
Զը բամբաս է ինձի, սրլի մեայ լուռ:

Բաւական է ծառայ կրեմ գերութիւն,  
Այս քիչ հասակիս մէջ համնի ճերութիւն.  
Տէր տուր խելք ու շնո՛ք և համբերութիւն,  
Նախանձողիս մասին զղջամ ես մամուռ:

Ձիւանս քեզանից կը խնդրէ այսքան,  
Եզիր երբեմնապէս ինձի օգնական.  
Հասցրու ապրուստս, հացս օրական,  
Անքան որ չը մանդամ խեղճուկ գոնէգուռ:

1883



## ՆՈՐԸՆՏԻՐ ՀՈՎՈՒԱՊԵՏԻՆ

**Ն**ախախնամութիւնը քեզ տայ ասողջ կեանք.

Բարձր պաշտօնդ վայելես, վեհափառ.

Ընտրեալդ Աստուծոյ, այս է մեր բաղձանք,

Քեզ և եկեղեցուն դու պահես պայծառ:

Էջմիածնի սուրբ աթոռը քեզ աւանդ

Տալով, ազգը քեզնից խնդրում է ետանդ.

Վեհութեանդ մէջը տեսնելով տաղանդ,

Քեզ ձայնեց հայրապետ ամենայն պաւտ:

Բարունապետի առար աստիճան,

Կարգուեցիր հաւատոյ շահերուն պաշտպան.

Կը յուսանք որ լինիս հոգևոր իշխան,

Գործդ արդար, զատաստանդ անաչառ:

Սիրտդ տաք լինի սուրբ աթոռի համար.

Կառավարես նրան խղճով հայրաբար.

Երբէք ասպարէզդ չը պատէ խտար,

Նեցուկ լինի քեզի լոյսը մշտավառ:

Էութիւնը դորձին ինքդ բաջ գիտես.

Արթուն, օրէնսպէտ և սրամիտ ես.

Թէ խօսքով թէ գործով դու ճշմարիտ ես.

Տէրը օգնէ քեզի չը լինիս թշուառ:

Սուրբ Սինօզն է, տէր իմ ատեանդ ահեղ,

Անդամներ ունենաս շնորհքով ուժեղ.

Ողջ միաբաններդ քեզի հետ մէկ տեղ

Կազմէր ՚ի միասին մի երկնակաճառ:

1884



## Ո Ղ Բ

Ներսէս պատրիարքի մահուան առիթով

**Ո**ղբան, մայր իմ, հայոց Սրտն,  
Կորուցիբ անարատ Ներսէս,  
Աստուածասէր, սրբակրօն,  
Էլ թւր է հարազատ Ներսէս:

Ներսէսներ ունի Հայաստան,  
Բայց չեն նորա վարժապետեան,  
Եղանի և անզուգական  
Չենք գտնիլ բազմաշխատ Ներսէս:

Եպիսկոպոսների միջին  
Մի հատիկ մարդն էր առաջին,  
Ուշ կը ծնի, հայեր, կրկին  
Ներսէսին համեմատ Ներսէս:

Ողբա ազգդ հայոց ախուր,  
Քո ողբալի չի զնալ զուր,  
Երկու գահեր եղած թափուր  
Կուլան կուզեն հաստատ Ներսէս:

Աթոռը սուրբ էջմիածնայ  
Անհայրապետ նստեր կուլայ,  
Պոլսումն էլ պատրիարք չըկայ,  
Թողել է անապատ Ներսէս:

Լացէք ինձ հետ ձորեր, սարեր,  
Լացէք ձովեր, գետեր քարեր,  
Պիտի անցնին սրբան դարեր,  
Որ մեկ ծնի մի հատ Ներսէս:



Հայոց արևն է խաւարել,  
Հայ ազգի ճրագն է մարել.  
Մեր սիրելին մահն է տարել,  
Զրկայ մեծ դովաշատ Ներսէս:

Կորաւ հովիւըն ազգային,  
Կամքը այդպէս էր երկնային.  
Մանօթ էր ողջ Սերոպային  
Վեհազն պայազատ Ներսէս:

Մեր հովուապետների միջում  
Ներսէսների գործն է փայլում.  
Վեց հաս Ներսէսների թւում  
Զէ պատահել մի վատ Ներսէս:

Նա էր խելքի շտեմարան,  
Շնորհքի մտքի զանձարան  
Տարաւ հեռը սև գերեզման,  
Թողեց ազգին աղքատ, Ներսէս:

Զիւան, երկնից սուրբ Անեղը  
Հասցնող է վիրաց դեղը.  
Վեցերորդ Ներսէսի տեղը  
Խնդրենք մեզ տայ մի զատ Ներսէս:

1884



## ՄԵԾ ՄԱՐԿՈՒ ԿՈՐՈՒՍԸ

**Ք**րիստոնեայ աշխարհից մէկ բարերար պակասեց,  
Մէկ բարի մարդ, մեծ հսկայ ազնիւ արդար պակասեց.  
Գիտութեան սուրբ կաճառից ընտիր հանճար պակասեց,  
Ազատամիտ, մարդասէր մեծ նախարար պակասեց.  
Անգլիայի լեոներից վիթխարի սար պակասեց,  
Նրա շինութեան միջից անկիւնարար պակասեց:

Անգլիայի նախարար Գլադստոնը մեռաւ,  
Այդ մեծ ազգի մեծ որդու հոգին երկին սլացաւ.  
Պատուով ապրեց աշխարհում, անբիծ պատուով ծերացաւ,  
Ճշմարտութիւնը յարգեց ազատ անվախ խօսեցաւ,  
Իննսուն տարեկան էր նա երբ մահը վրայ հասաւ,  
Հովարդենի դղեակից ջահ ու դամպար պակասեց:

Նա Աստծուց ուղարկուած մէկ բարիք էր աշխարհին,  
Նա ինքը բարութիւն էր, սիրում էր, պաշտում բարին.  
Շատ սիրում էր իւր ազգը և չէր ատում օտարին,  
Շարունակ պաշտպանում էր դատը արդար սկարին.  
Ազատամիտ նաւաստեաց լաց ու սուգ է այս տարին,  
Մտաւոր ովկիանից քաջ նաւավար պակասեց:

Խաղաղութեան, հաշտութեան բարի հրեշտակն էր նա,  
Ազգաց համերաշխութեան ծարախ, պապակ էր նա.  
Անսեղի պատերազմը ատում էր, նեհրակ էր նա.  
Տկարներին ճնշելուն ընդդէմ, հակառակ էր նա.  
Առաւօտեան արշալոյս, փայլուն արուսեակ էր նա,  
Համարեա նոր Սողոմոն, խելօք ճարտար պակասեց:

Նա իռլանդացոց համար նոր ծրագիր դուրս հանեց,  
Նրանց ինքնավարութեան դատ ու գործը պաշտպանեց.  
Հայ ազգ, քեզի համար էլ շատ ճառեր արտասանեց,  
Քեզ համար մինչ Սուլթանին մեծ մարդասպան անուանեց.  
Բուլղարներին ազատող մեծ ազգին գովարանեց,  
Մարդկութիւնից յարգըւած վեհ հոգատար պակասեց:

Ջիւան, նա յարգըւած էր իշխանից թէ ծառայից,  
Թէ մեծ թէ փոքր ազգաց կայսերից ու արքայից,  
Նրա կառքը չի անցնում Լոնդոնի մեծ շուկայից,  
Ջրկրեցաւ բազաքը մեծահողի հսկայից.  
Անգլիայի պանծալի վսեմ թագի վերայից,  
Շողշողուն և թանգագին մէկ հատ զոհար պակասեց.

1898





## ՅԱԶՈՂՈՒԹԵԸՆ ՀՐԵՇՏԱԿ



**Ո**րտեղ ես, ով յաջողութեան հրեշտակ,  
Աղաչում եմ կրկին դարձիր գէպի ինձ.  
Շինած տունդ դու մի անիլ աւերակ,  
Բարեկամն ես իմ հին, դարձիր գէպի ինձ:

Գարձիր հոգիս, բաւ է անճար մնալս,  
Առաջ ուժեղ, հիմա տկար մնալս.  
Կարծեմ քեզի ցաւ է խաւար մնալս,  
Անարատ լուսածին, դարձիր գէպի ինձ:

Տուր դու Ջիւանուս մամնաւար տաղանդ,  
Մի թողնիլ որ լինիմ հոգեպէս հիւանդ.  
Վերանորոգէ ինձ, աուր սէր ու եամնդ,  
Ահեղ ոգի, ուժգին դարձիր գէպի ինձ:

1885





## ՆՈՒԷՐ ԻՄ ՊԱՐՈՅՐ ՈՐԴՈՒՆ



**Պ**աղպաղակ ես մանուկ, փարեւի զանուկ,  
Իբր ոսկի կնդրուկ թանդ ես ինձ համար.  
Բազազ սուր է կարուկ, տկարիս նեցուկ,  
Զայնդ մեղմ ու փափուկ զերթ անուշ քնար:

Իրանդ սպիտակ մարմար է խտակ,  
Ունքերդ աղեղնակ, աչքերդ կրակ.  
Ժիր աշխոյժ պատանեակ, անմեղ հրեշտակ,  
Մառ ես նորանասակ կանաչ ու դալար:

Մանկիկ կայտառ, դուարթ, դու իմ կենաց զարդ,  
Թշերէդ կարմիր վարդ թափում ես բարդ բարդ-  
Փայլուն երիտասարդ դու լինէիր արդ,  
Քեզ տեսնէի մեծ մարդ, աղբէի երկար:

1885



## Ա Ղ Յ Թ Ք

**Ե**րեսանկեալ աղաչում եմ, Տէր Աստուած,  
Նախանձոտ, վատ հարեանից փրկէ ինձ,  
Անկիրթ, ամբարտաւան, լիբբ, աներկիրւզած,  
Անունով մարդ, գործով շանից փրկէ ինձ:

Ո՛հ չեմ ցանկալ լիբբ բերանից նախատուիլ,  
Նրա տուած վէրքը շուտ չի փարատուիլ,  
Արջից, գայլից կարելի է ազատուիլ,  
Անզուսպ, հարբած մարդ-գազանից փրկէ ինձ:

Ջիւանի, չարերբ, նեո օրինազանց,  
Մարդ բռնելու համար պատրաստում են ցանց,  
Քսու, մատնիչ, Յուդայի պէս վատ մարդկանց  
Աներևոյթ մութ դարանից փրկէ ինձ:

1900



## Ա Ղ Օ Թ Ք

**Ո**՛վ ամենակարող Արարիչ, Աստուած,  
Խնդրում եմ, ինձ մաքի կարողութիւն տուր,  
Ազերսում եմ, խնդրում միշտ բազկատարած,  
Տուր ինձ, հոգու անունդ, կենաց կերակուր:

Ո՛վ արքայից արքայ, անվերջ նախագահ,  
Տուր ինձ կարողութիւն, չը մնամ անշահ.  
Բացի Քեզնից ես ձւմ գիմեմ, ձ՛վ անմահ,  
Որ լինի առանց մեզ, ամենամաքուր:

Ջիւանն եմ, փափագող միշտ անբիծ հոգուդ,  
Միաքս լուսոյ կարօտ, շատ բան ինձի մտի.  
Սերախացուր սիրտս, ձ՛վ առատազուի,  
Մի թողնիւր թշուառիս միշտ մնալ տխուր:

1873



# ՔԱՆՆԵՐՈՐԻ ԳԵՐԵՄՈՒՏԻՆ

**Բ**ողոր ծաղկոյնները բացուին, գեղեցիկ վարդարան դառնան.

Ազնտ երգեն սոխակները, ծառերը երգարան դառնան.

Պոպան այգիները ծաղկեն, նորոգուած տեսարան դառնան.

Յամաքած ձորերը կրկին ջրերու աւազն դառնան.

Հարազատ տէրերը իրանց հողերուն պահապան դառնան.

Սարերն ու դաշտերը մէկ-մէկ հացի շտեմարան դառնան:

Վերին գերբնական Ձեւերովը նորոգուի հին տունը շատ շուտ.

Փառաւորուի, բազմի այնտեղ թագուհի սիրունը շատ շուտ.

Տարածուի աշխարհէ աշխարհ հատընտիր անունը շատ շուտ.

Ձմեռը վերջանայ, կորչի, ժամանէ գարունը շատ շուտ.

Շուտով ծիծեռնակը հասնի նորոգէ իւր բունը շատ շուտ,

Կանաչ կարմիր ու սպիտակ սարերը ողջ վրան դառնան:

Գու փայլուն քսաներորդ դար, արի գարնան աւետիք տուր,

Նորածին փարելի մանուկ, գեղեցկադէմ, քաջազանգուր,

Մօրդ պէս մի լինիր անզուխ, տկարին անօգուտ, իղուր,

Չորացած, ծարաւի ծաղկանց խոճա, շուտով սրսկէ ջուր,

Տարածէ ամենայն երկիր բարի համբաւ, աւետեաց լուր,

Մարդասէր գործերդ շատ տեղ քեզանից թող նշան դառնան:

Արի խաղաղութեան հողի, կռիւները վերանան թող.

Իրանց գործած սխալները մարդիկ զարթնին, իմանան թող.

Տկարները մեծ ոյժ կազմեն, իրարու հետ միանան թող.

Ուղիղ ճամբով դէպի առաջ շարունակեն ու գնան թող,

Լուսամիտ մարդասէր մարդիկ օրըստօրէ զօրանան թող.

Նոցա խօսք ու քարոզները տարածուեն պատուիրան դառնան:

Ամենայն մի տառապեալ մարդ թող հանգիստ օթեան գտնի,

Հողաշատ աշխարհի մէջը իրան պատասպարան գտնի,

Առանց գործ մեռած է մարդը, լաւ է հանգստարան գտնի,

Ապրել ուզող, ցանկացողը մտածէ գործ ու բան գտնի,

Ջիւան մեր հին բուրաստանը մի հմուտ բուսարան գտնի,

Հրաշքով փշերը փոխուեն, նորոգ վարդ ու շուշան դառնան:





## Մ Ա Յ Ր Ի Կ

Զուխտակ շամամներդ զրախտ ծոցիդ մէջ,  
 Կաթնաղբիւր են եղել ինձ համար, մայրիկ,  
 Տատրակի պէս շատ եմ արել ելեկէջ,  
 Կրծքիդ վրայ մաքուր, սուրբ տանար, մայրիկ:

Ինձ համար հոյակապ կազմդ եւ մաշել,  
 Հրճուել, ուրախացել, վրաս եւ աշել,  
 Մինչև մեծանալս ինչե՞ր եւ քաշել,  
 Մնացել եւ անքուն, անդադար, մայրիկ:

Փոխարէնը եւ քեզ ոչինչ չեմ արել,  
 Մօտդ չեմ մնացել, չեմ մխիթարել,  
 Բու սուրբ պատուէրներիդ ճիշտ չեմ կատարել,  
 Թողեր եմ իղձերդ անկատար, մայրիկ:

Զիւանին եմ, սխալմունքս զղում եմ,  
 Եւ քու հոգուդ համար միշտ աղօթում եմ,  
 Ներիք քու մեղաւոր որդուդ, խնդրում եմ,  
 Եղիբ երկնքումը ինձ սատար, մայրիկ:

1899



Հ Ա Յ Ր Ա Լ Ի Յ Ա Ն Ե Ր

(Թիֆլիսում յօրելեանի տօնախմբութեանը երգուած)

**Յ**իսուն տարի ծառայել է հայ ազգին,  
Անյազգի քաջի նման հայր Ալիշանը,  
Նուիրել է հայոց՝ պատուը գրչին,  
Բանաստեղծ, պատմարան հայր Ալիշանը:

Արժէ որ նա ունի այդքան մեծ համբաւ,  
Հայոց լեզուին հազցրել է նոր հալաւ.  
Դարուս քերթողահայր Մովսէսն է իրաւ,  
Յարգելի գիտնական հայր Ալիշանը:

Գրականութեան մէջ մի մեծ հակայ է,  
Ողջ ազգից յարգւած մէկ արեղայ է,  
Ծիսով կաթոլիկ է, բայց հոգով հայ է,  
Սիրում է Հայաստան հայր Ալիշանը:

Եւրոպայի մէջ մեծ պարծանքն է մեր.  
Թողել է հայ ազգին զանազան երկեր.  
Գրել է Այրարատ, Շիրակ, այլ գրքեր,  
Եւ գրել է Աիսուան հայր Ալիշանը:

Անկեղծ հայրենասէր, ժրաջան, արի,  
Լաւ ծնողաց զաւակ, ծնունդը բարի.  
Մաղթենք ևս ազրի մի բանի տարի.  
Թողնի մի այլ նշան, հայր Ալիշանը:

Նորա մեծ խելքից օգտուիր Ձիւանի,  
Կենսատու գրքերից բազմակողմանի.  
Սիւնեաց պատմութիւնն էլ գրէր երանի,  
Զըմտած զերեզման, հայր Ալիշանը:

1889



## ՅԱՒԱԼԻ ՄԱՀ

**Չ**ենետիկի Սուրբ Ղազարու կղզիէն  
 Հեռագիրը մի լուր բերեց տխրագին.  
 Հայոց ազգի համակրած այգիէն,  
 Մի կազնի ծառ մահը տապալեց գետին:

Մերունազարդ, փառաւորուած, փառահեղ,  
 Ճաճանչափայլ մի մեծ աստղ էր շատ գունեղ.  
 Բազմավաստակ, բազմապտուղ, հանճարեղ,  
 Մեռաւ հայոց նահապետը թանգագին:

Հայոց սարեր, դաշտեր, ձորեր ողբացէք,  
 Ձեր սոխակը մահացել է, սղացէք,  
 Հին հին վանքեր, աւերակներ դուք լացէք,  
 Ձրկայ Ղևոնդ Ալիշանը մաքրածին:

Երկրորդ Մովսէս Խորենացին գիտնական,  
 Երկինք գնաց քաջ Եղիշէն պատմարան.  
 Հիմքը խախտեց հայոց զրակամութեան,  
 Ամուր կերտուած պատը բլաւ ազգային:

Համոզմունքով թէև պապին համակամ,  
 Ազգութիւնից չէր սառնացել ոչ մի ժամ.  
 Հոգեղէնը նրան Քնաց անթաւամ,  
 Թառամեցաւ նիւթեղէնը երկրային:

Ջիւան ճւր է մեծ բանաստեղծ երգակը,  
 Խից մեզնից անգութ մահի գնտակը.  
 Թաւ յաւէտ Աւարայրի խօսնակը,  
 Բեզ ձվ պիտի խօսեցնէ ձվ լուսին:

1901



Ողբացէք, ով Արամեանք, ձեր բարձր մուսան չըկայ-  
 Հայերու մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիկան չըկայ-  
 Մեր ազգի Հոմերոսը, աննման հսկան չըկայ-  
 Ուրախութեան լուր տուող, ցնծութեան վկան չըկայ-  
 Հայոց գրականութեան անդին շափուղան չըկայ-  
 Աշխարհական վարդապետ, ընտիր արեղան չըկայ:

Հարագատ հայի գաւակ Ռաֆայէլ Պատկանեան,  
 Իւր քնարի ձայնովը բազում մարդիկ կեանք առան.  
 Չնաշխարհիկ բանաստեղծ. հոգի կրթող վիպասան,  
 Արգասաւոր գրիչը ետանդ տուող կայծահան.  
 Կուսելով խաւարի դէմ մեռաւ հերոսի նման,  
 Աղիտղորմ լալիս է նուարդը Արան չըկայ:

Մայր Արարս երգի գրող հեղինակին ողբացէք,  
 Քաղցրահնչիւն, քաղցրախօս հայ սոխակին ողբացէք,  
 Մեր մտաւոր աշխարհի արեղակին ողբացէք.  
 Արփիափայլ, լուսատու աշտանակին ողբացէք.  
 Չունեցող համանման անդին ակին ողբացէք,  
 Տարաւ ձեր Կոռնոսը՝ աղնիւ անթիքան չըկայ:

Թէ մտքով, թէ մարմնով յատուկ ծնող թանգագին,  
 Ինն երեխայի հայր, նահապետ բոլորովին.

Լրիւ քառասուն տարի ծառայել է իւր ազգին.  
 Մի տեսակ ուղղութիւնով չէ փոխել գոյնը, հոգին.  
 Իւր բանաստեղծ պապերը, հայրը երկինք կանչեցին.  
 Հայ քերթողաց կանառի հայրը և արքան չըկայ:

Ջիւան, ո՛ր է երգիչը, բարութիւնը հոշակող.  
 Չշմարտութեան ջատագով, ստութիւնը մարակող.  
 Իւր գրչի սուր շանթերով մոլիներին սպտակող,  
 Առանց վախի մարդկութեան ցեցերին խայտառակող,  
 Փողովըղին յոյս տուող և ապագան գուշակող.  
 Հայերու մեծ մարգարէն, հայոց Եղիան չըկայ:

**Ա**յսուհետև ինձի լոյս չէ հարկաւոր,  
 Քանի որ քեզ ունիմ, իմ ազնիւ հոգեակ.  
 աչերդ արեղակ.  
 Թէ ունիմ ցնծութիւն, քեզ եմ պարտաւոր,  
 Դու ես ինձի համար ամեն ժամանակ.  
 կենդանի ջութակ:

Ըստ լինելուս պատճառը քեզ եմ համարում,  
 Որ տալիս ես սրտիս լարին ընդհարում,  
 Քիչ կը ճարուի քեզի նման այս դարում,  
 Իմ սրտիս սիրելի դարձող հրեշտակ,  
 սիրուն աղաւնեակ:

Այտերդ անթառամ պարտիզի ծաղիկ,  
 Շրթունքդ շաքարից, մեղրից անուշիկ.  
 Վերջապէս ինձ համար, ով իմ գեղեցիկ,  
 Չկայ օղջ աշխարհը քեզի նմանակ,  
 դուն ես միայնակ:

Բաղցրախօս թռչնիկներ անհամար, անթիւ,  
 Անոյշ ձայնիդ համար քեզ կուտան պատիւ.  
 Պատկերդ դրաւիչ անունդ ազնիւ,  
 Դուն ես առաւօտեան պայծառ արուսեակ,  
 ուշիմ ընդունակ:

Սէրդ սուրբ է միշտ անարատ ինձ համար,  
 Դուն համեստ ես, աւանդ ես եմ անկատար.  
 Քեզ կը սիրեմ բոլոր կեանքիս հաւասար,  
 Համոզմունքս է որպէս մաքուր պարզ վտակ,  
 վճիտ, անապակ:

Է՞ր եմ արևուր արդեօք, քանի որ դու կաս.  
Բեզ ունեցող մարդը ի՞նչ ունի պակաս.  
Յուսամ Աստուած պիտի ապրիս անփնաս,  
Ջիւանիքս համար բախտով յաջողակ,  
սիրելի տատրակ՛:

1880



## Ն Ո Ւ Է Ր

Իմ թոռ Լուսիկին

**Գ**րախաի տունկ, խնկի ծառ ես, Լուսաբեր,  
Անուշահոտ մէկ բուրվառ ես, Լուսաբեր.  
Ի՞նչ ասեմ քեզ, ի՞նչ անուն տամ, հոգեակո,  
Ասուց ձուլուած գեղափայլ ես, Լուսաբեր:  
Ծնողացդ նոր, անդրանիկ նուպարը,  
Նրանց անդին մարդարիտը, գոհարը,  
Դու աստղերու աշխարհից ես վար իջել,  
Նրա համար շատ պայծառ ես, Լուսաբեր:  
Դու Գալստեանց շառաւիղ ես, մատաղ կոյս,  
Ստեփանեան բուրաստանից նորարոյս.  
Արաքս գետի ալիքներից գոյացած,  
Սիրոյ ծնունդ աշխոյժ գառ ես, Լուսաբեր:  
Արարիչը քեզ մի եզրայր կամենայ,  
Ընկեր լինի, հեադ կարգայ ու խաղայ.  
Լինիս խելօք չնորհալի օրիորդ,  
Համեստ քողդ չը պատառես, Լուսաբեր:  
Ջիւանուց էլ մի մաս ունես անուշիկ,  
Լեռնեանց տան արեւակից շատ մօտիկ,  
Սովորում ես մօրդ լեզուն խնդալով,  
Թոթովելով կը բարբառես, Լուսաբեր:

## Ն Ո Ւ Է Ր

Մեծապատի Ղազարոս Աղայեանցին

(Յօրելիանի տօնախմբութեանը)


**Մ**եծ բանաստեղծ, մեծ աշուղ, ժողովրդի սիրելին,  
 Հայոց ազգի Բերանժէ, փայլուն շողակ թանկագին,  
 Երախտաւոր ուսուցիչ, շատերուն հայր պատուական,  
 Արգասաւոր գրչի տէր, ուղղախօս, լուսարեւան,  
 Բարձրահասակ, յազթանդամ, կարիչ սերունդ սիսական.  
 Քաջ Ղազարոս Աղայեանց, հոյակապ մարդ ազգային:

Այնքան երկեր ես գրել, որ շունին թիւ ու համար,  
 Համով, հոտով, դուրեկան, տողերը մարգարտաշար.  
 Հեշտ չէ քառասուն տարի ճգնել, տքնել անդադար,  
 Փարելի մանուկներուն ցոյց տալ ուղիղ ճանապարհ,  
 Հայոց լեզուին զարկ տուող, հայրենիքի սիրահար,  
 Ղառ ու կենդանի պահող հայութեան թմրած հոգին:

Ապրիր, ի՞նչ պիտանի մարդ, ապրիր, պաղատու ծառ ես,  
 Անուշահամ պտղովդ մարդոց կեանք կը պատճառես.  
 Քու աշխոյժդ չէ մարել, զեռ հնոցի պէս վառ ես,  
 Երխտասարդի նման ոյժդ տեղն է, կայտառ ես,  
 Փայլուն մետաղից դուրկ ես, սրտով հարուստ պայծառ ես,  
 Հայ գրողը երկնքում կստանայ առատ բաժին:

Շատ տաք ու սառ քամիներ անցել են քու գլխովդ,  
 Միշտ խաղաղ է մնացել, չէ ալեկոծուել ծովդ,  
 Ինչ որ կուզես կը ցանկաս, տայ Աստուած քու սրտովդ,  
 Ժիր երխտասարդ Պատ խելքովդ ու մաքրովդ.  
 Շատին օրինակ լինիս ազնիւ բարի հոգևովդ,  
 Գործից թուլամեներուն կեանք պարզեես վերստին:

Գու մտաւոր քաջ զինուոր, անվեհէր առաջախաղ,  
Լուսոյ մասին լուր տուող, աւետարներ արագաղ,  
Կերպարանքդ զբաւիչ, պատկերդ զեղածիծաղ.  
Հոգեկան հորիզոնդ անթուխպ, առանց շամանդաղ,  
Կլիմադ բարեխառն, ոչ տաք է և ոչ էլ պաղ,  
Գաղափարով, կարծիքով, ոչ շատ նոր ես, ոչ շատ հին:



## Ա Ղ Օ Թ Ք

**Ա**ստուած իմ, նոր հոգի տուր թող զօրանան տկարները.  
Մեղսալից շրջանի մէջ չը ընկճըւին արդարները.  
Ընկած ու որբ ազգերուն, Տէր իմ, պահպան դադտնազէտ,  
Գայլերու ոճմակներուց ազատ պահէ ոչխարները:

Կազաչեմ ես, առ, Տէր իմ, անդուքներուց զօրութիւնը.  
Թող չը ծաղրեն բու հօտդ ամբարտաւան յիմարները.  
Չորացած, փթած կռճի ստուերի տակ ապրելով,  
Բարձր ուղիդ նրբահասակ, ծառ չեն լինի դալարները:

Զկնապանները, Տէր իմ, Քեզնից զօրութիւն աւնելով,  
Անվեհէր հանճար եղան ուսում շառած անճարները.  
Փրկէ, Տէր, Քու հնազանդ ծառաներդ անդունդներուց,  
Թող չը իշխեն լուսաւոր մարդկանց վրայ խաւարները:

1895





X

Կ Ա Ս Պ Ի Յ Ժ Ո Վ

**Ի**մ սիրտս ցաւ ունի, իւր ցաւն է կոծում,  
 Դճե ինչու ալեկոծուած, Կասսպից ծով.  
 Ձը գիտեմ ինչ ունիս, դու էլ ես հեծում,  
 Լայնածաւալ, համատարած Կասսպից ծով:

Սկել ու անցել են դարեր շատ հազար,  
 Մինչ հիմա ապրել ես, դեռ կապրես երկար,  
 Հառաչում ես մեծակ լինելուդ համար,  
 Մեծ ծովերուց հեռու ընկած Կասսպից ծով:

Ալիքներդ ուժգին, գոչիւնդ հզօր,  
 Յետ ու առաջ խաղում, անում ես թափօր.  
 Մտքիս ծովն էլ քեզ պէս խաղաղ չէ այսօր,  
 Խոտոված է և սրտմտած Կասսպից ծով:

Ունենալով պինդ շոգեշարժ մեքենայ,  
 Նաւերը ման կուզան քո կրծքիդ վերայ,  
 Գիտութեան ձեռքի տակ դարձել ես ծառայ,  
 Խեղճացել ես, մարդահալած Կասսպից ծով:

Ջրաճու ազդին էլ ծանօթ ես, հէք ձեր,  
 Ափերդ շրջել են աւղաններ, հայեր.  
 Ծանապարհ ես դրել զանազար ազգեր,  
 Շատ շար ու բարիներ տեսած Կասսպից ծով:

1902



## ԻՆՉ ԵՂԱԻ

(ՈՒՍԱՆՈՂ ՈՐԴՈՐՆ ԵՐԿԱՐ ՍՊԱՍՈՂ ՀՕՐ ԵՐԳԸ)

Հիւսիսային կողմից եկած ամպիկներ,  
Խնդրեմ ասէք ազունիկս ի՞նչ եղաւ.  
Հողմեր, դորշ մշուշներ և մրբրիկներ,  
Ինձ ասացէք, ազունիկս ի՞նչ եղաւ:

Վազող կառախմբեր և սուրհանդակներ—  
Արագ տանող բերող թղթեր, նամակներ.  
Ծովեր, մեծ մեծ զեաներ, սառն առուակներ,  
Ինձ ասացէք ազունիկս, ի՞նչ եղաւ:

Լուսաբեր արուսեակ—աստղերու տիկին,  
Անշէջ ճրագներ, կաճառ ծիրկաթին,  
Ողջ աշխարհը գիտող արև ու լուսին,  
Ինձ ասացէք, ազունիկս ի՞նչ եղաւ:

Գեղջուկ սայլազաններ, անմեղ սայլորդներ,  
Սարերու, ձորերու, դաշտի անցորդներ,  
Ինձ մի լուր տուէք, բարի ճամբորդներ,  
Ինձ ասացէք ազունիկս ի՞նչ եղաւ:

Ո՛վ դու մտայլ գիշեր, ո՛վ լուսաւոր տիւ,  
Պատրաստէ սրինգդ, սրբակեաց հովիւ.  
Մեծամեծ թռչուններ, կռունկ, սագ, արծիւ,  
Ինձ ասացէք, ազունիկս ի՞նչ եղաւ:

Մարդիկ, հրեշտակներ, երկնային գորբեր,  
Շարժուն մոլորակներ լուսաառու աստղեր,  
Քաղցրահնչիւն զեփիւս, ո՛վ սիրուն եթեր,  
Ինձ ասացէք, ազունիկս ի՞նչ եղաւ:

Լեզու ասէք խօսէք դուք ծառ ու ծաղիկ,  
Քաղցր ձայնդ հանէ, սիրուն բլրուլիկ.  
Որսորդից հալածուած այծեամ ու եղնիկ,  
Ինձ ասացէք, աղունիկս թնչ եղաւ:

Ջրանունս բարեկամ աշխոյժ երգիչներ,  
Տաղանդաւոր, շնորհալի գրիչներ.  
Մանօթ ուսանողներ և ուսուցիչներ  
Խնդրեմ ասէք, աղունիկս թնչ եղաւ:

1902

Ն.Ս. ԻՄԾ Է ԵՍ ՆԲԱՆՆ ԵՄ

Ելի միաքս վեր սլացաւ, վառ սիրով տարուածի պէս.  
Հողիս քնից նոր է գարթել, աչքերը հարբածի պէս.  
Չըկայ ուրիշ մէկ զեղեցիկ իմ սրտիս սիրածի պէս,  
Նա իմս է, ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,  
Ձեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

Մտայ սիրելիիս այգին, վարդ է բացուել վարդի մօտ,  
Վառուած երգում է սոխակը. աշխոյժով վաղ առաւօտ.  
Ես հոգեակիս եմ որոնում, նա էլ գիտեմ ինձ կարօտ.  
Նա իմս է ես նրանն եմ, պիտի սիրենք մէկ մէկու,  
Ձեռք ձեռքի տանք, կեանք վայելենք սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

Երկյարկանի ապարանքի լուսամուտին եմ նայում,  
Սիրտս տխուր սպասում եմ նազելիս չի երևում,  
Առանց նրան լոյս ու արև ինձ համար չէ աշխարհում,  
Նա իմս է ես նրանն եմ պիտի սիրենք մէկ,  
Ձեռք ձեռքի տանք, կեանք վայելենք, սիրտ նուիրենք  
մէկ մէկու:

1902

## Մ Ի Ա Ս Տ Ղ

**Մ**ի աստղ ծնաւ Արեւելքէն լոյս ունէր առատ  
Բոլոր աստղերու մէջ մէկ էր, չունէր համեմատ,  
Սև սև ամպեր շուտ պատեցին չը թողին ազատ,  
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Այդ աստղերը հինգ բոյր էին, մէկը չունէր լոյս,  
Չորսը արևի շնորհիւ առան խրախոյս  
Առաջինին ոչ մի տեղից տուող չեղաւ յոյս,  
Խաւարի մէջ անհետացաւ, լոկ գիծը մնաց  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

Եօթը փայլուն մեծ մեծ աստղեր ժողովան գումար  
Լուսնից ասպարէզ ուղեցին չորս աստղի համար  
Արեւելքէն ծնող աստղը մնաց 'ի շուար,  
Խաւարի մէջ անհետացաւ լոկ գիծը մնաց  
Աստղագիտաց սրտերու մէջ կսկիծը մնաց:

1886



# Ե Ր Գ Ե Փ Ո Ւ Ն Ջ

Մ Ը Տ Պ Ո Ւ Ը Կ

Հողիդ սիրեմ, մատրուակ, բեր, գինու սրուակը բեր.  
Ածիր մի հաս, տուր խմեմ, թէյի մեծ բաժակը բեր.  
Ցանկանում եմ այս գիշեր մոռանալ հոգս ու ցաւը,  
Վրաստանի իշխանաց գինու տխորժակը բեր:

Գուն էլ արի մեր մօտը, համ խմենք, համ երգ ացենք.  
Թառը տուր քաջ ընկերիս, ինձ էլ իմ ջութակը բեր.  
Ընտիր գոհարներիցը կարդա լսենք, մատրուակ,  
Շուտով Սայեաթ-Նովայի երգերու տետրակը բերը:

Մի քանի շամփուր սիրուն համով խորոված շինէ,  
Վառիր կրակարանը, շուտ արա, կրակը բեր.  
Կանաչ մանար վարունգներ եթէ կայ, տուր տասը հաս,  
Աղը և թարմ կանաչին, բողկուկը, դանակը բեր:

Կարմիր ու սպիտակ գինու շիշերը դարսիր վերան,  
Տուր մի սիրուն երեկոյթ դու սեղանտախտակը բեր.  
Գեղեցիկը, մատրուակ, աչքի համար լաւ է, լաւ,  
Կալիպսէի կղզիից վայելչահասակը բեր:

Թող ժլատը հոգս անէ, մտածէ ոսկու համար,  
Իմ քսակի մէջ եղած դու բոլոր ստակը բեր.  
Բոլոր կերակուրներու թագուհի պանիրը, շուտ,  
Զիւանու սրտով սիրած յարգելի խորակը բեր:

1890



**Օ**տարութեան մէջը զուր անցաւ ջանքս.  
 Կարօտդ քաշելով մաշեցի կեանքս.  
 Կրկին դէպի քեզ է սիրտս բաղձանքս.  
 Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
 Պապիս, մամիս, նախնիքներուս օթեան:

Մննդավայր, երբ քեզանից չեռացայ,  
 Կարծես դրախտիցը զժողքը ընկայ.  
 Համդ ու արժէքդ ես նոր իմացայ.  
 Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
 Պապիս, մամիս, նախնիքներուս օթեան:

Տկարներուն թէ չը ճնշէ հօօրը,  
 Կարելի է որդին մտանայ հօրը.  
 Մանաւանդ քեզ նման հարազատ մօրը.  
 Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
 Պապիս, մամիս, նախնիքներուս օթեան:

Օտարութեան հացը ասացին մեծկակ,  
 Բայց զնացի տեսայ փոքր նկանակ,  
 Դառնահամ, անահուն, սպառող քսակ,  
 Ա՛խ իմ երկիր, անուշ երկիր հայրական,  
 Պապիս մամիս նախնիքներուս օթեան:

1883



## Ե Ր Գ Ի Ն Ը

**Ս**այիսթ-նովի ասածի պէս ազգի մշակ է երգիչը,  
Հազար ցաւով մարտիրոսուած ճիշտ նահատակ է երգիչը.  
Սառը մարդկանց տաքացնող յատուկ էրակ է երգիչը  
Ով ուզում է թող սովորի տեղով առակ է երգիչը.  
Արդարութեան և բարութեան ծարաւ պապակ է երգիչը,  
Որովհետև անխարդախ է, սրտով խտակ է երգիչը:

Ով երգիչ լինել է ուզում պէտք է խոնարհ լինի յատուկ,  
Ինքը համեստ, խորհրդապահ, տեսած բանը պահի ծածուկ.  
Այո-ն այո, և ոչ-ն ոչ, բնութիւնով խոնհմ փափուկ,  
Պէտք է ընտիր խօսքեր խօսի ինչպէս յակիմք, ոսկի, կնարուկ,  
Չը պէտք է խարերայ լինի, կամ կախարչող թովիչ վհուկ.  
Չայնը քաղցր, լեզուն անուշ բանցի սոխակ է երգիչը:

Նրա համար ամեն մի սուն սուրբ է ինչպէս թէ մի տանար,  
Երգիչ մարդը ամենեկին շի ունենալ վատ զաղափար.  
Կը պատահի բացառութիւն, ես չեմ ասում թէ չը կայ շար,  
Այնպէսները երգիչներու վարկը կտարող են և յիմար,  
Թմբեակները կը սթափեն երբ առնում է ձեռքին քնար,  
Քնածներին արթնացող մի կերպ զանգակ է երգիչը...

Երգիչը ինչ ազգի մէջ ծնուած լինի հարազատ է.  
Հայրենեացը հաւատարիմ, հօրը հաւատին հաստատ է,  
Քսու, մատնիչ լինելուցը հետու, անմեղ անարատ է,  
Բռնութիւնը նրան մահ է, երգելու մէջը ազատ է.  
Բարին սիրող, բարին յարգող, շարութիւնը սրտով կատէ  
Չգացումները միշտ լարուած մտքով բարակ է երգիչը:

Ի՛մ տեսածս երգիչներու մէջը հարուստ մարդ չը տեսայ.  
Օրական ապրուստ հարող մէկի մօտը մի փող չըկայ,  
Երգիչներուն գնահատող մեր երկիրը չէ Եւրոպա,  
Բայց նոքա չեն յուսահատում տեսնելով բարի ապագայ.  
Սգոյ և տրամուխեան տունը ամենևին չեն էլ գնա,  
Ջրան, մարդկանց ցնծում տուող բարի խօսնակ է երգիչը:

1885



## Մ Յ Ծ Ե Ա Մ

**Ա**նհող ես, չես դիտեր ինչ կայ քո մասին  
Պատում են քո խեղճ անձիդ քնասին,  
Գամփռներով, բարակներով միասին  
Փախիր այժեամ, փախիր որսկանն է գալիս  
Չազուկներիդ տխուր, լալիս են, լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ  
Կուզէ ձեռքերը քո արինով լուայ  
Ողճալի, քո տեղեակ սար ու ձոր կուլայ:  
Փախիր, այժեամ փախիր, որսկանն է գալիս  
Չազուկներիդ տխուր, լալիս են, լալիս:

Որսկանը գութ չունի, կանի կրակը,  
Կամ քեզի կսպաննէ կամ քո գաւակը.  
Չուր չի անցնի հրացանի գնդակը  
Փախիր, այժեամ փախիր, որսկանն է գալիս,  
Չազուկներիդ տխուր լալիս են, լալիս:



Դաշտումը չես ման գար թէ մտածես լաւ  
Քեզ կը վերաւորեն, կստանաս մեծ ցաւ  
Դուրս մի ելնէր խիտ անտառից դու բնաւ.  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս,  
Չագուկներդ տխուր լալիս են, լալիս:

Չորերը մի մտնիր, վտանգաւոր է,  
Որսկանը ման կուգայ այնտեղ սոճոր է  
Քարայրեց խփելով քեզ կը գլորէ  
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս  
Չագուկներդ տխուր լալիս են, լալիս:

1883



Ք Ր Ո Ւ Պ Ա Յ Ի

Պատավարիչ, մի յապաղիր, գինի անա տուր խմենք,  
Հերիք եղաւ մարերու մէջ խորասուզուենք և լսենք.  
Դէ ընկերներ, ուրախացէք, լեզուներդ բաց արէք  
Ուտենք, խմենք, զուարճանանք, այսօր մի լաւ բէֆ անենք:

Ապոլոնի ծառաներն ենք մուգայի երկրապագու  
Շատ ու քիչ յարգելի խումբ ենք երգասաց, նուազածու.  
Գնանք կալիպսէի կղզին, Մենտորը մեզ լուսատու  
Մօրփիոսի խաղաղ տան մէջ Աստղիկը հիւր ընդունենք:

Դէ Զիւանու քաջ ընկերներ. եղէք աշխոյժ ժրջան  
Պատիւը լաւ պահպանեցէք ձեզ մասն հասած մարդկութեան,  
Վարդը շուտով կը թառամի եթէ շօշափենք նրան,  
Հեռու մնանք հուպ լինելուց միայն հոտոտենք, նայենք:

1902





## Հ Ա Յ Ա Շ Խ Ա Ր Հ

Պատկանելի Հայ աշխարհ, խեղճ, ապիկար Մնացիր,  
 Անօգնական, առանց Տէր, անմխիթար Մնացիր.  
 Սիրտդ վէրքերով լեցուն, միշտ ցաւազար Մնացիր,  
 Չունենալով բաջ բժիշկ, անդեղունաւ Մնացիր.  
 Լրիւ հինգհարիւր տարի բաղմաշարչաւ Մնացիր,  
 Չեղև քեզ մի աղատիչ, անբարերար Մնացիր:

Երբ Բեռլինում կայացաւ դեսպանաց զեհատողով,  
 Բուրդարներն ունեցան իրանց հզօր ջաղագով.  
 Տէր ունեցող ազգերը դարձան ուրախ, անխռով.  
 Ազատուեցան Մանմխախ լծից, եղան ապահով.  
 Իբր քեզ էլ օգնեցին Վաթսունումէկ յօղուածով,  
 Մի մեծ օգուտ շտալով, նորէն տկար Մնացիր:

Անգլիայի թագուհին, դառնալով երաշխաւոր,  
 Խոստացաւ քեզի տալու արտօնութիւն նորանոր.  
 Պայմանիդ ձեռք քաշեցին եօթը անկախ թագաւոր,  
 Քո ամեն քաղաքներդ դնել հայից գլխաւոր.  
 Վերջը մի բան դուրս չեկաւ, նորէն դու թաւազլոր,  
 Պատաստող զայլերի մէջ, իբր ոչխար մնացիր:

Երկու տարին լրացաւ այն օրից երբ խոստացան,  
 Բարենորոգումներու դեռ չէ՛ երևում նշան,  
 Կրկիկիոյի կողմերում, Ձէյթունին տրուաւ մի բան,  
 Նա էլ սրի ուժով էր, Պապիկին ես պարտական.  
 Համբերելով մաշուեցար, փնտոելով մի օգնական,  
 Վերջապէ՞ս մինչև հիմա աննախարար մնացիր:

Ջիւ սնուս բաջ յայտնի է, թէ դու սրբան խնդրեցիր,  
Փոքր ինքնավարութեան մէկ հրաման խնդրեցիր,  
Հայերուդ կառավարիչ, բարի իշխան խնդրեցիր.  
Օրինաց արդարութիւն, սուրբ դատաստան խնդրեցիր.  
Այլոց նման զէնք չստար, գրաւոր բան խնդրեցիր,  
Կարծում եմ, անիրաւունք նրա համար մնացիր:

1880





**Ա**

խ, կորաւ հայրենիքիս փառքը, բոլոր յատկութիւնո,  
Շարժուեց տեղից տունը, կորժանուեցաւ հաստատ սիւնը,  
Գաղթելով ամբողջ ժողովուրդը օտարաց անկիւնը,  
Թողնելով կալուածքները, արևատուրը, ողջ արդիւնը.  
Այլազունք չեն մեղաւոր—մեզնից եղաւ դառնութիւնը.  
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը:

Այն Սիւնեաց չար Վասակը, մեծ իշխանը չէր մեղանից,  
Արժրունի ազգ ուրացող Մեհրուժանը չէր մեղանից,  
Քաջ Սամելայ հայր լինող վատ Վահանը չէր մեղանից,  
Մանաւանդ Վեստ-Սարգիսը՝ չար զաժանը չէր մեղանից,  
Այլազունք չեն մեղաւոր—մեզնից եղաւ դառնութիւնը.  
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը:

Միտ բերէք չիք-Կիրակոս անուամբ քահանայ վատ հոգին.  
Ձե՛մ ուզեր յիշել նորա պիղծ անունը վատ զազրագին.  
Սմբատայ ձեռագիրը առաւ պահեց իւր ձօտ միջին,  
Կայսրորդին զտնելով՝ ծախեց նրան, առաւ բաժին.  
Այլազունք չեն մեղաւոր—մեզնից եղաւ դառնութիւնը.  
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը:

Սղճալի Հայաստանը, Աշըղ Ջիւան, տես ձեր եհաս.  
Վերջապէս իւր որդիքը իրանք իրանց տուին վնաս.  
Մատնելով մեկ զմէկու նրանք կրեցին պատուհաս,  
Մինչ այսօր էլ հայոց միջէն Վասակներն են անպակաս.  
Այլազունք չեն մեղաւոր—մեզնից եղաւ դառնութիւնը,  
Մեր ձեռով մեր աչքերը հանել տուեց մեր արիւնը:





Գ Ա Ջ Է Լ

**Ա**յս պիտի շատ սպասեմ իմ սիրելւոյս զայստեանը,  
 Խնդրում՝ ոչ որ չի տալ այս խօսքերիս պատասխանը.  
 Ե՛րբ կուզայ ինձ, ասացէ՛ք, վազեմ առաջ երթամ նորան  
 Ընդունելութեան համար պատրաստել եմ օթեանը:

Ես հաւատարով նորա զայստեանը՝ սպասում եմ,  
 Ու թէ շուտ արժան պիտի լինեմ նրա սուրբ տեսլեանը.  
 Շատ տարի առաջ մեռած համարեցին շար մարդիկը,  
 Երբ տեսան՝ պապանձեցաւ ամեն մէկի վտտ բերանը:

Իմ Սիրելւոյս մահ չ'կայ յախտեանս յախտենից.  
 Երկնաւոր Հայրն է նորա պահպանողը, օգնականը.  
 Խնդրում եմ, ս՛վ Արարիչ, ցոյց տուր Սիրելւոյս պատկերը.  
 Այնուհետ հոգ չէ, Ջիւանուս թո՛ղ գնեն զերեզմանը:

1880





## Ս Է Ր

Ազգաւ հայ-կաթուղիկ բողոքականին,  
Լուսաւորչեաններու ատեն ՚իզուր է.  
Հարազատ որդիք են Մայր-Հայաստանին,  
Սրտերը պաղեցնել-դատելն ՚իզուր է:

Ինչպէս որ մենք հայ ենք, նրանք էլ հայ են,  
Ազգաւ, լեզուաւ Հայութեան կ'ձառայեն.  
Պէտք է մերոնք ներող լինին խնայեն,  
Եզրայրն իր եղբօրը դատելն ՚իզուր է:

Ձիւան, նա կ'իմանայ՝ ինչ մարդ որ նոր է,  
Ամեն խիղճ իւր սրտի մէջ թագաւոր է.  
Սիրով եղած բանը օրինաւոր է,  
Աննպատակ դառն աշխատելն ՚իզուր է:

1886





**Ա**ռանց քեզ կեանք չունեմ սիրելի ջութակ,  
Դուն ես սրտիս մխիթարիչ սփոփանք.  
Քեզանով եմ բարձրացնում աղաղակ,  
Դուն ես ամեն միջոց ինձի համար կեանք:

Տրամեալ երեմներուն դու կուտաս ծիծաղ,  
Քեզանով օրերս անցնում է խաղաղ.  
Քաղցրանուագ երգող լարերիդ մատաղ,  
Դէպի քեզ ամեն սիրտ կ'ընծայէ բաղձանք:

Որփեան յիշատակն ես, ով մեծահանճար,  
Կամ թէ Ապոլոնն է տուեր քեզի լար,  
Այնքան ազդեցութիւն ունիս, ով քնար,  
Որ քեզնով կ'արթննայ սիրտ ու խղճմտանք:

Քեզ չ'սիրող մարդն է նախանձ ժանտամուտ,  
Կեանքի պայմաներից երբէք չէ հմուտ.  
Հիւանդն անգամ քեզնից կ'ըրպղէ օգուտ,  
Մեղմ ձայնդ լսելով՝ չի զգայ տանջանք:

Ուրախութեան փայլիչ, ով սիրուն Հերմէս,  
Քեզանով է ամեն ցնծութիւն կրկէս,  
Առանց քեզ չի լինի հարսանիք հանդէս,  
Ինքդ ես զուարճութեան ուսում, հրահանդ:

Սուրբ զբքերից ես բերում եմ օրինակ,  
Յօրալիցն ես դու մնացել յիշտտակ,  
Երբ Ջիւանուոյս ձեռում կ' հնչես ջութակ՝  
Սրտիս խորքերիցը կ' քղխէ մաղթանք:

1872





**Ա**նտանեի՛ր խեղճութիւն քանի՛ մէկ իշխես հայոց,  
 Քանի՛ մէկ մեզ մուրալ տաս, ձգես փողոցէ փողոց.  
 Ա՛խ մինչև Երբ կ' մնայ մեր կոյր բաղդի դուռը գոց,  
 Որ բացում է սրտերուս մէջը հաղար մի կերպ խոց.  
 Քանի՛ քաջ երիտասարդք ձեռքեր տարած դէպ 'ի ծոց,  
 Կուրծքի վերայ սեղմելով՝ սրտից հանել են հոգոց:

Քանի՛ տաղանդաւոր մարդ ձեռքիցը աղքատութեան,  
 Սկսում է սնկանիլ մէջը յուահատութեան.

Երբ չի գանի մի աղբիւր խեղճ հայը աշխատութեան՝  
 Կ'հետևի այնուհետ ամենայն մի վատութեան,  
 Կորցնելով պայմանը մարդկային հաստատութեան,  
 Իր արարմունքը իրան կ' դառնայ կրակ ու բոց:

Երբ կ'հեռանայ մարդոց բարութեան զգացումը՝  
 Կ'կորցնէ նրա հետ գիտութիւնը, ուսումը,  
 Խեղճի համար միշտ պաս է խնջոյքը, կեր ու խումը:  
 Ըստ որում կորուցել է անունը, համարումը.  
 Երբէք ուրախ օր չունի խեղճ ու թշուառ տրտումը,  
 Զբաւոր հայի համար չ'կայ ցնծութեան միջոց: **\*\*\***

Զգայուն սրտի համար հոգս է ցաւը ազգային,  
 Տեսնելով շարչարանքը ազգի վերայ ահազին,  
 Օգնութիւնը մերազնեայց վերցնել է բոլորովին,  
 Մեր յոյսը դու ես միայն օվ Գու անմահ Միածին,  
 Կոպիտ անխիղճ քրդերը Մշու, Վանայ հայերին,  
 Մեծով, անասունի պէս քշում են սպանդանոց:

Խեղճութիւնը խաւարեց հայերիս արեզակը,  
 Որտե՛ց հասաւ մեզ վերայ այս թշուառ ժամանակը.  
 Գիտէ՞ք. անտանեկի է ազրատութեան կրակը,  
 Մեր ազգի նեղութեանը անցաւ չափը քանակը,  
 Ով խեղճ եղե՛լ է՝ գիտէ թշուառ մարդոց վիճակը.  
 Զիւնն, հարուստն ինչ գիտէ ցաւը այրեաց ու որբոց՝

1875



## ՔԱՋՆ ՎԱՐԳԱՆ

Աւարայրի գաշտը ներկեց արիւնդ,  
 Կարմիր Վարդանն, հզօր Վարդանն քաջ Վարդանն.  
 Յազգէ յազգ կ' յիշուի անմահ անունդ՝  
 Կարմիր Վարդանն, հզօր Վարդանն քաջ Վարդան  
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Մեռա՛ թողիք անմահ անուն յիշատակ,  
 Քո գործքերով դարձաւ բարի օրինակ.  
 Դու սուրբ գործի համար եղար նահատակ,  
 Անմահ Վարդանն, հզօր Վարդանն քաջ Վարդանն,  
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

Բեզ գրգռեց ջերմ հայրենաց եռանդը,  
 Պաշտպանեցիր Փրկչիդ տուած աւանդը,  
 Դուրս վանեցիր Զրադաշտեան աղանդը,  
 Դու վե՛հ Վարդանն, հզօր Վարդանն քաջ Վարդանն,  
 Խորտակեցիր ծանր լուծը պարսկական:

1889



Գ Ա Մ Ի Թ Ա Ն

**Ա**ռակախօս նախնի հեղինակները  
Ինչ ասել են՝ իբաւ արդար են ասել,  
Քննելով մարդկանց նպատակները՝  
Որին խելօք, որին յիմար են ասել:

Ծշմարտութիւնը միշտ յառաջ են տարել,  
Ստութիւնով երբէք բան չեն հնարել,  
Իմաստունին արեգակ են համարել,  
Բայց տգէտին անլոյս խաւար են ասել:

Ազգութեացին շատ անգամ նզովել են,  
Նորանց կեանքը պարսաւել, վրդովել են,  
Ազգի պաշտպան լինողներուն զովել են,  
Հեռատես և հեռանշմար են ասել:

Միշտ հայեցող եղել են ըսլորներուն,  
Օրէնք ուսուցել են թագաւորներուն,  
Փուշակել են այժմեան լուսաւորներուն  
Կատարեալ խելահաս ճարտար են ասել:

Լաւը վատից որոշելով՝ զատել են,  
Հասուն մարով ամենայն բան զատել են,  
Բարկացողին, յուսահատին ասել են,  
Խոնձ մարդու կեանքը երկար են ասել:

Որոնել են գործի հիմը, հաստատը,  
Լնդունել են սէրը, յոյսը հաւատը,  
Ճանաչել են բարոյական խրատը,  
Քաղցրութեանը մեղր ու շաքար են ասել:

Պահել են բարեպաշտ մարդկանց պատիւը,  
Սիրել են բնութեամբ բարին, ազնիւը,  
Անարգել են պատերազմը, կռիւը,  
Քաղաւորաց խաղաղ, դադար են ասել:

Լաւ գննել են ամեն բանը մաքուր ճիշդ,  
Չեն ուղեցել երբէք մի մարդ տանի վիշտ,  
Չարութիւնը, նախանձը հերքել են միշտ.  
Բարի գործը հոգւոյ պաշար են ասել:

Շատ սիրել են առաքինի եղողին,  
Չեն ըմպել շափազանց կաթիլն խաղողին,  
Շնացողին, ստախօսին և գողին,  
Մարգասպանին անխիղճ, վատթար են ասել:

Մարգարիտը խոզերուն չեն արկանել,  
Ուղղութիւնը միշտ բարձր են պահպանել,  
Խարհեային երբէք մարդ չեն անուանել,  
Խարւողին էլ անսխտ, տխմար են ասել:

Ամեն մարդու գովել են ըստ արժանին,  
Հետեւելով քաղաքական պայմանին,  
Շուտով զբաւողին, դիւրահաւանին  
Մարդահաճոյ, խելքից տկար են ասել:

Խոնարհելով Տիրոջ հրամաններուն՝  
Հետեւել են նորա պատուիրաններուն.  
Բարի խղճով գրուած սուրբ մատենաներուն  
Չքնաղ, շքեղապանձ քանքար են ասել:

Մինչ բնական դիտութեանը հասել են,  
Անբննելին գերբնական դասել են,  
Ինչ որ խրատել են, ինչ որ ասել են՝  
Մարդկային բնութեան յարմար են ասել:

Անզգամ են կարծեր անխիղճ մեղելոց,  
Բայց՝ օգնել են խեղճ ազբատաց, նեղելոց:

Մաքուր սրտիւ առաքինի եղելոց  
Ընտիր, աստուածային տանար են ասել:

Հաւանել են հոգւով զեղեցիկներուն,  
Գովել են հոգեզոծն երգեցիկներուն,  
Հաստազլուխ ցանցառ ռամիկներուն  
Մարդկութիւնից հեռու, օտար են ասել:

Ստացական խելքը կարծել են օտիտ,  
Բնականը համարել են մարգարիտ,  
Ջանասէր, գործունեայ մարդուն ճշմարիտ.  
Վատահ, խելօք գործակատար են ասել:

Միշտ եղել են նրանք ցաւեր փարատող,  
Աշխարհային կարգ կանոնը հաստատող.  
Վատ դէպքերէ, վտանգներէ ազատող,  
Համբերանքը կեանքի ասպար են ասել:

Այն օրուանից՝ երբ մտել են օրօրոց,  
Ճանաչել են համալսարան և դպրոց,  
Անմահ Հեղինակին ողջ արարածոց  
Ամենախմաստուն հանճար են ասել:

Լոկ մարմինը կ'գերէ զերեզմանը,  
Հոգին անմահ է, չէ գրած վախճանը,  
Բարի յիշատակին, բարի անուանը  
Տեսողութիւնը ըիւր հազար են ասել:

Ձիւնն, նորանց խօսքերըն է բարի ձէս,  
Ո՛չ թէ կատակերգութիւն է կամ կրկէս,  
Պարսուել են, թէ գովել են. վերջապէս—  
Ինչ ասել են՝ մեղի համար են ասել:

1870



**Ա**զնիւ բարեկամ, անունդ ակ չի մնար այդպէս.  
 Մէկ օր կ'պատահի հակառակ, չի մնար այդպէս.  
 Միշտ օրը ցերեկ, խաւարը փակ չի մնար այդպէս.  
 Յանկարծ մութը կ'ուզայ, արեղակ չի մնար այդպէս,  
 Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,  
 Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

Շատին քեզի պէս բարձրաուցել՝ խարել է բաղդը,  
 Քանի՛ քանիսին վառ կրակով լափել է բաղդը,  
 Որչնփ քաջերու խելքերը միշտ շափել է բաղդը,  
 Նախ՝ երկինք է հաներ, յետոյ՝ վար թափել է բաղդը.  
 Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,  
 Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

Ո՛ւր է Աղամը և Նոյը, ո՛ւր է Մաթուսաղան,  
 Ո՛ւր է Սողոմոն Մեծն իմաստուն, Դաւիթ իշխան,  
 Ողջին մանը վախճան տուել՝ տարել է գերեզման,  
 Քեզ էլ պիտի մէկ օր մանը հասնի ու տայ վախճան:  
 Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,  
 Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

Զարթիր քնիցդ, չորս բոլորդ նկատէ, ո՛վ մարդ,  
 Խիղճդ դադարեցուր, ցաւերդ փարատէ, ո՛վ մարդ,  
 Մինչ կենդանի ես՝ քեզ դժոխքից ազատէ, ո՛վ մարդ,  
 Աշխարհն իմացիր՝ թերի է, անհաստատ է, ո՛վ մարդ,  
 Բաղդին մի՛ յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս.  
 Կ'դառնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

Ճշմարտութիւնը միշտ յարածամ յառաջ է, յետ չէ,  
Նորան հետեւիք, ով բարեկամ, նա շար աղէա չէ.  
Հաստատ ամենեկին մի թագաւոր գահապետ չէ,  
Բաղդը ապերախա է, որովհետեւ արահետ չէ.  
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս.  
Կ'զատնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

Ո՛ւր տեղ է Աղէքսանդրի նման աշխարհակալը,  
Ո՛ւր տեղ է Դարեհ քաջ Սասանեան աշխարհակալը.  
Ո՛ւր է Արտաշէս Արշակունեան աշխարհակալը,  
Անբաղդ է մեռել զիացի, Ջիւնն, աշխարհակալը.  
Բաղդին մի յուսար, միշտ յաջողակ չի մնար այդպէս,  
Կ'զատնայ մէկ օր, շատ ժամանակ չի մնար այդպէս:

1872



✓ 3 Ո Վ Ի Կ

✓ Արաւոտեան քաղցր հովիկ  
Գնան դէպ երկիրն Ջաւախ,  
Ունիմ մէկ ձերունի մայրիկ,  
Գնան, տես, 'ի գիւղն Կարծախ:

Այնտեղ է ազգս, երամս,  
Քոյր ու եղբայր, բարեկամս,  
Այնտեղ մեռած պապ ու մամս,  
Գերեզմանը մտած են վազ:

Ինձանից շատ բարե արան,  
Երբ դու մօրս լինիս ներկայ,  
Գնան յատկապէս կիլերթա,  
Նա է մեր գիւղի մէջ մէկ թաղ:

Այն թաղի մէջն մեր տունը,  
Քերովք է եղբօրս անունը,  
Ինձ համար կարել է քունը  
Մայրս տրտում ու անծիծաղ:

Հովիկ, Ջիւանուցս լուր տար,  
Թէ հարցանեն ինձի համար՝  
Ասան թէ միշտ ձեռին քնար,  
Ազգի համար կանչում է խաղ:

1874.





## Հ Ա Ր Յ Ե Ի Պ Ա Տ Ա Ս Թ Ա Ն Ի Ք

Հ = Ը Ե

Այն թիվ էր որ թողեց երկնային զահը,  
Աշխարհ իջնելով՝ դարձաւ մեզ նման.  
Գործեալ թիվ հասկացուց մարդկային շահը,  
Եւ կեանքը իմացուց յաւիտենական:

Պ = Գ = = Խ = Ն

Քրիստոսն էր թողեց երկնային զահը,  
Կոյսէն ծնանելով՝ դարձաւ մեզ նման.  
Հողին սուրբ իմացուց մարդկային շահը,  
Եւ հասկացուց կեանքը յաւիտենական.

Հ = Ը Ե

Աստուած ձեռ ստեղծեց նախ, տուեց բարեւ,  
Ուրտից յառաջ եկաւ այն ազգը պարթև,  
Ի՞նչ տեղ է մէկ անգամ դիպել է արև,  
Խնդրեմ՝ այս խօսքերիս շուտ տաս պատասխան.

Պ = Գ = = Խ = Ն

Նախ՝ Ազամն ստեղծեց, ու տուեց բարեւ,  
Քեթիկից սերունցաւ այն ազգը պարթև,  
Կարմիր ծովն էր դիպաւ մէկ անգամ արև,  
Անն քո խօսքերիդ ընտիր պատասխան:

Ի՞նչն է. որ չի լինի ճշտութեամբ հաշիւ,  
 Ո՛վ է, չի ճանաչեր անարգանք, պատիւ,  
 Ու մեկից մեզ մնաց Հայ անունն ազնիւ,  
 Ինչձով մեր երկիրը կ'ասուի Հայաստան:

Պ Գ Ե Զ

Երկընից աստղերն են անհամար, անթիւ,  
 Մէկ է անզգամին անարգանք, պատիւ,  
 Հայկից մեզ է հասել Հայ անունն ազնիւ.  
 Նորանով մեր երկիրն կ'ասուի Հայաստան:

1874



**Բ**ացի քեզնէն բաժին չունիմ աշխարհիս մէջ, ով սիրունի,  
 Բայց՝ ինչէն է, որ քո սէրդ է ինձանից հով սիրունի,  
 Ի՞նչ եմ ասեր որ կ'մնաս խօսքիցս խոռով սիրունի,  
 Իմ խղճալի կեանքիս համար դարձել ես մի բով սիրունի:

Այս ինչէն է օտարներու համար լաւ եմ, քեզ համար վատ,  
 Ինձանից է, թէ՛ քեզանից, արի պարզը խօսի ազատ.  
 Դէմդ կանգնած՝ աղաչում եմ որպէս մի խղճալի աղբատ,  
 Ողորմանալ չես դու երբէք ինձի անգորով սիրունի:

Մողրում եմ լաւ տեղեկացիր, ինձի մի նախատեր ՚ի զուր,  
 Քո այրուած հրիտասարդ երգիչին մի թողներ տխուր.  
 Բերանիցդ ելածներն սրտիս բանում են ինչպէս սուր,  
 Քաղցր խօսալն քեզ համար դարձրել ես սով, սիրունի:

Միշտ տոչորուած ման եմ գալիս վիզս ծռած խղճուկի պէս,  
 Սիրոյդ նետերիցն ընկած եմ թեք կոտրած ճնճուկի պէս.  
 Լացով օրերըս անցնում է որբ մնացած մանուկի պէս,  
 Դառուցել ես իմ աչքերուս արտասուքը ծով սիրունի:

Քեզ համար հաւատարիմ մնում է աշըզ Ձիւանը,  
 Ով որ լինի մեզի ջոկող՝ Աստուած անէ դատաստանը,  
 Բնականից կրակոտ է գիտացիր, երգչի բերանը,  
 Վարուիր խոհեմ կերպով հետը, մի ասներ նզով սիրունի:

1881



## Հ Ո Ղ Ա Պ Ո Ր Ծ

**Պ**արունն անցաւ, եկաւ ամառ,  
Դեռ կ'ընջէս դու, հողագործ.  
Էրբ մէկ ժամանակ կայտառ,  
Է՞ր քնիս արթուն հողագործ:

Անձիդ մէկ լաւ հագուստ չունիս,  
Կարծում ես թէ կորուստ չունիս,  
Օրերդ անցան ասպրուստ չունիս,  
Մերձեցաւ աշուն հողագործ:

Արիւթիւնդ վանեցիր,  
Քեզ պարապ ձմեռ հանեցիր,  
Ո՛չ շինեցիր, ո՛չ ցանեցիր,  
Անհաց ու անտուն հողագործ:

Թշնամիք լոյսդ մարեցին,  
Քեզ միամիտ համարեցին,  
Դաշտերդ օտարք վարեցին,  
Քեզ թողին նկուն հողագործ:

Աղքատութեան յօժարացար,  
Օր ըստ օրէ՛ տկարացար,  
Ինչ՞ու աշղպէս յիմարացար  
Ա՛խ իմ բանիրուն հողագործ:

Ներկայս աշպպէս դու խղճուկ կաս,  
Նորից կամին տալ պատուհաս.  
Թշնամիք կ'ուզեն՝ չունենաս  
Աշխարհը անուն, հողագործ:

Անն քեզ վկայ Արարատ՝  
Որ եղել էս դուն պայազատ,  
Ո՛ւր են որդիքդ բազմաշխատ,  
Անուշիկ սիրուն հողագործ:

Ճանաչեցիր շարն ու բարին,  
Իմացար գործը աշխարհին,  
Մինչև գայ նորոգեալ տարին,  
Սպասէ զարուն հողագործ:

Զուր մի վաճառել լաւ օրդ,  
Զօրացուր հսկայ հզօրդ,  
Պատրաստէ գութան, արօրդ,  
Սերմ ճարէ անուն հողագործ:

Երկիւղ մի կրել դու իսպառ,  
Աշխարհունամ կայ շատ պատահառ,  
Զափով առած հողդ յետ առ  
Ունեւով կանգուն հողագործ:

Եկքով Եւրոպին յարմարէ,  
Դուն քեզ ու քեզ կառավարէ.  
Ամեն գործդ լաւ կատարէ  
Ինչպէս իմաստուն հողագործ:

Նստած որդիքներդ վաղիւ  
Քեզնից պահանջում են հաշիւ.  
Ո՛ւր են քո դաշտերդ անթիւ,  
Լեռներդ անուն հողագործ:

Քեզ կ'ձողրէ բոլոր աշխարհ՝  
Եթէ Յեսս դու միշտ տկար,  
Մինչ Երբ շրջիս մոլոր, շուար,  
Ես դու զգայուն հողագործ:

Սայլդ լծէ, գնան, հանդէս,  
Ծուլութիւնը չէ բարի ծէս:

Աղքատ թշուառ մնաս այդպէս  
Մինչ Երբ, երեքուն հոգազործ:

Քեզ նման մարդ էլ չէր ծնած,  
Միայն քո բաղդդ կոյր մնաց,  
Այս օրըս էլ անցաւ գնաց,  
Եղև իրիկուն հոգազործ:

Շարժիր քո երկայնաբազուկ,  
Բնւ է մնաս այլոց ստրուկ,  
Դեռ կ'քնիս իբրև մանուկ  
Չառանք քո արբուն հոգազործ:

Ջրանը քո բարեկամն է,  
Հաս որում՝ զործոյդ անդամն է,  
Աբազ թոխր քանի ժամն է,  
Եղիք մէկ թռչուն հոգազործ:

1872



## ԸՌ ՍՈՒՋԵՆՍ ՍՐՐԱԶԸՆ ԵՊՐՍՊՈՊՈՍՆ ՊԱՐԶԵՆՆՑ

**Պ**երյարգոյ հայր սրբազան, մեզ համար փայլակ մնաս,  
Անանցնելի, մշտաժառ իբր արեգակ մնաս.  
Մեր Նիրակուան դաւառին բարի օրինակ մնաս,  
Քրիստոսէն նուիրուած հօտիդ օժանդակ մնաս.  
Կամենալովն Աստուծոյ միշտ լուսատու ակ մնաս,  
Մինչ ց'վազեան՝ եռանդիդ մէջը շարունակ մնաս:

Քեզ չ'յարգող չի լինիլ ամենեին, սրբազան,  
Առ հասարակ ամենիս ես դու հոգւով սիրական.  
Վարք ու բարքդ գեղեցիկ, բնութիւնդ դուրական,  
Ո՞վ չի սիրիլ քեզպէտին արդեօք իւր հոգւոյ նման.  
Բոլոր ազգի համոզմանց աշխատակից օգնական,  
Նորա մասին միշտ լուսով փայլուն աշտանակ մնաս:

Եպիսկոպոս, վարդապետ տեսիլ ենք մի քանի հատ,  
Բայց՝ ո՛չ մինը քեզ նման չէ եղել մեզ համեմատ.  
Ամենայն մի գործի մէջ՝ ճշմարտախօս եւ ազատ,  
Յուսամ Աստուած, կ'ապահես միշտ քո հօտդ անարատ,  
Քեզպէմաներուն կ'սպասէ ծերունին խեղճ Արարատ,  
Գործովդ՝ նորա համար անմահ յիշատակ մնաս:

Քեզիպէմներու թիւը աւելանայ ամէլ յամ,  
Մնաս որրիկ հայերուն հաւատարիմ բարեկամ.  
Քեզ շատ օրեր նուիրէ Արարիչը ինքնակամ.  
Հայոց սուրբ ու թափ համար լինիս բարձր մեծ անդամ,  
Ո՞վ Սուքիաս սրբազան, ցեղդ Պարզենաց անթառան,  
Յարածամ գործ կատարող ազգին ընդունակ մնաս:

Փոփոզիդ, բաղձանացդ Աստուծով արժան լինիս,  
Հոգևոր գործերի մէջ միշտ բարի իշխան լինիս,  
Մոգսիսի, Եզիշէի նման պատմարան լինիս,  
Եզնիկի պէս աղանդոց հերքող փաստարան լինիս,  
Հայոց նոր կեանք նուիրող Մեսրոպբայ նման լինիս,  
Մեծին Պարթևեանի պէս դու երկրորդ Սահակ մնաս:

Նախ՝ Աստուած քեզի բաշխէ Վեհափառ Որրազանին՝  
Որ նստած է բարձրագոյն Աթոռը Հայաստանին,  
Լինիս դու աջ բազուկը հողերը մեծ Իշխանին,  
Վիճակը լաւ պահպանես մեր Շիրակայ սահմանին,  
Արարիչէն խնդրում է քո խեղճ նուաստ Ջիւանին  
Համբաւաւոր քարոզիչ, միշտ բարեհաշակ մնաս:

1875





## ԲԱՂԱԲԱՑԻ ԱՂԶԻԿՆԵՐ

**Ե**րկու աղքատ քաղաքացի աղջիկներ  
Նստած մէկ պատի տակ՝ խօսում էին բան,  
նրկունքըն էլ իսկ քաղելու ծագիկներ,  
Անուններն էր նոցա Նունուֆար, Շուշան:

Նրանց հայրերն էին միշտ այլոց ծառայ,  
Մէկը միւսիցը տկար անզգայ.  
Իրարու հոգևոր քոյր էին նոքա  
Ո՛չ թէ արենակից, էին հարևան:

Շուշանն ասում էր՝ քոյրիկ Նունուֆար,  
Մինչ երբ մեանք տրտում, ասանց միխթար,  
Կամ մինչև երբ շրջինք մուտր ու շուար  
Չունենալով մեզի մէկ մէկ սիրական:

Նունուֆարն ասաւ, Շուշանիկ, քեզի  
Եւ կ'նմանցնեմ բարեմիտ հեզի.  
Ա՛ դրամ, անօժիտ թ՛վ կաննէ մեզի,  
Չունինք բնակարան, չունինք օթեան

Շուշանն ասաւ Նունուֆարին կանց հաստատ  
Անունովդ ամեն բանով անարատ.  
Մե՛նք էլ կը որոշենք մեզ նման աղքատ,  
Հայաստանը աղայ շատ կայ մեզ արժան:

Նունուֆարն ասաւ՝ ես չունիմ եղբայր,  
Ունիմ մէկ ձերունի այլոց ծառայ հայր,  
Ի՞նչ անեմ, թէ որ կայ ինձ մէկ խղճուկ մայր՝  
Նա էլ հազիւ ծառայող է այլոց տան:

Շուշանն ասաւ՝ մենք մեզ լինինք վարժապետ,  
Դառնանք քաջ զինուորներ, առնենք ազնի նետ,  
Դառնինք մին մին տղայ, փախչենք նոցա հետ,  
Թող մեզ էլ համարեն քանիսի նմաստ

Նունուֆարն ասաւ՝ քոյրիկ թնջ ասիր,  
Երբէք մի գուռ փակ չի մնայ, սպասիր,  
Դու քեզ փախչողներու գասը մի դասիր,  
Այդ անու՛ից լաւն է՝ մտնել գերեզման:

Շուշանիկը ասաւ, քոյրիկ Նունուֆար,  
Ուղիդ որ դու խելքից ևզած ես տկար,  
Այնուհետև նրան ճվ կառնէ, յիմար՝  
Որ աղջկայ տարին լինում է քսան:

Նունուֆարն ասաւ՝ իմ վարձով տունը,  
Իցէ մէկ օր բանայ բազդիս գարունը,  
Թող կատարեալ հոշակուի իմ անունը՝  
Որբ և այրի մարդն էլ է ինձ բաւական:

Շուշանն ասաւ՝ այլոց ազգից կառնեմ մարդ,  
Թող լինի այլազգի մէկ երիտասարդ.  
Այնուհետև ցնծամ, կ'լինիմ զուարթ,  
Օտարից կ'նարեմ ինձի օգնական:

Նունուֆարը նեղանալով Շուշանից,  
Խտիւ հանեց այս բարբառը բերանից,  
Ասաւ, ինձի համար այլոց իշխանից,  
Լաւ է մէկ ծերունի իսկ հայ մուրացկան:

Շուշանը խարզախ էր, չէր խօսի վճիտ,  
Սակայն՝ Նունուֆարը կարծէր նշամբիտ,  
Երկուսը միասին նստած միամիտ՝  
Մայրը Նունուֆարին-փնտառում էր իբան:

Տալով միւսի մայրը «Շուշանիկ» անուն,  
Կանչեց իւր աղջիկը, տարաւ զէպի տուն,  
Փամանակը մութն էր, գոլով իրիկուն  
Շուտ ունեցան նոցա խօսքերը վախճան:

Յաջող դարձաւ նրանց բաղդի շրջանը,  
Տեղը առաւ իրենց ձգած նշանը,  
Ամուսնացան նուսուֆարն ու Շուշանը,  
Գանձելով ամեն մարդը իւրապատկան:

Այժմեան ամուրթի տես խճմտանքը—  
Հարուստ մարդու փեսայ լինիլն է ջանքը,  
Մեր քաղաքն էլ մտաւ Տփխիսու կեանքը,  
Փողով աղջիկ կուզեն տղայքն հիմակուան:

Մի քանի հին ծէս կան, գիտցողին զանն են,  
Այժմեան հետ անորոշ, սղտոր ու դառն են,  
Քաղաքը փող կ'ուտան, գիւղը փող կ'առնեն,  
Հայոց մէջ կայ այսպէս քանիմ' վատ նշան:

Արի, ուսում, արի դու մեր մէջը հիւր,  
Դեռ ես շատ ունինք կարծիքներ մենք թիւր,  
Մաղադարձներու մէջ մինչ երկու հարիւր  
Մանէթ խօսքն առնելուն՝ կուտան մէկ բերան:

Նա մանաւանդ այժմեան՝ կանայքը բոլոր,  
Ամբն անգամ հանդերձ կուզեն նորանոր,  
Թէ մարդիկը լինին յատուկ թաղաւոր,  
Չեն կարող այս ծախսը տանիլ մշտական:

Օրիորդները միշտ սիրում են հանդէս,  
Իրանց սփոփելու գուարճանք, կրկէս,  
Ամեն աղջիկ կ'ուզէ որ լինի այնպէս,  
Ինքը քնքուշ տիկին, իր մարդն էլ իշխան:

Բայց՝ ճրտից աղքատի աղջկան լաւ որ,  
Անդադար կ'աշխատի ամենահար,  
Ոտքերն համբուրելով իրայ հօրն ու մօր՝  
Հազիւ թէ կ'հազնի մէկ նոր պատմուճան:

Հիմա պարզախօսին կասեն անմիտ է,  
Պահանջած խորհուրդդ երկնքէն գիտէ,  
Գարձեալ՝ ամէն մարդ իր գիտցածը գիտէ,  
Աւելնորդ կ'հաշուեն խօսքերդ, Ջրեան:

1872



## ԸՌ ՎՍԵՄԵՃՈՒՔ ԿՕՄՍ ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔԵՆՆ

Լիանանձար անարատ շնորհաց շահմարան,  
Վսեմաշուք ազնիւ կոմս, քաջդ Լոռու Մելիքեան,  
Իսկ Հայաստան ծնուած ես,  
Հայի հոգւով սնուած ես,  
Անժա՛ն Փրկչի արիւնով,  
Մկրտուելով գնուած ես:

Գեղեցկատիպ պատկերիդ նման այլ տեղ չի լինիլ,  
Ծեղիդ նման շատ երկիր պատուելի ցեղ չի լինիլ,  
Լուսինը իւր աստեղրով քեզ պէս չքեղ չի լինիլ,  
Այնքան ունիս քեզ վերայ փառաւոր շքանշան:

Ամբողջ Ռուսաստանի բարերարն ես, ով հերոս,  
Քեզ վերայ բան գրելու հարկաւոր է Հոմերոս,  
Նախ՝ Կարսը կործանեցիր,  
Տաճիկներին վանեցիր,  
Հայրենեացդ պատիւը,  
Միշտ բարձր պահպանեցիր,

Թշնամիքդ ամօթու քեզի դարձան բարեկամ,  
Բո պատիւդ, քո փառքդ աւելացաւ ամէ ամ,  
Տէրութիւնը քեզ սիրեց զթառատ բարեխնամ,  
Լիովին վարձատրեց տալով բարձր աստիճան:

Քեզանով պայծառացաւ մեր հայութեան անունը  
Ուրախացաւ, բերկրեցաւ բոլոր թորդոմեան տունը,  
Եւրոպացիք հասկացան,  
Զարթեցան, զգաստացան,  
Քեզպէսներով, վե՛հ հոգի,  
Մեր ազգին լաւ իմացան:

Կեցցես, ապրիս, շատ ապրիս, կեցցես Տէրութեան համար,  
Ամեննին դործի մէջ չեղար թերի անկատար,  
Մագուսովդ ցեղովդ որպէս մէկ հաս անդին քար,  
Ամենայն մի դարի մէջ գնահատուող կարկեհան:

Մեր ողորմած Կայսերի հարազատ թիկնապահը,  
Հաւատարիմ ծառայող ունելով Տիրոջ ահը:

Միջոցներ հնարեցիր,

Սղած շարը մարեցիր,

Ինչքան դժուար դործ առին

Բոլորը կատարեցիր:

Անդադար աշխատեցար դիշեր ցերեկ ատանց քուն,  
Երկրորդ Դաւթի որդին ես, Դու Սողոմոն իմաստուն,  
Վարակիչ հիւանդութեան առաջն առար հաստատուն,  
Վտանդից ազատեցիր ողջ նահանգով Հաշտարխան:

Երբեմն էլ բարձրութիւնից խնդրեմ քիչ վար նկատես  
Ստըբուկ ցեղակիցներ ունիս, պիտի ազատես.

Քեզի հասկանալի է,

Քորհուրդս զգալի է,

Տէրութեան մօտ քո խօսքդ,

Գիտեմ, անդառնալի է:

Ինչ որ խնդրես՝ չէ չկայ, ամենին յայանի բան է  
Քնդրէ հօր Արծուին Հայոց հարցը պաշտպանէ,  
Ես Զիւանս խնդրում եմ Աստուած քեզի պահպանէ,  
Ապրիս երկար միշտ խաղաղ, լինիս ազգիդ օգնական:

1878



## Մ Ո Ւ Ն Ե Մ Մ Է Ջ

Հեռացիր, ով պատանի, դուն գինետանից հեռացիր,  
 Հեռացիր ու մի մար, այն օթեանից հեռացիր,  
 Անվայել սուտ ընկերից, վատարերանից հեռացիր,  
 Ճիզուխի ու ցածրահոգի ատենարանից հեռացիր,  
 Մահաբեր թունով լեցուն շտեմարանից հեռացիր:

Մի լինիր, ով բարեկամ, զգուշի վատթար մի լինիր,  
 Գինիին և օղիին պատանդ ու աւանդ մի լինիր,  
 Աշխատիր գիտուն եղիր, անպատիւ յիմար մի լինիր,  
 Միամիտ սոխակի պէս վարդի սիրահար մի լինիր,  
 Խաբերայ և ստախօս կեղծ սիրականից հեռացիր:

Ձէ ուրախ, և չի լինիլ քեզի նման որբ տխուրը,  
 Ըստ որում քո սրտի մէջ ընկել է խմբչքի հուրը,  
 Քանի որ դու սիրում ես առաւել հաղողի ջուրը,  
 Թարց ունեցած զրամէզ՝ մինչ հողիդ էլ կուտաս տուրը,  
 Հեռացիր, ուրացողաց վատ զործարանից հեռացիր:

Միամիտ ես, միամիտ, անի, ի՞նչ անեմ, դու միամիտ,  
 Խաբերայ ուրացողին կ'անաչես, լուս, ճշմարիտ,  
 Ակներև երևում է քո առաջդ խորունկ հովիտ,  
 Թողնելով Արարիչը՝ կ'զաւանեն սուտ Անահիտ,  
 Կռապաշտ ընկերութեան ժողովարանից հեռացիր:

Ո՛վ Ջիւան, սուտ աշխարհը քեզի ապաստան մի անիլ,  
 Ազամին խաբող օձը հողւոյդ պահապան մի անիլ,  
 Անբնական սովընով դու քեզ բնական մի անիլ,  
 Աստուծոյ և բնութեան դէմ հակառակ բան մի անիլ,  
 Մոզոժայ պէս քաղաքից, նեոաղաւանից հեռացիր:

1874





## Գ Ե Ս Ի Գ Ե Ն

Հայի տղայ զգուշացիր, խելք ճարէ,  
Ամեն անգամ այլոց առակ մի լինի.  
Պարկեշտ մարդկանց բնութեանը յարմարէ,  
Ափսոս արի քեզ, խայտառակ մի լինի—:

Մոլիներուն ընկեր խապառ մի դառնայ,  
Անուշիմ, բթամիտ ցանցառ, մի դառնայ,  
Գու վատ սկզբունքներէ պատճառ մի դառնայ,  
Ընկերներուդ շար օրինակ մի լինի:

Վախեցիր Աստուծէ, սվ երիտասարդ,  
Նրան պաշտել պարտաւոր է ամեն մարդ,  
Վախեցիր քո սրտին չ'դիպչի զեղարդ,  
Տիրոջ կամաց դու հակառակ մի լինի:

Պատուէ հայր ու մայրդ, դու ապրիս երկար,  
Մաքրէ սիրտդ, որ է Աստուծոյ տանար,  
Քեզ պէս ստեղծուածին մի կամենայ շար,  
Օրինազանց չնչին էակ մի լինի:

Մարդասպան մի լինի, կ'սպանուիս անշուշտ,  
Գերդաստանդ քաղցած կ'մնայ անկուշտ,  
Ուրիշը կ'լինի քեզ արիւնառուշտ,  
Դու ոչ մէկին արիւնկզակ մի լինի:

Տիրոջմէն կ'դատուի ինչ մարդ որ շնայ,  
Առանց այլայլութեան դժողք կ'գնայ,  
Գող լինողը առանց պատժի չի մնայ,  
Կ'խեղդուես, եկ աւազակ մի լինի:

Մի երդուիր Աստուծոյ անուանը ահեղ,  
Սուտ երդում ուտողը չի մնայ անսեղ,

Ստախօսը պատիւ չունի ոչ մի տեղ,  
Սուտ վկայող, կեանքի ներհակ մի լինի:

Մի ձգեր աչքերդ դրացուդ տանը,  
Ոչ փողին, ոչ կայքին, և ոչ կնկանը,  
Ակամայ՝ ընկերիդ մէկ զահնկանը,  
Յափշտակելու համարձակ մի լինի:

Մէկ օր լուրը կուգայ զատարաններէն,  
Պարտը կ'պահանջուի պարտականներէն,  
Մի զատուի Աստուծոյ պատուիրաններէն,  
Դու այս մասին անընդունակ մի լինի:

Մի պղտորիբ հոգւոյդ պարզահոս գետը,  
Անշուշտ հարուած կուտայ քեզ խղճիդ նետը,  
Անցեալը բաղդատէ ներկայի հետը,  
Բարին թողած շարին մշակ մի լինի:

Մարդը՝ մարդ ճանաչէ հարուստ թէ աղքատ,  
Ծերունու պատիւը պահպանէ հաստատ,  
Լեզուիդ վրայ սանձ դիր, որ չխօսի վատ,  
Սիրտ խոցուող թուր ու դանակ մի լինի:

Սղբայր, արի ուսումի տուր գաւակդ,  
Որ շուտ տեղը հասնի քո նպատակդ,  
Ի զուր մի վաճառեր թանգ ժամանակդ,  
Առանց դործի և անվաստակ մի լինի:

Արբեցող մի լինիր, կեանքիդ փնտս է,  
Հասկացիր, որ պատիւդ միշտ պակաս է,  
Աշխատիր քեզ մարդկանց լաւ կարգը դասէ,  
Վատերուն հետ դու շարունակ մի լինի:

Թղթախաղութիւնից օգուտ չես քաղեր,  
Ի զուր տանդ վրայ մոխիր մի մաղեր,  
Չափով ապրիր, քեզ պարտքի մէջ մի թողեր,  
Փողատիրոջը հպատակ մի լինի:



Աշխատիր շատոշի նշտութեան ետը,  
Մեղքերով մի ճնշիր սրտիդ անմեղը,  
Տեղդ ծանր կեցիր, մի շարժիր բոռը,  
Մի լուկ խօսքով դու թեշալակ մի լինի:

Հողից եղար, դարձեալ պիտի լինիս հող,  
Վերջդ դատաստան կայ, քաշէ ահ ու դող,  
Աշխատի քո ազգիդ ընտիր բաներ թող,  
Մեռնելէդ յետ անյիշատակ մի լինի:

Զիւան, կանչէ սուրբ իշխանաց Իշխանը,  
Որ նա է ողջ աշխարհի պահապանը,  
Հայ ծնունդիս ես հայ մտիր գերեզմանը,  
Դու ազգութաց իբր Վասակ մի լինի:

1874



«ԸՆԴԵՊՈՆ ԻՆՉ ԵՍ ԸՆՈՒԹ ԾԵՄԲԸ ԲՈՒՐՆԱՅԻՆ»  
ԶԻ ԼԻՆԻՍ

Չէրք

Ճարտարապետ, աւագի վրայ օթեան չի լինի,  
Գայլի ձագը կըթելով՝ ընտանի կենդան չի լինի.  
Ապերախտ մարդուն օրը հազար տեսակ պատիւ անես,  
Նա քեզի աշխատակից իբր օգնական չի լինի:

Կայծքաբը կարմիր արիւնների մէջը ներկես հազար,  
Գեղեցիկ զոյն առնելով գիտցիր կարկեհան չի լինի,  
Թուխակը սովորելով վարժութիւնով մի քանի խօսք,  
Խօսելով մարդու նման, նա մարդ իսկական չի լինի:

Հիմա էլ հայերու մէջ կան ազգասէր օրիորդներ,  
Հազարից մէկը կարծեմ Սանդուխտ ու Շուշան չի լինի.  
Աշխարհի բոլոր եղած գրքերը ողջն հաւաքես,  
Շաղուելով մի գիրք շինես դեռ Աւետարան չի լինի:

Փայլում է արևի պէս ճեմարանը Մոսկուայի մէջ,  
Ընդհանուր հայերի մէջ մէկ հատ կազարեան չի լինի.  
Այս զարի մէջն էլ ունինք հայրենասէր իշխանազունք  
Մէկն էլ է ազգը պահող Մուշեղ ու Վահան չի լինի:

Մարդու ծնած երկիրը արքայութեան չափ բազրը է,  
Ո՛չ մի տեղ հայրենիքից բարձր աստիճան չի լինի.  
Ո՛վ Զիւան, դու երգերուդ թէ խառնես էլ մեղր ու շաքար,  
Շիրինի ասածներու նման դուրսական չի լինի:

1880



# ՕՐՕՐՈՅԻ ԵՐԳ

Ննջէ գառնուկ, սիրուն գաւակ,  
Ննջէ օրօրանին մէջը,  
Ննջէ, մի լար, իմ աղանձնակ,  
Սիրուն օթևանին մէջը:

Քնիր, որ մեծանաս, հողիս,  
Հայկական հողով նորոգուիս,  
Վարժապետիդ առջև հողիս,  
Հայ ուսումնարանին մէջը:

Քեզ զօրացնէ բարին Աստուած,  
Միտք ունենաս լայնատարած,  
Լինիս միշտ խաւարահալած,  
Լուսաւորոյ բանին մէջը:

Օրօր ասեմ, սիրուն օրօր,  
Զօրանաս որդի միամօր,  
Մնուցանէ Անմահն հզօր,  
Քեզ իր պատուիրանին մէջը:

Երբ մեծանաս՝ սիրուն մանկիկ,  
Սորվէ հայոց լեզուն քաղցրիկ  
Հարուստ, քնքոյշ, ձոխ, զեղեցիկ,  
Նայիր բառարանին մէջը:

Յետոյ՝ սորվէ լեզուն օտար,  
Կազմէ նրանից զաղափար,  
Գիտուն եղիր ազգիդ համար,  
Խօսէ Հայաստանին մէջը:

Գարնան ծաղիկ նարդոս, շուշան,  
Անթառամ վարդ եւ հողեհամ,  
Հոտով պալատանի նման,  
Ծաղկիբ բուրաստանին մէջը:

Զօրացիբ, հոգւոյս իմ հատր  
Եղիբ հասուն կարմիր խնձոր,  
Լեբ անդամ ազգին հարկաւոր,  
Նստիբ բազմականին մէջը:

Պատուէ ճնողքդ որդեակ,  
Եղիբ խոհեմ ընտիր զաւակ,  
Լեբ հօրդ բարի յիշատակ,  
Իբա գերդաստանին մէջ:

Մի լինիբ թոյլ երբայեցի,  
Շուտ կ'կոտորիս ինչպէս խեցի,  
Սիրէ հայոց եկեղեցի,  
Կեանց ժողովարանին մէջ:

Պարզ եղիբ, մի լինիբ խարդախ,  
Թիտղ պահէ հանդիստ խաղաղ,  
Խօսիբ ճշմարտութիւնն անվախ,  
Ժողովքին, ատեանին մէջը:

Երբ լինիս երեսուն ամաց,  
Լեբ հեռատես, շրջահայեաց,  
Գտիբ մի աղջիկ բանիմաց,  
Հասակով՝ քսանին մէջը:

Կապուէ հետը սիրով նրան,  
Կանչելով Տէրը օգնական,  
Կացիբ հետը մինչ ցվախնան  
Խաղաղ, սուրբ պայմանին մէջը:

Ի՞մ Գարեգին մանուկ աղայ  
Պօքերս ականջիդ օդ արն,  
Մեծցիր այս խրատը կարդա  
Հօրդ երգարանին մէջը:

Աչքդ Ջիւանին եմ յատուկ,  
Բնու է, վերջ տամ երգոյս փափուկ,  
Օրօք ասեմ, քնի՛ր մանուկ,  
Հանգիստ ննջարանին մէջը:

1874



## Ջ Ո Ւ Ր Ջ Ա Ն Բ

**Ս**ր նաւը ծովը ընկղմի,  
Խղճուկ նաւաւարն ի՞նչ անէ,  
Կոյրը միշտ վաղուս է տղմի,  
Նրան լոյս դաժպարն ի՞նչ անէ:

Խլին թէ լաւ ասես թէ վատ,  
Կ'կարծէ իրան համեմատ,  
Սևին սապոն, խևին խրատ,  
Մռին գաղափարն ի՞նչ անէ:

Թանը լաւ է միշտ սովորին,  
Քանց բաժակ թագաւորին,  
Շքից վախեցող զինուորին,  
Հրացան, ասպարն ի՞նչ անէ:

Նեղ տեղից չի գնար լայնը  
Բան չհասկացող ունայնը,  
Երբ մի մարդ չի լսեր ձայնը,  
Խեղճ քնարահարն ի՞նչ անէ:

Չուր է ջանքը, Աշըղ Ջիւան,  
Բոյսը այնպէս է բնական՝  
Փայտին-ոստոտ և անպիտան՝  
Հիւանի սուր տապարն ի՞նչ անէ:

1869



**Ո**վ Ասարծուց վախենում է, փնաս չի տալ իւր ընկերին, Երբ տեսնում է, որ նման է նա իւր ունեցած պատկերին. Աստուածավախ մարդը յատուկ երբ ուզում է զնալ հանդէս Ինչպէս կամենում է իրան, և ընկերին կամի այնպէս, Անձիդ պէս սիրէ ընկերդ, որպէս ասում է Յովհաննէս: Առաքին մարդու համար սա է կրօն և սա է ծէս, Նա գիտէ որ սէրն է ամեն առարկայից կարգը վերին:

Մարդու առաջին ընկերը՝ է իւր ցեղը, ազգականը, Որ խօսում է իրայ լեզուն, է բնութեամբ իւր նմանը, Երկրորդ՝ պէտք է ընկեր ասել ողջ ընդհանուր մարդկութեանը, Որովհետև մի հօրից է յառաջ եկել բանականը, Բայց սէրը ինքն է Արարիչ, կարգի զնոց ամեն բանը, Աստուծոյ կամաց հաճիլն է ճիշտ ամենապատուականը, Աւտղ, չը շիտկուիլ ծուռը՝ կատարեալ չի լինիլ թերին:

Ով երկիւղ չունի Արարչից, և նա չունի խիղճ ու ինամ՝ Այնպիսին է աստուածային հօտի մէջը գայլ յարածամ, Ես չկարծեմ թէ այնպիսի մարդ է պետութեան բարեկամ, Քանի ողջ է, նա փնաս է մարդկային ցեղի ամէ ամ. Այնպէսներուն կարգա քարոզ օրը կուզես հազար անգամ, Աւտղ որ այդպէսներուն էլ նախահայր կոչվում է Ադամ,

Բայց գիտեցիր, իմ սիրելի, բարեպաշտ մարդիկը գատ են, Իսկ դորանք են, որ անխիղճ ու անողորմ մարդոցը կատեն, Այդպէս մարդիկ հազուադիւտ են, հրեշտակաց համեմատ են, Ամեն մեղքից, մուրթիւնից բացակայ են ու ազատ են.

Դրանց այս աշխարհին տուած ամեն օգուտները շատ են,  
Աստուածասէր հարուստները աղքատաց այնպէս նկատեն,  
Ինչպէս մի մայր սպաշապանում է նորամանուկ կաթնակերին:

Յիղճը արդար մարդոյ ծառն է իսկ դալար, ածիւնաճիւղ,  
Նորա ծառի տուած պտուղներն են միշտ կենդանի իւղ,  
Ոստերը միշտ կանաչ ու թարմ հասցնում են պտղատու շիւղ,  
Այսպէս մարդու կեանքն է յատուկ անթառամ փունջ ծաղկեայ  
ընծիւղ,  
Ջիւան, թէ դու հանգիստ կուզես ման արի գտիր մի լաւ դիւղ,  
Վերջապէս ինչ մարդոյ մէջը չլինի Աստուծոյ երկիւղ,  
Այնպէսն է ցերեկից հեռու, շատ մօտիկ մշտագիշերին:

1870







# Պ Ե Ս Ի Պ Ե Ն

**Ո**վ մարդ, թէ որ կուզես առաջ ընթանալ,  
 Ճշմարտութեան մէջը միշտ կեցիր հաստատ,  
 Իսկ թէ կուզես բարի անուն ստանալ,  
 Գիտուններու մտքին լեր զու համեմատ,

Բո ազգիդ մէջ բարի անուն հաստատէ,  
 Բո տկար եղբարցդ վիշտը փարատէ,  
 Հայրենեացդ օգտի համար աշխատէ,  
 Միշտ նրանց օգնութեան կեցիր հարազատ:

Մտքիդ աչքերը բաց, արթուն ունեցիր,  
 Աշխատիր սեփական քեզ տուն ունեցիր,  
 Ուզիդ կրօն, ազգի արիւն ունեցիր,  
 Բո սուրբ եկեղեցւոյն ընծայէ հաւատ:

Մարդկութեան պատիւը, հաշիւը ծանիր,  
 Աշխատիր կոտորուած քրտերը շինիր,  
 Սրտով գոռոզ, բարձրագլուխ մի լինիր,  
 Կարգա սուրբ գրքերից, առ բարի խրատ:

Մի լսեր խրատը վատ սնափառին,  
 Մի կատարեր կամքը մտքով յամառին,  
 Անտերև, անպտուղ, նման չոր ծառին  
 Մի լինիր կրակը ձգելու արմատ:

Քոնարհիր առաջնորդ մարդոյ պատգամին,  
 Սիրէ օտարը և քո բարեկամին,  
 Երբէք մի ուրանար Հայկին, Արամին,  
 Պահէ նրանց վեհ անուններն անարատ:

Աշխատասէր մարդու եղիբ միշտ հլու,  
Մի լինիբ չորացած անպատու ամու,  
Սիրէ աշխատութիւն, ծոյլ մի մնար դու,  
Հոգւով և մարմնով չես մնար աղքատ:

Կարգն պատմութիւններ, հնութեան և նոր,  
Քաղէ յողումները քեզի հարկաւոր,  
Հաղուսող նոր արա, ծախսդ չափաւոր,  
Ո՛չ շնա շռայլ եղիր, ո՛չ անգութ ժլատ:

Անպատակ մի դու կրիբ տառապանք,  
Ուղեղիդ, մարմնոյդ, մի տար չարչարանք,  
Պէտք է խելք ու խոհեմութիւն, աշխատանք,  
Երազով չի շինուիլ գեղեցիկ պալատ:

Անձրևի կաթիլը ցոյց բեղի անն,  
Որ մէկ տեղ բազմացաւ՝ իսկ լիճ կ'դառնայ,  
Մէկէն հարստացող երբէք մարդ չ'կայ  
Քիչը ժողովելով՝ յետոյ կ'ըլնի շատ:

Դադար սիրտ ունեցիր, որ շունենաս վիշտ  
Դու քո համոզմունքիդ մէջը կեցիր ճիշտ,  
Առևտուրդ մաքուր, ընտիր արն միշտ,  
Արծաթի ոսկւոյ տեղ՝ մի ծախեր պողպատ:

Մի ունենար հեշտասէր, վատ սիրական,  
Ամուսնացիր, քեզի չ'կայ բռնարան  
Ամեն բանից աւել փափագիր ուսման,  
Բնութիւնով եղիր ազնիւ, պայազատ:

Միշտ երկիւղալից կնոց, ձմեռ թէ գարուն,  
Ըստորում կայ Աստուած արարիչ անհուն,  
Խղճիդ դիպչող խօսքերը մի լսեր դուն,  
Օտարք թող քեզ կոչեն խուլ կամ ականջատ:

Արթուն կեցիր ոը չը կրես պատուհաս.  
Թոհեմ եղիր, ապրիս երկար, անմիաս,  
Մարդաշէն քաղաքի նման վաղահաս  
Շուտով մի քանդուիր, դառնար անապատ:

Լնց ու ողբն, իբրև աշխոյժ պատանի,  
Կարգն ծնողաց տէր մանկանց երանի,  
Գուցէ այնտից մեղի մէկ լոյս ծնանի,  
Ուղղէ աչքերդ դէպի միշտ Արարատ:

Ջիւանս կ'ցանկամ լսել քո լաւդ,  
Յուանմ Աստուած՝ կ'ըբարձրանայ համբաւդ,  
Նորան դիմէ, նորան ասն քո ցաւդ,  
Ինքն է իրաւասէր և արդարադատ:

1770



**Ո**չ պարտիզատէր, ինչո՞ւ գոհունակ չունի վարդդ,  
Շատ կարելի է բազդը յաջողակ չունի վարդդ,  
Անուանը համեմատ գեղեցիկ չէ երևում ճիշդ,  
Նման շուշանին փայլ ու սպիտակ չունի վարդդ:

Ոստերը չորացեալ, օրը միշտ ծարաւ է անցնում,  
Անձրևի կաթիլ երկնից օժանդակ չունի վարդդ,  
Նարդոս, շուշանիկ, նարդիկ ու շահպրակը տես մէկ,  
Ափսճս, նոցա նման բարի վաստակ չունի վարդդ:

Նա վառուում է, հառաչում է, դա նստած է հանգիստ  
Երբէք, սոխակին սէր ու նմանակ չունի վարդդ:  
Յերեկը արև չէ տեսանում, ամպերի տակն է,  
Իսկ գիշերը խաւար, լուս ու լուսնակ չունի վարդդ:

Բայց դու գովում ես թէ բոլոր ծաղկանց թագուհին է,  
Ո՞ւր է չէ դրած դուխը պսակ չունի վարդդ,  
Լճուր իմ Զիւանուս խօսքերը, ո՞վ պարտիզատէր դու,  
Հասկացիր, նոր օդ ծծելու նաշակ չունի վարդդ:



✓ ✓ **Հ Ա Յ Ա Ղ Ջ Ի Կ**

**Ս**և աչերուդ, աղեղ ունքերուդ մատաղ,  
Մեղբից ու շաքարից անուշ հայ աղջիկ,  
Վարդագոյն այտերդ միշտ գեղածիծաղ,  
Քայլքդ կաքաւի պէս քնքուշ, հայ աղջիկ:

Ի՞նչն է պարանոցիդ ոսկեղէն զարդը,  
Կարծես Անհատին է մասը, մակարդը,  
Պատկերիդ նկատող երիտասարդը,  
Կ'ընի խելագար, ապուշ, հայ աղջիկ:

Գրաւիշ խօսքերով, ո՞վ իմ հոգեհան,  
Բռնի սիրել կուտաս մարդկանց, սիրական,  
Պառլտ տալդ անմեղ աղաւնոյ նման,  
Շարժուածքդ խոհեմ, զգոյշ, հայ աղջիկ:

Վահանի պէս աղնիւ, քեզ բարեկամ կայ,  
Ջրանուս ի՞նչ փոյթն է, թէ մեծ Բարշամ կայ,  
Քանի որ Տիգրան ու Վարդան, Աբամ կայ,  
Օտարը կերևի քեզ փուշ, հայ աղջիկ:

1875



Բ Ա Պ Ո Ս

**Ս**ուրբ Բագոսի ինձի տուած օգուտը,  
 Կ'ուզեմ քեզի յայտնել, ով իմ ազգական.  
 Սատանայի ցեղ է, ով խօսի սուտը,  
 Չեմ ուզի կեղծօրէն դնել բնաբան:

Ինչպէս ճշմարիտն է, քեզ պատմեմ այնպէս,  
 Խմիչքը մեր կեանքը միշտ անուձէ կէս,  
 Ոչ շումերոս գիտէ, ոչ Մեծն Ներսէս,  
 Ամենին հաւասար կանէ դատաստան:

Ձոկ խորհրդով օձին խարուեց Ադամը,  
 Այնպէս ինձի դառաւ իմ բարեկամը,  
 Ախալքալաք տեսայ խմիչքի համը,  
 Երբ ես էի տասն և ութը տարեկան:

Սա իմ բարեկամն էր երգիչ հին վարպետ—,  
 Այս կաթիլը գործ էր ածում արահետ.  
 Երբ ինձ ստիպում էր կարծում էի նեւ  
 Գիտէի խմիչքը-պատճառը մահուան:

Միրելիս լինելով կախարդ, ձեռնածու,  
 Անմեղ բնութեանս շուտ եղաւ հասու,  
 Ասաւ, եթէ խմիչք չ'գործածես դու,  
 Չես ընդունուիր ամենայն մի խրախճան:

Այդ իմ հին ընկերիս ես հաւատալով,  
 Մտանք մի նեղ փողոց, մի քիչ ման գալով.  
 Բարեկամիս հետը ձեռք ձեռքի տալով,  
 Եկանք 'իմասին մէկ հատ մկիտան:

Երբ մտանք այդ շէնքը, կանգնած էր մի մարդ,  
 Երեսը շատ ծաղր, այտերն իրրև վարդ,  
 Նա մեզի բարեկեց ուրախ և զուարթ,  
 Ու ցոյց տուեց մեզի մի ջոկ օթեան:

Նստան այնտեղ, առաջ եկաւ արաղը,  
Գինին, խորովածը, ծիծակը, աղը,  
Տեսայ՝ այդտեղ պիտի կախուէր մեր մաղը,  
Օգուան Բնչ, լռելով նստեցի սեղան:

Գիտցայ ինձ արժան չէր այդ խաղցած զերս,  
Զեռք պարզեցի պատկանելով պատկերս,  
Գինեվանառի հետ ես ու ընկերս  
Քցեցինք ամենս մի-մի ստաքան:

Քմիչքը երբ մտաւ սրտիս սննեակը,  
Մաքիս անկիւններում վառեց կրակը.  
Կրկին ձեռս առայ գինւոյ բաժակը,  
Քմեկ ընկերներիս անելով նշան:

Երկուան երեք եղաւ, տաքցաւ գազաթս,  
Քսակիցս չէր հեռանում իմ թաթս,  
Հանեցի զըզանէս բոլոր արծաթս,  
Կուզէի ծախս անել ի մէջ մի վայրկեան:

Ընկերս բազմել էր աթոռի վերայ,  
Զեռքին ունէր բռնած գիւնով լի կթխայ,  
Կանչեց մօտը հօթը, ութը խաբերայ,  
Իրան խորհրդակից մարդիկ ժրաջան:

Գրանք նստան սեղանի շորս բոլորը,  
Հին զինին պարպել էր, բերինք մենք նորը,  
Բաժակներու մէջը լցին խնձորը,  
Իմ կենացս համար բաց արին բերան:

Իմ կենացս իմում էին նոր ի նոր  
Ես ինձ կ'կարծէի յատուկ քաղցաւոր,  
Այն վայրկենին դարձել էի թագաւոր,  
Աչքիս մէկ կերակէր, ծառայ թէ իշխան:

Վերջապէս, այդ օրը մինչև իրիկուն,  
Ինձանից կը խմէր յիմար թէ գիտուն.

Մութն էր, ամեն մի մարդ զնաց ղէպի տուն,  
Միայնակ Տեսցի ես անօգնական:

Շուտով փախած էր իմ ծանօթ ընկերը,  
Որ ինձ խոստացել էր, թէ զնանք մերը,  
Գինեատունը կեցայ ես այդ գիշերը,  
Ըստ որում չունէի ես ջոկ կեցարան:

Գեանի վերայ ընկած սենեակս սառն,  
Բարձ արի այդ գիշեր գինւոյ տակառն,  
Դուռը վերաս կողպեց զինեկաճառն,  
Վանդակն էի ընկած թռչունի նման:

Կէս գիշեր էր, քնից արթնցայ տխուր,  
Ճրտի պաղութիւնից եղած կցկտուր,  
Եթէ մի մարդ ինձ տար մի բաժակ պաղ ջուր,  
Մօտս արժէք ունէր հազար դահեկան:

Ամբողջ երակներս ելած էին զող,  
Չոր բարերից չէր մնացել կուշտ ու կող-  
Չեղքս ծոցս տարայ, չ'գտայ մէկ փող,  
Սկսեցի անել լաց ու կոծ, կական:

Դուռը բացուեց, երբ լուսացաւ առաւօտ,  
Այն գինեկաճառը եկաւ ինձ մօտ,  
Վերջապէս խնդրում եմ չ'լինի կարօտ,  
Իմ քաշած օրերին ոչ մի բանական:

Առանց փող չ'տուեց ինձի մի արաղ  
Այն գինեկաճառը, աւանդ, շատ աւանդ,  
Քանիմ մանէթ փողս մտցուցի դագաղ,  
Ընկերիս ձեռովը տարայ գերեզման:

Ոգիս գրաւելով այդ անպիտանը,  
Ընտիր աշխատանքս լցրուց գրպանը,<sup>5</sup>  
Այնքան փողս կերաւ այն մկիտանը,  
Կրկին նա ինձանից չեղաւ բաւական:



Այդ տեղից դուրս ելայ դատարկ ջեպ ու ծոց,  
Սրտու՛մս բացուել էր հողար մի կերպ խոց.  
Ուղղուայ այնուհետ դէպի սրճանոց,  
Քէ տեսնիմ իմ ընկերներէս այնտեղ կա՞ն:

Տեսայ որ այդտեղ են, ծագեց արևս,  
Շարժեց երակներս, փոխուեցաւ ձևս,  
Բարև տուի, երբ որ շառան բարևս,  
Մնացի գարմացած ես անպատասխան:

Անխիղճ ընկերներս պատուոյս փոխանակ,  
Վարուեցան ինձի հետ կռուով, հակառակ.  
Նստայ այդտեղ բաւական ժամանակ,  
Երբէք մինը մի սուրճ չ'տեսաւ արժան:

Այդպէս ընկերներից, հեռացիր, ով մարդ,  
Որ են սիրտ աւերող, խարերայ, կախարդ,  
Ծայրայիղութիւնն է մարդուն միշտ թակարդ,  
Չափազանցութիւնից դուրս չի գար լաւ բան:

Զգուշացիր, հողիս, խճէ չափաւոր,  
Որ վերջը խմիչքը քեզ չ'լինի ըր-  
եթէ միշտ հետևար կը մնաս մուրթ,  
Անպատիւ, շուարեալ, մարդ անդատական:

Սիրելի ազգական, լեր, ուշիմ, արի,  
Մի լինիր որկրամուլ, քչին յօժարի,  
Զիւանն եմ կամեցող միշտ քեզ բարի,  
Կը մնամ բեզի հետ հողուով անբաժան:

1875





# Զ Ա Տ Ի Կ

**Ս**իրուն, բարի հայոց զատիկ դու տօներու թագաւորն ես,  
 Քէն հրաշալի տօն շատ կայ, դու ամենից փառաւորն ես,  
 Գալուստդ շատ բարի է, ցանկալի է ամենայն մարդու,  
 Բոլոր տարուայ ամիսներու, օրերու մէջ զօրաւորն ես:

Ձմեռը միշտ քեզանից վախենալով փախչում է սաստիկ,  
 Տխուր զեկտեմբերի, յունուար, փետրուարի դատաւորն ես,  
 Կ'ուզաս չ'ես գար՝ բոլոր աշխարհ կ'ծաղկի ամենայն կերպով,  
 Դրախտի կեդրոնացած բազմապտուղ ծաղկալի ձորն ես:

Միայն աշխարհը չի ցնծայ դու որ գաս, խնկելի սուրբ օր,  
 Դու երկնային զօրաց էլ ուրախութեան տօնելու օրն ես,  
 Բեզի պէս բախտաւոր սուրբ օր չ'կայ ամբողջ տարւոյ մէջը,  
 Դու չորս հարիւր միլիօն ժողովրդի բազդի խնձորն ես:

Հայոց անբաղդ երեքեալ ազգը քեզանից կ'սպասէ նոր բազդ,  
 Բոլոր առարկայից հոգի տուող տօներու հօրն ես,  
 Հազար ութ հարիւր ութսուն մէկ տարի է տօնում ես անխախտ,  
 Զիւանս, այս տարի, մեծ յոյս ունիմ հայոց համար նորն ես:

1881



Վարդ վարդ սսելով կեանքը դնացել է սոխակին,  
 Մէկ օր, մի ժամանակ չէ հասել իւր նպատակին,  
 Ափսոս, հազար ափսոս նորա սիրելի փափաղին,  
 Որ չէ խնայում խղճալու պատանի հասակին,  
 Դարձեալ աւանդ սսեմ նորա երգին, եղանակին,  
 Ունայն սիրովը ծաղրատեղ է դառել թուխակին:

Տասն և մի ամիս համբերելով յոյս է նկատում,  
 Խաւար միգախառն գուտտից լոյս է նկատում,  
 Անմարդ անապատ տեսքից խրախոյս է նկատում,  
 Արմատը փառած ծառից նորաբոյս է նկատում,  
 Վարդին սոխակը սրտովը սուրբ կոյս է նկատում,  
 Կարծում է համեմատ իրաւ արդար արեղակին:

Սոխակը ոչնչացրել է մարմինը փափուկ,  
 Ո՛հ ո՛հ սսելով վարդի սիրոյն դարձել է ծերուկ,  
 Չուր սիրոյ մասին մահը տարել է քանի մանուկ,  
 Ինչպէս սոխակը ճանաչել է իւր սէրը յատուկ,  
 Բայց չէ իմացել թէ կ'սիրէ միշտ փուշը ծածուկ,  
 Սև ազուան էլ նկատում է մէկ ժամանակին:

Այս սիրոյն հաւանող բանական մարդը անօգուտ,  
 Այն մարդու ձեռաց սուսերը, զեղարդը անօգուտ,  
 Անդաստանը, ցանած ցորենը, յարդը անօգուտ,  
 Ինչպէս սոխակի հանդիսանաց զարդը անօգուտ,  
 Թողած պալատանը կ'սիրէ վարդը անօգուտ,  
 Կամ չի իմացել համբաւը կապուտ մանիշակին:

Իզուր սիրոյ վերջը Ջիւանի մարդ կ'ճարէ ցաւ,  
 Օգուտ չի քաղիլ, փասս է, հողին կուտայ գրաւ,  
 Սիրոյ ծովի վերայ չի կարող ժուռ զալ ամեն նաւ,  
 Չեռնտու չէ մեզ աննպատակ սէրը չէ իրաւ,  
 Թիթեռի սէրը ճշմարիտ է, միշտ սոխակից լաւ,  
 Ամբողջ կենօք իւր անձը նուիրում է կրակին:

Փորդ քաղցած, հագուստդ հին, ազատախոս հեղինակ,  
 Քեզ կը յիշեն, մի վախենար, երբ մեռնիս՝ այն ժամանակ-  
 Դու ընդ մաշէ, որքան կուզես, միայն այս առ մտքի տակ,  
 Աշխարհի մէջ մէկ զին ունի, թէ հաստ մտնես, թէ բարակ:

Կեղծաւորը պատիւ ունի, ամենայն տեղ-մշտական,  
 Որովհետեւ խօսելու մէջ, ունի երկու հաս բերան.  
 Այս տեղ մէկին կը բամբասէ, մօտը կուտայ զովասան,  
 Այնպէս մարդուն կը անուանեն ուշիմ, խելօք, ընդունակ:

Ճշմարտախօս լինելովդ միշտ անարգանք կ'ստանաս,  
 Գերշաստանդ խեղճ կը մնայ, բսակիդ տալով փնաս.  
 Քանզի, աշխարհ զիւրն սիրէ, այլոց կ'ուտայ պատուհաս,  
 Շատերն ինչպէս որ կը վարուին զուն էլ եղիր նոյնգունակ:

1879





ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՒ ԳԻՒԳԱԳԻՆ

Քաղաքացին ու գիւղացին իրար հետ,  
Վիճում էին, պատահելով, ես տեսայ,  
Մէկը միւսիցը ստախօս, վարպետ,  
Անում էին մի այսպիսի առարկայ:

Գիւղացին ասում էր, ո՞վ քաղաքացի,  
Առանց մեղի կարօտ կը մեօք հացի,  
Չեղ վերայ վարձ ունի ամեն գիւղացի,  
Չեր ամեն նեղ օրուան կը լինինք ներկայ:

Քաղաքացին ասաւ, ձեզ պէտք չէ յարգել,  
Որովհետև չունիք կարգով մուտ ու ել,  
Առանց փողի չէք տար մէկ ջնջին աւել,  
Ինչո՞վ կըզարժենաս սըտլիկ խարերայ:

Գիւղացին ասում էր, ձեզ մօտ ջրուած է,  
Գիրքն, այնպէս չէք կարդար, ինչպէս գրուած է,  
Խարերայութիւնը ձեզի տրուած է,  
Հաղար անգամ կ'ստէք դուր ընտրուած վկայ:

Քաղաքացին ասաւ, չունի շափ քանակ,  
Եթէ անել ուզեմ ձեզ այդ ու ծանակ,  
Կարգ, կանոն, մարդկութիւն մեզնից կ'ստանաք,  
Միշտ մեր երախտիքը շատ է ձեզ վերայ:

Գիւղացին ասում էր.— այն քանի բուն,  
Սոփորել ենք ձեզնից, ունինք մենք նշան,  
Հարբեցութեան, հայհոյութեան, գողութեան,  
Քաղաքից գիւղերն էլ եղան ենթակայ:

Քաղաքացին ասաւ, քաղաքն է արժան,  
Թաղուհի կոչուելու, ամեն մի վայրկեան,

Գուք չը գիտէք ուսում և ուսումնաբան,  
Մենք կը պատրաստենք ձեզ համար տղազայ:

Գիւղացին ասում էր, լեզուդ լինիր գոց,  
Սուտ խօսելու համար չը գայիր փողոց,  
Այնպէս գիւղ կայ, ոչ թէ ուսուցիչ, գարոց,  
Անգամ չունի մի գրավարժ քահանայ:

Քաղաքացին ասաւ, խաւար էք, խուար,  
Ձեր սկսած բոլոր գործն է անկատար.  
Ամբողջ տարին աշխատում էք անդադար,  
Հանգստութիւնն ի՞նչ է, երբէք չէք զգայ:

Գիւղացին ասում էր, ունինք մենք աւանդ,  
Ձը աշխատող մարդը կը լինի հիւանդ,  
Աշխատելով մարդս կ'ստանայ եւանդ,  
Դանդաղութեան մէջը մեռելութիւն կայ:

Քաղաքացին ասաւ, ես չեմ վարւում խիտ,  
Պատուաւոր մարդոց հետ ունիմ կաց ու նիստ,  
Ոտ ու ձեռս մաքուր, ազրուստս հանգիստ,  
Նստած կրդակումս, բաժինս կ'ուզայ:

Գիւղացին ասում էր, մեծ է անունս,  
Շատ հողեր է չափել ինձ իմ կանգունս,  
Քառասուն մարդուց կը բաղկանայ տունս,  
Համաձայն կ'ընդունին ինձ իրբե արքայ:

Քաղաքացին ասաւ, ո՞վ յիմար դու՞մ,  
Ոչ խաղաղ կեանք ունիք, ոչ մի կեր ու խում,  
Ձեր արդեանց ընտիրը մենք ենք վայելում,  
Ստեղծուած էք մեզի համար դուք ծառայ:

Գիւղացին ասում էր, պարոն բանիմաց,  
Մեր ձեռքերն են տալիս ձեզի մի նոթ հաց,  
Եթէ մենք չը լինիք կ'ընաք քաղցած,  
Ի՞նչ ես մեծ մեծ չիտումս կողուտ, ստատանայ:

Քաղաքացին ասաւ, թրջած ձեռ ու ոտ,  
Ամսով շապիկներդ կը մնայ ադտոտ,  
Տարին մի անդամ չէք առներ մտի հոտ,  
Լոկ հացն ու ապուրը ի՞նչ օգուտ կուտայ:

Գիւղացին ասում էր, մեզի լաւ ծանիր,  
Գիւղացու կեանքին է ցանկանում երկիր,  
Ուսում ենք սեր, մածուն, եղ, անբաշ պանիր,  
Միսը մարդուն շատ ֆուսս է, մեր տղայ:

Քաղաքացին ասաւ, մեզքերդ է անթիւ,  
Թէ թուելու լինիմ, չի լինի հաշիւ,  
Կուպիտ էք, չէք գիտեր մարդկութիւն, պատիւ,  
Վատ գործերդ մի յիշել տար աղամայ:

Գիւղացին ասում էր, դժւք էք անմեղը,  
Հալել ու մաշել էք մեր սրտի եղը,  
Եթէ քաղաքացին գալիս է գեղը,  
Նրան ընդունում ենք, տալով ովսաննայ:

Քաղաքացին ասաւ, արդար և իբաւ,  
Հիւրասիրութեան մէջ գիւղն ունի համբաւ,  
Իմ ասած խօսքերս դու մի անեք ցաւ,  
Մենք եղբայր ենք, ներէ, ես քեզի մեղայ:

Գիւղացին ասում էր, ո՛չ, ո՛չ, մեծ եղբայր,  
Ես եմ ասում մեղայ քեզի, իբրև հայր,  
Գիւղերը ծնունդ են, քաղաքն է իսկ մայր,  
Ներքի շինականիս, ով մեծդ հսկայ:

Ջիւանի, վիճեցին առաջին նուազ,  
Ի վերջոյ յայտնեցին հաշտութեան փափազ,  
Քաղաքը առանց գիւղ, գիւղ առանց քաղաք,  
Չէ կարելի ապրիլ, լսեցինք հիմայ:

1875

ԻՌԻՍ-ԹՈՒՐ-ՉԵԿԸՆ ՊԵՏԵՐՉՄԸ

(1877-78)

Ահանջ արէք ուրախալի և տխուր,  
Երկու հօր պետութեանց պատմութեանը,  
Յայտնեցին իրարու պատերազմի լուր,  
Աղէքսանդր Կայսրը, Համիտ Սուլթանը:

Ռուսաց Կայսրը գրեց Համիտ Սուլթանին,  
«Թոյլ տուր ազատ ազրի Բուլղարիստանը,  
Յօժարացիր դու իմ դրած պայմանին:  
Լա նշան չէ, պատերազմի նշանը»:

Սուլթան Համիտն ասաց, «Աղէքսանդր Արքայ,  
Չեմ կարող կատարել քո հրամանը,  
Քեզ չեն կարգել հողաբարձու իմ վերայ,  
Ինչ մի կարգադրիլ իմ գործ ու բանը»:

Նորից Ռուսաց Կայսրը խօսեցաւ մի ճառ,  
Պետութեանն Օսմանեան գրեց բառ առ բառ,  
«Համոզուիր, վատութեան մի լինիր պատճառ,  
Ափսոս արի դու խեղճ մարդոց արեանը»:

Սուլթան Համիտն ասաց Ռուսաց Կայսրը,  
«Թող փայլի իմ արեւարբու սուսերը,  
Չեմ կարող կատարել ես քո խօսքերը,  
Գիանամ թէ կը գերուի իմ գերդաստանը»:

Ռուսաց Կայսրը ասաց, «մեղքը քեզ վերայ,  
Որ պիտի շատ մարդիկ մեռնին անխնայ,  
Մեր Տէր Արարիչը կանչում եմ վկայ,  
Որ նա է միշտ արդարութեան պաշտպանը»:



Այնուհետև Ռուսաց կայսրը համարձակ,  
Առիւծի պէս, բարձրացրոց աղաղակ,  
Հրամայեց զօրքին մտնել զէնքի տակ,  
ԷՊէտք է որ նուաճեմ ես Տաճկաստանը:

Ողջ Ռուսաստանից միախումբ-զումար,  
Հաւաքուեցան կտրինճ մարդիկ անհամար,  
Դանուբեան կողմի զօրքին հրամանատար,  
Եղաւ նիկողայոս բարձրը իշխանը:

Նորին Մեծութիւնը-Աղէքսանդրը քաջ,  
Լորիս Մելիքովին նա քաշեց յառաջ,  
«Գնան Կովկաս. էլ մի նայիր ձախ ու աջ,  
Հասիր, զոտոզ Տաճկին տուր պատասխանը»:

Հազար ութը հարիւր հօթանասուն հօթ  
Թուին էր, որոտաց բազում թնդանօթ,  
Ռուսք և Օսմանցիք աշխարհածանօթ,  
Քանզարեցին խաղաղութեան պայմանը:

Լորիս Մելիքովնը եկաւ Շիրակուան,  
Քաջ Տէր-Ղուկասեանը նորան օգնական,  
Ախալքալաք ու Ախալցխա, Երևան,  
Յանձնած էր Լորիսի իշխանութեանը:

Մեծ իշխան Միխայիլ—արքայորդին,  
Բոլոր զօրքի գլխաւորն էր առաջին,  
Լորիս Մելիքովին ասելով կրկին,  
«Ա՛ն բանակդ, անցիր Տաճկաց սահմանը»:

Անապարեց Սուլթան Համիտն նոյնզունակ,  
Ղրկեց ամեն նահանգ նա հրովարտակ,  
«Ի՛մացիր, պատրաստութք, առէք սուր, նիզակ,  
Թո՛ղ ձեզանից սարսի մեծ Ռուսաստանը»:

Ողջ նախարարներուն կանչելով ատենն,  
Տուեց ամեն մէկին հաստատ հրաման,—  
«Եթէ լինիք դուք հայրենեաց դաւաճան,  
Թող ձեզ պատժէ Մուհամմէդի Ղուրանը»:

Մուլթան Համիտն ասաց, քանջ Օսման փաշա,  
Հայրենեացդ հաւատարիմ պաշտօնեայ,  
Ա՛ն քո բաժին զօրքդ, զնա՛ն Պլենա,  
Թող Մուխտարն էլ երթայ զէս շայաստանը»:

Մուխտար փաշան իւր զօրքերով միասին,  
Շտապելով հասաւ քաղաքը Կարին,  
Պատուէր տալով Ղարսայ միջի զօրքերին,  
Ամրացուց Բայազիտ և Արղահանը:

Լորիս Մելիքովը կանչելով Աստուած,  
Անցաւ Գարեգետը անվախ. անկասկած,  
Տաճկաց սահմանապահ վաշտը մոլորուած,  
Բնաթաթախ յանկարծ ընկաւ կապանը:

Լորիս Մելիքովը մտաւ Ծիրակը,  
Բարձրացուց սուրբ խաչը և զրօշակը.  
Ճիշդ զէպի Արղահան քաշեց բանակը  
Դեզիլի հետ, առիւծասիրտ Գէյմանը:

Երևանեան զօրախումբն էլ նրբամիտ  
Անցաւ Տաճկաց հողը երեսը ժպիտ,  
Առանց պատերազմի բերդով Բայազիտ  
Առաւ քաջ հայազգի Տէր-Ղուկասեանը:

Կարինից դուրս եկաւ արի Մուխտարը,  
Քառասուն հազար էր զօրաց զումարը,  
Սկսեց բանջընիլ խելքը, հնարը,  
Իսմայէլ փաշան էր իւր «գնականը»:

Լորիս Մելիքովը գրեց մի նամակ  
Գէյմանին, Դեվիլին, տալով օրինակ,  
«Քաջեցէք բանակը, ազատ, համարձակ,  
Կանգնէք Արդահանու դէմ յանդիմանը»:

Քաջ սպարապետը հասաւ օգնութեան,  
Իւր կտրիճ զօրքերով եկաւ Արդահան,  
Հոգիտո Քարբէէլ հրեշտակի նման,  
Պիտի կարէր Տանկաց զօրքի պատանը:

Մի մութ անձրևային գիշեր ժամանակ,  
Կարծես երկնքիցը թափուում էր կրակ,  
Երկու կողմից արձակուում էր շատ զնդակ,  
Կը գոռար թնդանօթ և հրացանը:

Լորիս Մելիքովին կտրու համբերը,  
Հնարներ մտածեց ամբողջ գիշերը,  
Դեռ լուսը չբացուած Ռուսաց զօրքերը,  
Տիրեցին քաղաքի բերդ, պահարանը:

Այդ տեղ Ռուսաց զօրքը ստացաւ համբաւ,  
Մինչ Սուլթան Համբիտին պատճառեց մեծ ցաւ:  
Մանր, խոշոր հարիւր թնդանօթ տուաւ,  
Արդահանի բերդի քաջ պահապանը:

Լորիս Մելիքովը գրեց այս թերթը,—  
«Պէտք է շուտ պաշարել անառիկ բերդը,  
Արդահանը առանք, Կարսինն է հերթը,  
Թճդ ցնձայ Մեծ Կայսրը միահեծանը»:

Դարձան բոլոր զօրքով Կարսի վիճակը,  
Պաշարեցին բերդը, առին կրակը,  
Ոչինչ մի բան չարու այնքան զնդակը,  
Կարծես թէ պողպատին դիպնէր խթանը:

Մի օր Տաճկաց մի գունդ իբր քաջարչաւ,  
Առանց մտածելու բերդից գուրս ելաւ,  
Ամբողջիցը քառորդն հագիւ յետ դարձաւ,  
Գերեզմաննոց դարձաւ Հարամ-Վարդանը:

Լորիս Մելիքովը լուր տուաւ հաստատ,  
Քէ Մուխտարը կուգայ գորութիւնը շատ,  
Ջոկնց իւր գորքերից քաջ ու անարատ,  
Ուղղեց զէպի Ջիվին իւր արշաւանը:

Ուրախ էր Մուխտարը, լաւ էր, չէր տխուր,  
Կարձեա յաղթութիւնը իւրն էր այն աւուր,  
Պատրաստեց մարտկոցներ, պատնէշներ ամուր,  
Ջիվին ասուած տեղն էր պատասպարանը:

Մուրններու փայլը շատ էր տրեխից,  
Արճիճն առաա կարկախից ու անձրնից  
Ռուսը ներքնից, թուրքը վերնից,  
Ամենը ցոյց տուեց իւր դաւադանը:

Մեծին չը լսելով, Գէյմանն անհամբեր,  
Բազում կարիճներու եղաւ գլխակեր.  
Գէմ տուեց խեղճ գորքին սարը դարբիվեր,  
Պատրաստեց շատ մարդկանց նա գերեզմանը:

Այդ օրը թուրքերին չ'եղաւ մեծ վնաս,  
Բայց Գէյմանի գունդը կրեց պատուհաս,  
Լորիս Մելիքովը չուներ այդտեղ մաս,  
Պակասութիւն չ'եղաւ իրա անուանը:

Երթալով շատացաւ զօրքը Օսմանեան,  
Ամեն տեղից մեր զօրքերը յետ դարձան,  
Տարածուեցաւ Ռուսաց զօրքերի վրան՝  
Ղարայեալից բոնած մինչ Փալտրովանը:

Արիւնք կը վազէր խեղճ մեռածներու,  
Հսկայի հասակով անդ պառկածներու,  
Վիրաւորուածներու և ընկածներու,  
Սար ու ձոր էր բռնել լաց ու կականք:

Տէր Աուկասովից էլ տեղեկութիւն տանք,  
Յաղթեց, չը յաղթուաւ, առաւ զոգասանք,  
Երեք հազար տունը բերեց անվտանգ,  
Ալաշկերտից հասուց նա Երևանը:

Մուխտար փաշան բերել տալով զերաններ,  
Պատրաստեց պատնէշներ, փորեց դարաններ,  
Կանաչ ու սպիտակ շարեց վրաններ,  
Ալաճայ սարն արաւ նոր իջևանք:

Գնաց Տէր Աուկասովը քրտերին վանեց,  
Հայերու վրէժը նրանցից հանեց,  
Շէյխ Զալալէղդինին տուեց-սպանեց,  
Շան պէս սատակեցաւ այն շար գաղանք:

Ազէքսանդրապոլ էր Մեծն Փոխարքայ,  
Այդ տեղից հսկում էր բանակի վերայ,  
Ողորմած քոյրերին յանձնել էր շուտ նա,  
Հիւանդներու հոգսը դեկ ու զարմանք:

Միշտ Ռուսաց զօրքը յառաջ կը գնար,  
Յարձակուելով Տանկաց վերայ կընթանար,  
Քէև յաղթութիւնը անորոշ մնար,  
Բայց իրարուց կը խլէին մէյդանը:

Եկաւ Շելիսիլիկեան—թուրքաց զահիճը,  
Ալիաղեանը՝ որ ծամող էր արճիճը՝  
Հասաւ Գաղստանու հերոս, կարիճը,  
Հազարեան, որ բռնեց այն Շամիլ—Թանը:

Լորիս Մեղիքովն ստացաւ ցնծում,  
Բայց Մուխտարի սիրան էր, սաստիկ, յոյժ տրտում,  
Վերոյիշեալները զօրքերով բազում,  
Եկան՝ փոխուեց կուռի բուն կերպարանը:

Գովելի զօրքերի զգաստութիւնը,  
Չը տեսնուաւ նրանց նուաստութիւնը,  
Անթերի էր Ռուսաց պատրաստութիւնը,  
Ամեն բանին ունէր ջոկ կարաւանը:

Լորիս Մեղիքովը գրեց Մուխտարին,  
«Փոսերից զուրս արի, տես չարն ու բարին,  
Ի՞նչ ես ելեր Ալաջայի կատարին,  
Դարձել ես մարդատեաց, բուռի նմանը:

Մուխտար փաշան այս խօսքերից նեղացաւ,  
Ջակեց զօրքից մի մաս՝ սարից վայր իջաւ,  
Գըզըլթափա առուած անզըն էլ առաւ,  
Բայց չգիտցաւ Ռուսաց խօհեմ շրջանը:

Համարեա մարեցաւ Մուխտարի մութը,  
Երբ լսեց որոտում տեսաւ մեծ ծուխը,  
Ելած էին Ալաջայի գլուխը,  
Սեպուհ Շելկովնիկեան, քաջ Լազարեանը:

Ռուսաց զօրքեր, զօրապետներ բարեպաշտ,  
Փախուցին Մուխտարը—թշնամին անհաշտ,  
Զօրքով զօրապետով տասն և ութը վաշտ,  
Տանկաց զօրքը ընկաւ Ռուսաց ուռկանը:

Երբ լսեց—տանուաւ լեռան Ալաջայ,  
Երեսը շուռ տուեց Իսմայիլ փաշա,  
Յետնից Տէր Ղուկասով, զօրքերով հսկայ,  
Շատ քրդեր ուղարկեց սպանդարանը:

Միացան իրար հետ երկու հրամանատար,  
Գեյմանի հետ, Տէր Առեկասով զօրավար,  
Կալ ունէր կասելու զոտողըն Մուխտար,  
Դէվէթոյուն կանգնեց փախստականը:

Նորից սկսուեցաւ մեծ ճակատամարտ,  
Կարձեա զերանդուորը ճիշդ քաղոււմ էր արտ,  
Այդ տեղ էլ յաղթուաւ Տաճիկը հպարտ,  
Ռուսաց ձեռքը մնաց ամբողջ Բասևանը:

Բազուայ զունտն առած՝ Գեյմանը անձամբ,  
Ատիղիէ Ամբոցն առաւ յարձակմամբ,  
Յաղթութիւնով դարձաւ իւր տեղը սղջամբ,  
Հնչեց ազատութեան նուագարանը:

Լորիս Մելիքովը, Լազարեանն հմուտ,  
Յատուկ հանգամանքից քաղեցին օղուտ,  
Պաշարեցին Կարսը, թափեցին կարկուտ,  
Թուրքը նեղն ընկած չէր այս աստիճանը:

Քրոխտ Լազարեանը անյաղթ, անվեհեր,  
Տասներկու ժամ աշխատեցաւ անհամբեր,  
Բոլոր ամբոցները առաւ այդ զիշեր,  
Տիրեց փոքր Ատիայի մասանը:

Բազոււմ զօրքեր ու փաշաներ Օսմանեան,  
Գերի ուղարկուեցին դէպի Ռուսաստան,  
Երեք հարիւր թնդանօթ, շատ հրացան,  
Մտաւ Մեծ Կայսերի շահմարանը:

Նիկոլայ Դուբսըն էլ թուրքերին վանեց,  
Վերջ ՚ի վերջոյ Պլիննան էլ կործանեց,  
Տաճկաց Պիպօդ հրացանին խափանեց,  
Ռուսաց գործարանից ելած Բերդանը:

Վեհ Լորիս Մելիքով քաջ գեներալին,  
Յանձնուեցաւ Կարսայ բերդի բանալին.  
Սուլթան Համիտն զիջաւ Մեծ ինքնակալին,  
Պատերազմը գտաւ իրա վախճանը:

Սլաւեան ցեղերուն լցուաւ փափագը,  
Մանաւանդ Բուլղարաց՝ վառուեց ճրագը,  
Ութ ամսոյ շտփ էլ Կարին քաղաքը,  
Ընդունեց Ռուսաց նոր դատաստանը:

Կեցցէ Ռուսաց ազգը, կեցցէ յարածամ,  
Նա է ընկած խեղճ ազգերուն բարեկամ.  
Արարիչը պահէ միշտ ճոխ ու փարթամ,  
Ռուսաց թագաւորը ու զանձարանը:

Ջիւան, հաւատալով, զիացիր յատուկը,  
Մեծանալով մարդ կը դառնայ մանուկը,  
Բուլղարներին ազատող բաղուկը,  
Մի օր էլ կազատէ հայ ազգութեանը:

1879







# ԿՈՐՈՒՍՏ

**Մ**ի գեղեցիկ տեսայ և կորուցի շուտ,  
 Մբտիս մէջը կրակ մնաց, ցաւում եմ,  
 Մտքումս տղուեցաւ կերպարանքը զուտ,  
 Մէկ քաղցր յիշատակ մնաց, ցաւում եմ:

Քաղուհի էր տեսայ շարժումից, ձևից,  
 Կարծես լոյս էր՝ ծնունդ առած արևից,  
 Միտքս վաղեց այն սիրունի ետևից,  
 Իբր սուզուած նաւակ մնաց, ցաւում եմ:

Ջրան, կը դալարի կեանքիս ծաղիկը,  
 Եթէ մէկ էլ տեսնեմ այն գեղեցիկը,  
 Ծնունդ առաւ սակայն բաղդիս աստղիկը՝  
 Ամպի ստուերի տակ մնաց, ցաւում եմ:



## ՀԱՅՐԵՆԻՔ

**Ն**րբ որ լինի գարնանամուտ, նոր գարուն  
կը բազմանան վտակներդ, Հայրենիք,  
Շարիշար ցնծութեամբ երգով զուարդուն,  
Շարժում են բանակներդ Հայրենիք:

Օղբդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,  
Պէս պէս գունով ծաղիկներդ դալարուն,  
Չեն դադարեր աշխատելուց օրն ի բուն  
Քո հարազատ մշակներդ, Հայրենիք:

Մարդիկ կուգան քո սարերդ ման գալու  
Իբր որսորդ եղնիկներդ որսալու,  
Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարգալու,  
Քո սզազկեաց սոխակներդ Հայրենիք:

Դու դրախտն հո, քեզի սուրբ գիրքը վկայ,  
Քո միջիցդ անմահութեան հոտ կուգայ,  
Հազար ափսոս, մարդուց թափուր են հիմայ  
Քաջ բազմամարդ վիճակներդ հայրենիք:



7

Հ Ա Յ Ե Ր

Ստարներու լաւ բաները սովորինք,  
Ոչ թէ վատ գործերուն հետեւներ, հայեր,  
Զիցցէ ուղիղ ճանապարհից մուտրուինք,  
Կրենք ամեն տեսակ նախատինք, հայեր:

Պահպանենք մեր լեզուն, մեր եկեղեցին,  
Մեր սովորութիւնը, ծէսը առանձին,  
Պապերից մնացած գանձ են թանգազին,  
Կը վկայեն երկիր ու երկներ, հայեր:

Մարդկութեան մէջ մենք էլ ջոկ ազդ ենք, զատ ենք,  
Մեր լեզուով խօսելու համար ազատ ենք,  
Մեր գոյութեան ֆլուս գործերը ատենք,  
Որ չը լինենք կաղ ու ծուռ շինք հայեր:

Մեր հոգին փրկութեան կարօտ չէ հիմայ,  
Մեր մէջը քարոզող և խրատող կնայ,  
Օտարը թող մեզի հացի դուռ ցոյց տայ,  
Քրիստոնէութիւն մենք ունինք, հայեր:

Զիւանի, պապերս կեանքերն են տուել-  
Որ իրանց կրօնը պաշտեն անարգել  
Մինչև որ մեզ այս օրուան են հասցրել  
Թափել են շատ արիւն ու քրտինք հայեր:



## ՔԵՑՐՈՂԼԻ

**Է** ի միտքս եկան հայոց քաջերը,  
Այսօր քաջ Վարդանը մօտ է հարկաւոր,  
Զեռերն ատած ուրախութեան խաչերը,  
Հայոց խրախճանը մօտս է հարկաւոր:

Արտաշէան էր հայոց մեծ սարի նման,  
Նա անմաշ սիրտ ունէր լեռ քարի նման,  
Հերձող թշնամեաց ոչխարի նման,  
Անվախ Գայլ Վահանը մօտ է հարկաւոր:

Ջիւան, կանչէ քաջ Վարդանը, Սմբատը  
Գովէ նրանց անրիժ և սուրբ հաւատը,  
Պարթև Արշակ և Վաղարշակ, Տրդատը,  
Երուանդեան Տիգրանը մօտս է հարկաւոր:



## Կ Ա Ր Ծ Ի Ք Ն Ղ Ո Յ

**Ե**րեք քան կայ ազգին պահող հաստատուն,  
Իմ կարծիքով, կրօն, լեզու, հայրենիք.  
Այդ երեքով նա կը լինի մնայուն,  
Քէկուզ զլիւն անցնի լիոնաչափ ալիք.

Կրօնն է որ ազգի՝ իսկ հոգարարձու,  
Հայրենիքն է նրա տունը ա՛նարկու.  
Երբ որ ունի իրան սեփական լեզու,  
Նա չի դառնար օտար ազգաց խաղալիք:

Անհայրենիք ազգն է մոլորուած թռչուն,  
Որսորդից հալածուած ման կուզայ անբուն.  
Քէ որ չունի անկախ կրօն, իր լեզուն,  
Շուտ կը կորչի օտարաց մէջ անկարծիք:

Ջիւան, այդ երեքը մեզ օգնական են,  
Ազգի զոյութիւնը միշտ կը պահպանեն.  
Հայրենիքը, լեզուն երկնող քան են,  
Բայց կրօնն է աստուածային մի գաղտնիք:



Ն Ո Ր Տ Ա Ր Ի

**Պ**ու ձեզ ժողովուրդին նոր օր, նոր կեանք բեր,  
եւ գործերին կենդանութիւն, նոր տարի  
Վանկ զաժան թանգութիւնը տնտեսը  
Տուր արմտեաց էժանութիւն նոր տարի:

Աշխատիր որ խաղաղ պահպանես աշխարհ,  
Բոլոր մարդկութիւնը միահաւասար.  
Փառք ու պատուով քեզ ձգենք ճանապարհ  
Եթէ տունք հաւանութիւն, նոր տարի:

Լաւ եղար, իսկապէս կպատուենք, այո,  
Պարգևներ կատանաս միշտ նոր ի նորոյ  
Այնքան բարի եղիր անցմանէդ յետոյ,  
Որ քեզի տանք երանութիւն, նոր տարի:

Հազար ութն հարիւր ինըսունը լրիւ  
Հին տարին վերջացաւ էլ շունի հաշիւ.  
Այս յունուարի մէկից քեզ պէտք է պատիւ  
Քանզի քո է իշխանութիւն, նոր տարի:

Չորս հազար տարի է կապրինք աննկուն  
Կրելով մեզ վերայ ազնիւ հայ անուն  
Նախնիքներդ նման դուն էլ հայերին  
Քնդրեմ ցոյց տաս պաշտպանութիւն նոր տարի:

1890



**Ո**վ վնորդ արևելեան, բոյս կենդանութեան,  
 Խրախոյս հայկական ցոյց տուր քո տերև.  
 Կը սպասէ քո զարնան ծառայ և իշխան,  
 Քեզնից ողջ Հայաստան խնդրում է պարզև:

Սոխակ սիրաբանդ է երգիչ տանդ,  
 Խնդրում է արժանդ լոյս բուրաստանդ.  
 Կանչէ այգեպանդ, ուղղէ շրջանդ,  
 Բաց քո պատուհանդ, թող ծագէ արև:

Հերիք մնաս տխմար, մարդկանց անյարմար,  
 Եզիր շքեղ գոհար, քանի կաս դալար.  
 Ճարէ նոր զաղափար, մի մնար խաւար,  
 Աշքերդ արա դամբար, չը մնայ կեղև:

Սոխակին հաւանող, միշտ ծափ հարկանող,  
 Քեզի կոյս պահպանող և քաջ անուանող,  
 Ազուսին սպանող, մօտը շտանող,  
 Լեր զարուս նմանող, գտիր նորածև:

Ջիւանուս իրատես և համեմատես,  
 Որ անուն հաստատես, վէրքս փարատես,  
 Կեանքիս հարազատ ես, բոյս անարատ ես,  
 Նորատունկ արմատ ես, բեզ պէտք է անձրև:



Վերջացաւ մեր այգին, վերջ եղաւ ու վերջ  
 Անտէրութեան ձեռքից աւերակ մնաց,  
 Երբ տուններն սկսան մալու ստերջ,  
 Միանգամայն անջուր, անվտակ մնաց:

Հինդ հարիւր տարւոյ շափ չզալով անձրև,  
 Մտերը չորացան ծծելով արև,  
 Ինքը բոլորովին բնաջինջ եղև,  
 Միայն լուկ անունը յիշատակ մնաց:

Ջիւան, խնդրէ նա քաշէ պատուհասը,  
 Ո՛վ որ հասուց այս մեր այգին փասը,  
 Աստ և անդ ցրուելով ամեն մի մասը,  
 Մնացածն էլ այլոց ձեռի տակ մնաց:





## Գ Ա Ր Ո Ւ Ն

Պարուն դու գարուն, սիրուն եղանակ,  
Շտապիր արի, քո հոտիդ մատաղ,  
Թող այգուժ բացուին վարդ և մանիշակ,  
Սոխակը երգէ գարնանային տաղ:

Արի ո՞վ գարուն, թմրած բնութեան  
Զարթեցրու քնից, նորից տուր հողի,  
Ամեն գաշտ ու ձոր, սար, բլուր ցնձան,  
Թող մեր աշխարհը վերստին ծաղկի:

Պառաւ ձմեռը մեկ ձանձրացրուց,  
Երկար մնալով մեր երկրում հիւր,  
Փշելով ցուրտը նա սառեցրուց,  
Մով, լճեր, գետեր, առուակ ու աղբիւր:

Սպիտակ սառն վերմակի տակից,  
Գլուխդ ցոյց տուր, սիրուն ձնծաղիկ,  
Քաղցր զեփուռը թող քո բամակից,  
Մեկ բերէ նոր լուր գարնան աւետիք:

Դու արքայութեան տիպար ես գարուն,  
Զմեռն է դժոխք և կենաց տանջանք,  
Ուրեմն բացուիր ուրախ զուարթուն,  
Տուր հողին, ջրին նոր հոգի, նոր կեանք:



## Ք Ե Օ Ռ Յ Ղ Լ Ի Դ Ս Ք

**Ք**նաց վրէժ առաւ չոչէ արքայից,  
Հայոց արքայ քաջ Տրդատը, ձւր տեղ է.  
Բասն երկու կանգուն զետի վրայից  
Մէկէն թռչող Վարազդատը ձւր տեղ է:

Գայլ Վահանը պարսից զօրքին կրակեց,  
Հնարներ բանցրուց ու խայտառակեց.  
Տաք շամբուրով Մեհրուժանին պսակեց—  
Բագրատունի քաջ Սմբատը, ձւր տեղ է:

Նա այլոց զօրքերից առնում է զրաւ,  
Այլոց զբանում էր, ինքն էր անզրաւ,  
Բանի անգամ Հոռոմայեցոց զէժ զրաւ,  
Այն Տիգրանեան Միհրդատը ուր տեղ է:





Ե Ր Պ



**Մ**թնեց երկինքը, օղբ վատացաւ,  
 Սև սև ամպերը դուրս եկան հանդէս,  
 Անձրևի երկնից գալը շատացաւ,  
 Գետեր, առուակներ բացին ասպարէզ...

Հողը կը փչէ սառն հիւսիսից,  
 Հասա կաղնի ծառեր կձգէ գետին,  
 Որոտմունք, կայծակ ձերուկ Մասիսից,  
 Զոհ են պահանջում կրկին ու կրկին...

Մարդ թէ անասուն, թուշուն թէ գազան,  
 Փախել պահուել են իրանց խորշերում,  
 Երկակենցազը անվախ, ան, սասան,  
 Երկդիմի մտքով միշտ խաղ է կանչում:

Երջանիկ գորտը անձրևոտ տարին,  
 Անփնաս կապրի չորում թէ ջրում,  
 Վայ դայ միամիտ ձկնորի գլխին,  
 Զրից դուրս ելան, մահէ սպառնում:



# Մ Ա Ր Դ Ը

**Բ**ոլոր մարդկանց բարիք ցանկացող է սուրբ, մեծ անուն մարդը,  
Փափուկ սիրտ կունենայ անշուշտ բարեսէր, զգայուն մարդը,  
Ասում են թէ սիրուն հողի կունենայ քաջ, սիրուն մարդը,  
Առաքինի վարուք բարուք, հոգեպէս դարդարուն մարդը:

(Իրեն հայրենի կրօնը չի փոփոխել, հասուն մարդը,  
Նա և ուսում առած փորձի բովից անցած գիտուն մարդը:

Իրանց ազգից հեռացող և բաժանւողը տղէտներն են,  
Խաբուսիկ յոյսերով այլոց կլանւողը տղէտներն են,  
Հասարակ, մասնաւոր քամուց տատանւողը տղէտներն են,  
Մոլոր, մութ, ծուռ ճանապարհում գտանւողը տղէտներն են:

(Իրեն հայրենի կրօնը և այլն:

Գիտուններից մոլորուած մարդ, պատահում է հազարից մէկ,  
Նրանց խմբից տոչորուած. մարդ պատահում է հազար մէկ,  
Հասուն խելքով զոտրուած մարդ պատահում է հազարից մէկ,  
Օտար կեանքով խմորուած մարդ պատահում է հազարից մէկ:

(Իրեն հայրենի կրօնը և այլն:

Տգէտ, հետուն շտեմնող մարդը կխաբուի հողի յոյսով,  
Իրեն արիւնը, հաւատը կծախէ լսկ փողի յոյսով,  
Դրախտից զրկւաւ Ադամ խորամանկ խաբողի յոյսով,  
Հազար վայ այնպիսի մարդուն, որ ապրում է գողի յոյսով:

(Իրեն հայրենի կրօնը և այլն:

Ջիւանի պինդ պահէ հօրդ քեզի թողած աւանդը սուրբ,  
Սիրէ հոգուդ նման քաղցր դու ազգային ետանդը սուրբ.  
Յիշէ միտդ բեր Սահակ մեծ Պարթևի անգին տաղանդը սուրբ,  
Փոխել մի ուրիշի առողջ գազանի հետ հիւանդը սուրբ:

(Իրեն հայրենի կրօնը չի փոփոխել, հասուն մարդը,

Նա և ուսում առած փորձի բովից անցած գիտուն մարդը:

Գեա զիշեր է, առաւօտ չէ, հանգիստ քնիր, իմ դաւակ,  
Ահա ծիծա առ բերանդ՝ եթէ ունես դու փափաղ.  
Թէև դրսից քո ականջիդ դիպչում է սուր աղաղակ,  
Գնիր, քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատար որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Դու քոյրերիդ մի մտիկ տալ, նրանք մեծ են, գառնուկս,  
Օրօր սասմ՝ դեռ դու քնիր, որ մեծանաս, մանուկս,  
Ահա դրի զլիւիդ տակը բարձի տեղակ բազուկս,  
Հանգիստ քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատալ որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Դրացու չար երեխայքը քեզ գոչում են դուրս արի—  
Բայց չեմ թողալ որ դու գնաս հանդիպես պատահարի,  
Ոչ ոտք ոտք ունիս և ոչ լեզու պարկի տեղդ, դադարի,  
Անհող քնիր, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատալ որ խաբում են, ոչինչ չունին քեզ տալու:

Օրօրօքքիդ մէջ քեզ պինդ կապեմ, չլինի թէ գլորես,  
Կամ թէ ընկնես գետնի վրայ, քեզ փնասես մոլորես,  
Մտիր Մորփէոսի գիրկը մինչև լեզու սովորես,  
Այժմ շուտ է, սիրուն մանկիկ, ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատալ որ խաբում են, ոչինչ չունեն քեզ տալու:

Բացի կաթը դու չես կարող ջոկ բան ուտել, քաջ աղայ,  
Բերանումդ ասամ չկայ, երեխայ ես, երեխայ,  
Ինքս կասեմ քեզի զարթիր, երբ բարով ատենը գայ,  
Դեռ հիմայ լոյսը չէ բացուել, ժամանակ չէ զարթելու,  
Մի հաւատալ որ խաբում են ոչինչ չունին քեզ տալու:

Օրօրքիցդ ձի կը նստես, երբ մեծանաս, պատուական,  
Սիրուն մէջքիդ թուր կը կապեմ, ուսիդ կառնես հրացան,  
Մեծ եղբայրս՝ ազնիւ քեռիդ երբ որ կուտայ հրաման  
Ինքս կասեմ վեր կաց մանուկ, ժամանակ չէ զարթելու,  
Կարելի է մի բան յաւատ ուրիշներուց քեզ տալու:

# Տ Ի Կ Ի Ն

Պիտի գոզեմ քեզ տիկին, գոզելու արժանի ես,  
Բարիք գործելու համար, խկապէս պիտանի ես,  
Քաղաքիդ մէջ յարգուած, յատուկ ես, անուանի ես,  
Անուանող հետ միասին սիրուն ես, գեղանի ես,  
Առատասիրտ, մարգասէր մեծ անձի ընտանի ես,  
Արժես, մայր հասարակաց, խելօք ես, գոզանի ես:

Սպիտակ պարզ ճակատդ նորած լուսնեակի պէս,  
Կամարածն ունքերդ յատուկ ազիզնակի պէս,  
Քերթիչներդ զրշահատ, աչքերդ կրակի պէս,  
Մաքուր փոքրիկ բերանդ ոսկեայ ըմպանակի պէս,  
Խօսքերդ թանգ մարգարիտ, լեզուդ էլ սոխակի պէս,  
Բառերդ կշռադատող ընդունակ լեզուանի ես:

Բազդ է ու մեծ պատիւ է որ քեզ ունի Շիրակը,  
Հազիւ մէկ հատ ծնուել է քեզ պէս մեր ժամանակը,  
Զբաւոր մանուկներու պահապան հրեշտակը,  
Դու նորանց ուղղեցոյց ես մտքերու աշտանակը,  
Տանաւոր որբուհիներ ապրում են շքիդ տակը,  
Տերևախիտ պտղատու մէկ ծառ ես, հովանի ես:

Մաքիցդ դուրս չի գնալ քաղաքդ, հայրենիքիդ,  
Հասցրել ես միշտ նրան օգնութիւնդ, բարիքդ,  
Կը յուսամ քեզ նման են քաջ սիրասուն որդիքդ,  
Հետեւն ճանապարհիդ, պաշտպանեն քո կարծիքդ,  
Յաւիտեան շնն կորսուել գործերդ, երախտիդ,  
Քէ մարմնով էլ մեռանես, անունով կենդանի ես:

Ջիւանին քեզ լաւ գիտէ, ունես գութ և դորովանք,  
Քեզ վերայ վատ խօսողը Յուդա է անխճմտանք,  
Դու դեռ էլի շատ կարժես, քիչ է այս իմ գովասանք,  
Այսքան կուգայ ձեռիցս, շունեմ աւել պաշարանք,  
Յուսահատին սիրտ տուող, նեղեալներին սփոփանք,  
Հիւանդներին դեղ ու ճար խտակ սպեղանի ես:

## ԵՇՈՒՂԻ ՊԵՎԹԵՐԸ

### Չ Մ Ե Ռ

Չմեռն եկաւ, ձիւնը ծածկեց ասին տեղ,  
Խեղճ մարդկանցը պատասպարան չը մնաց:  
Յուրան ու բուքը տարածուեցաւ քաղաք, գեղ,  
Աղքատներուն յուսոյ նշան չը մնաց:

Պանդուխտ աղքատները հազար ու հարիւր,  
Ոչ տուն ունեն ոչ էլ ապրուստի աղբիւր.  
Այսուհետեւ դաշտը չի ընդունիլ հիւր,  
Որովհետեւ քաց իջնան չը մնաց:

Չմեռն որ կայ, ձախորդութեան նշան է.  
Ամեն մի գործ, առևտուր կը խափանէ—  
Գուրբը ցուրտ, ներսը ցուրտ խեղճը թնշ անէ,  
Ի՞նչ վայ գլխին, անեղու բան չը մնաց:

Վայ այն մարդուն, որ դարունը չի բանի,  
Չմրան համար տունը պաշար չի տանի.  
Չմեռն եկաւ, թող լայ որպէս պատանի,  
Գործը կանգնեց, ոչինչ իրան չը մնաց:

Հարուստ երկրագործը ուրախ, հանգարտիկ,  
Սիրաւը ուրախ, կեանք կը վարէ երջանիկ.  
Հօտաղի, մանկալի երգը անուշիկ  
էլ չէ լուում, գաշտը գութան չը մնաց:

Լսեց բնութիւնը շորս ամիսաշափ,  
Պարտէզը ման գալող, տուող չըկայ ծափ.  
Ծառեր ու ծաղիկներ եղած տերեւթափ՝  
Չբօսնելու մէկ բուրաստան չը մնաց:

Գուրբը շատ սաստիկ ցուրտ, ուրիշ ձայն չըկայ,  
Սքր ու ձոր մշուշ, երկնից ձիւն կուգայ.  
Գետերը սառեցան, էլ չեն գոշգոշայ  
Չկնորսի ձեռքում էլ ուռկան չը մնաց:

Երթեկու թիւնը արգելեց ձիւնը,  
Ամեն մարդ քաշուեցաւ իւր տան անկիւնը.  
Մոյլ մարդուց խելահաս, խոհեմ մրջիւնը  
Պաշար ճարեց, բնից բաժան չը մնաց:

Պարսպ մարդոց սիրաւը չի առնիլ դադար,  
Փակուած օդի մէջը նստում են երկար,  
Արեւ ամպի տակ, լուսինը խաւար,  
Երկնքումը ան ծիածան չը մնաց:

Անցան դարնանային օրերը, անցան.  
Ողջ կենդանիք պատասպարուել ցանկացան.  
Յանկարծ բոլոր պիտոյքները թանկացան,  
Ոչ մի բան հին գնին աժան չը մնաց:

Ո՛ւր է հովիւներու երջանիկ ժամը  
Ո՛ւր է հօտը, ոչխարն՝ երամը.  
Մտից զրկուեցաւ գայլի տտամը,  
Դաշտերումն էլ ոչ մի կենդան չը մնաց:

Տխրեցաւ սոխակը, մեռաւ թիթեռը.  
Խղճուկ հողագործի ծանրացաւ բեռը.  
Բանի գնաց երկարացաւ ձմեռը  
Հացով լեցուն շտեմարան չը մնաց:

Սար ու ձոր սպիտակ հագել են պատանջ  
Բնութիւնը տխուր չըկայ ուրախ կեանք.  
Քաշունները չեն սկսում նախերգանք  
Այգիներում նուազարան չը մնաց:

Աւաղակաց խումրը առնում է դադար,  
Նախազիծ է կաղմում ջող, գարնան համար.  
Էլ չէ կթում կով ու մատակ, այժ, ոչխար,  
Գիւղերում էլ մածուն ու թան չը մնաց:

Երանի հարուստին սիրաւը ուրախ է,  
Յրտից ու մրսելուց հեռու, անվախ է.  
Ձիւան այս ձմեռ քո գործդ էլ ձախ է.  
Կարծես թէ քաղաքում իրախճան չը մնաց:

1883





## Ա Ն Ի

Հանդիպողը բեզի տխրի կը մնայ,  
Տեսնելով վիճակդ թշուառ քո Անի,  
Անիրաւը երբէք էլ մտող չի գայ,  
Բազդըդ ուրացել է իսպառ քո Անի:

Պալատների հողին եղած հաւասար,  
Կրկին նորոգուելու էլ չունիս հնար,  
Վանքերդ կիսաքանդ առանց ժամաբար,  
Ո՛ւր է գրութիւնդ պայծառ քո Անի:

Ո՛ւր է Աշոտ երկաթ, ի՞նչ Կահրամ իշխան,  
Ո՛ւր է Սմբատ մեծ շահընշահ ախոյեան,  
Վեստ Սարգսի ձեռքը կերաւ Յունաստան,  
Ո՛ւր է սէգ Գազիկդ կայտառ քո Անի:

Չունիս շէն մնացած մի տուն, մի փողոց,  
Դարձել ես բուերու ձապուց օրօրոց,  
Այգիներուդ ողջն եղել են փշանոց,  
Գոնէ չէ երևում մէկ ծառ քո Անի:

Կիսամեռ ես, չկան ձեռքերդ ուժեղ,  
Արդէն քարակոյտ ես, էլ չես փառանեղ,  
Գանաւում են ամեն երկիր, ամեն տեղ,  
Ժողովուրդ պանդուխտ, շուառ քո Անի:

Անասնոց հօտերը զօրքերուդ տեղակ,  
Կոխրաւում են բեզի ազատ համարձակ,

Օր աւուր դառնում ես կրկին աւերակ,  
Անտարբեր որդիքդ են պատճառ քո Անի:

Նենգեր չլինէին, թվ դու նախախտո,  
Կայրէիր պապէ պապ, մինչև թոռէ թոռ,  
Վանքերուդ քարերը շինում են ախոռ,  
Գիւղացիքդ տղէտ, ցանցառ քո Անի:

Էլ ոչ աւան ունիս, ոչ էլ աղարակ,  
Չունիս ազօտ լուսով զոնէ մէկ ճրագ,  
Այրի աղքատ կնոջ նման խեղճ քաղաք  
Հանգերձներիդ պատառ-պատառ քո Անի:

Նման ես ջախջախուած ծովասոյգ նաւի,  
Տեսնողը չի օգնիլ, միայն կցաւի,  
Դրութիւնդ նոյնն է, չի փոխուել լաւի,  
Գարուն, ձմեռ, ամեն ամառ քո Անի:

Քս մէջդ այնպիսի մարդիկ դանւան,  
Որ քեզի մատնեցին Յուդայի նման,  
Պատճառը շար հողի իշխաններն եղան,  
Որ շմնաց ճրագդ վառ քո Անի:

Անունդ, պատիւդ իփեցին քարին,  
Ուրացան Արարչին, հետևան շարին,  
Քաղաւորդ վաճառեցին օտարին,  
Քահանայքդ կերան կաշառ քո Անի:

Չկայ դանգակի ձայն. չկայ դողանջիւն,  
Լաութիւն է տիրել ամեն մի անկիւն.  
Տաճարներուդ միջից սաղմոսերգութիւն  
Էլ չէ լսում քաղցրաբարբառ քո Անի:

Նրան էլ է դիպել մահառիթ նետը,  
Որ այդպէս տխուր է, չի խօսուիլ հետը,

Արիւն արտասունքով Ախուրեան զիտը,  
Մօտէդ կանցնի միշտ անսպառ քո Անի:

Միջիդ շահասէր մարդիկ սխալալ,  
Քուկիննեքիդ կհանէին միշտ սխալ,  
Գետը դարձուց, քեզ չկարաց ոգուտ տալ՝  
Կաթողիկոսդ վեհափառ քո Անի:

Մի լար մայր, ողբալի քաղաք դուն մի լայ,  
Տաճարնեքուդ պաշտպան մեծ հայրապետ կայ,  
Միթէ չի մտածել նա քեզի վերայ,  
Արարատդ բնագաւառ քո Անի:

Երբ քեզի կործանեց զոռոզ թշնամին,  
Հայութեան դրօշն էլ ընկաւ միասին,  
Տղիտարար քեզ այս աւուր հասրցրին,  
Չար որդիքդ տիրավաճառ քո Անի:

Ջիւանի, սրտազէտ էսկը արդար,  
Բարուն բռնի կուտայ, շարին էլ միշտ չար.  
Քեզ կոտորող ազգը շապրեցուց երկար  
Արարիչդ տուրք Անաշառ քո Անի:



## ԱԶԱՊՆ ՈՒ ԿԱՐԳԱԾՆ

(Ամուրին ու ամուսնացածը)

Ազապն ու կարգածը նստած մի անգամ,  
Քստում էին իրարու հետ այս տեսակ.  
Կարգածն ազապին ասաւ, բարեկամ,  
Հերիք մնաս խեղճ ու մոլոր միայնակ:

Ազապն ասաւ ինձ մի կարծիր խեղճ, մոլոր,  
Ազատ, անհոգ ես եմ յատուկ բախտաւոր.  
Քմբով սիրունները իմս են բոլոր,  
Կը նայեմ ամենին ազատ, համարձակ:

Կարգածն ասաւ, ընդի կուտամ մի պատուէր,  
Դու սուրբ ամուսնութեան եկ, ունեցիր սէր-  
Սիրուններու ամեն մէկն էլ ունեն տէր,  
Կը մորթեն թշուառիդ անսուր, անդանակ:

Ազապն ասաւ, ես եմ առոյգ գեղեցիկ,  
Ուրախ, զուարթ, բազդով անհոգ, երջանիկ.  
Որտեղ որ տեսնում եմ մէկ սիրուն աղջիկ,  
Ինձ կը կարծեմ նրան յարմար ընդունակ:

Կարգածն ասաւ, երջանիկ չես, թշուառ ես,  
Մարդկութեան անօգուտ անպտուղ ծառ ես.  
Դու կաշխատես, այլոց թոնիր կը վառես,  
Թողնում ես քու տունդ անծուխ, անկրակ:

Ազապն ասաւ մարդ չի խոսիր ինձ վրայ,  
Ես եմ անկախ, ինքնազուխ մէկ տղայ.  
Ինձանից ոչ հալաւ, ոչ հաց ուղող կայ,  
Կուտեմ, խմեմ, ուրախ կապրեմ շարունակ:

— Կարգածն ասաւ, ունեմ համեստ ամուսին,  
Տիրոջ, փառքը վայելում ենք միասին.  
Աստուած պարգևել է ինձի թանկագին,  
Ունեմ երկու երեք պաշտելի գաւակ:

Ազապն ասաւ, լաւ է այսպէս մնալը,  
Քան թէ ամուսնանալ, վերջը զղջալը.  
Շատ դժուար է գաւակներու հոգալը,  
Իմ ինչ պէտքն է ընկնել մեծ ցաւերու տակ:

Կարգածն ասաւ— դժ է քո պատասխանը,  
Զի զղջայ ով գիտէ իւր արած բանը.  
Հեշտ կը կառավարէ նա գերդաստանը,  
Ինչ մարդ գիտէ ապրուստի լաւ եղանակ:

— Ազապն ասաւ, կուզեմ միշտ ազատ ման գալ  
Տնական հոգսերով չեմ ուզեր տքալ.  
Շատերը կը ցանկան աղջիկ ինձի տալ,  
Օրը հազար տեղից գալիս է թնդրակ:

Կարգածն ասաւ, ազապ մարդը ջանք չունի,  
Օրերը դուր կանցնեն, աշխատանք չունի,  
Զը գիտես կին չունեցողը կեանք չունի,  
Արեղայ էլ լինի է ցաւոց անարակ:

Ազապն ասաւ, չեմ համոզուիր յաւիտեան  
Կամ թէ ոտս կապել խեղճ հաւի նման,  
Ման կ'ազամ ամեն տեղ որպէս ինքնիշխան,  
Բեռի տակ մտնելու չունեմ նպատակ:

— Կարգածն ասաւ, երբ որ կերթամ դէպի տուն՝  
Կը բացուի իմ սիրտս ինչպէս նոր զարուն.  
Կինս, գաւակներս ու բախ, զուարթուն  
Դէմ կը վազեն իրար տալով ազաղակ:

— Ազապն ասաւ, ունեմ ես շատ օթեան,  
Ամեն օր կուեննամ նոր-նոր սիրական.  
Իմ գիշերուայ ընկերներս ողջ մնան,  
Ինձ համար կեանք կուտան ամեն ժամանակ:

Կարգածն ասաւ, ես եմ միշտ բարեհամբաւ  
Տուն կեանքը խաղաղ, կեցութիւնս լաւ,  
Կը մտածանամ բոլորովին հոգս ու ցաւ,  
Երբ երգում են գաւազներս ներդաշնակ:

— Ազապն ասաւ, չկայ ինձ պէս ինքնակամ,  
Կարգածներու մէջը, գիտցիր, բարեկամ,  
Քեւ բռնող չկայ, ուր ուզեմ կերթամ,  
Քեզ նման իմ վիզըս չեմ ձգեր օղակ:

— Կարգածն ասաւ, քանի փոքր է հասակդ  
Պարծանքով կը փայլի քո դրօշակդ  
Երբ մեծանաս կը մարի այդ կըրակդ  
Կը մեռնիս անսերունդ և անյիշատակ:

— Ազապն ասաւ, այդ խօսքի դէմ չունիմ փաստ,  
Իրաւ որ ազապը խեղճ է ու նուաստ,  
Ասա, հրամանիդ կանգնած եմ պատրաստ,  
Եղիւր տառապելոյս բարի օրինակ:

Կարգածն ասաւ, հիմա եղաք երջանիկ,  
Կը լինիս անուճով բարի, գեղեցիկ,  
Կանչէ Ասաուած, գաիր մի համեստ աղջիկ,  
Քող իջնի քո գլխին անթառամ պսակ:

— Կարգածն ազապի գործերը սարքեց,  
Եղաւ խաչքաւորը, պսակեց կարգեց,  
Ազապն էլ կարգածի խորհուրդը յարգեց,  
Աշխարհի օրէնքին դարձաւ հպատակ:

Ձիւան, բան է մէկին առողջ կին մէկ հաս,  
Անօրէն է՝ ով որ կին կըրպահէ շատ,  
Պիտի վարուի իւր ծագումին համեմատ,  
Մարդ ոչ անասուն է և ոչ հրեշտակ:

1883



## ՀՈԳԻՆ ՈՒ ՄԱՐՄԻՆԸ

Հոգին ու մարմինը վեճի մէջ մտան,  
Մէկը մէկից սկսեցին գանգատը.  
Առարկայ բաց արին իրար հետ ընկան,  
Ամեն մէկը պաշտպանելով իւր դատը:

Հոգին ասաւ՝ ես երկնային պարզե եմ,  
Պայծառ լոյս եմ, անշամանդաղ արե եմ.  
Կեանքի ճանապարհը չափեմ, կը ձևեմ,  
Սկզբունքս է բարոյական խրատը:

Մարմինն ասաւ՝ ես նկարուած պատկեր եմ,  
Ողջ կենդանեաց իշխող պետ եմ, շատ վեր եմ.  
Ինչ որ գործես, ես էլ քեզ հետ ընկեր եմ,  
Արժէք չունի մէկ բերնանի մկրտաբը:

Հոգին ասաւ՝ քեզ անուժ եմ շատ խնամ,  
Քու խելքիդ զօրութիւն, մտքիդ ոյժ կուտամ.  
Չունիս ինձ պէս հաւատարիմ բարեկամ,  
Ե՛ս կը սրբեմ քու անուանդ արատը:

Մարմինն ասաւ՝ շատ բաներ կը յօրինեմ,  
Նրբամիտ եմ, ծուռը շիտկող կարկին եմ.  
Ինչ որ ուզեմ այնպէս գործիք կը շինեմ,  
Կը փափկանայ ձեռքերուս մէջ պողպատը:

Հոգին ասաւ՝ մարմին եղբայր, համբալկ ես,  
Լոկ միս ու արիւն ես, քամու տապրակ ես.  
Առանց հոգու դու մի չնչին դիակ ես,  
Կը վերջանաս՝ թէ չը խառնեմ իմ մտաբը:

Մարմինն ասաւ՝ ինձ մի անիլ դու անաեա,  
Մի լոկ շունչ ես, ոչ կերպ ունեա, ոչ երես.  
Առանց մարմին դուն էլ աննիւթ քամի ես,  
Ինձնով է իմացում քու լաւն ու վատը:

Հողին ասաւ՝ ոյժ ու կեանք կայ ինձանում,  
Ունիմ բարի աստուածային սուրբ ուսում.  
Ինձանից կը ծնի ազնիւ զգացում,  
Ես կը պաշտպանեմ տկարն ու աղքատը:

Մարմինն ասաւ՝ ես աշխարհը չեմ թող տալ,  
Սիրելի, սիրուելի կուգեմ և զուարճանալ.  
Ծոյլերու պէս ես ճգնութեան չեմ գնալ,  
Քողած կիներ, գեղեցկաշէն պալատը:

Հողին ասաւ՝ այս աշխարհը հիւանդոտ,  
Մեղքով լիցուն հոմանի է վավաշոտ,  
Անցաւոր ես որպէս ծագիկ, որպէս խոտ,  
Մեռել, հող են դարձել քեզ պէս շատ շատը:

Մարմինն ասաւ՝ Արարիչը բազմազով  
Մարդուն է նուիրել թէ ցածաք, թէ ծով.  
Փթած, մքլած պառաւական խօսքերով  
Ստրուկ մի դարձնիլ քաջը, ազատը:

Հողին ասաւ՝ մարդու փառքն է մէկ ստուեր,  
Զուր մի դառնայ ունայնութեան անձնուէր.  
Ասրիծասիրտ և գերբնական ոյժի տէր,  
Հող է դարձել հայոց հսկայ Տրդատը:

Մարմինն ասաւ՝ ես չեմ լսում ոչ ոքին,  
Կը հագուեմ, կը զուգուեմ և կը սիրեմ կին.  
Կուտեմ խորովածը, կը խմեմ գինին,  
Որ միշտ զուարթ մեայ կեանքիս արմատը:

Հողին ասաւ՝ ծերանալ կայ, սիրական,  
Կը մաշուես կը դառնաս հին շորի նման.  
Այս աշխարհում անցաւոր է ամեն բան,  
Երկնքում է հիմնականը, հաստատը:



Մարմինն ասա՛ չոզի, ճիշտ են խաբերդ,  
Ճշմարիտ են քու քար-զած մտքերդ.  
Մեղայ կասեմ, կը համբուրեմ սուքերդ,  
Խնդրէ որ ինձ ներքի սուրբ Գթառասալ:

Չոզին ասա՛ լսի մարմին դու չիմայ.  
Մեռածներին յարուցանող Աստուած կայ.  
Չղջացողի մեղքին թողութիւն կուտայ,  
Մարդուն փրկում է կենդանի հաւատը:

Մարմինն ասա, չոզի մեծ թագաւոր ես,  
Ես ստորագրեալ եմ, դու գլխաւոր ես.  
Ճանանչափայլ անշեղ լուսոյ կտոր ես.  
Ես չեմ կարող լինել քո համեմատը:

Չոզին ասա՛ սիրելի ես ինձ մարմին,  
Շատ ժամանակ կեանք ենք վարել միասին.  
Հեռանամ էլ քեզ կը դառնամ վերստին  
Քմբիս յարմար ընկեր չըկայ քու հատը:

Ջիւանի, օրէնք է գրուած քնական՝  
Չոզին անմահ, կենդանի է յաւիտեան.  
Մարմինը կը մեանի, կերթայ գերեզման,  
Յիշատակ կը թողնի իւր հարազատը:

1902





Համ հոգու փրկութիւնս ես, համ մարմընու համար, գինի,  
Անգորին ոյժ, կարողութիւն, անճարին դու ճար, գինի.  
Մէկ կաթիլդ թանգ գին ունի անապակ, արդար գինի,  
Եթէ եղար լաւ խաղողից՝ դառնում ես նեկտար գինի.  
Երկու գորութիւն կայ մէջդ, տաք ու զովարար, գինի,  
Կեանք խլող, համ կեանք տրւող, ֆիաս ու օգտակար գինի:

Աղքատը կը հարստանայ, կը մոռանայ իւր ցաւը,  
Ինքնիրան բազէ կը կարծէ՝ թէ խմեց տկար հաւը.  
Եթէ արբեց ծանձաղամիտ խնթը, խելքից սակաւը,  
Մերկանալով, իւր վերայից կը հանէ ողջ հալաւը.  
Քիչ կը խմէ, չի արբիլ խելօքը, մարդու լաւը,  
Նա կը գովէ բեզ չի ասիլ ամենեկին շար, գինի:

Եթէ բարի չը լինէիր՝ չէր ստեղծիլ Արարիչ  
Մրգերու թագն ու պսակը, օգտաւէտ ազնիւ շամիչ.  
Ուրախութեան փայլ տրւող, ընտիր հեղուկ կազդուրիչ,  
Համ մեղաց պատճառ լինող, համ սրբութեան մեղայ, քաւիչ.  
Որկրամուրը գործ է ամուս, չի մտածում շատ ու քիչ,  
Լեզի, օձի կաթ կը դառնաս, բաղցրահամ շաքար, գինի:

Շատ սիրողիդ թշնամի ես, քիչ սիրողիդ բարեկամ,  
Պաշտողիդ սաստիկ կծում ես, ունիս պողպատից ատամ.  
Ամենաբարձր բազոս դուռդ բացէ միշտ յարածամ,  
Ուխտաւորներդ գալիս են շարեշար, երամ երամ.  
Նքա տանը հաց չի լինի, գրպանումը կէս դրամ,  
Ով որ լինում է շափազանց փառքիդ սիրահար, գինի:

Եթէ ուղիդ խոտտովանիմ՝ ինձ օգուտ ես, չես ֆիաս.  
Քու պատճառով լինում են միշտ քեֆ անողներ անպակաս.  
Զը խմող, քէֆ չը սիրող մարդու համար ես պատուհաս,  
Իմ երգ ու նուագելը շարժէ մէկ կտորամ կարաս.  
Ոչ պիտի շատ հետեի մարդ, ոչ չը խմի, պահի պաս,  
Քիչ, շափաւոր գործածողին գալիս ես յարմար, գինի:



## ԻՄ ՈՐԳՈՒՆ

**Մ**եր նախնեաց հոտն աննել կուզես իմ որդեակ,  
Էջմիածին, սուրբ Կարապետ ուխտ գնայ.

Անին չը մոռանաս թէն աւերակ,  
Կը համարուի նախնեաց փառքերուն վկայ:

Քու հարազատ մայրն է սուրբ Էջմիածին,  
Սիրէ այդ սուրբ վայրը, սիրէ կաթողին.  
Պապերուս հիմնարկած տունն է թանկազին,  
Հայոց համար դրանից մեծ տուն չը կայ:

Անին յիշատակ է մեր վեհ հնութեան,  
Արթէ նրան տեսնել՝ թէն անկենդան.  
Անցեալ կեանքից այնտեղ դեռ շատ հետքեր կան,  
Պահել պէտք է նրան որպէս անթիկայ:

Լու է՝ այդ պատճառով կարին էլ կերթաս,  
Յեանյ Մուշը՝ սիրուն գաշտը կը տեսնաս.  
Տորոսի լեռներուն կը ծանօթանաս  
Սուրբ Կարապետ ուխտ գնալով, հայ տղայ:

Երուսաղէմ գնա, թէ ունիս ոսկի,  
Շատ դարպաս տուր, հայոց վանքը պարտք ունի.  
Այդ սուրբ տեղն էլ պարտքից չը պրծաւ իսկի,  
Փողեր ստանալով ազգից անխնայ:

Զիւմն, մայր չի լինի քեզ օտար կինը,  
Սիրէ քու իսկ մայրդ, սիրէ քո հինը.  
Թողած հողուդ մօտիկ էջմիածինը  
Ինչ գործ ունիս Հոռմ. կամ Ամերիկայ:

1894



## ԿՌՈՒՆԿՆԵՐ

**Մ**ի զոյգ կռունկ տեսայ ճամբու՛մը յոգնած,  
Գոռ արժըւից մէկի թևը կոալըրուած,  
Դուք էլ ինձի նման խմբից յետ ընկած.  
Կռունկներ, կռունկներ, մեղրապտուճկներ,  
Հայրենիքիս բարև տարէք, կռունկներ:

Մի զոյգ կռունկ տեսայ տխուր, սգաւոր,  
Մէկ ընկերի թևը ֆրասուել է նոր,  
Դուք էլ ինձի նման ցաւոտ, վիրաւոր,  
Կռունկներ, կռունկներ, մեղրապտուճկներ,  
Սիրականիս բարև տարէք, կռունկներ:

Մի զոյգ կռունկ տեսայ աշտօր առաւօտ,  
Տեսայ վիրաւոր են երբ զնացի մօտ.  
Դուք էլ ինձի նման հայրենեաց կարօտ,  
Կռունկներ, կռունկներ, մեղրապտուճկներ,  
Հօրս ու մօրս բարև տարէք, կռունկներ:

Մի զոյգ կռունկ տեսայ կանաչ կատարով,  
Քաղաղ զնու՛մ էին կարճ ճանապարհով.  
Բազէն նրանց չը հանդիպէր ոչ բարով,  
Կռունկներ, կռունկներ, մեղրապտուճկներ,  
Չաւակներիս բարև տարէք, կռունկներ:

1901





## Ս Ա Ք Ե Ր

**Ե**րկնքի երեսից խումբ-խումբ սազերը  
Զօրքի նման կարգով շարուած գնում են.  
Մեծացրած պուլիկները, ձազերը  
Ուրախ, գուարթ մխիթարուած գնում են:

Մարդուց երջանիկ են, ազատ ինքնավար,  
Օդաչու համայնք են, անմեղ ու արդար.  
Ասանց անցազրի չափում են աշխարհ,  
Բնութիւնից զեկավարուած գնում են:

Զիւան, ուժեղ թռչուններուն՝ անկասկած՝  
Նախանձելի կեանք է պարզեկ Աստուած.  
Միրող զոյգերու պէս թե թեի տուած,  
Մէկ մէկու հետ սիրահարուած գնում են:

1900



Քնչքան երկինքը ամպէ, որոտայ,  
 Կայծակ, հուր, երկաթ, շանթեր արձակէ,  
 Թէ սաստիկ կարկուտ, շատ անձրև տեղայ՝  
 Վերջը դարձեալ պայծառ արև կը ծագէ:

Թէ ծովը ծփայ, կատաղի սաստիկ,  
 Իւր ալիքներով ամփոց դուրս չի գայ,  
 Թող իջնի թարթառ, հանէ փոթորիկ,  
 Թող փչէ հողմը ինչքան կամենայ:

Թող պատերազմեն ազգերն իրար հետ,  
 Թող մէկը միւսի արիւնը խմէ՝  
 Թող խփեն իրար գնդակ, մահու նետ,  
 Եղբայրն իւր եղբօր թող միւը ծամէ:

Կանցնեն ըտլորը, կուգայ ժամանակ,  
 Ամեն առարկայ իւր վերջը ունի.  
 Որդին կը նստի հօրը փոխանակ,  
 Նոր հոգի նոր կեանք նորից կակուտի:

1898



## Ս Ե Ր Ե Ա Կ

Նեղեղն եկաւ հարաւից ու հիւսիսից,  
Թոխր սարեակ, թոխր, կեանքդ ազատիր.  
Ջուրը ելաւ, բարձր կանգնեց Մասիսից  
Թոխր սարեակ, թոխր, կեանքդ ազատիր,  
Գնա մի ուրիշ տեղ բունդ հաստատիր:

Գու տեսնում ես նաւ է շինում ուժեղը,  
Որ հոսանքից ազատէ նա իւր ցեղը.  
Մի տեղ դաիր մինչև անցնի հեղեղը,  
Թոխր սարեակ, թոխր կեանքդ ազատիր  
Գնա մի ուրիշ տեղ բունդ հաստատիր:

Բարձր սարն էլ շի լինի պատասպարան  
Նա էլ ջրից սարսափում է մշտական.  
Չկայ նոյր որ գայ շինի մեծ տապան,  
Թոխր սարեակ թոխր կեանքդ ազատիր,  
Գնա մի ուրիշ տեղ բունդ հաստատիր:

Փոքրիկ զիծդ դարձրել են մեծ ակոս  
Ծանծաղ բունդ եղել է հոր, խորունկ փոս.  
Բնակարանը դարձել է տարտարոս  
Թոխր, սարեակ, թոխր կեանքդ ազատիր,  
Գնա մի ուրիշ տեղ բունդ հաստատիր:

1900



## ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ՄԱՀՈՒՆ ԸՌԻԹՈՎ

**Հ**այ ազգի պաշտած, սիրած, կաթողիկոս մեծ հայրիկ,  
Կեանքիդ մէջը ոչ մի օր դու չըտեսար երջանիկ,  
Տառապեալ, խղճուկ ազգիդ ցաւերովը տապակուած,  
Կարելի է քեզ ասել իսկապէս նահատակուած,  
Հոգսերը, թախիծները, քեզ հետ էին պսակուած,  
Վերջապէս անգութ մահը, առաւ բերդդ անառնիկ:

Մաքրակենցաղ, սրբակեաց, ձերունագարդ հայրապետ,  
Զուտ ժողովրդի զաւակ, քաջ, հատընտիր ազգի դէտ,  
Շնորհալի բանաստեղծ, գերթ սրընթաց վազող գետ,  
Հայրենասիրութիւնը ծծած մօրդ կաթի հետ,  
Վասպուրական աշխարհի, Վան քաղաքի հայի ճետ.  
Պատկերդ գրաւիչ էր, աչքերդ վառ գեղեցիկ:

Դու տարագիր ման եկար շատ տեղ, շրջագայեցիր,  
Ազատ, անվախ խօսեցար բնաւ չըխնայեցիր,  
Վաթսուն տարի շարունակ հայութեան ծառայեցիր,  
Ուր որ եղար, կեանք տուիր, նոր հոգի ընծայեցիր,  
Վարդը բացուած չըտեսար սպասեցիր, նայեցիր,  
Վշտուոր հայի սոխակ, ով դու անբաղդ երգեցիկ:

Երախտագէտ հայ ազգը քեզ վանդակից ազատեց,  
Լուսաւորչի որբացած զահի վրայ հաստատեց,  
Արգասաւոր անցեալդ, գործերդ զնահատեց,  
Մասամբ վէրքդ ամօքեց, քու ցաւերդ փարատեց,  
Արժանաւոր համարեց, ուշի ուշով նկատեց,  
Բարձրացրեց դէպի քեզ, հուժկու ձայնը ազգեցիկ:



Ականակիտ աղբիւրի նման պարզ վճիտ էիր,  
Սիրտդ, լեզուիդ համեմատ անկեղծ ճշմարիտ էիր,  
Արթուն արծիւ սրասես և դու նրբամիտ էիր,  
Իբրև մարդ շատ հազուագիւտ, փայլուն մարգարիտ էիր,  
Ունէիր մէկ թուլութիւն՝ մարդ պատժել չգիտէիր,  
Դա էր քու թերութիւնդ, որէ չնշին, սակաւիկ:

Պատկանելի ծերունի, դու Ջիւանու պաշտելին,  
Ապաւինելու համար, մէկ սար էիր ահագին,  
Սզացէք ո՛վ տաճարներ, կողկողայ էջմիածին,  
Դարձեալ անգլուխ մնաց նահատակ եկեղեցին,  
Ես էլ ձայնս կցելով ձայնին հայոց լալագին,  
Տխուր մահուանդ համար ողբում եմ ահաւասիկ:

1907



ՊԵՐԾ՝ ՊՌՕՇԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ

Հայ գրականութեան շինութեան պատից,  
Մօտ օրերս էլի մի քար վայր ընկաւ.  
Արժուի ամպը դեռ չը իջած նակատից,  
Հայոց մուսան կրկին սգոյ մէջ մտաւ:

Չնաշխարհիկ յայտնի մեր վիպասանը,  
Սօս և Վարդիթերի ծնող գուսանը,  
Որք թւոյնց հայերու Պերճ Պոռչեանը,  
Գնաց Աբ-վեանին, Րաֆֆուն գտաւ:

Բնութիւնով խաղաղ, առողջ մտքի տէր,  
Ո՛չ թեթև ցուցամուլ, — լուրջ հայրենասէր,  
Ազգի ցաւով տանջուող: Ճշմարիտ հալ էր,  
Կեանք տուող խօսնակը մեր ձեռքից թաւ:

Զիւանի, պատմական հին Աշտարակը,  
Կորցրեց հաղուաշիւտ անդին գաւազը.  
Կնքեց մահկանացուն քաջ հեղինակը,  
Հայոց ժողովրդին պատճառեց մեծ ցաւ:

1907



## ՆՈՒՆԻ ԿԱՐՆՈՑ ՀԱՅԵՐՈՒՆ

**Մ**ինչև կեանքիս վերջը քեզ պիտի սիրեմ  
Ո՛վ իմ ծննդավայր, սրբազան երկիր,  
Ես մի չոր կեանք ունիմ թող քեզ նուիրեմ  
Ինձ կեանք շնորհող մայր, անսման երկիր:

Շատ ունիս անձնագոհ, եռանդոտ մշակ,  
Քեզ սիրում են որպէս հարուգատ գաւակ.  
Ազատ շունչ կ'քաշես կ'գայ մամանակ  
Սպասէ և յուսայ պատուական երկիր:

Դու ես ազգայնութեան հրահանք տուող,  
Սրտի մխիթարանք, սիրտիանք տուող  
Նախնիքներուս սնդունդ տուող, կեանք տուող  
Իմ բնիկ հայրենիք բնական երկիր:

Ջրանին երբ պիտի տօնէ Զատիկդ  
Ապրիլ ամսում արև դարձած մահիկդ.  
Փոխուած տէսնէի կրակէ շապիկդ  
Հագնէիր նոր տեսակ պատմուճան երկիր:



## ԵՐԵՒԱՆ ՔԱՂԱՔԸ

**Մ**եր նահանգի թագուհին ես, պարծանքն ես,  
Բարիքներով լեցուն Երևան քաղաք.  
Համարեա կովկասի հոգին ես, կեանքն ես,  
Ունիս բարձր անուն, Երևան քաղաք:

Արարատեան աշխարհի մէջ հատ ես  
Բազմատեսակ պտուղներով առատ ես.  
Շատ զարբերից 'ի վեր շէն ու ապատ ես,  
Մնացել ես կանգուն, Երևան քաղաք:

Գաւառիդ մէջ հազար տեսակ բարիք կայ  
Մինչև անգամ քեզ կարօտ է Նւրոպա.  
Ոսկին ու արծաթը ինքն իրան կուգայ  
Առուտուրդ զեղուն, Երևան քաղաք:

Միջիդ ժողովուրդը, թէ հայ թէ պարսիկ  
Ապահովուած կեանք կ'վարեն երջանիկ.  
Երկու սեռն էլ աշխոյժ՝ աղայ ու աղջիկ,  
Հագած, կապած, սիրուն, Երևան քաղաք:

Զմեռը օրերդ ուրախ է անցնում  
Որդիքդ Բագոսին շատ են ուխտ գնում.  
Հարսանիք ու հանդէս, խնջոյք կեր ու խում  
Լինում է ամէն տուն, Երևան քաղաք:

Մարտի տասին ստանում ես նոր հոգի  
Կը վերջանայ ցուրտ ձմեռը սոսկալի  
Սկսում են ծաղկել պարտէզ ու այգի  
Երբ բացւում է գարուն, Երևան քաղաք:

Յունիսի քսանից համոց կ'փախնի  
Շողերը կ'սկսեն, օդոց կ'փոխուի.  
Տենդի-մայր վարունգը, սեխը կ'հասնի  
Կը դառնաս դողի բուն, Երևան քաղաք:

Յերեկը մոծակն է տիրում բեզ վերայ,  
Փողովրդիդ վերաւորում անխնայ,  
Գիշերն էլ մլակը խփելով ծնծղայ,  
Բեզ թողնում է անքուն, Երևան քաղաք:

Հարուստներից երջանիկ են ամեն ժամ  
Գնում են Մաղկաձոր ամառն ամեն ամ.  
Վայելում են ընտիր գինիդ քաղցրահամ  
Բո օդիդ փրփրուն, Երևան քաղաք:

Ջրանը խնդրում է, որ խաղաղ մեան  
Մարդիկ, քրիստոնեայ թէ մահմետական,  
Իրարու հետ սիրով վարուին մշտական,  
Լինին խելքով հասուն, Երևան քաղաք:



X



## Ա Ղ Ք Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

**Մ**արմինդ մերկ, երեսդ պող, խեղճ պառաւ աղքատութիւն  
 Ման ես գալիս աշխարհի մէջ անհալաւ, աղքատութիւն.  
 Հայր Ազամբ երբ դրախտից զրկուեցաւ, դու ծնար  
 Խելացիները կոչեցին քեզ ցաւ, աղքատութիւն:

Մայրդ մեռնէր երկունքի մէջ քեզ չ'ձնէր երանի,  
 Կեանքի ցեց, կեանքի կերիչ ժանդ, մարդադաւ աղքատութիւն.  
 Շատ շատերին քաղցած ու մերկ զրկում ես այն աշխարհը,  
 Շատերին էլ դու թաղում ես անկառաւ, աղքատութիւն:

Ամենաազնիւ, բարի մարդիկ քո ձեռքիցը, դարչելի,  
 Դառնում են ստոր և ընկած, անիրաւ աղքատութիւն.  
 Մարդիկ խորշում են քեզանից, պատիւ չունիս ոչ մի տեղ  
 Ես քո սր արարքդ գովեմ, ի՞նչդ է լաւ, աղքատութիւն:

Հայրդ չիքն է, մայրդ սովը, մեծ պապդ ծուլութիւնը  
 Զախորդութեան տաք սիրանար դու ծարաւ աղքատութիւն.  
 Վերջապէս Զիւանուն էլ աշխատեցար առար մէջդ  
 Խորասուզուած անառազաստ կտորած նաւ աղքատութիւն:



Ք Ե Ն Ք Ե Տ

Քսան տարի քեզի համար երգ ասելով ձանձրացայ  
Անգութ սիրուն ես քո կողմից ոչ մի յարգանք չ'ստացայ.  
Չարչարանքդ ես քաշեցի, վաստակդ օտարք կերան  
Անխիղճ, ապերախտ լինելիդ ափսոս որ ուշ հասկացայ:

Ինձի նման քմնի մարդիկ սիրոյդ մասին զո՞հ եղան,  
Եւ քմնխան էլ երկրէ երկիր ընկած են թափառական.  
Ամենեկն քո հոգսդ չէ, անխրաւ թշուառական,  
Մտածում էլ չէս, թէ վաղը գլխիդ ինչ փորձանք կուզայ:

Ես հասկացայ, զուն խաւար ես, ինձ նման լոյսի կարօտ,  
Այսուհետեւ էլ քեզանից չեմ սպասում առաւօտ,  
Սուտդ ինձի հետ է եղել ճիշտդ ուրիշներու մօտ  
Վայ, հազար վայ իմ արևուն, որ յոյս դրի քեզ վերայ:

Թեզ Ջիւանս քեզի համար ուժերս սպառեցի.  
Կեզ սիրովդ կրակուեցայ սիրտս ու հողիս վառեցի.  
Քու մասովդ մինչ համայնքին վիշտ ու ցաւ պատճառեցի  
Բայց զու անգութ, անողորմած զուրս եկար կեզ խաբերայ:



Լ Ո Ւ Ս Ի Ն

Հիւսիսից փչեց սառն հով,  
Պարզ երկինքը պատեց ամպով-  
Սիրտս տխուր, հոգիս խռով,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:

Քառար գիշերը սխերիմ,  
Փակել է ճանապարհս իմ.  
Քեզի տալու զանգատ ունիմ,  
Դուս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:

Փայտը մութ սև, միզապատ,  
Գլորեց ինձի խորխորատ.  
Լոյս տուր չ'մնամ յուսահատ.  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատ է ինձ այս վիճակից:

Գիշերային կառավարիչ  
Գեղանի հարս ես նկարիչ.  
Թշուառ մտրդկանց մխիթարիչ.  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:

Քո շաւիղդ էլ իմիս նման  
Միգով պատած է մշտական  
Ինչ և իցէ, լեր օգնական,  
Դուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:



Մարուր կաթից սպիտակ ես  
Պսպղուն փայլուն շողակ ես  
Աստուածային աշտանակ ես  
Գուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:

Հորիզոնում լայնատարած  
Եղեւ ես խաւարահալած  
Գու անյաղթ ես, ես յաղթուած  
Գուրս եկ, լուսին, ամպի տակից  
Ազատէ ինձ այս վիճակից:



## Ի Ղ Ձ

—

**Ս**իրոյ աղբիւր, ճշմարտութեան Հեղինակ,  
Բոլոր մարդկանց սէր ու արդարութիւն տուր.  
Ամեն մի բան քննող, զազանազէտ էակ,  
Դու ինքդ բարի ես, մեզ բարութիւն տուր:

Թող քու սէրդ զաննայ մեզ վերակացու,  
Իշխող ու դատաւոր և իրաւասու,  
Թող ազգերը եղբայր լինեն մէկ մէկու,  
Իրար մօտենալու յարմարութիւն տուր:

Լուր Ջիւանուս որ եմ տկար արարած,  
Ուժ տուր վերահանդնի մարդկութիւնն ընկած,  
Խնդիրս քեզանից այս է, տէր Աստուած,  
Մեծերուն խիղճ, մեզ էլ համբերութիւն տուր:

1907



## Ս. ԷԶՄԻԱԾԻՆ

**Է**ջմիածին Մայր տաճար, ով հոգևոր Հայոց տուն  
Հիմքդ Փրկիչն է զրեւի, եկեղեցիդ սրբասուն.  
Տասնըվեց դար անասան ապրել ես, կաս աննկուն.  
Մինչև աշխահի վերջը պիտի մնաս հաստատուն.  
Պատկառելի սուրբ Միօն ունիս բարձր մեծ անուն  
Հաւատացեալ որդիքդ տեսանեն քեզ միշտ կայուն:

Մեր ողորմած մեծ կայսեր բարձր հովանու տակը  
Թող ծածանի հայութեան հոգևոր զբօշակը.  
Լուսաւորիչ մեծ պապի պանծալի յիշատակը,  
Համայն Արամեան ցեղի լուսատու աշտանակը,  
Ծերունազարդ Մասիսի հաւատարիմ զաւակը,  
Հայաստանեայց աշխարհի անբիժ թագուհին սիրուն:

Հիմքիդ տակը փորովներ, ցեցեր ունիս շատ և շատ  
Բանդել, տապալել կուգեն վերջրած բա՛ն ու փեղատ  
Պինտ ու ամուր են շինել Լուսաւորիչ, սուրբ Տրդատ  
Մասիսից քար են բերել իդձով կառուցել են պատ  
Խոհուն, հետուն մտածող զաւակներդ հարազատ  
Գիտեն անզրդուելի ես, հաւատում են քո հոգուն:

Կրակապաշտ անողորմ սասանեաններ ես տեսել,  
Արապ ամիրապետներ, շար սուլթաններ ես տեսել.  
Լենկթեմուրներ, ձինկիդխաններ, Ալիաւլաններ ես տեսել,  
Յոյն և հոռվմայեցի, հայ իշխաններ ես տեսել,  
Ճիզուխս նենգ Ունիթոոներ ու ախոյաններ ես տեսել,  
Ողջն անցել գնացել են, դու Ֆեացել ես կանգուն:

Փիր սպասաւորներդ աշխատում են անդադար  
Գիշեր ցերեկ տքնում են պայծառութեանդ համար.  
Բոլոր միաբաններդ միահոգի հաւասար,  
Կուզեն անարատ պահել թանգ անունդ հին գոհար.  
Լաւ հոգում արմատացած ծաղիկ ես մշտադալար  
Տերեւախիտ բազմածիւղ հսկայ ծառ ես զարդարուն:

Մեծ փափաքն է Ջիւանուն յաւէտ պայծառ մնալդ  
Անամպ, պայծառ արեւի նմանակ շողշողալդ  
Կուզենք լուսաւորուիլդ, ծաղկիլդ, առաջ գալդ,  
Ալեկոծեալ ծովի մէջ քաջ աջողակ լողալդ  
Կեցցէ, ապրի անսասան պաշտելի Գահակալդ  
Մեր վեհափառ Հայրիկը՝ գորովագութ զգայուն:

1906



# ՆՈՒԷՐ ՇՈՒՇԻ ՔԵՂԱՔԻՆ

Բարև քեզ, Շուշի քաղաք, եկել եմ քեզ տեսութեան,  
Հին քաջերի հայրենիք, մելիքների որդան.  
Դու Սիւնեաց մայրաքաղաք, ձեռակերտ Շահնազարեան  
Լուսաւորուած, նորոգուած, հին յիշատակ հայութեան:  
Դիրքդ բարձր, հովասուն, կլիմադ մեղմ, դուրեկան,  
Երկինքդ պարզ ու մաքուր, վճիռ հայելու նման:

Տէրութեանը բաջաւիրտ դորապետներ եւ տուել,  
Նշանաւոր և յայտնի, խելօք մարդիկ եւ ծնել.  
Համեստ, զեղեցիկ սեռ փառաքուշ, ակնավայել,  
Պարկեշտութեան տիպար են, ցոփութեան մէջ չեն ընկել,  
Կղզիացած քաղաք եւ, քաշուել, անկիւնն եւ մտել,  
Օտար տեղից քո մէջ շատ չի գալ վաճառական:

Տղամարդիկդ կտրիճ, յայտնի են ողջ կովկասում,  
Հայն ու թուրքը միասին խաղաղ, սիրով են ապրում:  
Կարգին դպրոցներ ունիս, որդիքդ կանոնն ուսում  
Հզօր Արծուի շքի տակ երջանիկ կեանք վայելում.  
Արհեստաւորներիդ մէջ տաղանդներ են գտնուում  
Ղազանչեցոց կառուցած եկեղեցին մեծ նշան:

Ժողովուրդդ ամեն տեղ, ամեն երկիր տարածուած  
Ման է գալիս շափշփում աշխարհը լայնատարած,  
Դու անուանի քաղաք եւ, յայտնի եւ, ոչ յետ ընկած,  
Սիրուն ամառանոց եւ, կեանքի համար ստեղծուած.  
Բարի իշխաններ ունիս, առատասիրտ, ողորմած,  
Առաքելեան, Ժամնաբեան, Քաղեոսեան, Թամարեան:

Քառ ու բամանչայ ածող վարպետներով լի եւ լի,  
Պարսկական եղանակներ ածում են հիանալի.  
Ժողովրդական երգիչ չես ծնել, մայր ցանկալի,  
Յարգ չունի հայ աշուղը՝ մօտդ է շատ ցաւալի:  
Ընդունիր այս նուէրս, անհոտ, անհամ, անալի,  
Ներող եղիր Զիւանուս, ազնիւ քաղաք պատմական:

1902



## ՀԱԶԱՐԻՑ ՄԷԿ

**Շ**ատ հովուապետներ կունենանք,  
Բայց Թրիմեան՝ հազարից մէկ,  
Ազգին Վարդաններ էլ կուսանք,  
Մամիկոնեան՝ հազարից մէկ:

Զուր կսպասէ Հրէաստան,  
Եկաւ, էլ չի գալու Մեսսիան,  
Սողոմոններ հիմայ էլ կան,  
Որդի Գաւթեան՝ հազարից մէկ:

Ամեն մարդ չի լինի բարձր,  
Խելօք, ուժեղ, համով, քաղցր,  
Շատ է ծնվում Ալէքսանդր,  
Մակեդոնեան՝ հազարից մէկ:

Կան միլիոնաւոր Զիւաններ,  
Երգող ու կանչող զուսաններ.  
Կը ճարուին լաւ դերասաններ,  
Իսկ Ազամեան՝ հազարից մէկ:

1907



## ՄՏՈՐՄՈՒՆՔ

**Ք**իչ կը ճարուի երջանիկ մարդ, ամենայն ոք ցաւ ունի,  
Ամենը մի ջոկ տեսակ հոգի մաշող հալաւ ունի,  
Հոգա ու ցաւը ամենինն է, միջադպարն ծով է նա,  
Ամեն անհատ բնանաւորուած նոյն ծովի մէջ նաւ ունի:

Մարդիկ բոլորը թշուառ են եթէ խորունկ մտածես,  
Ժպտում են կեղծ, խօսում են կեղծ յուշի յուշով աչք ածես,  
Դրացիդ մեռած գիտեցիր, թէ դու հիւանդ պատկած ես  
Դու մի կարծիլ դիմացինդ իր վիճակը լաւ ունի:

Բերդի դուռը բաց է անում մի հատ փոքրիկ բանալի,  
Երբեմն կատու կը դառնայ առիւծը վեհ ստակալի.  
Միայն դու չես, ով մեծամիտ, խելահաս շնորհալի,  
Խելքին ու ուժին համեմատ թզուկն էլ համբաւ ունի:

Ո՛վ Զիւանի, խելքիցդ վեր ուղիով մի ընթանալ,  
Այն բանը որ չես սովորել, լուռ եղիր, չես հասկանալ,  
Տրեզրքի գործերը դժուար է հաստատ իմանալ,  
Միլիոնաւոր գաղտնի խորշեր, գաղտնի քարանձաւ ունի:



## ՔԵՂԵՅԿՈՒՀԻ

**Ա**չք ու ունքերդ սե, ճակատդ լուսնեակ,  
Պոսնկներդ որպէս կեռաս, կասկարմիր.  
Սիրուն բու թշներդ ալ ու սպիտակ,  
Մրկու խնձոր են նորահաս, կասկարմիր:

Մասներդ մեղրամոմ, ձեռքերդ քամազակ,  
Կուրծքդ էլպրուսի ձիւնի պէս խառակ.  
Նոճու ծառի նման դու բարձրահասակ,  
Մաքուր բեհեղ հագուստդ խաս, կասկարմիր:

Ջրւանուն քոյր, համեստափայլ հայ աղջիկ,  
Կարող եմ քեզ առել յաւերժահարսիկ,  
Մէկ ձեռքդ առել ես ալ վարդի փնջիկ,  
Միւս ձեռքումդ զինու թաս կասկարմիր:

1907





## ԱՐԻՍՏՈՒԿԵՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԻՇԵՏՆԿԻՆ

Հայ հոգևոր դասակարգի կաճառից,  
Հաղուադիւտ թանգադին մի ալ պակասեց:  
Յաւիտեան հեռացաւ խօսնակը թառից,  
Հոգեզգօն ճարտար սոխակ պակասեց:

Փրկչի հօտին անկեղծ հովիւ իսկական,  
Մեղր ամբարոզ քաջ մեղու էր ժրաջան,  
Ուշ կձնի Արիստակէս Սեղրակեան.  
Պարթևազուն երկրորդ Սահակ պակասեց:

Շատ դորձող, քիչ խօսող պիտանի մարդ էր,  
Ազգի մէջ հռչակուած անուանի մարդ էր,  
Վեհապետ լինելու արժանի մարդ էր,  
Հարկաւոր էր, վնաս ժամանակ պակասեց:

Բնաւ համ չ'տեսաւ, անհամ աշխարհից,  
Ձը շեղուեց ուղղութեան սուրբ ճանապարհից.  
Անբազդ հայոց ժողովրդի տաճարից,  
Հոգի կրթող դաստիարակ պակասեց:

1906



+
**Մ**օտ օրերս էլի կորցրեց մի ծառ  
 Հայ գրականութեան տարաբախտ այգին,  
 Սմբատ Շահազիզն էր պատուով ու պայծառ,  
 Օրհասական քամին տասպալեց գետին:

Տաղանդաւոր բանաստեղծը հայութեան,  
 Հանգու յանկարծակի ճրագի նման,  
 Անագործոյն մահը շաշալկեց նրան,  
 Խլից տարաւ փայլուն սկը թանկագին:

Տաղանդաւոր հայ պոյետը բանիմաց,  
 Թողեց ասպարէզը, թողեց տեղը բաց,  
 Վեհափառ Հայրիկի ետեից դնաց,  
 Երկինք թռաւ պլպուլիկը ազգային:

Զիւան, լրիւ նա կատարեց իւր գերը,  
 Անմոռաց կը մնան ընտիր երկերը,  
 Շատ եմ ասել նրա «Ազնիւ ընկերը»,  
 Յարգող, սիրողներուց մէկն եմ սրտագին:

1907



## ՇԽԱԼՈՒ ՄԼՍԻՆ

**Չ**որանար այն ձեռքը որ քեզի գիպաւ,  
Քաջ Շխալի, գործակատար Ստեփան,  
Կոյր փորձանքը թր Աուդայից բեղ հասաւ,  
Տունդ թողիր անմխիթար, Ստեփան:

Սրբ որ պատմութիւնդ անել սկսենք,  
Ֆէլ ու ֆէնտ խօսքերդ որք հետ խօսենք,  
Ես հու, ես մաղէտդ էլ ձեռից լսենք,  
Ծիծաղաշարժ, լեզուդ հարտար Ստեփան:

Քաջ անուշ պիտի յիշուի անպակաս,  
Ընկերներուդ սրտերու մէջ միշտ դու կաս.  
Կեանքիդ թելը կարեց մահը վաղանաս,  
Հաղորդութեան արժան շեղար, Ստեփան:

Պատկերդ ահարկու, դու բարձրահասակ,  
Պարսկաստանի Սալմաստ պաւտոի գաւակ,  
Չնչին մարդու ձեռքով եղար նահատակ,  
Հայրենիքի թունդ սիրահար Ստեփան:

Քու մահդ Ջիւանուն սաստիկ ցաւ տուեց,  
Սիրելոյդ սրտին դառար ցաւ ու ցեց.  
Համարեա թէ ողջ Քիֆիլզը ցնցըւեց,  
Շատ մարդ ողբաց քեզի համար, Ստեփան:

1906



## ԱՇՈՒՂԻ ԵՐԳԸ

Ով որ իրան հայ է ասում, հայի համար կ'ցաւի,  
էս նրան հայ կը ճանաչեմ, հայ է կասեմ իրաւի,  
Համոզմունքի հետ գործ շունիմ, ոչ էլ դաւանանքի հետ,  
Հայ լիզուն է հարկաւոր ինձ, որ կապ ունի կեանքի հետ:

Լաւ էր որ մի տեղ լինէինք, <sup>սիրտի/խել</sup> աղօթէինք միասին,  
Մեր հարազատ մօր գրկի մէջ կազդուրէինք մեր հոգին,  
Հանքամանքը մեզ բաժանեց եղանք երեք մաս, հայեր,  
Փոնէ գիտնանք որ եղբայր ենք, չ'մոռանաք ազգը մեր:

Բոլոր ազգաց մէջ լինում են ջոկ-ջոկ դաւանանքի տէր,  
Բայց ոչ մեզ պէս իրար ատող, այլ խոհեմ, հայրենասէր,  
Տուր ձեռք ինձ այլադաւան հայի դաւակ, հայ տղայ,  
Սիրենք, օգնենք մէկգմէկու գրանից լաւը չկայ:

Հանգիստ թողնենք, մեր հոգևոր հայրերուն չ'խանգարենք,  
Իրանք գիտեն իրանց բանը, մենք մեր գործերը վարենք,  
Զարգացնենք նոր սերունդը գիտութիւնով, ուսումով,  
Խորթ ու մօրին միջնորդիցս կը վերանայ շատ շուտով:

1901



ՊԻՏԻ ԳԱ՛Յ ԱՐԴԵՕԲ

**Ո**չ տէր լինէր և ոչ ծառայ աշխարհում,  
Այնպէս երջանիկ օր պիտի գո՞յ արդեօք,  
Բոլոր մարդիկ կանգնած մէկ ճանապարհում,  
Այն սուրբ Հոգին հօր պիտի գո՞յ արդեօք:

Բոլոր մարդիկ սիրեն եղբօր պէս իրար,  
Մեծը փոքրին շահէ՛ անկեղծ հայրաբար,  
Լեռ, բլուր, դաշտ ու ձոր դառնան հաւասար,  
Հարթող գութան, արօր. պիտի գո՞յ արդեօք:

Ջիւանի, ոչ մի տեղ չըլինի կոխ,  
Ուղիղ սրտով պահեն մէկ մէկու պատիւ.  
Աշխարհի մէջ լինի մէկ հօտ, մէկ հովիւ,  
Փրկիչը միամօր պիտի գոյ արդեօք:

1907



## Մ Շ Ը Կ

**Ք**եզ կրեւով մէջբդ ծառեց, խեղճ մշակ,  
Քեզ դառն տանջանքից ազատում չեղաւ.  
Մարդկութեան մէջ, ով կենդանի նահատակ,  
Վերքիդ բուժիչ, ցաւիդ փարատում չեղաւ:

Թողիբ տունդ, տեղդ, դուռդ փակեցիր,  
Օտարութեան ցաւով բեզ վարակեցիր,  
Հազիւ ցամաք հացի փող վաստակեցիր,  
Լիակատար, առատ մէկ դատում չեղաւ:

Քեզ նման տարագիր Ջիւանճն տեսար,  
Որ դու օտար երկրում մնացիր երկար.  
Պանտխտութեան հետը շատ սիրնդ կապուեցար,  
Ձեր երկուսի մէջը անջատում չեղաւ:

1907



## Ե Կ Ա Ն Ո Կ Ա Ն Յ Ա Ն

(«Զախորդ օրերի» եղանակով)

**Ե**արկուտ, ջրհեղեղ, շանթ ու կրակ եկան ու անցան,  
ժայռի վրայից աննպատակ եկան ու անցան.

Արդար ու տակուն մարդը մնաց իւր տեղը անշարժ,  
Անթիւ սրիկայ, գոգ, աւազակ եկան ու անցան:

Քուխը ձագերը, հայրենիքը չ'իողեց անտէր,  
Բազումգոյնի թռչնոց երամակ եկան ու անցան,  
Ապրից տկարը և չը մեռաւ ուժ տուեց Աստուած,  
Յաւեր զանազան հաստ ու բարակ եկան ու անցան:

Քանգել ուզեցին որբի տունը՝ բայց մնաց հաստատ,  
Զոկ, ջոկ ցեղի բանւոր ու մշակ եկան ու անցան,  
Զրկող կեղերող մարդիկը, տես, Զիւանի երգիչ,  
Մեռան ու կորան անյիշատակ, եկան ու անցան:

1905

3 1.1.25  
ՃԻՂԻ



Սկանքս քեզ եմ տուել, կասուել եմ քեզ հեա,  
Ապերջանիկ պառաւ, քեզ եմ սիրում, քեզ,  
Իմ արած խոստումս ես չեմ առնել ես,  
Հէջ աղքատիկ պառաւ, քեզ եմ սիրում, քեզ:

Սիրել եմ հոգուս շափ, չեմ ապաշաւում,  
Քեզ համար եմ հոգում, քեզ համար ցաւում,  
Ոչ մի ազգի աղջիկ ինձ չէ գրաւում,  
Վե՛հ զեղեցիկ պառաւ, քեզ եմ սիրում, քեզ:

Խելքով, պատւով շատ շատերուց խոշոր ես,  
Յաւ ու վիշտ տանելու վաղուց սովոր ես,  
Թէև հին ես բայց ինձ համար շատ նոր ես,  
Քաջատոհմիկ պառաւ, քեզ եմ սիրում, քեզ:

Դու Զիւանու նախնիքներու ննջարան,  
Համայն հայոց ծննդավայր սրբազան,  
Ով անցկալի դու գառամեալ Հայաստան,  
Հին անդրանիկ պառաւ, քեզ եմ սիրում, քեզ:

1904





## ԻՄ ԿԱՐՄԻՔԸ

**Ե**ս սիրում եմ մերձաւորիս, բայց ասե՛լ չեմ օտարին,  
Օտարն էլ ինձ նման մարդ է, ցանկանում եմ իւր բարին,  
Թէ օտարը ինձ չճնշէ, մէկ ֆետս չ'հասնէ,  
Ձեմ կամենալ մինչև անդամ ոտքը հանդիպի քարին:

Գայլի զլխին աւետարան կարգալուծ չի դասուի,  
Նրան պէտք է բուռնցք ցոյց տալ, որ վախիցը ընկճուի,  
Կան այս տեսակ օտար մարդիկ նրանց հետ չի ապրուի,  
Բարութեան միշտ հակառակ են խելագարուած են շարին:

Շատ սիրեցի և յարգեցի օտարին անձիս նման,  
Իմ այս տեսակ ընթանալս համարուեց վախի նշան,  
Որովհետև նա տպւեա էր-բարբարոս էր իսկական,  
Լաւութիւնս չ'հասկացաւ զաւակը խենթ յիմարին:

Տես, Զիւանի, կայ այնպիսի երկիր, այնպէս կլիմայ.  
Մերձաւորի և օտարի մէջը խտրութիւն չկայ,  
Վերը սրբերն քնակոււմ, վարը դե ու սատանայ,  
Երկիրը երկինք չի դառնայ, գործը այլ է աշխարհին:

1906





# Ղ Ա Ջ Ե Լ

**Ե**րբ դու գաս, ով անցկալի, բեհեզ կը հագնիմ այն օրը,  
 Չափազանց կուրախանամ, վեր-վեր կը թռչիմ այն օրը,  
 Երբ պիտի լուսոյ նման ճակատորդ համբուրեմ, սիրուն,  
 Մերացել եմ, վախում եմ թէ ես չը տեսնիմ այն օրը:

Թէ գալու ես շտապէ, տենչալի հոգեակ, շուտ արի,  
 Օղային ճանապարհով՝ եղիւր աղանեակ, շուտ արի,  
 Առաւօտեան Լուսաբեր պայծառ արուսեակ, շուտ արի,  
 Փարատէ մտքիս խաւարը որ չը տրամիմ այն օրը:

Ես Ջիւանս քեզ ծառայ, դու լեր վեհափառ, տիկինս,  
 Անկարին կեանք պարզևող սուրբ անսրատ մաքրածինս,  
 Դու միայն իմաց արա գալու օրդ. իմ անգինս,  
 Եթէ հիւանդ էլ լինիմ տեղդ կը գտնիմ այն օրը:

1904



X

# Ա Յ Ս Օ Ր

**Ի**մ սիրտիս ու հոգուս նուազարանի,  
Հարերը ներդաշնակ չեն խօսում այսօր,  
Հոգեկան թելերս հնչուն, պիտանի,  
Փանկոտել են, իստակ չեն խօսում այսօր:

Կողիտ ձեռք է դիպել սրտիս քնարին,  
Սարքելը դարձել է ինձ անհնարին,  
Ձայնը խոսողտել է ամեն մի լարին,  
Զի հանում աղաղակ, չի խօսում այսօր:

Ձիւանի, հոգսերը մեծ ցաւ են դարձել,  
Կպել են իմ անձիս, հալաւ են դարձել,  
Քաղցրաձայն լարերս ազուաւ են դարձել,  
Որպէս ճարտար սոխակ չեն խօսում այսօր:

1904



## ԱՐԴԱՐ ՊԱՀԱՆՁ

**Բ**նաւ ուրիշին քնաս չեմ կամենալ,  
Ես իմ իրաւունքս կուզեմ պաշտպանել:  
Իմ բերանիս հացը ոչ ոքի չեմ տալ,  
Ապրելու սնունդս կուզեմ պաշտպանել:

Թող լսէ աշխարհը գոռուն գոչինս,  
Պատուի համար թող թափուի իմ արինս,  
Իմ լեզուս, կրօնս, իմ ազգութիւնս,  
Իմ արքութիւններս կուզեմ պաշտպանել:

Ես հայի որդի եմ և հայ եմ ծնուել,  
Ուզում եմ հայ ապրիլ, հայի պէս մեռնել,  
Մտքէս չի անցնի ուրիշներից բան խլիլ,  
Ես իմ ունեցածս կուզեմ պաշտպանել:

Ես Զիւանս խուսափում եմ զրկողից,  
Յափշտակող, ունեցածս խլողից,  
Հաւակեր ուրուրից, գայլից ու գողից  
Գառներս, ճուտերս, կուզեմ պաշտպանել:

1904



**Պ**եղեցիկ, տննման աղջիկ, քեզ շատ առանձին ես պահում,  
Բայց դու ապրիս որ պատիւդ անրիճ, թանկագին ես պահում,  
Շահասպրամ թուխ մազերուդ տակը նոր լուսին ես պահում,  
Կարմիր կակաշ, ալ թշնդ արդեօք, սւմ բաժին ես պահում:

Աստուած գովել, ստեղծել է, արդէն գովական ես, սիրուն,  
Դեղեցիկներու գլխաւոր լինելու արժան ես, սիրուն,  
Հրաշալի Սանտուխա կուսին վարքովդ նման ես սիրուն,  
Նրա համեստ բնութիւնը և նրա հոգին ես պահում:

Կենդանութեան հոտ է բուրում, ծոցդ ձաղկալից հովիտ է,  
Ոչ որի մի տերև չի տալ, այդեպանդ խրատ կրկիտ է,  
Քու ունեցած գաղտնիքներդ միայն Արարիչը գիտէ,  
Դժուար է բան իմանալը, խորհուրդդ մթին ես պահում:

Ո՛վ գիտէ ի՞նչպէս մի կտրիճ՝ տեսութեանդ ծարաւ, պսպակ,  
Քափառում է տանդ շուրջը, վառվում թիթեռի նմանակ,  
Մետաքսէ թելերից գործուած կերպասեղէն շորերիդ տակ,  
Աչքօշափելի, ըսպիտակ, ձիւնի պէս մարմին ես պահում:

Դու Ջիւանուս մօտը երբէք արտում, տխուր մանգալու չես  
Քաղալու համար ես ծնուել, ամենեկին սղբալու չես,  
Հարկաւ մի ընկեր կունենաս, կուսակրօն դառնալու չես,  
Մարդ տեսնի թէ՛ դու ի՞նչ տեսակ, ինչ կերպ ամուսին ես պահում:



ՄԵԾՈՐԴՈՅ Պ. Տ. ՆՈՋՐԵՒՆԻՆ

(Որ 25-ամեայ յօրելեանին)

Ք  
Որք յարգողներդ քեզ շրջապատած,  
Տօնում ենք քո շքեղ բսանհինգամեակը.  
Կը մնայ լաւ գործը միշտ գնահատուած,  
Բնաւ չի կորսուի արդար վաստակը:

Դու «Աղբիւր»-«Տարազի» տակուն խմբագիր,  
Երբէք չը ընկճուող, գործող քաջ ու ժեր.  
Վճիտ ջրով քո Աղբիւրդ հատընտիր,  
Եղել է հայ մանկանց դաստիարակը:

Զոհել ես մեծ մասը քո կարողութեան,  
Քո սկսած գործի համար, քնջ Տիգրան.  
Ինչ որ ունիս չունիս, տուել ես նրան,  
Աղբիւրն է եղել քեւ հոգուդ զաւակը:

Քո Աղբիւր-Տարազով, ով քաջ հեղինակ,  
Գործդ փայլեց որպէս աստղ ու լուսնիակ.  
Գեղարուեստը սիրող, երկար ժամանակ,  
Առաջ տանող հին ու նոր օրինակը:

Եթէ կը հարցնեն աշուղ Զիւանը,  
Ցաւերի հետ մաքառելն է իր բանը.  
Պարոն բժշկապետ Նաւասարդեանը՝  
Հարցրեցէք, նա գիտէ իմ վիճակը:

1908

Քէշ եղիր՝ էշ մի լինիր, որ վրադ չը նստեն մարդիկ,  
 Սպանիր, մի սպանուիր՝ կռուի մէջը եղիր ճարպիկ,  
 Վախեցուր, մի վախենար՝ կտրին եղիր աշխարհի մէջ,  
 Ծամելու ձութ մի լինիր, արճին եղիր աշխարհի մէջ,  
 Պատուդ շօշափողին դահին եղիր աշխարհի մէջ,  
 Թող դնեն քու անունդ, վնաս չունի, կուսածաղիկ:

Տեսնում ես քեզ ուտում են, կեր մի գնալ, դու նրանց կեր,  
 Փոխուել է ժամանակը, արիացիր, խոհեմ ընկեր,  
 Կաշխատի ամենայն ոք որ ինքը բարձրանայ շուտ վեր,  
 Թէ լինիս դերակատար մի վերցնիլ խղճալու դեր,  
 Թոյն եղիր, կաթ մի լինիր՝ որ չը շինեն ուտելու սեր,  
 Խեղճ ձկնից օձը լաւ է, որսողները չեն զայ մօտիկ:

Թոյլերը պարտըում են, զօրեղները գործը տանում,  
 Գոյութեան կռուի մէջը մեծը փոքրին է կլանում,  
 Ժիր եղիր, խեղճ մի լինիր, հասկացիր թէ ինչ ես անում,  
 Աշխատիր որ երևաս գործով մարդկութեան շրջանում,  
 Քաջ եղիր որ անունդ գրեն մարդկութեան մատեանում,  
 Աշխարհը քեզ դասագիրք աշքիդ առաջ ահաւասիկ:

Լաց լինող մուրացկանին երես չի տալ մարդկութիւնը,  
 Իւր տկար եղբոր մասին ես չի դալիս իւր արիւնը,  
 Այսպէս է, բարեկամս, ողջ աշխարհի կեցութիւնը,  
 Թէ ժիր ես, հաց կը ճարես, թէ խեղճ ես, մտիք անկիւնը,  
 Իմացիր գութ չի շարժել դատարկ, անգործ հառաչիւնը,  
 Լալկանի դեր խաղացող ժողովուրդը չէ երջանիկ:

Փող դատիր՝ թող այլք ուտեն, կարօտ մի լինիր ուրիշին,  
 Դժուար է փող ուզելը, դուրս է գալիս մարդու հոգին,  
 Թշնամիս խեղճ չը լինի, խեղճութիւնը մտնի զեախն,  
 Ժիգ թափէ, քրտինք թափէ դու բեռ մի լինի ոչ որին,  
 Եթէ չես կարող մրցել, իմացիր քեզ մահն է բաժին,  
 Զիւանի, կեանքն է կոխ պէտք է լինի քաջամարդիկ:

1907



# Ա Ր Ե Ի

Մրև, դու արև, որ անաչառ ես,  
Ինչո՞ւ ես թողնում մեզ նսեմ ու փակ.  
Այլ երկըրներու վրայ պայծառ ես,  
Զգե՛լ ես հայոց միշտ խաւարի տակ:

Դու մեր երկըրէն նախ ծնունդ կառնես,  
Արդեօք ինչո՞ւց է մեզ վերայ սառն ես.  
Այլոց հեա քաղցր, մեզի հեա դառն ես,  
Ի՞նչ է պատճառը, սիրուն արեգակ:

Զես նայում դէմքին խղճալոյն հեղի,  
Շնա ժամանակ է չեա յիշեր մեզի.  
Զ՞ մեր պապերը պաշտել են քեզի,  
Դու մեզ պատժում ես պատուոյ փոխանակ:

Զէ, չէ մայր լուսոյ, մի անիր այդպէս,  
Յոյց տուր մեր ազգին արձակ ասպարէզ.  
Քող մեր աշխարհն էլ ունենայ հանդէս,  
Քեզանով մէկ օր գտնի ժամանակ:

Ո՛վ պայծառ արփի, լոյսդ անխափան,  
Ազաչում եմ քեզ, սփռէ Հայաստան,  
Մանաւանդ դէպի խեղճ Վասպուրական  
Աշխարհին գնա եղիր օժանդակ:

Երբ որ դու կերթաս դէպի Եւրոպա,  
Մտքիդ ունեցիր Փոքր-Ասիա.  
Մէկ դու մօտ արի, Լուսինն էլ կուգայ  
Աստղերն էլ քեզնից կառնեն օրինակ:

Արև, դու արև, արդար ու անմեղ  
Ուղիիդ հանդէպ խաւար կայ ուժեղ .  
Մեր հորիզոնից չեն գնալ այլ տեղ .  
Սե սե ամպերը կան միշտ հակառակ:







## Ե Ր Գ Ն Ո Ջ

Հայի մօտը հայ է, թուրքի մօտը թուրք,  
Բախտախնտիր, քձնող հացկատակ մարդը,  
Ոչ մի հաստաառութեան նա չի տալիս տուրք,  
Զրիակեր, ցեց է այդ տեսակ մարդը:

Աչք կըտնկէ երկրագործի արօրին,  
Խլում է գեղջուկի կզը և ջորին.  
Գում, գորում, կողոպտում է անգորին,  
Զոկ պարագմունք չունի աւագակ մարդը:

Զրւան, միմոսի պէս միշտ անում է խաղ,  
Նրկու երեսանի արուէք ճիւղ,  
Մնուածին օրօրոց, մեռածին դագաղ  
Պատրաստ է լինելու երկգունակ մարդը:

1904





## ՏԿԵՐ ՄԵՆ ԳԵԼՈՂ

Ընկերից անջատուող տարագիր մարդը,  
Կարմրի տեղ սևեր հագած՝ ման կուգայ,  
Հոգսերով ծանրացած ցաւակեր մարդը,  
Մովի նման ալեկոծուած ման կուգայ:

Մարդատեաց բուն սիրում է աւերակը,  
Թիթեոն էլ պաշտում է անշէջ կրակը,  
Էրուած ու խորովուած անբախտ սոխակը,  
Վարդի շուրջը խեղճ, տխրամած ման կուգայ:

Ով սիրել է ու եղել է սիրահար,  
Մնացել է անբախտ և անմխիթար,  
Ուղղախօսը արդար խօսելու համար,  
Անձը տկուր, ինք սոված ման կուգայ:

1904





. . .

Ունեոր ազգակից, քու սրտիդ նման,  
 Աղքատի սրտում էլ առիւծ կայ պառկած,  
 Ի՞նչ արած որ դու կազմուսես ես նոխ սեղան,  
 Աղքատը ման կուզայ, տկլոր ու քաղցած:

Բախան ու հանգամանքը բեղ շատ են օգնել,  
 Փանծիդ համար պատիւ կուտան, առաւել,  
 Աղքատն էլ քեզ նման մօրից է ծնուել,  
 Երկուսիդ էլ մարդ է ստեղծել Աստուած:

Ինչ իզուր ես փքուում, հարուստ բարեկամ,  
 Մի բան չկայ յաւերժ կայուն, անթառամ,  
 Աշխարհ է, աղքատը կը դառնայ փարթամ,  
 Ինչ կը աղքատանաս, ունեցիր կասկած:

Շատերն են ունեցել փողի մեծ գումար,  
 Կորցրել են, մնացել են ազիկար,  
 Քու հարստութիւնդ կ'տեսէ երկար,  
 Եթէ լինիս համեստ, բարի, երկխոյզած:

Ջրան, վճիտ աղբիւրի պէս կարկաչէ,  
 Հարուստ, աղքատ, դու միակերպ ճանաչէ,  
 Եղիբ աստուածավախ, մարդուց տառչէ,  
 Վարքով մաքուր, դու պարկեշտ ու ամօթխած:

1904



## Ե Ր Գ

Դու ճր վարդարանի վարդն ես, սիրահար սոխակդ ճվ է,  
Ո՞րի տան նրազի լոյսն ես, ասա, թիթեռնակդ ով է.  
Ո՞րի ծոցումն է պահուած քու գեղեցիկ նկարդ, չքնաղ,  
Երանի ես գիտենայի թէ արդեօք հոգեակդ ճվ է:

Տեսած չեմ քեզ նման մէկը, տարազիդ տեսակը այլ է,  
Դու ճր խմբակի տիկինն ես, կամակից տատրակդ ճվ է.  
Զը լինի՞ կոյր սէրը սիրտդ կապել է անարժանի հետ,  
Դու որ այդքան տոչորոււմ ես, քու այրող կրակդ ճվ է:

Ո՞րի ձեռքից խմեցիր դու սիրոյ նեկտարը յանկարծ,  
Քեզ ճվ հարբեցրից այդպէս, խօսիր, մատրուակդ ճվ է.  
Թէ որ մի բան ուղիղ սրտով սիրում ես, Զիւանի երգիչ,  
Առանց սէր մարդ չկայ երբէք, սիրէ՛, խոտորնակդ ճվ է:

1901



## Կ Ե Ի Կ Ե Ջ

Յնոս սարեր, ելման գետեր,  
Մաղկոս դաշտեր ունիս, Կաւկազ.  
Սառն ջրեր, ձկոս լճեր,  
Բազում հանքեր ունիս, Կաւկազ:

Չկայ քու նմանդ երկիր,  
Պայտածամուկ, կանաչ, կարմիր.  
Պաուղղ, բերքերդ ընտիր,  
Քաղցր մրգեր ունիս, Կաւկազ:

Արիական քու ցեղդ քաջ,  
Կեանք է տուել քեզ բարզաւած.  
Օր աւուր գնում ես առաջ,  
Բարի մտքեր ունիս Կաւկազ:

Չանագան ազգերու ծովակ,  
Հորիզոնդ պարզ կապուտակ.  
Լեզուները բազմատեսակ,  
Ջոկ ջոկ ցեղեր ունիս Կաւկազ:

Քաջ են շեշենները, լեզդիր,  
Օս ու չերքեզ, հրէան ճարպիկ.  
Վրացի, թուրք, ռուս, պարսիկ,  
Քելօք հայեր ունիս, Կաւկազ:

Շատ բան կամեցել է Ասատուած,  
Քեզ, ով երկիր լայնատարած,  
Հայից, վրացուց մնացած.  
Շատ հին վանքեր ունիս Կաւկազ:

Հաւ, չաւ քաղաքներ, փողոցներ,  
Անտառ, այգի ու ծաղկոցներ,  
Աշտարակներ և ամրոցներ,  
Ամուր բերդեր ունիս Կաւկազ:

Բարեխառն է քո կլիման,  
Օղզ մաքուր և պտտուական.  
Մէջդ բազում կենդանիք կան,  
Սիրուն հաւքեր ունիս, Կաւկազ:

Ջրանուն յայտի ես անան,  
Առատ երկիր դու բազմաշահ,  
Ռազմազէտ, վարժ, կարգապահ,  
Կտրիճ զօրքեր ունիս, Կաւկազ

1899





Ո Ր Ն Է Լ Ա Ի

Պատուի լինիս քեզ նախանձնն լմու է թէ,  
 Թէ անարժան լինիս, չունենաս յարգանք.  
 Մի բան գրես, քննադատեն լմու է թէ,  
 Թէ անպիտան լինիս առնես քամահրանք:

Երկուսից ձրն է լաւ, ասա, խելահաս,  
 Մէջ տեղում կայ յայտնի օգուտ ու ֆեսա.  
 Ենտրհալի լինիս ոտիս ունենամս,  
 Թէ անշնորք լինիս վարես թերի կեանք:

Երկուսից ձր մէկն է յարդի փասաւոր,  
 Պատասխան տուր, որդի, մտածէ դու խոր.  
 Վասակ լինիս անդնդային թաղաւոր,  
 Թէ սուրբ Վարդան լինիս երկնային ժառանգ:

Զիւանի, բարութեան ծարաւ պապակ ես,  
 Փռածով շար մարուն արդէն ներհակ ես.  
 Սմբատ լինիս նրան արքայ պսակնս,  
 Թէ Մերուժան լինիս գործես մեծ յանձանք:

1895





## Պ Ր Մ Ն Ի Ն Ք

Յաջողութեան գեղեցկունին պիտի գայ,  
Ասում են-ասում են՝ չի գայ պրծնինք,  
Քօսում են պատկերը մեզ պիտի ցոյց տայ,  
Ո՛ւր է թէ մի անգամ ցոյց տայ՝ պրծնինք:

Յիշեալ գեղեցկունին իւր դրօշակը,  
Զը պարգած գէպի ձախ թերուց վիճակը-  
Դժբախտութեան ծովը մտաւ նաւակը,  
Ոչ կընկզմի, ոչ կը լողայ՝ պրծնինք:

Զիւանի, լոյս չի տալ ջահը իւր տեղը,  
Կամ պատրոյզն է հատել, կամ միջի եղը-  
Մեր փըլփըլուն կիսախաւար կանթեղը,  
Ոչ կը մարի, ոչ կը շողայ՝ պրծնինք:

1898





ՄԻՆՉԵՒ ՄԻԿԸ ԶԸ ՄԵՌՆԻ, ՄԻՒՍԸ ԶԻ ԱՊՐԻ

Աերթան այս օրերը էլ յետ չեն դառնայ,  
Մեզի կը ժամանեն երջանիկ օրեր.  
Հոգիս գուշակում է բարի ապագայ,  
Նրա հետ միասին գեղեցիկ օրեր:

Նեղութեան դիմացող տուուին հայ մարդը.  
Բանի տեղ չի դնիլ կարկտի զարդը.  
Փուշը մենք կը քաղենք, որդիքս վարդը,  
Նրանք պիտի տեսնեն անուշիկ օրեր:

Զիւանի, պիտ պարզէ, երկինք կապուտակ,  
Կը յաջորդէ զուարճալի եղանակ.  
Աստուծով այս վատ օրերու տեղակ,  
Պիտի տեսնենք լաւը հինգպատիկ օրեր:

1887



**ԵՐԱՆԻ ԵՒ ՎԱՅ**

Յմեան եկաւ ճերմակ մօրուք,  
Հեալ բերեց քամի ու բուք.  
Երկինքն ամպոտ, երկիրն անշուք,  
Վայ գայ գուրսը մնացողին,  
Օտար երկիր գնացողին:

Ով որ կրթել է ինքն իրան,  
Քչով կը լինի բաւական.  
Զմեռ գարուն մէկ է նրան,  
Երանի պարզ խնդացողին,  
Վայ գայ ազատ մտածողին:

Անոյշ լեզուն շաքարահամ,  
Օձին կը լինի բարեկամ,  
Հողին խաղաղ է ամեն ժամ.  
Երանի մեղմ խօսացողին,  
Վայ գայ կրքոտ բարկացողին:

Անհոգ մարդը երջանիկ է,  
Զի մտածել թէ բօրիկ է.  
Եկին ամեն օր դատիկ է,  
Երանի չը կարդացողին,  
Վայ գայ կիսատ հասկացողին:

Ընկածին վատ խօսք չեն ասիլ,  
Երբ ոչ որի չի ֆրասել.  
Աղքատ մարդուն չեն բանբասիլ,  
Երանի հաց մուրացողին.  
Վայ գայ հողի որսացողին:

Խարդախ մարդը կեղտոտ գաւ է,  
Խարէութիւնն էլ մէկ ցաւ է.  
Ժլատը սալիկից լաւ է,  
Նրանի չը խոստացողին,  
Վայ խօսքը չը կատարողին:

Ջիւան, ամեն հասարակ քար,  
Ձի լինիլ թանգագին գոհար.  
Պաշտելի, սուրբ գործ համար,  
Նրանի քաջ մահացողին,  
Վայ կենդանի ուրացողին:

1899





## ՆՈՒՆԻՐ ԵՐԻՏՐՍՈՐԻՔ ԲՈՐԵՆՈՐԾԻՍ

Այն որ քեզ հեա գլուխ գլխի չէ տուել,  
 Հեադ չէ պսակուել, ամուսին չէ քեզ,  
 Սիրունին որչափ որ լինի առաւել,  
 Կենակցիդ պէս բաղցր, կաթոգին չէ քեզ:

Սիրէ քու ունեցած բաժինդ սիրէ,  
